

ՀԳ.ԻՆՔԻԿՅԱՆ

**ՊԵՍԱՆԴԱԾ  
ԿԱՅՄԱՐՈՒԹՅԱՆ  
ԱԼԿՈՎԸ**


Հ. ՌԱԶԻԿՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆ ԿԱՅՈՒՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆ

ԱՊՐԻԼ - ՏԵՍԱԿԱՆ  
ԱԿԱԴԵՄԻ

6. K. H. SARKISIAN  
LIBRARY

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ - ԵՐԵՎԱՆ 1984



Դրախու՝ Պատմական պետականության գովառ, պրոֆեսոր  
Վ. Ա. ԽԵՐԵՎՈՒՐՅԱՆ

Խըստացի՝ Պատմական պետականության գովառ, պրոֆեսոր  
Վ. Ա. ԽԵՐԵՎՈՒՐՅԱՆ

ՄԻԿԻ ՀԱՅՈՒՆԵՐՆ Ի ԳԱԶՄԻ  
ԽՈՐԵԱՆԵՐԻ Ի ԱՅՏԵԱԿԵՐՈ  
ԲԱՐԵՒՆԱՑՄԱՆ ՎՃԱՐՄԱՆ ԽԵ-  
ՐՈՎ, ՍԻՌՈՎ ու շԱԿՐԻԱՅԱԼ ՊՐԱ  
ԱԿԱՓԱՆ ԸՆՅԵՐԱՀԱՆ, ՄԱԿԱՎՈՎ-  
ԿԱՆՔԻ ՎԱՅԵԼ և ԽԱՅԵԼԻ ԽԱՅ-  
ՎԵԼ Աշխատանի ԽԱՐԲԵՐԵՐՆ  
ԿԱԿԱՆ ՄԹԱՆՈՂՈՐԾԻ ԽԱՄԱՐ :

ԾՐԱԷՐՄՐ

20.X.84

ԽԱՅԻԿԱՆ Հ. Գ.

Ի 583 Օսմանյան կայսրության անկումը. Սոցիալ-անտիսական  
ակինարկ. — Եր. Հայաստան, 1884. — 336 էջ:

Դրախու, Հայութան գլուխական նյաթի պատագործմանը, ներկա-  
յուցված է Օսմանյան կայսրության հպատակների և անկումների բնույթու-  
թափերը. Մենագրության հիմքում ինքընի համապատասխան  
որդում է Հեղայի պատմական անհռատագեղի պրոցեսի վրա վճառեան  
աղջկացման ունեցած սոցիալ-անտիսական գործունեության վերլուծու-  
թյունը:

Խայատական է պատմաբանների և շիմերցու լայն լրատեսնի  
համար:

Ի 0506000000  
791 (81) 84 81—84

ԳՐՄՆ 68.3 (5 Բրն)

Չաղամակերպարյան բարձր վրա կանգնելու  
բարեխիսն կառավարության բարձր գույնը<sup>1</sup>  
նույնուն կան անփուլնուկ կարծունեան...

Տ. ԽՎԱԾՈՒ

Պատմության արձանագրած ամենաճշգրիտ պիտու-  
թյուններից մեկը՝ Օսմանյան կայսրությունը, գոյատեսք մոտ  
600 տարի և խոր բացասական աղղիցություն թողէց նվաճած  
երկրների առաջքնթացի վրա։ Բուհի ուժով ստեղծված նման պե-  
տական միավորությունից զարդացմանը հատուկ տրամարանու-  
թյամբ և թուրք վերնախավի քաղաքականության հետևանքով  
այն երրեց չամրապնդվեց ներքնապես, ապրեց երկարատև  
և պնդամբ և անկման աստիճանական պրոցես։ Պատմական  
այդ երեսութիւնի պատճեառները բազմաթիվ են, գալիս են անց-  
յալի խորքից և օրդանական կապերով կապված են կայսրու-  
թյան անցքած դարավոր ուղու ու դրա կեռմանների հետ։ Հար-  
յուրամյակներ մնալով ֆեռզալիզմի ամենացածր, որարրարո-  
ւական աստիճանի վրա, կայսրությունը ճնշակա էր մի շարք  
բացասական գործունների աղղիցությանը։ Դրանցից զիսավոր-  
ներն էին. վաշկատուն ցեղերի հսկայական տեղաշարժերը,  
որոնք իրենց հետ բերում էին տնտեսական քայլայում և սո-  
ցիալական պայմանների հետագիմություն։ Այսուհետեւ, Համայ-  
նական հարաբերությունների, հողի պետական սեփականու-  
թյան, Հարկային սիստեմի կապալային ձևերի գոյատեսմը  
դարձան սոցիալ-տնտեսական ու քաղաքական ճգնաժամի խո-  
րացման ուղղակի պատճառները։ Նշվածից բացի, խիստ բացա-  
սական դեր կատարեց տարերայնորեն ստեղծված աշխատանքի  
բաժանումը, երբ մահմեդական վերնախավը իր մենաշնորհն  
էր Համարում պետական, վարչական, ուղմական գործը, երկ-  
րի կառավարումը, տնտեսության բնագավառը թողնելով Հպա-  
տակ ռայային, այսինքն՝ ոչ մահմեդական ժողովուրդներին։  
Մյուս կողմից, պետական ապարատը վերնից ներքեւ մարմ-  
նավորումն էր կաշառակերության, անօրինականության, կա-

մայտկանությունների, որոնց սուր ծալըք ուզզված էր բրիուտոնյա ժողովուրդների ու երկրի զարգացման զիխավոր լժակը հանդիսացող նրանց անառեսական գործունեության դեմ։ Այս բոլորին պուլանեա կայսրությունում տարվում էր մեծապետական շոգինիզմի ընդդժված բաղաքականություն, որը իրավակ երկրը դարձրել էր ժողովուրդների բանու Որպեսոյն պատկերը լրիվ լինի, անհրաժեշտ է ազելացնել, որ ոչ մահմեղակաները, իսլամի ուսմունքի և շարիաթի համաձայն իրավագուրք էին և պարտավոր էին բոլոր հասարակական ու անձնական խնդիրներում դիմել իսլամ դավանողին։

Անդրադառնալով մահմեդական թուրքի իրավական դրությանը, Կ. Մարքսը պրել է. «Ենչպիսի առցիալական վիճակ էլ նա ունենար՝ նա պատկանում էր արտօնյալ կրոնին ու ազգությանը, միայն նա՝ իրավունք ուներ զենք կրելու, և ամենաբարձր դիրք ունեցող քրիստոնյան պարտավոր էր հաւելիութիւն նաևսպարհը զիշել հասարակության ցածր խավին պատկանող մահմեդականին»<sup>1</sup>։

Նման փոխհարաբերությունները շարունակվելեցին Օսմանյան կայսրության գոյության ամրող ժամանակաշրջանում և հաեղիսացան խորացող նզնաժամի ու կայսրության անկման կարևոր պատճառներից մեկը։ Երկրի զիկավարները անընդունակ գտնվեցին Թուրքիան գուրս բերելու արդ վիճակից նաև բարեփոխումների միջոցով, գեթ ինչ-որ շափով կայսերացներու ներքին զրությունը, որը զնալով ժանրանում էր, Անում էին անշատողականությունն ու տեղայնությունը, կենտրոնական ու տեղական կառավարական մարմինների օրինադասություններն ու նրանց անպատճ մեալը և նման կարգի բացասական այլ երևութներ։

Հպատակ ժողովուրդների վաղուց ծալը առած ազգային-պատագրական պայմանն անցլալ դարի սկզբներին ընդունեց ավելի կաղմակերպված ու սիստեմատիկ բնույթ, խորացնելով բաղաքական նզնաժամը։

Երկրի դրությունը շափառանց վատթարացավ հատկապես XIX դարի վերջին քառորդին, երբ իմպերիալիստական պետությունները Թուրքիան գարձրին իրենց կիսապազութը։

Այդպիսով, ներքին ու արտաքին գործուների ողբեցության

1 Маркс К. и Энгельс Ф., Соч., т. 9, стр. 6.— (Հաւաները կառավագան են ըստ 2-րդ հրատրակության)։

Հետևանքով սոցիալ-քաղաքական ճգնաժամը հետպէսան խորակում էր և նրա արտահայտություններն ու հետևանքները դառնում էին ավելի ակնառու:

Մեր աշխատության հիմնական խնդիրն է՝ լուսաբանել կայսրության անկյան սոցիալ-տնտեսական պատճենները և զվարագությունները այդ տեսանկյունից քննել ներկայացվող բարգ և բազմապլանացին պրոցեսը։ Իսկ արդպիսի քննարկման կենսական անհրաժեշտությունը թիւ պատմության և թիւ պատմագիտության համար ակներեւ է, Կարևոր է ընդգծել, որ կայսրության տնտեսական կյանքի զարգացման խնդիրները, ինչպես նշվեց, Հեղա սկզբից, քիչ ձև Հետաքրքրել թուրք վերթայապին նա իր զվարագոր նպատակն է Համարել կայսրության զպորության հիմքը կազմող բանակի ու նրա ռազմական գործողությունների և հակայաժամանակակի երկրի կառավարումը, այսպիս ասած, երկրի վարչական ու ռազմական զեկավարման գործը։ Տեսեսության ընազավառը արհամարհանքով նա թողէլ էր Հպատակ քրիստոնյա ժողովուրդներին՝ ռայաներին, որոնց պարտքն ու պարտականությունն է Համարվել մշակել Հողը, զբազվել արհեստներով ու առևտրով կամ այլ սենք աշխատանքներով և ժամանակին ու պահանջված լափերով մուծել պետական և մշտական հարյուրավոր Հարկերը։ Անգամ ֆեռագանական Հարաբերությունների քայլայումը և կապիտալիստական կարգների ծնունդը լվոլիսցին իրերի վիճակը։ Նոր արտադրանարդերությունների զարգացումը տեղի ունեցած Հնի բացարձակ ու երկարատև տիրապեսության պայմաններում, որն իր կնիքը դրեց երկրի ամրող հետագա պատմության վրա և ընորոշեց նրա առաջընթացի լուրահատկությունները։ Ամփոփ կերպով դրանցից զվարագորները կարելի է ընումագրել Հետևյալ ընորոշ զերով, որոնք և լուսաբանվում են ներկա աշխատությունում։ Դրանցից են. Թուրքական ֆեռագանական իրավակարգի ազգեցությունը կապիտալիստական Հարաբերությունների զարգացման վրա, օսմանյան պետության և նրա ռազմարդուրկրատական վերնախավին, նրա քաղաքականության, ինչպես նաև իսլամի ու շարիաթի մշտական ու ակտիվությունների միջև գոյություն ունեցող տնտեսական ու կուլտուրական մակարդակի զգալի տարրերությունները և այդ երե-

գույթի ազդեցությունը թուրք ու ալլաղի բորժուապիայի զարգացման վրա, աիրող շրջանների ազգային քաղաքականության նշանակությունը Հիջալ պրոցեսների համար, բորժուապիայի ոզգային խմբերի գերն ու տեղը երկրի ռենտենության մեջ, ուստի կապիտալի գերն Օսմանյան կայսրությունում կապիտալիստական կարգերի հաստատման վրա և մի շարք այլ, ոչ զննական գործուների, որոնք բնորոշ են Արևելքի, մասնավորութիւն, մահմեդուկան երկրների զարգացման համար Արդառութեանառակությունների ռեսումնասիրությունը կազմի Օսմանյան կայսրության հատկապիս վերջին շրջանի պատմությունը, ինչպես նաև այսուղ բնակվող ժողովուրդների անցած ուղին ավելի ճիշտ և խոր ըմբռնելուն Մյուս կողմից, վերոհիջալ Հարցերի հատակա մշակումն ի հայտ կրերի նոր փառատեր, կամ կոտ մի շարք երևույթների նոր մեկնարանություններ, որոնք անհրաժեշտ եղարձնեն Ծին գրույթների և Հետեւթյունների վերանայումը:

«Պատմությունը, — զրել է Վ. Ի. Լենինը, —իր հետ բերում է և նոր փառատեր, և հետազոտության նոր եղանակներ, որոնք տեսության հատակա զարգացում են պահանջում։»

Մենադրության համար պիտական ու մեթոդուգիական ելակետ են հանդիսացել Ժարգովդմ-լենինիզմի զառականների այն ռաւումնասիրությունները, որոնցում քննարկվում են ֆեռազական կարգերի քայլայման և կապիտալիզմի զարգացման պրոցեսները։ Դրանցից են մասնավորապես Կ. Մարքսի «Կապիտալը», Ֆ. Էնգելսի «Ֆեռազայիզմի քայլայմ» և բուրժուազիայի զարգացումը Ռուսաստանում և այլ երկրներ։ Չափազանց կարևոր նշանակություն ունեն նրանց գրույթների առանձին ոռցիալ-անանական ու պատմական երևույթների մասին, ինչպես ուսմունքների ազգարային Հարցի, կապիտալիզմի նախակղբեական կուտակման, կապիտալիզմի զարգացման փուլերի, իմպերիալիզմի մասին։ Հատուկ ուշադրության արժանի են դասականների մտքերն այսպիս կոչված կապիտալիզմի զարգացման ուղղութեան ուղղութեան, Արևելքի երկրներում և Բուրբիայում այդ պրոցեսի յուրահատկությունների, մասնավորապես ռասիս-

1 Անդամ Վ. Ի. Ոլժ, Համ. 4, էջ 253։ Այսուհետեւ բայց Համեմերը կառարջում են ուշից Հրատարակության համարներից։

կոն արտադրածեին և այլ հարակից խեղիքներին վերաբերութիւն:

Հայնորդին օգտագործել ենք մարքսիստական հայտնի տեսակենուերը թուրքական ֆեոդալիզմի, Հողի պետական սեփականության պայմաններում Հողագործության և Հողօգտագործման ձևերի, ինչպես նաև Հսկայածավագը ու բազմազգ կայսրության կյանքում ռամանյան պետության և իսլամի կատարած դերի մասին։ Թուրքիայի զարգացման հնանկարներին անդրագանձնին եւ Մարքսին ու Ֆ. Էնգելսը նշել են թուրք գյուղացու աշխատասիրությունը։ Նրանք միաժամանակ ցույց են տվել, որ ամբողջ կարգերի նեխածությունը, վերնախավի այլասիրումը, ֆեոդալական ճնշումն ու կամայականությունները Հանդիսացել են երկրի հստամացության կարևոր պատճենները։ Այդ պայմաններում, նույնիսկ զարգացման ավելի բարձր մակարդակի վրա կանգնած սլավոնները, Հոյները, Հայերը, Հրեաները և ուրիշներ, մարքսիզմի հիմնադիրների բնորոշմամբ, շին կարող իրենց համար բացել ազատ կապիտալիստական առաջընթացի ուղին։

Ծամանյան կայսրությունում կապիտալիստական հարաբերությունների ձևավորման ու զարգացման օրյնկարիվ օրինաչափությունների և պայմանների ռամանեակիրման համար կարևոր նշանակություն ունի լճնինյան այն դրույթը, որ կապիտալիզմի դարաշրջանը գաղութներն ու կիսագաղութները ներառում էր ապրանքափոխակառության, որոյց դեռևս ոչ կապիտալիստական արտադրության մեջ... Իմպերիալիզմը ի միջի այլոց, կապիտալի արտահանություն է»<sup>1</sup>։ Հիշյալ պրորեխմների ռազմական ընթացքում մենք ենք ենք ենք մարքսիստական այն մեկնարանությունից, որ ընդհանուր օրինաշափությունների գործողությունը դրանորվում է կոնկրետ պատմական պայմաններին, աղքային տառենահատկություններին համապատասխանող տարրեր ձեւվերում։

Դրբում լուսարանվող Հարցերը ակնառու են իմպերիալիզմի դարաշրջանում, երբ Ծամանյան կայսրությունը նո ներգրավվում է կապիտալիզմի զարգացման սլորտը, որին համընթաց տեղի է ունենում մեկ ուրիշ՝ երկրի կիսագաղութ դառնալու պրոցեսը։

<sup>1</sup> ԱՅՀ Վ. Բ., Ելք, Հ. 20, էջ 43.

Թազմաթիվ հետ Օսմանյան կայսրության պատմության վերաբերյալ յանդ ու մեծ ռասումնասիրությունները, ճանապարհորդական Խոթերը և Շուշերը: Հենց այդ հանգամանեցը պահենց էր առաջադրել ասվածը լիբրինելու համար ավելի մեծ ուշադրությամբ հաւագուտել արխիվային նյութերը, պարբերականներն ու խօսքին վերաբերող գրականությունը: Նման ճողեցումն անհրաժեշտ էր նաև այն պատճառով, որ Թուրքիայում չի եղել վիճակագրություն ու պրեթ չեն հրապարակվել վիճակագրական նյութերը: Ազատներն էլ կուզմզիլ նև մոտավոր ավյալների հիման վրա զլիսավորապես ռատար հեղինակների կողմբց:

Հայտնի ու գենաս անհայտ փաստերի ու երևույթների ուսումնակրման հիման վրա մենք աշխատել ենք ստեղծել պատճական փաստերի մի շղթա, որը և օգնեց առաջադրելու որոշ նոր գրույթները:

Թանի որ դեռևս Օսմանյան կայսրության տնտեսական պատճենները մշակված չեն և թուրք հեղինակներն ու նրանց տեսակենուների պաշտպանները կարծեք թե մտադիր էլ չեն աշունակյուն, անհրաժեշտ էր բացատրել նաև դրս պատճառները:

Հայտնի է, որ Օսմանյան կայսրության տնտեսական կյանքում զարերով վճռական դեր է խաղացել ալլազգի բուրժուազիան: Նրա գործունեության հետ է կապված երկրի արդյունաբերության հիմնական նյութերի, արհեստների, տնմարի, մասմար և զյուղատնտեսության զարգացումը: Խօսրկե, այդ բուրժուազիայի ու բոլոր խավերն էին ձգտել կայսրությունում հաստատել կապիտալիստական կարգերը Թուրք և այլ մասմենական ֆեոդալների ու ռազմարյուսուկրատական վերնախավի հետ միասին սուլթանական իշխանության հենարանն էին հանդիսանում ալլազգի բուրժուազիայի վերին շերտերը, հոգատերերն ու թրիստոնյան աստիճանուուրները: Հույն ֆանարիուները, հայ ամիրաները և Հրեա բանկիրներն ըստ պահանջի դարերով ֆինանսավորում էին ռամանյան պետությանը, նրա սուլթաններին ու առանձին գործիչներին: Բնականաբար, Հպատակ ժողովուրդների պատասխան վարչակարգի, այլև նրա հենարանը հանդիսացողների՝ ռամանյան հասարակության հիշյալ խավերի դեմ: Օրյեկտիվությունն արդ պայքարն ուներ թե ազգային-ազատապրական և թե դասակարգային բնույթ, որտեղ

բուրժուական հարաբերությունների հաղթանակին էին ձգում  
հպատակ քրիստոնյա ժազովուրզներին իրենց ազգային բուր-  
ժուազիայի պլանվորությամբ, մինչդեռ այդ տուաջնթացն ար-  
գելակում էին թուրքական ու մահմեդական ֆեոդալական տար-  
րերը, հոգևորականությունն ու բարձրաստիճան պաշտօնեաւ-  
թյունը: Հետեապես, որպեսզի Օսմանյան կայսրության անկ-  
աման պատճառների վերաբերյալ հստակ պատկերացում կազմ-  
վեր, սկսած էր առաջին հերթին Ներկայացնել տիրապետով  
վարչակարգի գեմ պայքարող ուժերին՝ ոչ թուրք, այսպղիների  
բուրժուազիային, նրա մտավորականությանը և քաղաքական  
կազմակերպություններին: Նյութի պակասը դժվարացնում է  
տալ այդ բուրժուազիայի ձևավորման և զարգացման պրոցեսն  
ամենայն մանրամասնությամբ և բոլոր կողմերով:

Դրաւմ, այսուհետև, ընորոշվում են բուրժուազիայի առան-  
ձին ազգային խմբերի գործունեության ոլորտները կամ սմաս-  
նագիտացումը՝ շատ արտադրուեթի և առնորական գործարքների:  
Այդ երկույթը առավել առարկայական գործներու նպատակով  
ամփոփվել և ընթերցողին են ներկայացնում համապատասխան  
թվական տվյալներ ու հզրաւանդումներ: Միաժամանակ կարծում  
ենք, որ սպառործված նյութը դնում Ըստավորություն չի  
տարիս ավելի մանրամասն վերլուծելու Օսմանյան կայսրու-  
թյան բազմազգ բուրժուազիայի կամ նրա առանձին խմբերի  
սիստեմատիկ պատմությունը, որը, անկասկած, կոլունակների  
նոր աշխատանք ու ջանքեր: Նույնիսկ թուրք պատմաբանները և  
սոցիոլոգները, որոնց արամազըստիթյան տակ են՝ պետության  
արխիվները, շուտենալով կամ, շշանկանալով ունենալ ընդհան-  
րացված տվյալներ, դնում չեն կարողանում տալ օսմանյան  
բուրժուազիայի զարգացման ամբողջական պատկերը և բա-  
զարարվում են միայն առանձին փաստերով ու որինակներով:

Կայսրության բազմազգ բուրժուազիայի և մյուս հակադիր  
ուժերի պատմության համակողմանի մշակումը, անշուշտ,  
Ըստավոր կլինի մի շաբաթ երկրների գիտական հիմնարկների  
կողմէկտիվ շանթերի գործադրմամբ միայն, բանի որ Օսման-  
յան կայսրության պատմությունը, ի վերջո, նրանում բնակված  
առանձին ժողովուրդների պատմությունն է: Իսկ ամեն ժողո-  
վուրդ իր ազգային լեռվով աշխատություններ ու մեծացանակ  
նյութեր ունի, որոնք լավագույնս կարող են ծառայել հիշատ  
ընդհանուր նպատակին:

Տվյալ ուսումնասիրության մեջ մենք սկսագործենք հեր ռուսական թագավորությանը և մամուլը, ինչպես նաև արխիվային նյութեր:

Հատուկ ուշադրության առարկա են եղել Հայերներ աշխատությունները, բազմաքանակ պարբերականներն ու ազգաւրեները, որոնց զգալի մասը շափազանց կարենոր է որպես կայսրության ներքին կյանքին արտացլող անդական հրատարակություններ:

Տարիների ընթացքում հավաքված փաստական նյութը հնարինության է ընձեռում սոցիուսպիական ուսումնասիրության այս փորձը դիմել որպես Սամանյան կայսրության ազնատկության կարգացման, բուրժուազիան Հարաբերությունների ձևավորման, սոցիալ-տեսական հակառակությունների սրման և ներքին հզնաժամի հասունացման կարևոր պրոբլեմների մշակման առաջին քայլերից մեկը:

Միաժամանակ պետք է եղել, որ առաջընթացի կարևոր խովը՝ կայսրության բազմազգ բուրժուազիայի զարգացման պրոցեսի ուսումնասիրմանը զուգահեռ անհրաժեշտ էր տալ տընտեսական կյանքի ծանր, Համայն ողբերգական պարմաների վերլուծությունը, պայմաններ, որոնք փաստորն կայսրության վերնայտապի բաղաքականության ուղղակի արդյունքը և անկանոն հիմնական պատճեններից մեկն են եղել:

Մյուս կողմից, սակայն, զրբի առանձին գրույթներն ու հետականությունները բնորոշում են ոչ միայն Թուրքիայի, այլև Արևելքի բազմաթիվ այլ երկրների սոցիալ-տեսական զարգացման ընթացքը:

Խելպես ասվեց, աշխատության հիմնական խնդիրները Սամանյան կայսրության սոցիալ-տեսական եւ, որոշ շրջանակներում, բաղաքական ներքին պրոբլեմների լուսաբանումն է: Եվ այդ օրինալագի է: Բազմաթիվ մասնագետներ իրավացիութեն գտնում են, որ զերև Թուրքիայի ներքին կյանքը և նրա հետ կապված շատ Հարցեր անբավարար են ուսումնասիրված: Միաժամանակ պետք է եղել, որ սովորական շատ հեղինակներ (Ի. Ալիքրեկով, Պ. Մոխսեն, Ա. Նովիչեն, Յու. Ռոզալին) իրենց մենագրություններում, որոնց մասին դեռևս կիսովի, անգրագարձել են Թուրքիայի տնտեսական վիճակին և նրա-

Հում կապիտալիստական հարաբերությունների զարգացման յուրահատկություններին։ Սակայն դեռևս չկան աշխատություններ, որոնք նվիրված չինեն հատկապես Օսմանյան կայսության անկժամ սոցիալ-տնտեսական պատճեններին։

Օսմանյան կայսրության անտեսական պատմության ամենաուստիշակիված խնդիրներից մեջը Հողային խնդիրն է։ Այս պատմառով (Հնայած դրա մեծ կարևորությանը) զրբում այն արծարժվում է միայն անհրաժեշտ զեպքերում, երբ կարիք է զգացվում ցույց տալու ֆեռայական կարգների տրանսֆորմացիան, Հողատերների և գլուղացիների հարաբերություններում տեսի ունեցող փոփոխությունները, առևտրական կապիտալի և փողի ազդեցությունը հարկային սիստեմի վրա, կառավարության կենտրոնական և տեղական մարմինների միջամտությունն ազգարային հարաբերություններին, ինչպես նաև այդ բոլոր երկու յիշների ազդեցությունը՝ երկրում կապիտալիզմի զարգացման և ռազմաֆեոդալական կայսրության անկման վրա։ Արևելյի Երկրներում ազգարային պրորեզմը և նրա յուրահատկությունները մեջնարաններու հայար վճռական նշանակություն ունեն ո.Ռ. Կովալյանիուն պրքի կոնսպեկտի<sup>1</sup> վերաբերյալ։ Մարքսի մտքերն ու դիտողությունները։

Հարժաւատ անդեկություններ ենք քաղել նաև նախատվեական Հետելյալ Հեղինակների ուսումնասիրություններից՝ Դ. Բաբրովն, Ա. Կոլյուրակին, Ն. Լենսկի, Յա. Մալամա, Ա. Ռուպակին, Ռ. Տերմեն և հայ Հեղինակներ Ա-դոյի, Ասոյի, Մուրադյանի, Խաժակի, Գ. Տեր-Կարապետյանի և ուրիշների գործերից։

Ազգարային պրորեզմի ուսումնասիրությունը Հետազայում շարունակվել է, և այն բազմաթիվ առեկտներով ու Հատուկ աշխատություններում ներկայացվել է գիտական հասարակարնությանը։ Հիշյալ աշխատությունների թվին են պատկանում Ա. Սամբարյանի, Յ. Պ. Սարգսյանի, Դ. Ա. Արզույանի, Պ. Ժոկովյանի և այլոց աշխատությունները։

<sup>1</sup> Маркс К., «Конспект книги М. Ковалевского «Общинное землевладение, причины, ход и последствия его разложеши», «Советское востоковедение», 1958, №№ 3, 4, 5, «Проблемы востоковедения», 1959, № 1.

Հազարին հարցին նվիրված են առանձին ժողովածուներ՝ և բաղմաթիվ էշեր՝ Թուրքիային վերաբերող տարրեր աշխատություններում։ Մեր հատուկ ուշագրության առարկա են եղել Թուրք Հաղթակներ Հ. Ավսիի, Ս. Արտոյի, Թ. Բալութաղուու, Է. Զ. Կարապի, Ի. Հյուսուսի, Դավան Ավագովուուի, Բամայիլ Ջեմի և այլ պատմաբանների ու սոցիոլոգների տեսակետները, որոնց անդրագործել ենք սույն գրքում։

Անցումը իմպերիալիզմին, Համաշխարհային շուկայի ստեղծմամբ ամենուր, ևան Թուրքիայում, ուժեղացրին ֆեոդալական կարգերի քայլայտմը։ Արդեն անցյալ դարի վերջերին կապիտալիզմի ներթափանցումը անտեսության ու Հաստրակական փոխհարարերությունների մեջ դարձել էր իրականություն։

Հասարակական պոլտինթացի, զարգացման օրինաշափությունների ընդհանրությունը հարավորություն է տալիս ամփոփելու և մասնարինակ երևոյթները և համեմատության եղբեր գտննուու ոչ միայն Արևելքի թույլ զարգացած երկրների, այլև, օրինակ, Ռուսաստանի և Թուրքիայի միջև։ Գոյության ունեն հնդկափոխական ու զմոնկրատական պայքարի փորձից բխող և կոմունիստական ու բանվորական կուսակցությունների կողմից մշակված սկզբունքային տեսակետներ՝ Արևելքի երկրների, նրանեցում կոտիտալիզմի ու բորժուազիայի զարգացման վերաբերյալ։ Այս տեսակետից կարևոր են կոմունիստական ու բանվորական կուսակցությունների 1969 թ. Մասկվայում կայացած միջազգային Համաժողովում Թուրքիայի ներկայացուցիչների ելույթները, որանդ նշվում է, որ այն եղել է «իմայիրիայի տակական» քաղաքականության թէ՛ դու՛զ և թէ՛ դործիցը»<sup>1</sup>, Թուրքիայի գերի այս սահմանումը բնականորեն վերաբերում է որոշակի ժամանակաշրջանի՝ սկսած անցյալ դարի վերջին քառորդից մինչև մեր օրերը։

Աշխատությունում պատագործված են Առվետական Միության բազմաթիվ արխիվների նյութերը, Հիշտակության արժանի են Ռուսաստանի արտաքին քաղաքականության, կենտրոնական

<sup>1</sup> Տե՛ս «Ագրարն առաջակած և քրեակած շայլություն» Հարաբեկան տեսական աշխատությունում պատագործված են Առվետական Միության բազմաթիվ արխիվների նյութերը։ Հիշտակության արժանի են Ռուսաստանի արտաքին քաղաքականության, կենտրոնական

<sup>2</sup> «Международное совещание коммунистических и рабочих партий». Документы и материалы, М., 1969, стр. 234.

պետական ռազմապատմական, ռազմաքովային նավատորմի, Մուսկվայի, Էնթիվրազի, Վրաստանի և Հայաստանի պետական պատմական արխիվների ֆոնդերը, ինչպես նաև Երևանի Մ. Մաշտոցի անվան մատենագրարանի և օ. Չարենցի անվան արգելատի գրականության թանգարանի նյութերը:

Ծառագործել ենք արխիվային փաստաթղթերի մի շարք ժողովածուներ և առանձին հրատարակված փաստաթղթերը: Դրանց մեջ մեծ կարևորություն ունեն Ռուսաստանի ռազմական և ժողովային գործակալների ուսումնառությունները, ռազմական բանակի գլխավոր շտարի տնօնեկազրերը, «Թուրքական ժողովածուի», «Հայքի դրությունը Թուրքիայում մինչև 1895 թվականին մեծ տերությունների միջամտությունը», «Թիվան Հայոց պատմության» (գիրք գԴ), «Շտար ազգայուրները Հայաստանի և Հայերի մասին» և այլ ժողովածուների նյութերը:

Անշարժ, հաշվի է առնված, որ հիշյալ ժողովածուների ու պաշտոնական փաստաթղթերի մեջ բերված փաստերն ու արվածալները հաճախ մնկնարանվում են՝ ենթադրվ արևմտյան տերությունների և ցարական Ռուսաստանի շահերից: Սակայն զբանց պարունակում են չափազանց հարուստ փաստական նյութ, մասնավորապես վիճակագրական տնօնեկալթյուններ, ինչպես նաև առանձին երևույթների որյակտիվ վերլուծություն:

Գրքում լայնորեն օգտագործված են սովորական հրատարակությունների ստուգված ավալաները: Դրանց թվին են պատկանում Ռուսաստանի արտաքին գործերի մինիստրության գոգոնի փաստաթղթերի ն. Ա. Աղամովի խմբագրությամբ լույս տեսած ժողովածուն՝ «Ասիական Թուրքիայի բաժանումը», ԱՍՀՄ և Բուլղարիայի գիտությունների ակադեմիաների համատեղ հրատարակած «Բուլղարիայի ազատագրումը թուրքական լժից (1875—1879)» փաստաթղթերի եռահատոր ժողովածուն, ՀՍՀՀ ԳԱ նախագահության որոշմամբ՝ պրոֆ. Մ. Ներսիսյանի խմբագրությամբ հրատարակված «Հայերի գենոցիդը Օսմանյան կայսրության մեջ փաստաթղթերի և նյութերի ժողովածուն և բազմաթիվ այլ հրատարակությունների:

Օգտակար տվյալներ ենք բազել «Արևելքի երկրներում կապիտալիզմի գենոցիսի մասին (XV—XIX դդ.)», «Անհավասար պայքարի դարեր», «Ազգային պրոցեսները Մերձավոր և Միջին արևելքի երկրներում» և այլ ժողովածուներից: Սովորական

Հհամազատողների շանթերի շնորհիվ հիմնականում մշակված են երկրի բնօքանուր պատմության և նրանում բնակված առանձին ժողովուրդների գարգացման մի շարք կարևոր պրոբլեմներ:

Օսմանյան կայսրության պատմության և սոցիալ-տնտեսական խնդիրների լուրջ վերլուծությամբ հանդիս են եկեղեց. Յ. Միլլերը («Մուտաֆա փաշա Բալլակուտար», «Թուրքիայի համառոտ պատմություն»), Ա. Դ. Նովիկները («Թուրքիայի էկոնոմիկան առաջին համաշխարհային պատերազմի ժամանեակաշրջանում», «Թուրքիայի տնտեսության պատմության ակնարկներ մինչև առաջին աշխարհամարտը», «Թուրքիայի նոր շրջանի պատմությունը և այլն):

Սովորական բազմաթիվ հեղինակների գրքերում ու հոդվածներում կան շափապանց հարուստ նյութեր, փաստական և վիճակագրական տեղեկություններ, որոնք ուղղակի կամ անուղղակի առնչվում են մենապրության հիմնական խնդիրներին:

Թիւ լին նաև մինչուկումքերից շրջանին վերաբերող մասնագիտական հոգվածները, ճանապարհորդական նոթերը, կռնկրեատ ուսումնասիրությունները և պարբերականներում հրապարակված տեղեկությունները, որոնք առաջը են հանդիսացել այս կամ այն հարցը մեկնարանելին, մասնավորապես, Թուրքիայի տնտեսության և նրանում կապիտալիստական հարաբերությունների գարգացման առանձին խնդիրներ պարզաբանելիս: Մեզ համար շափապանց կարևոր նշանակություն ունեն հեղափոխական ու առաջադիմ դորժիւների հոգվածները Թուրքիայի մասին: Լինելով աղղային շարժումների և երիտթուրքական հեղաշրջման ժամանակակիցներ, Ռուզա Լյուբինսրուրզը, Վ. Վ. Վորովսկին, Բ. Մ. Կնումրանցը, Ա. Գ. Զուբարյանը և ուրիշներ այդ շարժումները գնահատել են որպես երկրի սոցիալ-տնտեսական և քաղաքական գարգացման արդյունք, ցույց են տվել երիտթուրքերի նպատակների վերեախավային բնույթը՝ դրանք կապելով Թուրքիայում տիրող իրավիճակի, առանձին դաստկարգերի, սոցիալական խավերի և հնագնեան սրվող ազգային հարաբերությունների հետ:

Ժամանակակից թուրքագիտության գարգացման մեջ ժանրակշիռ ազանց են ներդնում բուզզար գիտնականները: Ուսումնասիրելով իրենց ժողովրդի պատմությունը, նրանք լուսաբանում են նաև Օսմանյան կայսրության պատմության առանձին

փոլիերը, կամ պատմական առաջընթացի առանձին կողմերը, հասուն ուշադրությամբ վերլուծելով Բալկաններում թուրքերի տիրապետության ժամանակաշրջանը և նրանց ազդեցությունը բարիկանքան ժաղովուրդների տնտեսական, քաղաքական և կուլտուրական զարգացման վրա:

Այս իմաստով շափազանց բարերարժեք են ակադեմիկոս Ն. Տ. Ցողորովի՝ Բալկանների տնտեսական ու սոցիալական զարգացման վերաբերյալ աշխատությունները։ Հենց թուրքական արխիվների հարուստ նյութերի հիման վրա նա ցույց է տալիս այդ զարգացման հասարակական հիմքերը, հաճախ տալով այսպիսի ամփոփումներ, որոնք կարելի է ընդունել որպես օրինաչափությունների հայտնաբերում կայսրության ամբողջ տարածքի համար։ Այդպիսին են, օրինակ, նրա Եթուկանյան քաղաքը XV—XIX դդ.-ու կապիտալ աշխատություննեղակացությունները, նա արդ գրքում հանգամաներին մեկնարանել է քաղաքների սոցիալ-տնտեսական և դիմոգրաֆիական խնդիրները նշված ժամանակաշրջանում և հանգել է այն շափազանց կարևոր եղանակացությանը, ըստ որի մինչև XVIII դ. վերը տահրապետող ժողովուրդը արտադրողական ուժների ընդհանուր զարգացումից դուրս էր մնում և այդ հանգամանքը ուր կնիքն է զրել Սամանյան կայսրության ամրող սոցիալական ու քաղաքական կյանքի վրա<sup>1</sup>,

Ն. Ցողորովի այլ աշխատություններում ներկայացված է կապիտալիստական հարաբերությունների զարգացումը Բուլղարիայում XIX դարում և ընդգծված, որ այն եղել է զվարդորապես ներքին տեղաշարժերի արդյունք Հեղինակը առարկում է բուլղար պատմաբան Դ. Կոսունին և մի շարք թուրք պատմաբանների, որոնք կապիտալիզմի մուտքը Թուրքիա կազում են միայն արտաքին ազդեցության հետ և ունելով նվազագի գերի մասին, Ն. Ցողորովը գտնում է, որ շիազագ զարգացման առանձին փուլերում այն իրապես եղել է զրական՝ Բալկաններում կապիտալիստական հարաբերությունների ամրապնդման իմաստով։ Մյուս կողմից, սակայն, թուրք կառավարության քաղաքականությունը խաղացել է իրեն առանձնահատուկ բացառական գործոնի գեր:

<sup>1</sup> Тодоров Н., Балканский город XV—XIX веков, М., 1975, стр. 410.

Բուլղար զիտնականները խիստ քննություններ են ձեռքբուժության և է. ջ. Կարալի բազմահատոր «Օսմանյան պետության էջերում և այլուր արտահարաված այն տեսակետը, որ իրը «Թուրքիրը ազգատագրել են» Բաղկանները, և որ նրանց աիրապետությունն այնուղ ունեցել է առաջադիմական նշանակություն...»<sup>1</sup> Միանգամայն Համբայի են ակազմակերպությունները, որ նրանց ազգահանգումները բաշկանյան ժողովուրդների անտեսության, կուլտուրայի, կենցաղի և կենսական բազմաթիվ այլ խնդիրների վրա թուրքական աիրապետության բացասական ազդեցության վերաբերյալ:

Վերջին տասնամյակներում երկրի առցիալ-անտեսական պրոբլեմներին լրջորեն անզրագառնում են նաև թուրք պատմաբանները, սացիսլոգներն ու անտեսապետները: Մեզ ժանոթ աշխատություններից նշենք թուրք մարդունստ ևալիս Օկանի գիրքը՝ Թուրքիայում կապիտալիզմի գարգացման մասին, որտեղ դրված խնդիրները լուսաբանվում են միանգամայն Երշաղիրքներից: Դժբախտաբար, նման ուսումնառությունների կամ նույնիսկ Հոգմածների թիվը լափազանց սահմանափակ է: Սակայն բավական մեծագույնակ են թուրք բուրժուական Հայութուղների աշխատությունները, որոնք, որպես կանոն, զուրկ են լուրջ ազդրուրացիտական հիմքերից, մասնավորապես սոցիալ-անտեսական պրոբլեմները քննարկելիս: Այդ ըրատարակություններին բնորոշ են ընդհանուր դատողությունները, շատ հաճախ կոնկրետ նյութի և զիտական վերլուծության բացակարությունը: Համարյա թուրք թուրք Հեղինակներն աշխատում են շրջանցել ազգային խնդիրն ու աիրող խավերի ազգային քաղաքականությանը վերաբերող Հարցերը, կամ չեն լուսաբանում նվաճված ժողովուրդների մասնակցությունը երկրի անտեսական, կուլտուրական ու քաղաքական կյանքին, առաջընթացի պատմական պրոցեսին: Այդ Հեղինակներից ամենատարածեներն անգամ շեն կարողանում երբեմն Հայոթարել ազգային սահմանափակվածության արտահայտությունները: Անրավարար ուշադրություն է դարձվում Հայկակեն երկրի անտեսական պատմությանը, որի ընթացքում թուրք բուրժուազիան այլազդի բուրժուազիան առաջարկության համեմատությամբ:

<sup>1</sup> ЗН «Исторические переговоры», 1963, № 3, с. 89—99, «Народы Азии и Африки», 1964, № 3, с. 154—155.

կատարել է երկրորդական գեր Այս իրողությունն անընդունելի ու անհամառեղիք է երկրում տարվադ ազգայնական քաղաքականության ու տիրապետող գողափարախոսության հետ, որը իր հերթին խիստ ազգում է զիտության զարգացման վրա և որի հանձնեցով ռամանյան պատմագիտության մեջ անհամական և սոցիոլոգիական ուսումնամիրությանն ենք իրենց պատշաճ տեղը չեն գրավել, Ալույթ ունենալով Սամակյան կայսրության պատմությանց նվիրված կոնֆերանսում, Մերձմայոր և Միջյին արնելքի տեսուսական պատմության խոշոր մասնավետ, Կոլումբիայի Համաշխարհի պրոֆ. Շ. Խոսավիեսի պարզված էր ընդգծել, որ կայսրության 1600—1914 թթ. արևատիսական կյանքի մասին իր զեկուցման մեջ ավելի շատ հարցեր կային բարձրացված, քան հզրակացություններ, որովհետ Թուրքիայի վերաբերյալ Հոկայածավալ գրականության մեջ չափաղանց քիչ է տնօտեսական ինֆորմացիան։ Հիշյալ պրոբլեմի շրջանցումը հետևանք է ոչ միայն ազգայնական մուտքաման, այլև արտացոլում է հետևյալ օրյեկտիվ պրոցեսը Զարգացող երկրներում բուրժուական հարարերությունների հաստատումը և ազգային կուլտուրայի հետազոտական առաջ ներկում մարուր ազգային պատմություն, մշակույթ և լեզու ունենալու թե՛ ձգում և թե՛ բազարականություն։

Թուրքական իրականությունը նման երևոյթի գառական սրինակ է։ Հիշենք, որ այս նրկրում կուլտուրայի զարգացումը տեղի է ունեցել իրանա-արաբական և ապա եվրոպական մշակույթի ազդեցության պայմաններում։ Պուրիզմի նշանաբանով տարվանը պայքարն ուղղված էր այդ երկու ազդեցությունների դեմ, քանի որ նրանք չեին կարողանալու հանդիսանալ զարգացման նոր փուլի հիմքը։ Մյուս կողմից, ոչ քեմալական շըրշանի բուրժուադիմոկրատական ուժի ունեցումները, ոչ էլ արևմտյան երկրների հետ հետազում մերձեցումը լրուեցին երկրի առջև ժառացած ացիալ-անտեսական ու բազարական կարևորագույն խնդիրները։ Դրա հետևանքը եղավ այն, որ Թուրքիայում ուժի դարձավ պատմական անցյալում ելք վիճորելու ձգումը։ Հատկապես 1950 թ. մայիսի 27-ի և մահավանդ 1950 թ. սեպտեմբերի 12-ի հեղաշրջումներից հետո այն գարձավ մեզայիկ դրականագիտ Ջեմիլ Մերիլի արտահայտությամբ Թուրքիա-

<sup>1</sup> Տե՛ս «Հերօն Ասու և Աֆրիկա», 1977, № 4, էջ 206.

լում «Հասսաները» եմիրապականանում էին, իսկ մատավորական-  
 ները ավելի ու ավելի էին դառնում թուրքերու։ Հետզհետև և  
 նորից (բանի՞երորդ անգամ) ձևավորվում էր թուրքերի առաջ-  
 ընթացի ինքնատիպության տևասությունը։ Ըստ արդ տեսու-  
 թյան «Թուրքիան իր զարգացման ընթացքում պահպանել էր սո-  
 ցիալական կյանքի ազանգական ձեր և պետք է Հրաժարվեր  
 Արևմուտքի առաջարկած արդիականացումից»։ Այդ տեսության  
 էությունը և նպատակիր՝ Օսմանյան կայսրության սոցիալական  
 կառուցվածքի իդեալականացումն է։ Մինչդեռ, եթե թարձրացվեր  
 պատմության վարագույրը և գիտականորեն մշակվեր կապիտա-  
 լիզմի ու բուրժուական հարաբերությունների զարգացման պրո-  
 ցեմը, պետք է ցույց տրվեր ու զնահատվեր արավնական, Հռնա-  
 կան, Հայկական, Հրեական և այլ կապիտալիների անհամեմատ  
 ակտիվ և դիմամիկ գործունեությունն ու ազդեցությունը երկրի  
 տեսության և կուլտուրական կյանքի վրա։ Մյուս կողմից, ան-  
 հրաժեշտ կլիներ լուսաբանել թուրք վերնախավի, նրա տես-  
 ական քաղաքականության բացասական գերեւ իր գործության  
 ամրող շրջանում, մի բան, որ էլք համապատասխանի ճիշճալ  
 տեսության ոգուն ու նպատակին։ Դեռև մոտ կես զար առաջ  
 Թուրքիայում ազգարային խնդիրն ուսումնասիրող առաջին սո-  
 վետական գիտնականներից մեկը՝ Կազիմիր Վասիլևիկին, իրա-  
 վացիորեն նկատել է, որ թուրք հետազոտվեների մեծամասնու-  
 թյան համար ընդհանուր է «Թուրքիայում ազգային հարցի բա-  
 ցասումը ու կոծկումը և ամեն ինչ շաղգային», «թուրքական և  
 ներկայացնելու ձգտումը...»։ Նա նշում է, որ արդ նկրառումը շա-  
 փազանց տարարենպաստ է անդրադառնում ինչպես դիտական  
 մակարդակի, այնպես էլ թուրքական իրականությունն իմացող  
 ընթերցողի հոգեբանության վրա...»<sup>1</sup>.

Դժբախտարար, այդ երեսվածքը շարունակում է պայատնել և  
 այն հաղթահարելու շանքերը գենուս շափազանց թույլ են։ Այսու-  
 հանդերձ, վերջին տասնամյակներում լույս տեսած գրականու-  
 թյան մեջ առկա են մի շարք լույց ուսումնասիրություններ,

<sup>1</sup> 1978 edebiyat yılı, 1st., s. 456

<sup>2</sup> «Народы Азии и Африки», 1978, № 3, стр. 73.

<sup>3</sup> Казимир В-ий, Турская экономика в описании самих турок, «Новый восток», 1930, № 8, стр. 241.

սրոնցում քննվում են այնպիսի կարևոր խնդիրներ, ինչպիսիք են՝  
 օժմանը ան կայսրության սոցիալական կարգը, կապիտալիզմի  
 դարձացման պատմությունը, Հողային Հարաբերությունները,  
 զուղացիության ու բանվոր դասակարգի պատմությունը և  
 այլն։ Նշված աշխատություններից են Թուրքիայի բանվորական  
 կուսակցության նախագահ Բեհչէր Բորանի «Թուրքիան և սո-  
 ցիալիզմի պրոբլեմները», Մուզաֆֆար Սենչերի «Սամակյան հա-  
 սարակական կարգը», Օյա Սենչերի «Թուրք հասարակության  
 պատմական զարգացումը», Հ. Ազգգենի «Թուրքիայի տնտեսա-  
 կան պրոբլեմները», Կ. Ֆիշեկի «Կապիտալիզմի զարգացումը  
 Թուրքիայում և բանվոր դասակարգը», «Սամանյան պետությունը  
 և երա տեղը Համաշխարհային պատմության մեջ» ժողովածուն  
 և մի շարք այլ գրքեր ու մենագրություններ, Օթե ընդհանրաց-  
 նենք նշված հեղինակների տեսակետները, առաջ կտեսնենք, որ  
 դրանց փորձն են զանելու երկրի զարգացման որինալափու-  
 թյուններն ու յուրահատկությունները։ Նրանց մեծ մասի կար-  
 ծիքով, «ամիսական արտադրակղանակից և հողի պետական սե-  
 փականության առկայությունը ստեղծեցին պայմաններ, որոնք  
 արգելակեցին, մի կողմից, սամանյան ֆեռզակական հասարա-  
 կարգի քայլայումը, իսկ յուս կողմից՝ կապիտալիստական  
 հարաբերությունների ձևավորումն այդ հասարակարգի ընդեր-  
 քում։ ԱՄԷր պատմարանները, — գրում է Մ. Սենչերը, — որոնք  
 ուսումնասիրել են սամանյան հասարակության կառուցվածքը,  
 ոչ միայն չեն ձգտն նմանեցնելու այն ընդհանուր որոշակի-  
 տիպի, այլ ընդհանրակությունը, հայտնարերել են առանձնահատ-  
 կությունները, որոնք նրան բաժանում են ընդհանուր տիպերից։

Ընդունելով երկրի տնտեսության մեջ կապիտալիստական  
 հարաբերությունների առկայությունը, Կ. Ֆիշեկը, Մ. և Օ. Սեն-  
 չերենքը և ուրիշներ դրանք համարում են Արևոտքի ազդեցու-  
 թյան արդյունք, դրանք ներածված երևույթ Փաստորեն այդ  
 տեսակետն են արտահայտում նաև Հ. Կարալը, Թ. Տունայան,  
 Օ. Կոնկերը, Թ. Մատմաղը և ուրիշներ։ Նշված հեղինակների  
 մեծագույն մասը զարգացման եվրոպական ուղին, այսպէս կոչ-  
 ված «Եվրոպականացումը» Թուրքիայի համար, և անշուշտ,  
 որոշ յուրահատկություններով համարում է բնական ու անխու-

<sup>1</sup> Sencer M., Osmanlı toplum yarısı, İst. 1969, s. 44

սափելի: Այս հետո այս պատճառով էլ նրանք իրենց երկրի վիճակը համեմատում են միայն եվրոպական երկրների հետ և Թուրքիայի համամեցության պահենաող համարում այն, որ իր թէ թուրքերի շեմբուղականացման ցանկությունները լընդունվեցին կայսրության հպատակ այ ժողովաւրգների, յասնազորակես արարեների կողմից, որոնք լհասկացան հիշյալ պրոցեսի կարևորությունը (Բ. Մամինադադ): Այդ գոռ բոլորը չէ Թանգիմաթից սկսած մինչև կայսրության անկումը բոլոր բարեփոխումների փորձների ձախողումը առանձին հեղինակների կարծիքով հետեւուց է բազմազդ պետության և հպատակ ժողովուրդների ու ցեղերի զարգացման տարրեր աստիճանների առկայության (Յու. Արտան, Բ. Սավցի): Երբեմն էլ Թուրքիայի համամեցությունը զիտվում է որպես շարժաթի որենքներից և խլամի գոգմաններից հեռանալու կամ զրանք մոռացության ուղղությունը նման տեսակնաների կողմեակիցների շարքերում, հոգևորականներից բացի, կամ պետական զարժիշներ և մտավորականության ներկայացուցիչներ: Այսուհանգերծ, կան հեղինակներ, ի թիվու որոնց նաև նրիմութոքերի ներկայացուցիչներ, որոնք կայսրության համամեցությունը փորձում են բացառիկ սոցիալ-տնտեսական գործոնների աղղիցությամբ և հարավոր են համարում զարգացման ռեալ այ ուղիներ (Մարտինակինների և ուրիշներ), կան նաև այնպիսիները, որոնք առաջարկում են ուղղակի օգուզել եվրոպական երկրների անտեսական փորձից և օգտագործել, որինակ, կոռպահյացիան, որպես զարգացման հարավոր ուղի (Մուստաֆա Սուլեյման, Ահմեդ Զևվադ), Թվարկված տեսակները, առկայն, քննություն լրոնեցին թուրքական իրականության մեջ և բնականարար չէին կարող լրացնել խնդրի առարկա պրորեմի զիտական մշակման բացը: Մեզ գոյն հայտնի չեն սոցիոլոգիական ու անտեսագիտական այնպիսի աշխատություններ, որոնցում թուրք հեղինակները կարողանային լրտորեն վերլուծել երկրի համամեցության զիտավոր, ներքին պատճառները, այն զործոնները, որոնք իրապես խանգարել են կապիտալիզմի ուղիով նրա առաջընթացին, արգելակել են բուրժուական հարաբերությունների զարգացումը: Սա-

<sup>1</sup> Abdan Y., Savci B., Türkiye'de Ansayasa gelişmelerine bir bakış, Ankara, 1959, s. 29—30

կայն թուրք պատմագիտությունը մեծ շանքեր է դորժազրում  
 իշխանականացնելու անցյալը, գովարաններու նույնիսկ սուլթան  
 Արդար Համբարձում և վերնախամբի բազմաթիվ ներ-  
 կարացուցիչների դորժունեռությունը։ Հայտնի պատմաբան է-  
 ջ. Կարալը արդարացնում է երիտրուրքերի քաղաքականությունը,  
 հայուարարելով, որ նրանց ըրարենորոգումներին ծրագրում  
 առկա էին նաև սոցիալական ու անտեսական խնդիրներ, որոնք՝  
 ապատամբություններին, պատերազմների ու տարբեր տնաւակի  
 հզնաժամկերի հետևաբազ չեին կարող իրավորածվել<sup>1</sup>, ի՞նչորեւ,  
 մենք ի նկատի ենք առն բազմաթիվ թուրք մասնպրականների  
 աշխատություններում տեղ գոած՝ կայսրության վերնախամբի  
 անտեսական քաղաքականության, երկրում տիրող սոցիալական  
 անհամապատասխան, կամայականության, կաշառակերության,  
 քայլայող հարկային սիստեմի բնագավառությունը, դյուողի աղ-  
 քատացման պատճենները, երկրի տնտեսության վրա տար կա-  
 պիտակի խորակիչ և այլ սացասական երևութների բացա-  
 հայտումը։ Հիշյալ աշխատություններում ևս չկա զիտական մա-  
 տեցման ամբողջական սիստեմ, չն վերլուծված կայսրությու-  
 նում տիրապետող սոցիալական կարգի բնօրոշ կողմները և ժանր  
 հնականները երկրի զարգացման վրա։ Հետաքրքրական են  
 թուրք պատմապիտության փորձերը (Աֆան Հիրմեթ և ուրիշ-  
 ներ) տնտեսական ոեֆորմների ձախողումը կապել զլիսավորա-  
 պես տրտացին քաղաքականության անհաջողությունների՝ կա-  
 պիտույքացիոն ռեժիմի, երիտրուրքերի և պրոպագանամեկա-  
 կողմնորոշման և նման այլ արտաքին հաւաքամեների հետ,  
 քողարկելով դրանց հիմնական, ներին պատճառները<sup>2</sup>. Չի կա-  
 րելի շատել նաև թուրք պատմագիտության մեջ տեղի ունեցող  
 մի արտառոց երևություն մասին։ Դա օսմանյան կայսրու-  
 թյան, նրա պատմության և այլ պետությունների ու ժողովուրդ-  
 ների վրա ունեցած ազդեցության իդեալականացման փորձերն  
 են։ Որպեսզի դրանք հասնեն միջազգային գիտական շրջաննե-  
 րին, մի շարք հեղինակներ աշխատում են իրենց գործերը հրա-  
 տարակել և վրապական լեզուներով, կամ Արևմուտքում լույս  
 անենող տարբեր զիտական կազմակերպությունների ժողովա-

<sup>1</sup> Economie et Sociétés dans l'Empire Ottoman (Fin du XVIII-e Début du XX-e siècle), Paris, 1983, p. 12.

<sup>2</sup> Հետ Ետ Հայ, 1964, N 11—12, s. 654.

ժուների, ամսագրերի և հանդիսների էջերում։ Դրանցից է արդեն Հիշատակված «Ծամանյան պետության մեջ ժողովածուն», Թեմակ Կարստի «Ներտածության» և «Ծամանյան պետության կազերս», ինչպես նաև Հ. Խալլըքի «Բուրբական պղղակը արդի նվրուպայի զարգացման գործում» աշխատություններում Ծամանյան կայսրությունը ներկայացվում է ոչ թե դեպի անկում զնացող պատմական երանութիւն, այլ մի գործոն, որը համարյա իր զայռաթյան ամրոցը ընթացքում (XVI—XIX դդ.) դրական ապդեցություն է ունեցել ոչ միայն կայսրությանը ենթակա Հակայական տարածքի վրա, այլ նաև Հարեան երկրների փոխարարակերտությունների հավասարակշռման և զարգացման գործում։

Նախապես իրենց ապահովելու նպատակով թուրք Հեղինակները, և մասնավորապես Թ. Կարստը, նախաճարձակ լինելով գևահատական նև առաջիս արևմայան խոշոր սամանապետների մի շարք կապիտալ աշխատություններին, որոնցում իրուն թե զժվար է գտնել որյինկարիվ եպրահանգումներ, քանի որ նրանք սամանյան հասարակությանը դատապարտել էին անխառափակելի կործանմանը։ Հենքելով այս տեսակետի վրա, նա բականյան ժողովուրդների պատմապիտությունը ևս համարում է զիտական բռվանդակությունից զուրկ՝ թելազրված ազատագրված ժողովուրդների սուրյեկտիվ զգացմունքների պահանջներով։ Նման զնահատական է արվում նաև թուրքական լծից ազատագրված տախական և աֆրիկյան ժողովուրդների պատմապիտությանը։ Մասնավորապես, արար Հեղինակների գործերը նա համարում է բականյան հետազոտություններից աղդված և հակաթուրքական կրթով գրված աշխատություններ։

Սակայն զիտական լուրջ ու անկողմնակալ մատնցումն այլ պատճեր է բացում ընթերցողի առջև Ավելին քան Հինգ հարյուր տարի գտնվելով օսմանյան լծի տակ, արար ժողովուրդների ներկայացուցիչները լէին կարող լիշել թուրք կառավարողների ռհակցիոն քաղաքականության ծանր հետևանքները հպատակ ժողովուրդների վրա։ Էմիլ Թուման իր «Աղղային-աղատագրական շարժումը» և արարական միասնության պրորլեմը կապի-

<sup>1</sup> ՀԵ՞՞ ԳԱ Հաստրակական զիտությունների զիտական ինֆորմացիայի սկզբանը զիտականության բարձրացնելը 20 Տ (25), 1978 թ.

<sup>2</sup> Նույն ակզ., էջ 11։

առաջ աշխատության մեջ գրում է, որ ազգային զգացումը արար-  
ների մոտ ձևավորվել է տօսմանյան տիրապետության հանդեպ  
զարգացող առելության հոգի վրա, տիրապետություն, որն իր  
հետ բերում էր կամայականություն, զրուցացիության քայլա-  
յում, առևտուի ու արհեստերի անկում»<sup>1</sup>.

Այդ մասին բազմաթիվ էջեր կան նաև հգիտական պրոց-  
րեսնիվ պատմարան Ամին Սահմի «XX դարի արարական ապրու-  
սամբությունը պրում» ժողովրդան և նրա արարական բաղա-  
ցականությունը ոսմաններից մինչև Աթաթյուրքը կողեկտիվ  
աշխատության հեղինակներ Ամին Շաբերը, Սահմ ալ-Արյանին,  
Մուհամմեդ Մուսատաֆա-Աթան ընդդեմ են՝ ուռանց շափա-  
կանցելու կարելի է ասել, որ այն բոլոր թերությունները, որոնք  
ներկայումս երևան են գալիք արարների անձնական ու հասա-  
րակական կյանքում, ոսմանյան գաղութառերության հետևանք  
են, դադութակիրություն, որը մի քանի դար անընդմեջ իր առե-  
լի ժանրությամբ սկզբում էր արարների կուրծքը<sup>2</sup>, Կան նաև  
ուրիշ տեսակետներ: Դրանց կողմնակիցները զանում են, որ օս-  
մանյան ֆեոդալական մեծ պետության ստեղծումը կարևոր ու  
առաջադեմ քայլ էր՝ համեմատած փոքր ու մասնատված աի-  
րությունների հետ: Այդ պետության հովանավորության տակ եղել են  
շրջաններ, երբ բարեկավելի են առևտուի պայմանները, աշխատ-  
ացել են տեղական արդյունաբերությունը և արհեստները,  
ստեղծվել են շուկաներ, նոր թափ է ստացել հասարակական  
կյանքը: Այդ կարծիքն է Հայտնում մեկ այլ եղիպատակ պատ-  
մարան՝ Թոփիկ Պըրրոն վԱրաբները և թուրքերը օսմանյան  
և աշխատության մեջ:

Նշված տեսակետը լրցորին քննադատում է է. Թուման, որեւ  
արարական տուններն երկրների միացումը Օսմանյան կայսրու-

<sup>1</sup> Туман Э., Национально-освободительное движение и проблема  
арабского единства, М., 1977, стр. 12.

شاكر امين سعيد الغريان ، محمد مصطفى عطا ، تر. كبا<sup>3</sup>  
والسياسة العربية من خلقاء العثمان إلى خلقاء الأتراك ،  
ص ٤٥

بره و توفيق ، العرب والترك في العهد الدستوري<sup>4</sup>  
العثماني ، القاهرة ، ١٩٦٠

թյան տարածքին, նրանց վերաբաժանումը էալենների ու վիլայցիների և դրանց ինքնուրույն գործազումը համարում է ֆեոդալական մասնավաճության ամրապնդում։ Հետեանքն այն էր, որ ցանվեցին սեպիանալիդմի սերմերը, ռուսներ իրենց պաշտօնեցին ավելի ուշ՝ XIX դարի վերջին և XX դ. սկզբներին, եղր արարական երկրներում սկիզբ առավ ազգային շարժումը<sup>1</sup>:

Պրորլեմի ուսումնասուրությունը շարութակվում է, և արարական արարականներ զենք չառ ասելիք կունենան:

Արևմուտքի բուրժուական պատմապիտությունը հարյուրավոր հատորներ է նվիրել Սոմանյան կայսրության պատմությանը։ Մ. Արքիլինին, Ա. Էնգելշարդուր, Վ. Թինեն և ուրիշներ կայսրության XIX դարի պատմությունը շարադրնին ամեն կերպ պըրպատում են Ամրոպայի ու մասնավորապես, Ֆրանսիայի աղքա-ցությունը։ Ֆ. Գրինը, Էմ. Դիլուսը, Խ. Յինը, Մ. Մակ-Կոլլ աշխատում են ցույց տալ Անգլիայի բարերար միջամտությունը Բուրբինի գործերին, ՅՕ տարի Սոմանյան կայսրությունն ուսումնասիրուզ և երիտրուրբական շրջաններին շատ մոտ կանգնած է։ Ֆ. Նայտը իր «Հեղափոխական հեղաշրջումը Բուրբինյում» աշխատության մեջ, որպես թուրքամետ գործիչ, շափականց մեծ հարգանքով ու զովաստերով է խոսում երկրում կոտարվող հոսուրական տեղաշարժերի մասին, արդարացնում է թուրքական սեմիմի կամայականություններն ու տիրապետությունը այլ ժողովուրգերի վրա, որը Անգլիայի իմպերիալիստական շահները ներկայացնող է։ Նայտի արտահայտությամբ Հիմնված է որբազմություններից ամենալավից՝ նվաճման իրավունքի վրա։ Առանց քաշվելու, է. Նայտը երիտրուրբերին անվանում է անզոնֆիլներ և հայտարարում, որ նրանց պես է պաշտպաններ, որովհետեւ երբ անզոն-բուրքական պատերազմի ժամանակ տամրոցը նվազագույնը հայտարարություններին էին, որ համակրությունը էին մեզա<sup>2</sup>։

Նույնպիսի մոտեցում են ցուցաբերում նաև պերմանացի, ամերիկացի և ուստ որոշ հեղինակներ։ Ամրոպական մանապար-

<sup>1</sup> Տում Յ. սկզբ. պատմությունը էլլուստրացիա 13.

<sup>2</sup> Խայտ Յ. Փ., Ռеволюционный переворот в Турции, СПб., 1914, стр. 43.

Հորդները, ղիվանապէտները, միսիսներները, լրագրողները և  
ուրիշներ կողմնակալ վերաբերմունքին զուգընթաց, և ելնելով  
հեց իրենց պետությունների կամ առևտութան ու այլ կազմա-  
կերպությունների շահերից, աշխատել են տալ այն երկրների  
նկարագիրը, ուր ալցելի են կամ մեկնել են հատուկ նպատակ-  
ներով:

Հեղշանուր է այն թնդր, որով արդարացվում է արևմտյան  
խոշոր պետությունների իրր զրական, ուսուցադիմական զնիքն  
Արևելքում և մասնավորապես Օսմանյան կայության տարած-  
քում: Մյուս կողմից, ամեն կերպ սրոգվում է զրանց քաջարա-  
կանության զաղութատիրական ու իմպերիալիստական բնույ-  
թը: Հաճախ նկատելի է ընթերցազի աւշագրությունը շեղերու մի  
փորձ ևս: Նվյուպայի ազգեցությունը և մանավանդ դրա հետ  
կապված բացասական երևույթները վերապրել այսպես կոչված  
կոմպրադորական (միջնորդ) բուրժուազիալին, որը, սկզբնական  
շրջանում, ընդօրինում էր Հույն, Հռեա, Հայ, Ղեանացի (Արևել-  
քում բնակություն հաստատած նվյուպացիներ և նրանց ժառանգ-  
ները) բուրժուազիայի ներկայացուցիչներին, որոնց կայերն  
Արևելութիւն երկրների հետ անցյալ գարում ընդլայնվում և գնա-  
լով սերտանում էին: Այս տեսակետը ոչ այնքան նվյուպական,  
որքան թուրք հեղինակների կարծիքների և երկրի հետամեացու-  
թյան համար մեղավորներ գտնելու փորձերի արդյունք է: Նըշ-  
ված բոլոր տեսակետները հաշվի են առնված գրքում: Մյուս  
կողմից, մեր ուժերի սահմաններում արել ենք ամեն ինչ, որ-  
պես որ որյունականութիւն, անկողմնակալ դիրքերից լուսաբաններ ուսում-  
նասիրվող խնդիրները: Ահա այս պատճառով էլ ամենայն ուշա-  
զրությամբ հետազոտվել են թնմային վերաբերող ազգյուրերն  
ու դժականությունը: Մասնավորապես հիշատակության արժանի  
հայ սոցիոլոգ և պրոգրեսիվ լրագրող Շողան Ավքանովուն ոթուր-  
քիայի հասարակարգը (երեկ, այսոր, վաղը) և երկհատորանոց  
աշխատությունը, Խամայիլ Զեմի ոթուրքիայի հետամեացության  
պատճառները խորագրով մի քանի անգամ վերահրատարակված  
գիրքը և այլն: Երիտթուրքերի տնտեսական քաղաքականությունը  
լուսաբանող երկերի մեջ նշենք Ֆիրուզ Ահմեդի ու Սորիտիթուր-  
քեր...., Պոլ Ֆեշի ու Պուտանզուալուիսը Արդուլ-Համիդի վեր-  
ցիւն որերինք, Ա. Սարբուկ և Երիտթուրքերը և Հեղափոխությունը, Ա. Մակղելլատամի ուսմանյան կայսրության հակատագիրը և  
ուրիշ աշխատություններ, որոնք կարևոր փաստաթղթեր և նյու-

թեր են պարունակում երիտթուքերի քաղաքականության, երանց ընդունած սրբելքերի ու որշումների վերաբերյալ, մանրամասն տեղեկություններ են տալիս Թուրքիայի ֆինանսների, տնտեսության առանձին բնագավառների, տնտեսական կապերի և կարևոր այլ հարցերի մասին:

Արժարածված պրոբլեմի վերաբերյալ շափականց հարուստ եյտմ են պարունակում Հայկական ազգաւորման պրականությունը և բաղմացակակ պարբերականները:

Պատմական Հայաստանը թուրքերի բռնադրավճան հետեւաբով իր մեծ մասով մեռաց ոսմանյան լիք տակ, իսկ Հայերը զարդան կայսրության հպատակ ու հարստութարմող մողովուրդներից մեկը էին լույս պետական հպատակներ, նրանց Արևմտյան Հայաստանից բացի, ցրված էին կայսրության ամբողջ տարածքի վրա՝ մի մասը որպես պանդուխու, իր ազգաւոր Հայթայթելու նպատակով, առևտրականներն ու արհեստավորները իրենց շահերի ու գրքի բերումով, մի մասն էլ անդապոխվեց վարչական ու քաղաքական նկատառումներով՝ կառավարության կողմից: Իսկ Կ. Պոլսի, Զմյուռնիայի, ծովափնյա մի շարք քաղաքների ու անտեսական կենտրոնների Հայ ազգաբնակչությունը հիշյալ վայրերում ապրում էր գենոս մինչև թուրքական գրավումը: Այսպիսով, Հայերը Սոմանյան կայսրության այն ժողովուրդներից էին, որոնք (ինչպես Հույները, Հրեաները և ուրիշներ) ակտիվորեն մասնակցում էին երկրի անհնական, քաղաքական և կուլտուրական կյանքին, չափագոված էին կայսրության զարգացման և իրենց Հայրենիքների առաջընթացի խնդիրներում:

Նշված դրույթների պերճախոս Հաստատումն է Հայ ժողովրդի կուլտուրական կյանքի կենտրոններում հրատարակման պարբերականների, և Հայաշատ վայրերի պատմական և նյութական կուլտուրայի Հայարձանների աշխարհագրությունը: Տարիներ առաջ Սովորական Հայաստանի՝ Ա. Յ. Մյասնիկյանի անվան Հանրային գրադարանը հրատարակեց «Հայ պարբերական մամուլի մատենագիտությունը (1794—1920)», որտեղ ի մի են բերված մոտ 4 հազար պարբերականների ուղարկները: Դրանց սկզբում են Մադրասում լույս տեսած առաջին տպագիր թիրթից և ավարտվում են Հայաստանում սովորական կարգեց Հաստատմելու տարեթվով:

Ըստ այդ մատենագիտության, Հայ պարբերականներից մոտ

890 տեսև Հրատարակում էր Ասիայի և Աֆրիկայի երկրներում, Ռուսաստանում, Սվերդլովսկ և Ամերիկայում նույն ժամանակաշրջանում լույս էին տեսնում ավելի քան 680 հայերին թիրթիր ու ամսագրեր Արևելքում Հրատարակուղ պարբերականների 80 տոկոսը կազմում էին Օսմանյան կայսրությունում տպագրվող թիրթերն ու ամսագրերը<sup>1</sup>, Կայսրության ավելի քան 25 Խաչակրաներում, ներառյալ արարական երկրները, մինչև 1920 թ. Հրատարակվել են ավելի քան 6 քիու Հարյուր քան անոնք պարբերականներ և միայն Խաչակրան (Ջմյունիա)՝ 53, Խոշորագույն Հրատարակչական կենտրոն էր Կոստանդնուպոլիսը։ Անցյալ դարի վերջին տասնամյակներից մինչև առաջին Համաշխարհային պատերազմը, ըստ Թորոս Ազատյանի Հաշվումների, ուշնինելի շատ թիրթ արտադրող վայրը կանոնավոր Թուրքիա Խախիկին մայրաքաղաք՝ Խաթանպուլ (324 թիրթ), հետ կուպան Թիֆլիս (196 թիրթ) և այլ վայրեր նրա շՄշակիք և ընոր դարից տիրամը Կովկասում հասել էր 1200—1500 տրինակի, Պոլսու և Արևելքու ու Քրիստոնությունը՝ 1903—1914 թթ. ունեցել են 7—8000 տիրամք<sup>2</sup>։

Այսպիսով, Օսմանյան կայսրությունում լույս տեսնող Հայ պարբերականները, աշխարհագրական նման անդադրման հանգամանքով կարող էին լուսարանել ու միայն Արևմտյան Հայաստանի, այլև ամրող երկրի կյանքը, ներառյալ նաև դավառները։ Դրանք արտահայտում էին սոցիալական բոլոր խավերին՝ Հայ բուրժուազիայի, մանրբությունական-դեմքրատական տարրերի, գյուղացիության, ինչպես նաև պահպանողական-հոգևորական շրջանների, ամիրանների, կոմպրադորների և վերևախավի այլ շերտերի շահերը։

Նիշյալ պարբերականները բնույթով և ձևով Հասարակական-քաղաքական, գրական-մշակութային, Հոգնոր-եկեղեցական, քայլ նաև առևտրաարդյունաբերական ուղղություն ունեցող Հրատարակություններ էին։ Դրանք մեծ մասամբ Համապատասխանում էին կապիտալիզմի ուղիով ընթացող, բուրժուական դարդացման փույն ապրող և ֆեոդալական կորդերի, հին քարայր սովորույթների, տիրող կամայականությունների ու բը-

<sup>1</sup> Հայ պարբերական մամակի մատենադրություն (1794—1920), Համագյուղ յանձնական նշան, 1970, էջ 527—571։

<sup>2</sup> Վահաճական, մասնաւունաճու Հյուսուսկորան, պատրաստեց Թորոս Ազատյան, Խաթանպուլ, 1943, էջ 2։

Նությունների և ռազմարյուրոկրատական վերնուխավի քմահան վերաբերմունքի դիմ պայքարող ևսը հասարակարգի պահանջներին, մեսկանաբար, մամուլն իրերի վիճակը արտացոլում էր հետրավորին շտփ որչեկտիվորին, քանի որ այն պեսք է ձառայեր հիշյալ նպատակների և ընթացիկ գործունեության կամ առորդա կյանքի առաջազրության մեջիրների իրականացմանը, Հետևորար, ժամանակի հայ պարրերականներն ու գրականությունը, իրավաբար, Արհմայան Հայաստանի, որոշ իմաստով նուև ամբողջ Օսմանյան կայսրության, պատմության շափականց կարևոր աղյուսը նև Սակայն դրանք դեռևս անբավարար նև ոգտագործվում Օսմանյան կայսրության պատմությունն ուսումնասիրությունների կողմից և միայն հայ և մասամբ քուրությունների պատմությամբ զրադապնիքներին է, որ հիշյալ աղյուսը, առ այսօք աային է անկրկնելի ու շափականց կարևոր նյամքներ Հիշենք, որ իրերի բնիմամբ հայ հնդիկակները Շանտյա էին հանդիս գալիս որպես լավատեղյան և որինկարիվ ուսումնասիրություններ, մասնագիտներ ու կայսրության պատմասիտանատու զարգիշներ, Թիլ շեն փաստները, երբ նրանք իրենց նկարագրած դիմութերի մասնակիցներն են կամ ականատեսները: Որպես ոնուննական կյանքին ակաբիկորն լժված ժողովրդի զավակներ, նրանք հասկապես զրազվնել են սոցիալ-անտեսական երեւյների ուսումնասիրմամբ: Համապատասխանութենք, հրատարակված պարրերականներն արտացոլում էին նման գործունեության այս կամ այն կողմը, որը և երեսում է թերթերի, շարաբամներին ու մասագրերի անուններից: Այսպիս, արդյունարերության և առնորի խնդիրները լուսաբանում էին «Առևտրական լրագիրը» (Հայատառ թուրքերն՝ ոչերեղին Թիշարեթ թերզումացա), որ լուս էր տեսնում Պոլսում, 1850-ական թվականներին, «Առաջնորդ վաճառականաց», «Առևտուր», «Տնտես», «Դանձ արհեստից» և հասակա տասնամյակներին Հրատարակվող այլ թերթեր: Դյուզատեստեսության վիճակը և զարգացման ուղիները ներկայացվում էին «Երկրագործական Հանդեսին, ուշայ հողագործիք, «Դյուզատեստեսիս», «Դյուզատընեսիսի տարեցույցի» և ուրիշ պարբերականների էջերում: Կայսրության ընդհանուր դրության ու տնտեսական կյանքի, վերջինիս առանձին թեագավառների վիճակի, ներքին ու արտաքին ակտեսական կապերի ու սոցիալ-տնտեսական տարրեր խնդիրների

մասին հարուսա նյութ ենք գտնում այնպիսի բազմատիրաժ որաթերթերի ու շարաթաթերթերի էջերում, ինչպիսին էին «Արեգիլյան մամուլը», «Մասիս», «Բյուզանդիոն», «Սուրբանզակը», «Ժամանեակը», «Աղառամարոս», «Բյուրակն» և այլ պարբերականները:

Հայ պարբերականների մեջ, բազմաթիվ հարցերի լայն ու բազմակողմանի լուսարանման ասպարեզում, իրենց պատվավոր տեղն ունեն ամսազրեցու Սկսած անցյալ դարի 70-ական թվականներից «Փորձ», «Հանգիս ամսորյան», «Արագած», «Բազմավեպ», «Մուրճ», «Արուա», «Նոր Հոռանք», «Գործ» և այլ ամսագրեր լրջորին անդրադարձնել են Արևմտյան Հայաստանի երշնդհանրապետ Օսմանյան կայսրության քաղաքական ու տնտեսական վիճակին, արդյունաբերության, կազի, ճանապարհաշինության, ոռոգման, նախահանգիստների ու նավաշինարարության, նրկաթուղիների կառուցման և այլ հարցերին և Մուրճի խմբագիր, անտեսազնու Ա. Արաւիանյանը հաճախ է հոգվածներ ապագրել Թուրքիայի և Արևմտյան Հայաստանի տնտեսական հետամեռացության մասին, փորձնելով վերլուծել այդ երևույթի պատճառները:

Անհրաժեշտ է նշել, որ ազգային լեզուներով լույս տեսած պարբերականները մեծ շագերով արտահայտում էին իրենց ժողովուրդների նիստ ու կացը, նրանց պայմանի պատմությունը և ազգային պահանջները: Հենց այս տեսանկյունից էլ դրանք պետք է ցուցաբերեին քննադատական վերաբերմունք դեպի տիրող անիրավահավասարությունը և, վերլուծելով իրերի վիճակը, փորձնին ցույց տալ ավյալ գործությունից գույս գալու ինչ-որ ելք: Ծրիտթուրքական հեղաշրջումը և նրա հետևանքը հանդիսացող որոշ քաղաքական ազատությունները դարձան մամուլի գործունեության ակտիվացման նոր խթան: Թուրքական պարբերականներին զուգընթաց ավելիացան ազգային փոքրամասնությունների լեզուներով լույս տեսնող թերթերի և ամսագրերի թիվն ու հաճախականությունը: Ընդլայնվեցին մասնավորապես Հայ մամուլի էջերում արժարժվող նորիկինների շրջանակները: Դրանցում պատշաճ տեղ գտան այնպիսի երևույթների մասին սիստեմատիկ և վերլուծական նյութերն ու ինֆորմացիաները, ինչպիսին են՝ կառավարական կենտրոնական ու տեղական մարմինների

կարևոր միջոցառումներց, պառկամենախ նիստերի օրագրերը, բանկերի, առարտական ու արդյունաբերական ձեռնարկությունների գործունեությունը, արտաքին տնտեսություն ու քաղաքական և տնտեսական կազմերը և այլն:

Բացի պարբերականներից, Շամանյան կայսրությունում, տարեր ժամանակներում գործող 155 հայկական տպարաններում, որոնց գոնգում էին Կ. Պոլսում (104-ը), Իզմիրում, Վանում, Ազանայում, Տրապիզոնում և այլուր, տպագրչում էին առանձին ուսումնասիրություններ, ուսումնական ձեռնարկներ, հանապարհորդական հուշեր և այլ կարգի գրականություն, որ արշակի արժեք ունի առաջազրած խնդիրների ուսումնասիրության համար:

Այդ գրականությունից հիշատակության արժանի են Պ. Ազրականձայցի «Թորոս ազրարք» և այլ աշխատություններ, որոնք հրետ մասնաւով լույս էին տեսել Կ. Պոլսում 1879 թ. և 1884 թ.<sup>2</sup> Ա. Նաթանյանի «Տեղեկանք Բալույի, Խարբերդի... և այլ գաղտների մասին» աշխատությունը (Կ. Պոլս, 1883), Հ. Պ (ըրմբրյանի) ի՝ «Թուրքանայց հին վաճառականությունն ու վաճառականը 1740—1890» և «Մասնական պատմություն Հայ մեծատեներու» (Կ. Պոլս, 1908, 1909), Տորտ. Ն. Տաղավարյանի «Երկրագործության, անառաց և հանքաց զարգացումն ու շահագործումը» (Կ. Պոլս, 1909), Դրիգոր Սույանի «Մահմանագրական խոսքեր» ու նաուեր (Կ. Պ. 1910), Հ. Եազրիկյանի (Առում) «Պետական վերանորոգությունն ու Հողային հարցը», «Բարենորոգություններու հարցը...», «Շամանյան կայսրության անկան պատմությունը» (Կ. Պոլս, 1910, 1914, 1918), Խոենցյանի «Աշխարհագրությունն առմանյան պետության» (Կ. Պոլս, 1912) և մի շարք այլ հեղինակների աշխատություններ։ Դեռևս շուտումնասիրված, բայց չափազանց կարևոր, ներքին կյանքը ներկայացնող յուրահատուկ աղբյուր են այսպես կոչված «Հայատառ թուրքերին մամուլն ու գրականությունը» Դրանք, ըստ մասնագետների, կազմում են Հազարից ավելի անուն հրատա-

<sup>1</sup> Յայ Հայ պարբերական մամուլի ժամանակառությունը, էջ 612—613.

<sup>2</sup> Դյունը, նոր հրատարակությամբ, վեցերես լույս է բեմայէ ՀԱՅՀ 95 հազարաթյան և ազգագրություն ինստիտուցի

բակված թերթեր, ամսագրեր և պրեսու կան հատուկ ուսումնա-  
սիրությաններ և գրքեր, որոնք նվիրված են առանձին սոցիա-  
քաղաքական և տեսական խնդիրների:

Ալավես՝ Գ. Խաժակը 1903 թ. Բագվում հրատարակեց մի  
կարևոր ուսումնասիրություն Թուրքիայում գոյություն ունեցող  
Հարկերի մասին, Ո. Թիրթերյանը՝ մի հոդվածաշարք ֆինանս-  
ների, իսկ Ա. Մուրադյանը՝ հոդվածին հարցի մասին և այլու  
թագմաթիվ հայ հեղինակներ նկարագրել են երիտրուրքակա-  
շարժման զարգացման փուլերը, արժեքավորել նրանց գործու-  
ներությունը, առել պետական որոշ գործիչների ու մտավորա-  
կանների կերպարները:

ХІХ—ХХ դարերի ընթացքում աշխարհի տարրեր երկրնե-  
րում հայրենակցական միություններին կից կազմակերպվել են  
հրատարակություններ, որոնց զվարար նպատակն է հզել  
տպագրել գրքեր, հոդվածներ, հուշեր, վեպեր ու պատմվածք-  
ներ հայ ժողովրդի կյանքի, նրա վիճակի, հարևանների հետ նրա  
փոխհարաբերությունների մասին և նրանց կազմակերպած սիստե-  
մայականությունների մասին և նրանց կազմակերպած սիստե-  
մային ջարդերի ու առաջին աշխարհամարտի տարիների գե-  
նոցինի վերաբերյալ:

Հիշյալ հարցերի ուսումնասիրման և լուսաբանման պատվա-  
վոր գործում արժանի մասնակցություն են ունեցել Սովետական  
Հայաստանի և սփյուռքի պատմաբանները, դրողներն ու մտա-  
վորականները: Դժվար է գերազանցած նշված և շնշված հայ-  
կական աղբյուրներին նշանակությունը: Դրանց արժեքը լավա-  
գանց մեծանում է, եթե ի նկատի առնենք, որ թերթերի, ամ-  
սագրերի ու թուրքերն և Օսմանյան կայսրության հպատակ-  
քաղմականություն մյուս ժողովուրդների պարբերականների լրիվ հա-  
վաքածուներ չկան Սովետական Միության գրտղարաններում և  
արխիվներում, իսկ եղածները կիսատ են ու կարիք ունեն համա-  
լրվելու: Խել վերաբերում է հայալիքու պարբերականներին ու  
գրականությանը, ապա զրանք ամենից բազմաբանակն են և  
լրիվ, մի հանգամանք, որն ունի մեծ կարևորություն և հաճախ  
արգաւուք է հայրենիք-սփյուռք կազմերի գոյության ու ընդլայն-  
ման: Հայ զրականությունն ու մամուլը զգալիորեն լրացնում են  
նշված բացը նաև այն պատճառով, որ նրանք շարունակարար  
իրենց էլերում գետեղներ են նվազական ու թուրքական պարբե-

ցականներից կարևորագույն նյութեր և սվյաջներ՝ Օսմանյան  
կայսրության սոցիալ-ռեստարական կյանքին վերաբերող խըն-  
դիքների մասին, Անշուշտ, Հարավոր Հէր ընդպրկել մամուլում,  
պրականության մեջ հղած, արխիօններում կտնվող և արժարժ-  
վող խնդիրներն ընդպրկող բոլոր նյութերը։ Ահա այս պատճա-  
ռով էլ աշխատությունը լինք համարում սպառիլ, այլ մի քայլ  
առաջ այս մեծ պրոբլեմի ռւսումնասիրության ճանապարհին և  
շեուբակալությամբ կընդունենք ընթերցողների դիտողություն-  
ները։

## ՍՈՄԱՆՅԱՆ ՖԵՌԴԱՎԻՉՆՄ ԿԱՄ ԹՈՒՐՔԱԿԱՆ ԿԱՐԳԵՐ

Թուրքական կարգեր... Վ. Ի. Լենինի կողմից դրանք ընութագրվել են որպես որոնապետական և ռազմական ռեժիմ։<sup>1</sup> Սոցիալ-տեսական առումով, այդ կարգերի հետևանքը են Հանգիսացել պատմական Հետամեացությունը, զարգացման դանդաղ ընթացքը և երկրում տիրող ու դժուար գոյություն ունեցող բազմակացությունները։ Նշված երևույթների կայուն և դարձեր շարունակ գրեթե անփոփոխ վիճակը իր հերթին պայմանավորված էր տիրող ուազմամիապետական վարչակարգով, ճորտատիրական իրավունքի ուժից մեացուկների, Հողատերներից պրոլացիների կախման միջնադարյան ձևերի առկայությամբ։

Լենինյան սույն բնորոշումները XX դարի սկզբին Օսմանյան կայսրությունում գոյություն ունեցող իրավիճակի մասին, տալիս են բոլոր հիմքերը տեսական ընդհանրացումների և երկրի սոցիալ-տեսական ուղիների ճիշտ պատկերացման համար։

Օսմանյան կայսրության միջնադարյան ու նոր շրջանի պատմության, ինչպես նաև պատմական առանձին երևույթների ու զարգացման փուլերի վերաբերյալ Հանգամանալից վեահատականներ են տվել Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսը։ Մասնավորապես, օսմանյան պետության և երանում տիրապետող ֆեոդալական հարաբերությունների գոյությունը երանք համարի են ելույթ արգելը եվրոպական պրոգրեսի համար։<sup>2</sup>

Անշուշտ, նրանց սահմանումները՝ այսպիս կոչված ռասիական արտադրանեղանակին, արևելյան ֆեոդալիզմի առանձինատկությունների մասին, վերաբերում են Արևելյան բոլոր երկրներին, ի թիվու որոնց նաև Օսմանյան կայսրությանը։

<sup>1</sup> Անդ Վ. Ի., էլք, համ. 17, էլ 227, 227.

<sup>2</sup> Մարք. Կ. և Էնգելս Փ., Ըօլ., տ. 9, ստր. 239.

Թաշ ժանոթ լինելով միջնադարյան և ժամանակակից ազ-  
բյուրեներին, Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսը բարձր են գեահատեց  
Հատկապիս ֆրանսիացի ճանապարհորդներ Ժ. Բ. Տավերնյեի և  
Ֆ. Բերնյեի աշխատությունները. Պատմամասիրելով վերջինիս  
զիրքը Շմեծ մողովիք տիրապետության մասին, Կ. Մարքսը, այն  
համարել է «փայտուն, ալյի ընկերող, անխոցելին»<sup>1</sup>, իսկ Ֆ. Էն-  
գելսը գրել է. «Անրունի Բերնյեն իսկապես շատ լավն է: Միշտ  
ուրախանում ես, երբ պատահում ես ալզագիսի տարեց, լրջմիտ,  
պայծառամիտ ֆրանսիացու, որը միշտ ասում է իսկությունը»<sup>2</sup>.

Իսկ ի՞նչ է ասել իր ժամանակին այդ ականավոր բժիշկն ու  
փիլիսոփան, որը ԽVII դարի 50—60-ական թթ. 12 տարի ապ-  
րիլ ու ծառայել է Արևելյան երկրներում, զյուավորապիս Հրեց-  
կաստանում, բայց նաև՝ Օսմանյան կայսրությունում և Իրա-  
նում: Իր հիմքավոր աշխատասիրության մեջ նա գտնում է, որ  
տիրապետող ֆեոդալական փոխարքարերությունների հնտան-  
քով արդ երկրները ուղղ թե շուտ և անհրաժեշտորեն կապրեն  
միևնույն աղետը, միևնույն բնատիրությունը, միևնույն քայ-  
լարումը, միևնույն ամայացումը<sup>3</sup>: Այսուհետև, Ֆ. Բերնյեն, եղե-  
լով Արևելյում հոգի պիտական սեփականություն լինելու հան-  
գամաները, այն համարում է բնատիրության հաստատման  
պատճեռը, որից բխում են՝ «ճորտությունը, անարդարությունը,  
խարդախությունը, բարրարոսությունը...»<sup>4</sup>: Այս բոլորը համե-  
մատելով Արևմուտքում տիրապետող ֆեոդալական փոխարքա-  
րերությունների հետ, որոնց կա հոգի և այլ հարստությունների  
մասնակոր սեփականություն, կա տիմբք և քրոնը», Ֆ. Բերնյեն  
այս սկզբունքը համարում է առաջադիմության կարևոր գոր-  
ծուներից մեկը: Օվ, ընդհակառակը, հոգի ու ընդերքի Հարցա-  
տությունների պետական սեփականությունը, նրա կարծիքով,  
պատճեռ են հանդիսանում հոգերի ամայացման, արհեստների  
և առևտուրի քայլայման: «Ահա թե ինչու, — զբում է նա, — այդ  
ասիսկան պետությունները մեր ալյի առջև խզալի անկան

<sup>1</sup> Կ. Մարքսի նամակը Էնգելսին 2. 09. 1852 թ., Երկ., շ. 28, էջ 214—  
215.

<sup>2</sup> Ֆ. Էնգելսի նամակը Մարքսին 2. 09. 1853 թ., Երկ., մեջը, էջ 222:

<sup>3</sup> Берни Франсуз, История последних политических переворотов в государстве Великого магната, М.—Л., 1936, стр. 206.

<sup>4</sup> Նոյն տեղը, էջ 211.

վիճակի են Հասնումն՝ Վերլուժելով Ֆ. Բերնյեի տվյալները և  
պատմական փաստերն ու Հավաքած տեղեկությունները Կ.  
Մարգար ու Ֆ. Էնդելսը ևս արձանագրում են Հողի պետական  
սեփականության հարատևությունը Արևելքում:

1853 թ. Հունիսի 2-ի Խամակում Մարտու դրում է Էնդելսին.  
«Բերնյեն միանգամայն իրավացիորեն նկատում է, որ Արևելքում  
բոլոր երկու լինելու հիմքում (նաև նկատի ունի Բուրբիկին, Պարս-  
կաստանը և Հնդկաստանը) ընկած է նողի մասնավոր սեփակա-  
նուրյան բացակայությունը: Այս խսկական բանալին նույնիսկ  
արեւելյան երկնքի համար»:

Նույն թվականի Հունիսի 6-ին Էնդելսը պատասխանում է.  
«Հողի մասնավոր սեփականության բացակայությունը խսկա-  
պես հանդիսանում է Արևելքը հասկանալու բանալին: Դրանումն  
է երա ամրողք քաղաքական և կրոնական ուստամության հիմ-  
քը: Ազ նա այդ երկու լինելու բացառում է կլիմայական պաշ-  
տանեներով, Հողի բազադրությամբ և չըի պակասությամբ:  
... Այստեղ Հողագործության առաջին պայմանը, — շարունա-  
կում է նա, — դա՝ արհեստական սոսոգումն է, որը կարող է լի-  
նել կամ համայնքի, կամ տվյալ մարզի կամ կենտրոնական  
կառավարության գործընթացը: Այլ խոսքով, այդ գործը Հնարավոր է  
կազմակերպել միայն ընդհանուր, հասարակական ուժերով և  
պետության ղեկավարությամբ: Այսպիսին է նողի իրերի վիճակը  
Համարյա բոլոր աֆրո-ասիական երկրներում:

Սակայն արևելագիտության ժամանակակից ժակարդակը և  
զարգացման խնդիրները պահանջում են ընդհանուր օրինաշա-  
փություններին զուգահեռ գոնենել ամեն մի երկրի զարգացման  
առանձնահատկությունները և ցույց տալ Նրանց տեղը տվյալ  
երկրի կամ ժողովրդի պատմության մեջ: Այս պահանջը Հատ-  
կապես կարևոր է մի այնպիսի Հսկայական, բաղմադր ու բադ-  
մակղու պետության համար, ինչպիսին Օսմանյան կայսրու-  
թյունն էր: Ամենից առաջ պետք է նշել այն կարևոր առանձնա-  
հատկությունը, որ վաշկառուն թուրք ցեղերը իրենց գործակած  
երկրներին, որոնք որոշակիորեն զարգացած ֆեռդայիզմի շրո-  
շան էին ապրում, երկու անդամ վերագրածրին սկզբեա-

<sup>1</sup> Երկն Փրանսա, Ֆր. աշխ., էջ 203:

<sup>2</sup> Մարտ Կ. և Յուլիս Փ. ԾՈ. թ. 28, սր. 215

<sup>3</sup> Նոյն աշխ. էջ 221:

կան, ցածր զարգացման վիճակին: «ՀԻ դ. այդ բանը արեցին սելչուկները՝ բյուզանդական ֆեոդալիզմը վերագրաբնելով ռազմավատական հողատիրության սիստեմին, և ԽՎԴ դ.՝ ռամանցիները, որոնք վերականգնեցին այդ սիստեմը սելչուկյան զարգացման ֆեոդալիզմի փոխարեն»<sup>1</sup>: Նշված փոփոխությունները, կամ ամենի նիշտ, աշարիս, ցնցումներն, անկառակած, շատ թանկ նստեցին անզարեակ ժողովությունների վրա, քայլայելով տիրող տնտեսական համակարգը, ոչնչացնելով կուտակված հարզատությունները, նրանքական և կուտուրական արժեքները: Այս իրենց տիրապետության հենց սկզբից թուրք նվաճողները ստեղծեցին կայսրությունում լուրահատուկ միջնակ, որը և անդրագարձավ երկրի հնագամ զարգացման ամրող ընթացքի վրա: Բայց զարգացման առանձնահատկություններն ամենի պարզ ու որոշակի դրանորվեցին հատկապես ավալ հասարակարգի հաստիացման շրջանում, երբ ի հայտ եկան հաջորդ ֆորմացիոնին անցնելու դորժունները, սկսեցին ձևավորվել նոր հասարակական հարաբերություններ: Հիշյալ պրոցեսն սամանյան պետության մեջ սկիզբ էր տան գեռնս ԽՎԻ դարի վերջերին: Ֆեոդալական կարգերի նզնաժամը հազհնու խորանում էր և ԽՎԻII դարի վերջին— ԽIX դարի սկզբներին ընդուրվեց ամրող երկիրը, արտահայտվելով թե սոցիալ-տնտեսական և թե քաղաքական ոլորտներում: Հոգի և ընդերքի պետական սեփականությունն ու զբանով պայմանավորված հասարակական փոխհարաբերությունները, ինչպես նաև ֆեոդալների ժառանգական իրավունքների բացակայությունը այնու չէին համապատասխանում ժամանակի պահանջներին և ըստ հության կրում չին ձևական բնույթ: Հողատիրության ռազմավագատական սիստեմի քայլայտամը մոտենում էր ավարտին, հատզհնու ընդարձակվում չին հողի մասնավոր սեփականության սահմանները, զգալի շափերով ուժեղանում էր գյուղացիների շահագործումը:

Քաղաքական և պետական ոլորտներում տիրող կարգերի նզնաժամն արտահայտվում էր անշատողականության, անդայնության և ֆավորիտիզմի բուռն անի, կենտրոնական և անզական իշխանությունների կողմից կայսրության որենքները արհամարհելու մեջ: Ու մի պայքար չէր մղվում կաշառակերու-

<sup>1</sup> «Народы Азии и Африки», 1981, № 2, стр. 67.

թյան, շորթելու անհամար ու բազմաթիվ ձեռքի, վարչական ու գուտական մարմիններում տիրող և անազոր չափերի հասած կամացականությունների դիմ.

Այդ ամենը տեղի էր ունենում կենտրոնական բյուրոկրատուկան պարագան ունեցման պարմանենքրում։ Ամերիկան թուրքագիտ Ա. Վ. Ֆինդիկի Հաշվումներով, եթե XVI դարի 30-ական թվականներին մեծ վեղիրի զեկովարութ հիմնարկում աշխատում էին ընդամենը 50 բարուղարներ (բյաթիր) և 23 աշակերտներ (շագիրդ), ապա XVIII դարի վերջին կենտրոնական կառավարության գրասենյակներում աշխատում էին 1000—1500 մարդ։ Իսկ Արդուշ-Համբիդ երկրորդի շրջանում պետական հիմնարկներում գրադզաճ ժառայրների թիվը հասավ 50—100 հազարի։ Զարիր էր ոչ միայն բյուրոկրատիայի թվական աճը, այլև Հանգամանքը, որ պաշտոնյան ժառայրում էր կառավարչին, ոչ թե Հասարակությանը։ Այսդ բանը, — շարունակում է հեղինակը, — էականորեն սահմանափակում էր կառավարական գրասենյակների հիմնարկությունը, պահպանում հետմոլությունը<sup>1</sup>.

Թուրքիայի ռազմարշուրոկրատական վերնախավը սեփական ժողովրդին թալանելուց զատ, Հսկայական եկամուտներ էր եղրում և վաճառք երկրներից, որոնք փաստորն հանդիսանում էին երա գաղութերը։ Վ. Ի. Լենինը «Տեսորներ իմպերիալիզմի մասին» աշխատության մեջ նշելով, որ Թուրքիան պատկանում է արիական այն երկրների թվին, որոնց իմպերիալիստները հատուկ ենանուզգ ծվառում են առանձին մասերի, միաժամանակ դրում էր, որ նրա տիրապետության տակ են կան գաղութեր ու կախյալ երկրներ։ 1914 թ. իմպերիալիստական և գաղութատեր պետություններին և երանց տիրույթներին նվիրված իր կազմած ազյուսակում կախյալ երկրների շարքում Վ. Ի. Լենինը թվարկել է Սիրիան, Արարիան, ինչպես նաև Հայաստանը, Թրուստան ու Միջազգետը<sup>2</sup>. Հիշյալ երկրները, որոնց մինչև առաջին աշխարհամարտը մտնում էին Օսմանյան կայսրության տիրապետության տակ, բավական որոշակի կերպով Վ. Ի.

<sup>1</sup> Р. Ж. Общественные науки за рубежом. Серия 9, 1932, № 3, стр. 122—123.

<sup>2</sup> Տե՛ս Լենին Վ., Ելժ, Համ. 23, էլ 342.

<sup>3</sup> Տե՛ս Խոչ ուղղ., էլ 257.

Հենինը դասում է գաղութային կամ կախյալ երկրների շարքը, Իրապես, դրանք դիուս անցյալ դարի 70-ական թթ. համարվում էին կայսրության ուշարձառու երկրներ և որպես արտպիսիք ունեին չափազանց կարևոր նշանակություն. 1876 թ. Թուրքիայի տուաշին ասհմանադրությունը հաշակվելուց հետո հրապարակվեց կայսրության աղքարնակության վերաբերյալ տուաշին պետական փաստաթուղթը՝ սալսամեն, ըստ երկրի վարչական բաժանումների, ծխերի ու բնակիչների քանակության, որպազմավեպում՝ տրված ամփոփումներից երևում է, որ տաշխարհը երեք մասանց մեջ (Ասիա, Աֆրիկա և Ամերիկա—Հ. Բ.) անմիշական հպատակը Թուրքիոն իր 23 միլիոն էն. իսկ անելով հարկատու երկրներն ալ՝<sup>47</sup> միլիոնն ավելի բնակիչ կունենա Թուրքիա<sup>48</sup>. Այսմն երկրի բնակչության կեսից ավելին բնակվում էր բուն Թուրքիայից դուրս և կայսրությունում գանձվող հարկերի մեջ մասը գալիք էր հպատակ երկրներից, նշված հանգայինքը միանգամայն համապատասխանում էր թուրքական տերության քաղաքականությունը. Խըզեն ցույց է տվել Ա. Մարքսը, ըստ մահմեկանան, մասնավորապես թուրքական օրենքների ուշարժական սեփականությունը ճանարկում էր ամբողջապես նվաճողներին պատկանող, իսկ անշարժ գույքի համար հպատակ բնակչությունը վճարում էր խարաշը. Սովորուկան խոշոր թուրքագետ ակադեմիկոս Վ. Գորդենկին, խոսելով թուրքական նվաճումների և դրավմած երկրներում վարած քաղաքականության ուշարժական մասին, նշում է, որ այդ քաղաքականության ուշարժականության մասին, նշում է, որ այդ քաղաքականության ուշարժականության մասին մոնղոլներից՝ ու Հին սիստեմը՝ մասնաւում հետաքանակ էր զեկավարելու հանրահայր ու Հին սիստեմը՝ մասնաւում հետաքանակ էր ապրեցեր, միայն թե կանոնավոր վճարեցեց հարկերն ու տուրքերը. Այս է ամենը<sup>49</sup>.

Ֆինանսական արդ կարևորագույն աղբյուրի նշանակությունը երկու կողմերի համար կարելի է հասկանալ, եթե հաշվի առնենք, որ զամբած երկրների ազատապրավիլու պրոցեսը եղալ շատ երկար, տառաջալից և ավարտվեց միայն տուաշին աշխարհամարտի վերջերին. Այդ ամբողջ ժամանակաշրջանում, որը

<sup>1</sup> «Բազմավիճակ», Վենետիկ, 1877, շ. 10 (35), էջ 192.

<sup>2</sup> Маркс К., «Комспект книги М. Ковалевского «Общепринятое землевладение...»», «Советское востоковедение», 1958, № 4, стр. 15.

<sup>3</sup> Гордеевский В. А., Избр. соч., том 3, М., 1962, стр. 126.

տնեց ազելի քան 500 տարի, թուրքական լծի տակ գտնվող ժողովուրդները ենթարկվում էին դաժան շահագործման, կեղծքությունների, կամ պարզապես թալանի:

Կայսրության տարածքում ընակվող ժողովուրդների վիճակը ազելի ժամանակավ, երբ անցյալ դարի կեսերից թուրքիան դարձավ իմպերիալիզմի կիսազարդութերից մեկը, թուրք վերինախազին մեծագույն դժվարությամբ, բռնությամբ ու դինում ուժի ոգևությամբ հազիվ էր հաշողվում զապել ազատապրական շարժումները և պահպաննել իր տիրապետությունը։ Հպատակ երկրներում մշտապես պահպան էին հատուկ կայսերական, իսկ ազատապրական պայքարի հաճախակի բռնկումների ժամանակ անհրաժեշտ էր լինում դրանք ամրապնդել նոր զարմանաբերով, Մյուս կողմից, կայսրությունում սովորությունն զարմած, անդական զեկազարներին, ցեղազատերին կամ բարձր պաշտոնյաներին նվերներով ու պաշտոններով կաշառելը հետզհետե ազելի ու ազելի մեծ միջոցների պահանջ էր առաջադրում։

Այսպիսով, կայսրության պահպանման հարցը, մեր ուսումնասիրած ժամանակաշրջանում, դարձել էր ամենակարևոր և չրատապ խնդիրը։ Տիրող շրջանները ելքը տեսնում էին միայն ոինված ուժերի ամրապնդան և երկրի կյանքում նրանց աղքեցության ուժեղացնելու մեջ։ Օրնի այդ էր թիւադրում կայսրության պատմական փորձը, որը Հյուսվել էր ենթերական բանակի ԽV—ԽVII դդ. Հաղթարշավներից, իսկ ազելի ուշ՝ նաև հանդի ժամանակաշրջանում, աղատագրական պայքարի ելած ժողովուրդների հարձակումներին դիմակայիլու համար մեծաքանչ ոինված ուժեր ունենալու, անհրաժեշտությունից։

Ազելի ժոտիկից քեններ պատմական այդ երկույթները, քանի որ զրանք վճռական ու բախտորոշ եղանակություն ունեցան կայսրության Հյուրացման ու անկման պրոցեսում։ Կ. Մարքսն իր ժամանակապրական քաղվածքներում ցույց է տալիս Ասիայում տնօրին ունեցող տեղաշարժերը և հատկապես նշում, որ դեռև ԽIII դարում «Թուրք-ռումանների Հորդաները մուտք են դորժում Փոքր Ասիա, որտեղ նրանք, ամենից առաջ հիմնում են տվազակային պետություն կարաքիսար»։ Այսուհետեւ նա ըեղածում է, որ այդ պետություններ ուժեղ էր իր կարգապահությամբ և, կազմակերպված լինելով ողբաժնական-բռնապետական

<sup>1</sup> Մարքս Կ., Արքա, տ. 5, շ. 223.

«իմունքներով», Հանդիսանում էր «Միջնադարի մյակ խոկական ռազմական պետությունը»: Իր քաղաքականության մեջ այն ղեկավարում էր Ղուրանի և մահմեդական օրենքների հագածությունը շարիաթի պահանջներով: Ղուրանը պահանջում էր չկովկացնել նրանց հետ, ովքեր լնեն հավատում ալլահին... մինչեւ այն ժամանակ, քանի նրանք թուլացան և ոչնչացված լնեն տառիս փրկագին իրենց կրանքի համար»<sup>1</sup>.

Այսուհետեւ Ղուրանը ստիպում էր տաճապատճերից լվերցնել քարենկամներ, քանի դեռ նրանց լնեն տեղափոխվել աշխահի ճանապարհի վրա: Իսկ եթե նրանք հեռու կարուն իրենց (իսլամից — Հ. Ի.), ապա բռնկցնել նրանց և սպահեցներ, որոնդ որ նրանց զաներ: Ավ նրանցից լվերցներ ոչ քարենկամներ, ոչ էլ օգնականներս<sup>2</sup>:

Վ. Գիրգասը վերլուծելով Ղուրանի և շարիաթի գրույթերը, հիշու կերպով ուշադրություն է հրավիրում այն հանգամանքի վրա, որ ԱՄուհամմեդը իր կրօնը հաստատեց սրով և հանուն նրա տարածման մեջազատների դեմ պատերազմը հայտարարեց իր հաւեսրզների համար պարտադիր, այնպես, ինչպես պարտադիր էին ազութքը, պասը և մուսուլմանների այլ պարտականությունները<sup>3</sup>:

Հեղինակը վկայություն է Ղուրանի վերեռում ցիտված համապատասխան մասը տաճապատճերից մասին և շարումնակում մեկնարաւանել՝ «... անհավատությունը սպանությունից վաս է... կովկացներ նրանց հետ մինչև այն ժամանակ, երբ լի լինի անհավատություն և (իսլաման) կրօնը (կրտառկանի) միակ աստծունք<sup>4</sup>, անշուշտ, ալլահին: Ավ օրենքը իմամից պահանջում է տարին մեկ կամ երկու անգամ պատերազմել տաճապատճերին գեմ:

Զարմանալին այն է, որ ժամանակավրեալ թվացող այս քարտու պահանջները դեռևս արտահայտվում են պատմական ու գեղարվեստական գրականության մեջ: Այսպես, օրինակ, Ղուրը գրող Քեմալ Թահիրը «Դեվլիթ մայրիկ» խորագրով իր վեպում

<sup>1</sup> Маркс К., Архив, т. 6, стр. 177, 189.

<sup>2</sup> Масса А., Ислам, М., 1961, ст. 30.

<sup>3</sup> Коран, перевод И. Ю. Крачковского, М., 1963, сура 4, бейт 91.

<sup>4</sup> Гиргас В., Права христиан из Востока по мусульманским законам, СПб, 1865, ст. 52.

<sup>5</sup> Խորյ անգլ, էջ 53.

իդեալականացնում է թուրքերի միջնադարյան պատմությունը։ Կրքի հերոսներից մեկը կրկնում է վերևում նշված պահանջները։ ասված է՝ «ողու պետք է պյավուրեներին շարդն» անգամարը։ Ավ ասված է՝ «թուլլ լուսա զյուվուրին աշքերը բանալու»։ Սուրբ որ չի կարում, ժանապառում է, իսկ սուրը, որը կարում է, միայլում է»։ Այսուհետեւ, խաղաղությունը համարելով շարիք, եա պահանջում է՝ «ինչպես առաջներում, թող զինվորական շուկաները լցվնեն թշնամուց խլված բարիքներով»<sup>1</sup>.

Եարիաթի բաղմաթիվ մասեր և Հատուկ բաժիններ նվիրված են պատերազմներու կանոններին, պատերազմից առաջ ու հետո վարդող բանակցություններին։ Պատերազմը համարվում էր մահմեդականությունը հաստատելու զիշավոր միջոց և ամեն մի մահմեդական պարտավոր էր այդ Հիմնական նպատակին նվիրել իր անձը և գույքը։ Ոչ մահմեդական ժողովուրդների ու պետությունների դեմ մզվող պատերազմը համարվում էր «սրբազնե» («շիհազ») և ամեն մը շափառաւ տղամարդ պարտավոր էր անձամբ մասնակցելու պատերազմական գործողություններին, անկախ երանից դիմուրական է, թե քաղաքացի։ Եարիաթի համապատասխան բաժեռում խոսվում է այն մասին, որ իրավացի չի լինի պատերազմ Հայութարարի այն ժողովրդին, որին զիսն չեն զիշել իսլամի կրոնը ընդունելու կողով, կամ եթե նա համաձայնել է ընդունել Հայութակություն և վճարել Համապատասխան տուրք՝ շիզյե։ Օթե ռանչավատները այս երկու պաշտմաններից Հրաժարվում են, ապա շարիաթը պահանջում է ոնրանց դիմ սկսել պատերազմ... պողատու ծառերը և ցանքերը ուրեշացնել, անհավատների տեսքը քանզիլ...»<sup>2</sup>. Եարիաթը պարուղում է շիաթներ ավարը, շապանել զերիներին և պատերազմին շմառակցող ժողովրդին, այլ ուղարկել զերիներին թիկունք, որտեղ երանք կաշխատեն և մահմեդականների հարսաությունը պվելացնելու համար<sup>3</sup>. Ավ այսպիս, ամենայն մանրամասնությամբ ու օրենքով սահմանվում են այն գործոնները կամ պայմանները, որոնք ուղղված են ընդլայնելու իսլամի տիրապետության ապրածքը ու ամրապնդելու երա ֆեոդալական-թեոկրատական պետականությունն ամենուրի

<sup>1</sup> Тахир Кемаль, Глубокое ущелье, М., 1971, стр. 109.

<sup>2</sup> Հայէ տէղը, էջ 110.

<sup>3</sup> Гиргас В.. Права христиан на Востоке.... стр. 13.

<sup>4</sup> Խոյէ տէղը, էջ. 14.

Թեականարար, զորքի վրա հենված և նրա Հաղթահակեներից սպավող պետությունն իր ուշադրության կենտրոնում էր պահում Հռաջական բանակը և աշխատում էր լիովին բավարարել նրա անող պահանջները։ Դրա համար և հենց նույն բանակի օգու-թյամբ նու ձգուում էր իր ձեռքում պահել կուտակման բոլոր աղբյուրները՝ պատերազմական ազարը, թալանի միջոցով զիզ-ված հարսանիթյունները, Հարկերն ու տուրքերը։

Ռազմական ծառայության դիմաց բանակի հրամակադմին տրվում էին Համապատասխան Հողամասեր, որոնք կոչվում էին թիմար կամ պիամեթ։ Սրանք կազմում էին նոր գրավված Հո-զերի կողմար, իսկ արքունիքին և Հոգևորականությանը համաշ-վում էր հիշյալ Հողերի մեկ հինգերորդ մասը, որոնք կոչվում էին խասո և վակիֆ։ Հողերի մեկ տասներորդ մասը արամա-դրվում էր տեղական կայազորին<sup>1</sup>։ Սակայն գրավողի իրավուն-քունքով բաժանած Հողերի ընդհանուր արարածության 80 % -ի վրա էլ շարունակում էին մենալ նրանց նախկին անդերը՝ պլիա-մորապես քրիստոնյա գրուգացիները կամ ռուսաները, որոնք մշակում, ցանում, քաղում էին և սահմանված տուրքը, սկզբում մթերքների ձեռք, ազելի ուշ նաև դրամի, տալիս էին Համապա-տասխանորներ թիմար և զիամեթ ստացած զինվորականներին և Հողատեր դարձած կրոնական կազմակերպություններին։ Քանի աիրապետող ֆեոդալական խավերի հիմնական զրազմունքը պատերազմն էր և այն կերակրում ու Հարստացնում էր նրանց, Հողի նման վերաբաժանումը, կամ այդպիսի Հոգային Հարաբ-րությունները բավարարում էին ուազմաֆեոդալական վերնա-շերտին։

Սակայն XVI դարի վերջերից պատերազմական ազարը զգա-ցիորեն պակասում է, Ակսզում է նախեկինում Հողոր օսմանյան բանակի պարտությունների շրջանը։ Խնդգեն նշում է Օյս Անն-իերը, «XVI—XVIII դարերի պատերազմները լինի կարող առաջ-կա նման ունենալ լուրջ ազդեցություն և տալ տնտեսական օգուտներ, նբեն առաջներում պատերազմը հանդիսանում էր դր-սից Հավկլյալ Հարստություն ձեռք բերելու միջոց, ապա այժմ արդ ճանապարհը փակվում է և կորչում է եկամուտի կարևոր աղբյուրը»<sup>2</sup>։

<sup>1</sup> Տէ՛ս Միլլեր Ա. Փ., Մուտթաֆա-լանա Բայրակտար, Մ.—Լ, 1947, стр. 29.

<sup>2</sup> Sencer Oya, Türk Toplumunun Tarihsel evrimi, ist., 1969, n. 34.

Մյուս կողմից, արակործն առում էր հոգի շահավետությունը: Այս երանոյթների հետևնանցավ սկսվում էր ավատական հողաբաժինների կինոտրոնացումը ոչ միայն առանձին զինվորական, այլև վարչական դորժինների, առատրականների, վաշխառուների և այլ մեծահարուստների ձեռքբուժ: Խաղպես նշել է XVII դարի հետինակ Կ. Գյուղուրջինսկին, «Ճինչն 892 (1584 թ.) գյուղերը և վարելահազերը զանգում էին սուսաբրի ասպետների և ոչախի դափակների ձեռքբուժ և ուրիշներն ու այլ սրիկանները լունեին դրանք սուսաեարու Ըստավորությունն»<sup>1</sup>: Այդ երանոյթը միաժամանակ ցույց էր տալիս կինոտրոնացված պետության թուլացումը: Միշին դարերում պետության ուժը, Ն. Թոգորոսվի կարծիքով, կայանում էր նրանեւմ, որ նա ամենուր կարգավորում էր արտադրությունը և բարիքների բաժանումը: Եվ մասնագետը դա համարում է ոսմանյան ֆեոդալիզմի ամենաբնորոշ ցուցանիշներից մեկը<sup>2</sup>: Այստաքնապես ճիշտ այս գնահատականը համարի չեղը արտացոլում ամրող իրականություննը: Պատմական անցյալին ավելի մոտ է թվում Ն. Իզանովի սահմանումը: Նրա կարծիքով, օսմանյան պատմության բոլոր փուլերում պետության միասնությունը և կինոտրոնացվածությունը զգալի լավով ունեն մակերևսային և նույնիսկ ձևական բնույթ: Դրանք ընդգրկում էին զլխավորապես պաղապահուստների, քաջազգականության և իրավունքի ոլորտը: Տնտեսական կյանքում գերակշռում էին լրիզ ապակենոտրոնացումը և գիտի, ինքնամփոփ տեսեսությունը... Օսմանյան կայսրության համար բնորուշ էին նրա առանձին տեսասական կինոտրոնների խիստ ողբեկան անշատվածությունը և թուլլ կապը... Կայսրությունում չձևավորվեց միասնական շուկա<sup>3</sup>, նույնը վերաբերում է XVIII դարին: Դրանից հետո ավելի ևս արագացավ ապակենոտրոնացման տեսնենցը և պետությունն ընկալ խոր ճգնաժամի մեջ:

Լիոն ևս անդրադանում է ֆեոդալական նշված փոխհարաբերությունների բայցարման պրոցեսի ցույցը և ցույցը է տալիս, որ

<sup>1</sup> Смирнов В. Д., Кочубей Гемурджинский и другие османские писатели 17 в. о причинах упадка Турции, СПб, 1873, стр. 121.

<sup>2</sup> Тодоров Н., Балканский город XV—XIX веков, стр. 112.

<sup>3</sup> Иванов Н. А., О типологических особенностях арабо-османского феодализма. «Народы Азии и Африки», 1978, № 3, стр. 59.

այդ կապակցությամբ կարգածատերների ու Հողատերների մի զգացի մասը պահանջնում էր ռամանյան բանակին պահանջող քանակով ձիազոր կամ Հետևակ զինվորականներ արամագրելը: Եթե Անառաջին, գրում է եաւ, առաջներում գուրս էր բերում 70 հազարանոց Հեծերազոր, ապա նշված փոփոխությունների հետևանքով այդ թիվը իջավ 2—4 հազարի:

Անշուշան, նշված երեսութերը չէին նշանակում, որ կայսրությունում թուլացնել էր ռազմական զորքների ուժը կամ դերը: Այն շարունակում էր ժառայիլ քայլարվող, սակայն գենու հզոր թերայական պետությանը:

Պրոֆ. Վ. Սմինովն անցյալ դարի 70-ական թթ. Օսմանյան կայսրության ռազմական ուժին տվյալ է Հետևյալ գնահատականը: «Թուրք-օսմաններն իրենց ամրողը էներգիան արամագրել էին բանակ ստեղծելուն և իրենք էլ ասում էին, որ իրենց պետությունը տարով է ձեռք բերված և միայն սրով էլ կարող է պահպանվել»<sup>1</sup>. Իսկ անզինացի Հեղինակ Ա. Լիրայերը, ամփոփելով կայսրության անցած ուղին, երա անկման նախորին զրում էր, «որ ռամանյան պետությունը, թէ՝ ներքին և թէ՝ արտաքին քաղաքականության քնազավառությունը, միշտ էլ զեկավարվել էր ռազմական զորքինների միջոցով». Նրանց կամքով ու թելադրանքով, որ այդ պետությունը սծնվել էր պատերազմում և պատերազմի համարք<sup>2</sup>:

Չափազանց հետաքրքիր էր բնեվող հարցի գնահատականը մեկ այլ տեսանկյունից, որ տալիս է թուրք ականավոր պատմաբան Խաչյանիցը: Նա եշում է, որ ռազմական նպատակին հեթարկվում էր ամեն ինչ: Այսպիսո՞ւ շ.XVII դարում ռամանյան կառավարիչները խալիֆաթին ավեցին եոր իմաստ, այն կապելով անհավատների դեմ սրբազն պատերազմ մղելու գաղափարինեւ<sup>3</sup>: Արդպիսով, պատերազմական ոգին դարձել էր ամենուր տիրապետող ու թելադրող: Բայց այդ ոգին ևս ճգնածամ էր ապրում և երա ազդեցությունը հետզհետ սկսում էր թուլանալ:

Հողերի կենտրոնացման հետևանքով ուժեղացան անքառ-

1. Տէ՛ս Ան. Ֆրեյբ ժողովածու, Համ. 3, եր., 1963, էջ 29.

2. Ըստ Բ. Դ. եղբ. աշխ., էջ 221.

3. Lybyer A. H., The Government of the Ottoman Empire in the Time of Suleiman the Magnificent, Cambridge, 1913, p. 90.

\* Р. Ж., Общественные науки за рубежом, серия 9, «Востоковедение и африканистика», 1975, № 3, стр. 165.

գական ձգումները, պյուղացիների շահագործումն ու նրանց պայքարը, Պակասեց կենտրոնական իշխանության Հղորությունը, լայն ժամանակաց առաջին-ազատազրական շարժումները, ժայրամասային առանձին երկրներ սկսեցին ձեռք բերել ինքուրույնությունն կամ դառնալ անկախությունը:

Սկսած մասնավունդ **XVII** դարից բանակի Հղորությունն անհրաժեշտ էր գրավված Հողերը պահպանելու և ընդունակությունների շարժումները նեղելու համար Այդ երրուստից նշշնչած ժամանակաշրջանից դարձավ ներքին քաղաքականության գլխավոր խնդիրը: Անդիմ Յ-րդի, Մուստաֆա Բայրաբերի, Մահմուդ Հ-րդի ժամանակ և ավելի ուշ իրագործված ուսումնական ուժորմները հաստատում են քաղաքականության նմուն քուրությը: Այսպես, նվրոպական բանակների ձևով նոր պինդած ուժեր (*Նիզամ-ի Զենդիդ*) ստեղծելու նպատակով սուլթան Անդիմ Յ-րդը կազմակերպում է հաստակ ֆինանսական գերատեսչություն, բացում վառողի զորժարաններ, զորքին սպասարկող արշեստանոցներ, ուսումնակենսարական ուսումնարան, քարտեզներ հրատարակելու տպարան և ճենարկում մի շարք այլ միջոցառումների: Անցյալ դարի սկզբին նույն գործը շարունակում է մեծ վեցիր Մուստաֆա Բայրաբերը: 1826 թ. Մահմուդ Հ-րդը ֆիզիկապես ոչնչացրեց արգելեած ալյասերված ու քայլարված ենիշերիների բանակը՝ հանապարհ հարթելով ժամանակակից պինդած ուժեր կազմակերպելու գործին: Այնուամենայնիվ, զորահավաքի հին ձևերը գոյություն ունեցան մինչև **XIX** դ. կեսերը, երբ մահմեդականների համար յացվեց պարուսողիր պինդորական ժառայություն և բանակը վերակազմակելու նպատակով հրավիրվեցին նվրոպացի սպաներ: Այս փոփոխությունները, սակայն, թուրքական բանակը շդարձրին ժամանակակից մակարդակի ուսումնական կազմակերպություն, 1854—1856 թթ. Ղրիմի պատերազմում նրա պարտությունները ցույց տվեցին, որ երկրում տիրող փոտած կարգերը և Թուրքիայի նվրոպական գաշենակիցների օգնությունը շնչին կարող բավարար պարմաներ ստեղծել ուսմանյան բանակը հոգու առաջական ուժ դարձնելու համար: Այսպես էլ մեացած թուրքական բանակը ազատական ժամանակակիցներից առաջամասնականությունն ու ագիությունը, շովինիզմն ու կրոնական մոլուանդությունը, Ֆ. Էնգելսը ուսումնական զործի ու բանակի վերաբերյալ իր ուսումնասիրությունների մեջ տալիս է

նաև թուրքական բանակի գնահատականը։ Նա ամենից առաջ թուրքական բանակի զինվորակը կապում է երկրի դրության ու նրա տնտեսության ցածր մակարդակի հետ, որի համանալը զինված ուժերը մշտապես զգում էին ուղինքի, Հանգերձանքի, զինամթերքի և սենյակայի պակաս...»<sup>1</sup>։ Այսուհետեւ Ֆ. Էնգելը նշում է, որ այդ բանակի հիմնական տարրը կազմում էն թուրքերը, որոնցից ամեն մեկն ուներներն զատ զինվոր լէ։ Բայց, ստարերկրացի Հրահանգիւնները լինելով անհաջատ՝ ուղարկուր, զինվորների համար մնում էին օտար, և արև պատճառով էլ չէին կարող ազդել իրերի գրաւթյան վրա ու բազացնել այն։ Հետեւապես, զրում է էնգելը, ոքանի թուրքերը կմնան երկրում զեկովարող ազդ, նրանք լին ենթարկվի այն մարդկանց, որոնց հոգու մեջ արհամարհում են, նրանց համարելով իրենցից շատ ցածրէ։

Թերված թնութագիրը որոշ շափով պնում է պատասխանելու այն հարցին, թե ինչո՞ւ երրեմնի զորեղ թուրքական բանակը, կայսրության ազիլի քան երկուս ու կես դար շարունակվող Հգեաժամի պայմաններում և համախ մղվող բազմաթիվ պատերազմներում լուարազ ու մի հազմանակ։

Առանց վարանելու կարելի է ասել, որ նշված ամրող ժամանակաշրջանում կանոնագոր և անկանոն զինված ուժները, որոշ իմաստով, բացառական աղղեցություն ունեին երկրի ներքին, Հատկապես տնտեսական կրանքի վրա։ Թուրքիայի կառավարիչներից մեկը՝ Ալի փաշան, որն իր 30 տարվա գործունեության ընթացքում լոթ անգամ նշանակվել էր արտաքին գործերի մինիստր և հինգ անգամ եղել էր սահմանադատ (մեծ զեղիր) ու Հանգիսացի Հաթթը Հումայունի (1856) գլխավոր հեղինակներից մեկը, նույնպես կանգնած է եղել այդ տեսակետին, Նկարագրելով երկրի ներքին և արտաքին զինակը 1850—1860-ական թթ. նու Հայտնում է այն կարծիքը, որ Թուրքիան տարիպած է զեկերի տակ պահել զինվորների, որոնք պետք են տնտեսությունը և Հողագործությունը վերականգնելու համար, և այդ նպատակին նա (Թուրքիան—Հ. Ի.) ծախսում է իր ամրող եկամուտները, այնպես որ երկրի կուլտուրայի համար լի

<sup>1</sup> Маркс К. и Энгельс Ф., Соч., т. 11, стр. 490.

<sup>2</sup> Խոյն անզը։

մեռմ ոչ մի դուրս և ոչ մի բազե՝ մշակելու լավ օրենքներ  
հանուն պետության և ժողովրդի բարորության...<sup>1</sup>:

Ավելի ուշ, 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո, բաղադրական կյանքի ու ազատագրական շարժումների աշխատացման պարմաներում իշխանություններն աշխատում էին զինվորական կայազորներ ունենալ ամեն մի բաղադրմ և այս հարավոր էր՝ զրուղաբազարներում ու խոշոր գյուղերում: Հաստ պնդերալ-մայոր Պ. Ավելի անովի տվյալների, մեր դարի սկզբում Թուրքիան բաժանված էր 491 գումարտակային օկրուպների, որոնցից 322-ը կամ երկու երրորդը տեղափորձած էին Թուրքիայի ասիական մասում, որը հեղինակը համարում է կայսրության տժանրության կենտրոնը և նրա ուղղմական հզորության միջոցների աղբյուրը<sup>2</sup>:

Հաշվումները ցույց են տալիս, որ կայսրության ընդհանուր տարածքի ամեն մի վեց հազար քառականը բառ. կիրովմետրի վրա կազմակերպված էր կանոնավոր՝ զորքերի մեկ գումարտակային օկրուպ: Բացի այդ, ութ բանակային կորպուսների տարածքներում ստեղծված էին նաև անկանոն զորքի՝ ոճդիմների վարչություններ: Մրկրի արևելյան շրջաններում և մասնավորապես Արևմտյան Հայաստանում հսկում էին անկանոն հեծելազորի՝ համեզիգինի գեղեցրությունը: Այսպիսով, կարելի է ասել, որ երկրի ամբողջ տարածքը հազեցված էր զինված ուժերով, նույնիսկ խազաղ ժամանակաշրջանում, իսկ պատերազմի կամ արտակարգ պայմանների առկայության զեպքում, դրանց թիվը երեք անգամ կարող էր բազմապատկվել: Մինչև 1908 թ. հեղափոխությունը տեղական կայսղորներ կային համարյա բոլոր գավառակներում (կազա) և նույնիսկ առանձին գյուղերում: Մրինակ, Բայրազեսի գավառի (անշաբկ) Դիաղին գավառակի Շւշիլիսե գյուղում, որտեղ բնակվում էր ընդամենը 27 ընտանիք, տեղադրված էր 20 զինվորներից բաղկացած կայազոր, որն ամբողջապես սնվում էր գյուղացիների հաշվին, նրանցից ստանալով

<sup>1</sup>ՏՏ. «Нозичев А. Д., Али-паша — лидер движения за реформы в Турции (такизмат) в 50—70 годах 19 в.» Вестник ЛГУ, 1977, № 8, էջ 60.

<sup>2</sup>Аверьянов П. И., Этнографический и военно-политический обзор азиатских владений Османской империи, СПб., 1912, стр 5.

երուղ, պանիքը, թոշակներ, ձու, կաթ, յածուկ, յուղուրդ և բոլոր  
անհրաժեշտ բաները<sup>1</sup>.

Պաշտոնապես զորքի դրամական և նյութական ամրողք սպա-  
սարկումը կատարվում էր պետության Հաշվին, սակայն ո՛չ  
դրամը, ո՛չ հազումատեղենը և ոչ էլ սննդամթերքը չէին հասնում  
պինգորներին, այլ մեռմ էին ջտարներում և կամ հրամանատար-  
ների մոտ նրաներ հրամանատարներն ու զինվորներն էլ կո՞մ  
մի կերպ յուշ էին գնում, կամ իրենց պլաստ նարք տեսնում էին  
թալանի, բանագրավման և այլ ճանապարհներով, Պետք է նշել,  
որ հրամանատարներին զինքի ալդ ուղին էր մզում հենց իշխա-  
նության անպատճանաւոտու վերաբերմունքը, որը նրանց  
ամիսներով աշխատավարձ չէր վճարում, իսկ զնարելու դեպքում  
էլ դրա զգալի մասը հարգում էր բարձր հրամանատարության  
կամ վարչական բյուրոկրատիկի զրագանեներում, Որպեսզի այս  
բոլորը զգուշություն յառաջացներ, կայսրության հենարանը  
հանդիսացող բանակում իշխանության մարմինները դիմում էին  
ամեն մի միջայի, օգտագործում էին տեղական բոլոր հարա-  
վմբությունները՝ բավարարելու զինվորականների պահանջները,  
Այսպիսով, զինված ուժերի խնամքի ծանրությունը ընկեռում էր  
ժողովրդի վրա ո՞չ միայն նրանց ֆինանսական ու նյութական  
պահանջները բավարարելու իմաստով։ Հաճախ ձմեռային շրջ-  
անում նրանք մեռմ էին առանց վառելափայտի և ոչնչացնում  
էին պտղատու արգինները, Թուրքական բանակի առկյարներն այդ-  
պես վարվեցին Զեյթունում, երբ 1890-ական թթ. վերջերին կը տ-  
րատեցին և որպես վառելիք օգտագործեցին Հայտնի մրգա-  
տանների պտղատու ծառերը և խազողի թփերը, որոնք տեղա-  
կան աղղարնակյության ապրուստի հիմնական ազգյուրն էին։

Ավելի վատ վիճակի առաջ էին կանգնում այն շրջանների  
բնակչինները, որտեղ տեղակարված էին անկանոն զորքերի միա-  
վորումները, մասնավորապես մուսուլմանական անկանոն հե-  
ծիւլազորը՝ համբդին, Վերջինս սկսեց կազմակերպվել առվիթան  
Արդուլ-Համբդ 2-րդի Հատուկ կարգադրությամբ, անցյալ դարի  
90-ական թթ. սկզբներին, զինավորապես բրդերից։

1899 թ. Համբդինն կազմված էր 63 գնդից, որոնցից 50-ի  
շարքերում ծառայում են քրդեր, 9-ի՝ արարական ծագում ունե-

<sup>1</sup> Աղջ. Հուշեր Տաէկանուստանի տնօսպարհություններ, մեր Հո-  
ռունք, 1913, № 45, էլ 784.

ցող ցեղեր, Յ-ի՝ կարտֆավախներ, Հ-ի՝ թուրքմենները<sup>1</sup>: Համբիդինի շարքերի արագ ամբը բացատրվում էր նրանով, որ զինվորներ տրամադրող բոլոր ցեղերին խոստացել էին ոչ միայն պահպանել ու հայերի հաշվին ընդարձակել երանց հողային տարածությունները, այլև ինչպատճեն համարել պարտքերը, զինվորական ծառայության մեջ հղողներին ազատել աշարից և ազնամից (անտառահարկ): Ցեղադրեսերին և սպայական կազմին արրվում էին պատիճաններ, շբանշաններ, դրամական պարզներ և ազատ ու արտոնյալ վիճակ:

Համբիդինի կազմակերպումը հետապնդում էր երկու հիմնական նպատակ: Առաջինը՝ նա պետք է Արևմտյան Հայաստանում կատարեր ոստիկանական պարտականություններ, կասեցներ ու ձեշեր զերելը ապրող հայ պազային-ազատազրական շարժումները: Սրբորդ՝ պահպաներ և, Նիկ Շնորավոր լիներ, ամրապնդեցնելով ֆեոդալական կարգերը, որոնք իրենց հերթին դանդաղցնում էին զեմոկրատական տարրերի ու բանվոր դասակարգի ամը և համախմբումը, նորից արգելակում ազատագրական պայքարը:

Իրենց պարտականությունների կատարումը համբիդինի խըմբերը դուգակցում էին կարավաններն ու հայկական գյուղերը թալանելու, և ամազակության հետ: Կամայականությունն ու անօրինականությունը շուտով դարձան նրանց գործունեության հիմնական մեջ ու բովանդակությունը: Այս այս պատճառով էլ համբիդինի գոյության երկրորդ շրջանը (1899—1906) հաեգիսացակ նրա բարբարացան, ուազմաւակությունը կորցնելու և կազմակուծման շրջան: Այդ տարիներին կազմակերպվեց ընդամենք երեք նոր գումար, բայց ոչ անզացի քրեմերից<sup>2</sup>, Եռառով համբիդիականները ակսացին թալանել: Նաև թուրքական գյուղերը, հրաժարվել պետական տուրքերը վճարելուց: Այսպես, Վանի վիլայեթի (Նահանգի) համբիդիականները չեին վճարել 1891—1898 թթ. իրենց տուրքերը, նրանք հաճախ յուրացնում էին նաև հավաքած տուրքերի գումարները և դրանք չեին հանձնում պետական գանձարկու: Այս բոլորից հետո միանգամայն հասկանալի ծն իշխանության ներկայացուցիչներին և կանոնավոր բանակի հրամանատարների արհամարհաները և բացասական վերաբերմունքը

<sup>1</sup> ԾԳԲԱ, Փ. 2000, ոլ. 1, ձ. 1005, լ. 4.

<sup>2</sup> ՀՀ և Խոյք անց, թ. 6:

тәкәүіл Համбетіннің қорғауда сабак. Қорғаудағы тәжел ә жиһіз-  
жарың Հатақтау жының әжімбетіннің Հатақтау шебері Արтиկ-іштауаны, ғыл-  
малың ңегіндеңдің է арбындағы жының әжімбетіннің Հатақтау шебері Աртик-іштауаны, ғыл-  
малың ңегіндеңдің է арбындағы жының әжімбетіннің Հатақтау шебері Աртик-іштауаны, ғыл-  
малың ңегіндеңдің է арбындағы жының әжімбетіннің Հатақтау шебері Աртик-іштауаны, ғыл-  
малың ңегіндеңдің է арбындағы жының әжімбетіннің Հатақтау шебері Աртик-іштауаны, ғыл-  
малың ңегіндеңдің է арбындағы жының әжімбетіннің Հатақтау шебері Աртик-іштауаны, ғыл-  
малың ңегіндеңдің է арбындағы жының әжімбетіннің Հатақтау шебері Աртик-іштауаны, ғыл-

Діңеңдіңдің է арбындағы жының әжімбетіннің Հатақтау шебері Աртик-іштауаны, ғыл-  
малың ңегіндеңдің է арбындағы жының әжімбетіннің Հатақтау шебері, ғыл-  
малың ңегіндеңдің է арбындағы жының әжімбетіннің Հатақтау шебері Արтик-іштауаны, ғыл-

Діңеңдіңдің է арбындағы жының әжімбетіннің Հатақтау шебері Արтик-іштауаны, ғыл-  
малың ңегіндеңдің է арбындағы жының әжімбетіннің Հатақтау шебері Արтик-іштауаны, ғыл-  
малың ңегіндеңдің է арбындағы жының әжімбетіннің Հатақтау шебері Արтик-іштауаны, ғыл-

Діңеңдіңдің է арбындағы жының әжімбетіннің Հатақтау шебері Արтик-іштауаны, ғыл-  
малың ңегіндеңдің է арбындағы жының әжімбетіннің Հатақтау шебері Արтик-іштауаны, ғыл-  
малың ңегіндеңдің է арбындағы жының әжімбетіннің Հатақтау шебері Արтик-іштауаны, ғыл-  
малың ңегіндеңдің է арбындағы жының әжімбетіннің Հатақтау шебері Արтик-іштауаны, ғыл-  
малың ңегіндеңдің է арбындағы жының әжімбетіннің Հатақтау шебері Արтик-іштауаны, ғыл-  
малың ңегіндеңдің է арбындағы жының әжімбетіннің Հатақтау шебері Արтик-іштауаны, ғыл-  
малың ңегіндеңдің է арбындағы жының әжімбетіннің Հатақтау шебері Արтик-іштауаны, ғыл-

1 ЦГВИА. ф. 2000, оп. 1, л. 1005, л. 15.

2 Маркс К. и Энгельс Ф., Соч., т. 28, стр. 221.

3 Керимов Г. М., Шарият и его социальная сущность, М., 1978, стр. 187.

Ինչպես տեսնում ենք, անհավասար իրավունքների համար Հիմքը էր սահմանվել կրոնը և միանգամայն որոշակի ձևերով արտօնություններ էին տրվում իսլամի հաւատողներին։ Դ. Թերիմովը նշում է ավյալ Հարցում տարվող բազարականության հետևողականությունը և այն համարում է վաղ միջնադարում «քրիստոնյաների», Ծրեաների և Հեթանոսների կողմից իսլամը մասսայարար ընդունելու գլխավոր պատճառներից մեկը։ Սակայն բազմաթիվ են փաստերը, որոնք ցույց են տալիս, որ մահմեդականությունը ընդունելու խնդրում, ֆինանսական ու նյութական գործոնին զուգընթաց, իրենց վճռական ազդեցությունն են ունեցնել բազարական ու վարչական մնջման ձևերը, որոնք գործադրվում էին Օսմանյան կայսրության գոյության ամբողջ ժամանակաշրրանում։

Հարկային բազարականության իրավական ու օրինական կողմը ներկայացնելիս անհամեշտ ենք գտնում ընդդեմ, որ ըստ շարիաթի և մահմեդական երկրներում այլադավաններից ստացվող հարկը դիտվում էր, ամենից առաջ, որպես պետության նյութական հետամուսի կարևոր ազրյուր, և օրիներով հպատակայլադավանների իրավունքների և գուցքի պաշտպանությունը սահմանվում էր ոչ թե հանում նրանց բարօրության, այլ մահմեդական գանձարկոյի այդ կարևոր ազրյուրը պահպանելու համար։ Օրինականությունը պահպանելու զենքում, հիշյալ բոլոր հարկերը, կամ պետության պահպաները, ինչքան էլ որ նրանց ծանր լինելին ժողովրդի համար, այնուամենայինիվ, տանելի էին։ Դրանց մասին նիշտ պատկերացում տալու համար նշենք, որ ըստ պաշտոնական տվյալների, դրանք երկու կարգի էին՝ շարիաթական, որոնց թիվը հասնում էր 350-ի և պետական, որոնք 97-ն էին։

Առաջինների մեջ, բացի Հիմնականներից՝ չեղյե, խարար, աշար, զեքյաթ, մտնում էին նաև Հարկեր՝ հողագործության, անասնապահության, առևտութիւն, անշարժ գույքի, կենցաղային սովորութների և այլնի համար։ Պետական Հարկերը նշանակվում էին առևլանի կողմից և հատկացված էին կառավարական ծախսերը ծաժկելու համար։

<sup>1</sup> Կերկով Գ. Ա., Էջմ. աշխ., էջ 188.

<sup>2</sup> Խոյե տեղը, էջ 188.

<sup>3</sup> ՏՇՇ Բարիխ-ի-Լյուրի։ Սույր ազգայինները Հայաստանի և Հայերի ժամանին, Համ. 7, Բուրգական ազրյուրներ, Համ. 9, Երևան, 1872, էջ 220.

Իշարկե, պետական գաղեմարկղ մտելուց հետո բոլոր գումարները ժախսվում էին սուլթանի և նրա մերձավորեկրի Հայեցաղությամբ և ազդյանությամբ մեջ օրենքով նշված բաժանումը խիստ պարզական թևույթ ուներ: Ամեն պարագայում, դրանք Հարցի, կարելի է ասել, ձևական կողմն էին: Իրականություն, հարգերի գալուման ձևերն ու միջոցները, հատկապես սամանը կառուցարության պրակտիկան միշտ ժողովրդական մասսաների համար հանդիսացել են իսկական հասարակական ողիու:

Յ. Ինքնինն արդեն արմատացած սովորույթ էր Համարում Ականխիկ գրամով վարչական պաշտոնների՝ նահանգների, գավառների և այլ կարևոր ծառայությունների պետերի պաշտոնների վաճառքը: Այդ երեսույթը նա արձանագրել է Հնդկաստանում և Պարսկաստանում, նշելով, որ ռազմի հաճախ է հրապարակայինորեն այն տեղի ունենում Թուրքիայում: Ինքան փաստերից նա հետևեցնում է, որ Հնդկաստանում և Իրանում ժամանելու պետերի զավակները երրեմն ժառանգում են իրենց հայրերի պաշտոնները, որի հետևանքով ժողովրդությունը լի գտնվում այնպիսի ճնշման տակ, ինչպես Թուրքիայում<sup>1</sup>:

Նզ իսկապես, Թուրքիայի զեկավարները վաճառում էին վարչական պաշտոնները, կապալով էին տալիս Հարկերի գանձումը և այդ պաշտոնները ստանձնողներից պահանջում, որ պետական դրամարկղ մուշեն որոշակի կանխիկ գումարը:

Կառավարությունը երրեք լէր հետաքրքրվում, թե ինչ միշտցներով ու ձևերով էին գանձվում Հարկերն ու տուրքերը, նեականարար, Թուրքիայում ժողովրդությունը մշտապես զգուն էր Հարկահամարներից: Սրկրում տիրող անտանելի վիճակը սուլթաններին նույնիսկ ստիպեց հրապարակել Հատուկ տարրարության Հրամանագրեր (adeletname), որոնք պետք է արգելիին վարչական ու ֆինանսական լարաշահումները և հայտարարեին շնոր ժամանակաշրջանի՝ արդարության ժամանակաշրջանի սկիզբը<sup>2</sup>:

Սակայն իրերի վիճակը լէր փոխվում և արդարությունը ոչ մի կերպ չէր կարողանում ժուտք զործել դաժան իրականության մեջ: Նույնիսկ կառավարության այն հաղորդումից հետո, որ «1254 (1838 թ.) մուհարրեմ ամսից Հարկերի գանձումը հանձ-

<sup>1</sup> Բերե Ա., հույն այլն., էջ 205, 206.

<sup>2</sup> „Belleten“, 1964, հիմ 12, էջ 629.

հարարվում է Հարկահազարեներին, որոնք նշանակվելու են պետքան կողմից<sup>1</sup>, շարաշահումների թիվը չպակասեց, այլ ավելացավ. Իսկ Շնում սահմանված ավանդական Հարկերը ձեռկանության շարունակեցին գորություն ունենալ, սակայն աճեցին նրանց շափերն ու բացարձակ գումարները. Բայց այս միջոցը ևս երրեց «լրավարարեց կառավարության կարիքները».— Նշում է Թ. Բուլութօղլուն՝ Համապատասխան պաշտոնյաները և պետական մարմինները շարունակում էին ելք փնտրել, ընտրելով մեծ մասամբ նոր հարկեր ու տուրքեր սահմանելու. Շնորի անվանումը փոխելու, գանձումների գումարներն ավելացնելու կամ անօրինական գանձումներ կատարելու ուղին. Այսպիս, 1855 թ. զիյահարկի (ժխարախ) փոխարնն, քրիստոնյաներից սկսեցին վերցնել ուղմական տուրք՝ սրեղել ի ասկերիս, որը դրվում էր շափահաս դարձած բոլոր տղամարդկանց վրա. Համաձայն արդ օրենքի, զիյեզորական հարկը պետք է վճարեին միայն զենք կրելու կարողություն ունեցող անձինք, այսինքն՝ 20-ից մինչև 40 տարեկան հասակ ունեցողները. Բայց հարկահաների համար օրենք ասած բանը չկա, նորա մինչև կաթուակեր մասուկներից զինվորական հարկ են առնում. Նորա կանոն են շինել իրնեց համար, որ ամեն զյուղ 5000 զուրուշ պիտի հատուցան յուրաքանչյուր 180 բնակչի համար, առանց հասակի խորությանը. Մյուս ականատեսն արձանագրում է, որ հարկը «լրիվ» հազարելու նպատակով. «Հարկահազարը վերցնում էր տերտներներից ծեռնղենրու ցուցակը, ըստ այն հաշվում բոլոր այրերի՝ ծերերից մինչև նորածինները, թիվը և ամեն մեկից վերցնում 37 զուրուշ»<sup>2</sup>.

Այդպիտով, հարկատու քրիստոնյա թեակության վիճակը ոչ թե կարգավորվեց, ինչպես Հայուարարում էին թուրքական պետական գործիշները և գրում էին թերթերը, այլ նոր օրենքը դարձավ նոր շորթումների ու շարաշահումների միջոց. տեղին պական բոլոր երկրների մեջ, — գրել է ուստ Հայունի ճանապարհորդ ու գիտնական Պ. Զիյալեզ, — Հատկապես Օտտոմանյան կայսրությունն է իր բնակչությանը (մասնավորապես ոչ մահ-

<sup>1</sup> Տե՛ս սահար ազրութենքը Հայուստանի և Հայքի մասին, Համ 7, էջ 56.

<sup>2</sup> Dr. Bolutoglu Kenan, Türk vergi sistemi, Ist. 1967, n. 2.

<sup>3</sup> «Փարա», 1876, № 1, էջ 375.

<sup>4</sup> Համբարձուման Վահան, Գյուղաշխարհ, Փարիզ, 1927, էջ 38.

մեղական), ենթարկում ամենամեծ նյութական գուշարերությունների, որովհետև սրբականացված տուրքը՝ միայն ունեցան մասն է կապում կամայական Հարկամների, որոնցով սեղական իշխանությունները սիստեմատիկորեն հարկադրում են բնակչություններին:

Խելպես նշվեց, ամրող շարիքը գացիս էր Հարկերի պահանջանք սիստեմից, բայի որ բոլոր կարգի ու տեսակի Հարկամավաքների պաշտոնը վաճառվում էր ամենուրեալ Ամեն տարի միջայինի կենարունակ համարդատ էին այն մարդիկ, որոնք ցանկություն և Հարավորություն ունեին զնելու ովաճառքում Հայութարար զուժ Հարկամավաքի (Մյուլթեզիմի) պաշտոնը: Անականարին ովաճառքին մասնակցելու իրավունք ունեին բայրը Հայատակները, անկախ սոցիալական պատկանելությունից, կրոնից, աղքատությունից ու այլ հանդամաներինքց: Սակայն տեղական իշխանությունների ներկայացնություններին վեախազեն Հայունի էր, թե ում ինչ տեղամասաւ կորցի, որովհետև նրանք միշտ էլ զրանքում էին գնուրզների հետ սերտ Հարաբերության մեջ<sup>1</sup>, Այսպես, օրինակ, Մուշի Շեասդյույդի տասանորդը՝ կառավարության կողմէն 300 լիրայի կհայտարարվի: Այդ պատուղը կզանգներ Պայրարտարենց համբ Մուստաֆայի գոտիին մեջ և համբ Մուստաֆան կզններ այդ գյուղին տասանորդը: Մյուլթեզիմի պիտինալով հանդիրձ, որ 6—7000 լիրայի շահն մը կզրկվին, բայց և այնպես շնորհանքները այդ գյուղին...<sup>2</sup>: Ծորթումների ու թալանի ժամանը անասելիորին ընդունվում էր, երբ ավելի փոքր տեղամասերում տեղի էր ունենում Հարկերի պահանջան պաշտոնի վաճառք այսպես կոչված ռերկրորդական մյուլթեզիմներին<sup>3</sup>, նման երեսությունը Թուրքիայում դարձել էին սովորական և կառավարական շրջանները դրանք կասեցնելու համար որնէ միշտց շէին ձեռնարկում: Իսկ եթե փորձեր էին կատարվում առանձին շրջաններում կարգավորելու Հարկեր Համարելու՝ ժողովրդի համար ժայրացնելու կենսական նշանակություն ունեցող գործը, ապա իշխանությունները միշտամոռում էին: Այս իմաստով Համբազանց բնորոշ

<sup>1</sup> Чихачев П. А., Великие державы и восточный вопрос, М., 1970, стр. 194.

<sup>2</sup> Инсаров Г. Ж., Турция и Македония, журн. «Вестник Европы», кн. 4, апрель, 1903, СПб., стр. 678.

<sup>3</sup> Տարեցի Ազան, Հարավայի պատմություն Բարձր, Կահիրէ, 1862, լ. 28.

\* Bulutoglu K., Türk vergi sistemi, s. 141.

Հ համեյալ դիպուրի վայրի և այլի նայիլ նիկատաթ փաշան, 1890-ական թթ. վերցրին, փորձեց բարելավել տասանորդ Հավոքիկու կարգը, նա հասավ այն բանին, որ Հարկանավարի պաշտոնների վաճառման ժամանեակ Հազբանեակ տարան գյուղական համայնքների խորհուրդները, որոնք երկու տարվա ընթացքում կարողացան գանձել Հարկերը: Հետևանքը՝ անեցին պետական գանձարկու մուծվող գումարները և որոշ լավագ թիթեացավ Հարկատու բնակչության վիճակը, նշյանությաններին դրա շնչար այդ երևույթը և նրանք արձանագրեցին, որ գա որոշակի վեան է բերում տիրող հասարակական Հարարերություններին: Ծուռով նայիլ նիկատաթ փաշային տեղափոխեցին ամ պաշտոնի և կամայականություններն ու շորթումները նորից գարձան սովորական: Հարկային սիստեմն ուսումնասիրող բոլոր հեղինակները հայրայիշ աղցեցությունը տեղուր բնագավառների վրա<sup>1</sup>: Եթէ մենք փորձենք ինչ-որ կերպ կարգավորել դրանք ու կատարել անհրաժեշտ ընդհանրացումներ, ապա կատացին մուռավորապես հետևյալ պատկերը:

Հարկերը գանձելին, որպես կանոն, մյուլթեզիմները գյուղացիններն ստացականներ չեն տալիս կամ երրեմն դրանց փոխարժեն թողնում էին այսպես կոչված Հաշվեփայտմիկները Այդ կարգը հարավորություն էր տալիս նորից գանձելու նույն տուրքը, եթէ գյուղացին չէր ներկայացնում այն մուժած լինելու որնէ ապացուցը: Իսկ հաճախ, օգտվելով Հարկատու Հպատակների անգրագիտությունից, մյուլթեզիմները պակասով չեն ցույց տալիս ստացած գումարները և երկրորդ ու երրորդ անգամ զանձելով, իրը լրացնում ու մարում էին բպակասը կամ բպարտը: Յանկանալով երևալ օրինականության պաշտպան և իրը հաշվի առելով տվյալ ընտանիքի կենսամակարդակը, ունեցվածքը,

<sup>1</sup> Տե՛ս Խանուկ, Հարկերը Համբառանում, Թիֆլիս և., Օբխուսարց թուրքեց և Հայեց. Թիֆլիս, 1893, Համբառյան Ա. Ա., Ազրուային Հարկերությունները Արևմտյան Հայուսանում, Մարկարյան Ա., Արևմտահարաբյան վիճակը ՀՀՀ գ. վերքն, Եր., 1968, Դավթյան Հ., Արևմտահայերի ուժականացումների և բարուրությունների 1808—1870 թթ. Եր., 1967, Տարկոսյան Ե. Կ. Ագրарная политика Османского правительства в Западной Армении во второй половине 19 в., Ер., 1957, Եго же, Политика Османского правительства и державы в последней четверти 19 и начала 20-го вв., 1973, Խճիջեան Օ. Գ. Բարյազան Օսմанской империи, Ер., 1977, և ուրիշներ:

Հազուստներով և ուրիշ իրերով ապահովված լինելը ու այլ հանգամանքներ, մյուլթեզիմները հաճախ տոն օրերին էին ալցկուս իրենց հարկատուներին։ Հասկանալի պատճանաներով մարդիկ արդ օրերին հազմում էին տոնական շորեր, աշխատում էին ունենալ տոնական սեղաններ, հատուկ զնումներ էին կատարում և այն, Այս բայրը ալցկուն հաջոյի էր տոնում և ներկայացնում էր նորանոր պահանջներ, Բացի այդ, հարկածավարները սովորություն էին դարձրել ցանկացած առիթով առանձին անձնավորություններից պահանջել ցուց տալ հարկերի ստուգականները, և Այս պատճառով, — որում է Վ. Դիրքասը, — ուստի պարտավոր էր իր մոտ ունենալու անցյալ արգամ վճարած խարադի ստացականը և այլալ տարգա հարկի լրիվ զամարը, հակառակ զեպքում նու կարող էր ձերբակալվել<sup>1</sup>.

Հարկի գումարը կամ հարկի փոխարժեն վերցվող գյուղատքատեսական մթերքների գինը իրենց հարկածավաքներն էին որոշում, այսուեղ ևս խարենով գյուղացիներին։ Աշարը, կամ տառանորդը, ինչպիս թելադրում է հարկի անվանումը, պետք է կազմեր իրերի 1/10 մասը։ Որոշ փոփոխություններից հետո այն բարձրացել էր և անցյալ դարի վերջին քառորդին զանձլում էր րերքի 1/8 մասը։ Սակայն բերքածավաքի օրերին մյուլթեզիմներն իրենց մարդկանցով աշխատում էին կորպել րերքի 1/7-ը՝ «հօգուտ պետության»։ Հարկերի մի մասը պահանջվում էր մուծել կանխինկ դրամով, որը, որպես կանոն, գյուղացու մոտ համարյա միջատ բացակայում էր։ Այդ դժուգում պետական հարկածավաքներն անխօնորեն բռնագրավում էին պարտը ունեցողների շարժական ու անշարժ գույքը և ապա ամենը ցածր զներով վաճառելով գումարի մի մասը լուրացնում էին, իսկ մյուս մասը՝ հանձնում պետական զանձարկողին։ Վանի մերձակայքում գտնվող Սվաստան գյուղի բնակիչներից, այդ կարգով, բռնագրավել և վաճառել էին 70 ուխար՝ 2251 զուրուցով, երբ դրանց արժեքը կազմում էր 4360 դուրուց։ Բռնագրաված անառուները, հացածատիկը և նույնիսկ պաղատու ծառերը ևս վաճառել էին դրանց գների 50 % -ով միայն։ Նույն բախտին էին արժանացնեցին գյուղացիներից խլված գույքը, դորժիքները ու այլ իրեր<sup>2</sup>.

<sup>1</sup> Երբեց Յ., Ֆրկ. աշխ. էլ 32.

<sup>2</sup> Տե՛ս «Երկրի համբառ», 1907, № 12, էլ 12.

Գոյություն ուներ զյուղացիներին թալանելու մեկ այլ միջոց։ Կալը վերջանալուց հետո ցորենց կիսվում էր գեղերով, Հաւառկ ձևով ու նշաններով, որը խախտելու իրավունքը ուներ միայն Հարկահավաքը (Չահնան)։ Այդ արվում էր Հարկ վերցնելու նպատակով բնորոշ շափելու համար, որը կատարվում էր հասուկ պատրաստված խոշոր կոտով, ո՛Չահնան ավերակ ու մխիթր կցանենք ամենքի զլիխն, նզ հեր գյուղացին, որ լուր չենքրում (դեղ) շափ քրտինք էր թափած, կղիտեր օր-ցերեկով իր թալանն ու նահասակությունը։ Չահնայի խմբնեն վերջ կուպար Հովհանքը, նախրորդը, քահանան, տիրացուն, վանահայրն ու փորրագործը, գյիրը, զուռեաշին ու դավուզին, աղքատն ու փերդակը (Հարլին), բոլորը, բոլորը իրենցը տանելու Համեողը, թրաշուներու պես, բան մը բռնած կոտուցին, կտոներ ու կտաներ։<sup>1</sup> Խեղճ զյուղացու շարժաշ աշխատանքի արդյունքը հալվում ու ոչնչանում էր նրա և թշվառ ընտանիքի ազգերի առջև և ոլ ոք ի վիճակի շէր, կամ չէր ցանկանում պաշտպանել նրա իրավունքն ու շահը։

Նման մի ժանր պատկեր է իր «Ենթում» ներկայացնում Բաֆֆին։ Հայապդի կապալառու Թումաս Էֆենցին պարծենում էր Հարկերը Հավաքելու ժամանեակ իր ցուցարերած Հնարապիտությամբ։ Ալաշկերտի զյուղերից մեկում ուժի զյուղացի Հունձը հեծիլ էր, կալը կալսել էր և ցորենի մաքուր շեղը կիտել էր կալումը, Ինձ կանչեց, որ շափել տամ և տասանորդը վեր առեմ։ Ըս պահանջեցի, որ տասանորդի փոխարին զուտ փող տաւ նա պատասխանեց, թե փող չի կարող տալ, և ավելացրեց, թե զուտ ցորյան տանալու իրավունք ուներ և ձեզ պաւականող ցորյանը ստացեր... Մարտուն ասացի, ես քո հերը կանիծեմ և քեզ ցույց կտամ, թե ինչ բան է իրավունքը, Կալի ցորենը լլափեցի և թողեցի ալեպին մնաց։ Անձրևները եկան, և ցորենը խոնավությունից ժէնց, այրվեցավ, փտեց և ոչնչացավ։ Այն ժամանակ զնացի և ասացի, թե իմ իրավունքից շնմ անց կենա, տուր ցորենը։ Բայց որտեղից պիտի տար, ցորենը դարձել էր մի բորբոսած մխիթրի կույտ։ Հիմա տասանորդի փոխարեն փող տուր, ասացի նրան։ Փող շուներ, մի լով ծեծ տվեցի, հրամայեցի եղները ծախսեցին և փողը ստացաւ<sup>2</sup>, թերզած փաստերը լափազանց

<sup>1</sup> Տաճրտեաման Վ., Գյուղացիութ, էշ 130.

<sup>2</sup> Բաֆֆի, ծրինը մազմածու, Ծառ. երրորդ, ծր., 1855, էշ 151.

բնորոշ են տարրեր տեսանկյուններից իրականությունը պահանջմանը տալու համար:

Անօրինականությունները զործադրվում էին անողոքարար, հատկապես քրիստոնյաների նկատմամբ: «Երգարաւումում, — գրում է էմ. Դիլոնը, — որուն կա 8000 տուն մահմեղական, նրանք վճարում են 395 հազար պիսատր (դուրսչ), մինչդեռ քրիստոնյաները, որոնց անունությունների թիվը կազմում է միայն 2000, մուծում են 430 հազար պիսատր»<sup>1</sup>: Ընդհանուր հզրակացությունն ըստ Խաժակի և ալլոց ուսումնասիրությունների այն է, որ անցյալ գորի վերջերին թուրքական կառավարությունը ուսումն էր տնտեսապես հաջումաշ անել քրիստոնյա տարրը, քայլայն նրա նրութականը և զրանով ատիպել կամ մահմեղականանալու, կամ թողնելու հայրենի հողը, գաղղիելու<sup>2</sup>: Ամենամեծ շարիբը, ինչպես ասվեց, անօրինական հարկացրումներն էին, որոնք պիտական հարկերից գույք և նրանցից անկախ, կատարվում էին բոլոր այն անձանց, կամ մարմինների կողմից, որոնք ի վիճակի էին արդ անել: Տեղական իշխանությունները, վաշխառուները, պորժելով սուլթանի անունից և հանուն շարիաթի, ավաղակարար ու ինքնակամ գուփում, թալանում ու քայլայում էին աշխատավոր ժողովրդի տնտեսությունը: Այդ երեսությունների բաղադական ու բարոյական հետեւանքների հետազոտումը թողնելով այլ ուսումնասիրուղների, նշենք միայն դրանց ազդեցությունը երկրի տնտեսական կյանքի վրա: ՄԵծ ու միայր պաշտոնյաները, որոնք Վարուժանի արտահայտությամբ «երկյուղից ձուլված բունակալներ» էին, իրենց ժառարաւությունը կատարում էին, սակայն չէին ապահովում պիտության կողմից: Ամիսներ, երբեմն տարիներ չառանալով իրենց աշխատավարձը, նրանց ողտագործում էին պաշտոնական դիրքը, ոչ միայն կենսական կարիքները բավարարելու, այլև հարստանալու: Համար, Դողան Ավքոնովով բերում է տեղական զորքայի ողործունեության հետեւալ պատկերը: Այդ մարդը 200 լիրայով ձեռք էր բերել մի աշիրեթի տասանորդը հավաքելու իրավունքը, որը իրականում, այսինքն՝ տուրքը հավաքելուց հետո, պետք է կազմեր հազար

<sup>1</sup> Проф. Диалон Эм., Положение дел в Турецкой Армении, Сборник «Положение армян в Турции до вымышленности держав в 1895 г.», изд. П. М., 1896, стр. 339.

<sup>2</sup> Խաժակ, նշ. ոչխ., էջ 62.

լիրա: Բայց նա կորղել էր 1400 լիրա: Առացվում է, որ այդ շրջակալը 800 լիրա պետական գանձերից, 400 լիրա հարկա-տուից, ընդամենը 1200 լիրայի կողմնակի եկամուտ է ապահովել իրեն։ Թեղական տեսանում ենք, Հավաքված գումարների զգացի մասը նրանք յուրացնում էին և մի շաբթ հիշեցումներից հետո միայն մետաղածն ուղարկում պետական գանձարկղին։

Վիտալ Թինեիի Հաշվումներով, 1888 թ. Հավաքված հարկերի գումարը եղել է այնքան շատ, որ տեղական ժախսերը դուրս գա-լուց հետո էլ Տրավիզոնի վիճայիթում մեացել էր 20 միլիոն, իսկ էրզրումի վիճայիթում՝ 14 միլիոն պիաստր, որոնց մի մասը ևս չէր հասել պետական գանձարան։<sup>1</sup>

Ֆրանսիական փոխընդունակությունը Վալոնը հաղորդել էր, որ Բալկանյան մի գովառում, ճանապարհների վերանորոգման հա-մար 1895 թ. Հավաքել էին 1.700 լիրա (40 Հազ. ֆրանկ): Սա-կայն Հավաքված գումարը իր նպատակին չթառայից: «Դրամը ժախսել են ուրիշ կարիքների համար, իսկ ճանապարհները մեռմ են այն վիճակում՝ ինչպիսին ստեղծել է թեությունը և վիճացրել են մարդիկ»<sup>2</sup>: Մրրնմ իշխանությունների գործելակերպը լէր տարրերզում ավագակախմբերի արածից: Այսպես, կառավարությունը որոշել էր նյութական օգնություն ցույց տալ 1903 թ. Ժակեդոնական պաստամբության նեշման հնականքով տուժած ժողովրդին: Օգնության շափերը որոշելու համար նշանակվել էին հանձնաժողովներ: Վերջիններս գգմում էին կամ պարզապես շէին վճարում առանձին ընտանիքներին հասանելիք լնչին դրամը: Հաճախ էլ, թուրքական զինված խմբերը շրջագայում էին հանձնաժողովների անդամների հետ, երբ վերցինները դուրս էին գալիս թիակավայրերից, զինված պատակները քնակիշեներից խուման որպես օգնություն ստացած դրամը՝ ոչենթարկվողներին խստորն ծեծելով»<sup>3</sup>:

Հարկահավաքների ամենասովորական և զնամ հասցեող զեղծումներից մեկը հետեւալն էր: Տեղական իշխանությունների համաձայնությամբ մուխտարը յուրացնում է հարկի մի մասը

<sup>1</sup> Ayvansılu Doğan, Türkiye' nin dözeni (Dün, Bugün Yarın) Onuncu basımı, İst. 1976, birinci kitabı, s. 177.

<sup>2</sup> Céline Vital, La Turquie d'Asie, Paris, 1891, t. I, p. 35, 176.

<sup>3</sup> «Вестник Европы», 1903, № 4, стр. 681.

<sup>4</sup> Խոյն անգ. № 12, էջ 811:

և այն ցուց է տաղիս իրը պապովիկ պահպախառության զնացած անձների վրա՝<sup>1</sup> Այսինքն՝ պրոտից գուրս գտնվող պանդուխուներին Համարում էին ժամանեակին Հարկը լուսածող, որը դանում էր իրը պարտք պետական գանձարանին; Երբ վերջիններս մերազանում էին Հայրենիք, որպեսզի ազի արցունքով ու տանշանքով Հավաքած դրամով որոշ լափուկ բարելավնեն իրենց բայրային անունության վիճակը, նրանց դրամը դրավվում էր ուղարաքի դիմացն; Իսկ եթե մնում էր ինչ-որ զումար, այն էլ յուրացնում էին մյուս պաշտոնյանները, իբր այն բանի համար, որ նրանք ոժագեկել են դրսում եղած ժամանակ դրամատիրոջ էկոմիտանին (Հեղափոխական) դառնարկու հանգամանքը:

Եարիսթի օրինների համաձայն ամեն մի բարձրասահման պաշտոնյան կամ մաշնեղական նաև ապարհություն իրավունք ունեն իր ուղևորության ընթացքում, հանգատյան և սևվելու համար կանոնակի անձուն քրիստոնյաններին, որոնք, ըստ պահանջման պահանջման ընթակարանների բնակարաններում, որոնք, ըստ պահանջման պահանջման ընթակարաններին, ինամենք նրանց ձերքին; Այս պարտականությունը ընթակարաններու համար դարձնել էր իսկական լարիք, ոչ յուրաքանչյուր էին զայիս ու միայն պաշտոնական անձները, այլն նաև ապարհությունուն կամ զվարճանաւազու դուրս եկած կուրիւնական աստիճանավորները: Թիշտէին զեպքերը, երբ այս կամ այն հոգատուները, ցեղապետներ, շնկեր, բնկեր, զինվորական ու ոստիկանական աստիճանավորները, թիշտէին զեպքերը, երբ այս կամ այն մեծ խմբով, որերով ու շարաթներով ապրում այնանք, որտեղ սևվելուց զատ նրանք թույլ էին տալիս կամայականություններ, բռնարարում էին կանանց, իրենց հետ տանում աղջկեններն, բռնությամբ թշում անառողջներին, գողանում կամ զերցնում էին թանկարժեք իրեր և այլն: Այդպիսի ոչյուրասիրությունը կարող էր բայրայն նույնիսկ հարուստ զյուղացու տնտեսությունը: Այս պատճեռով էլ հրուրընկալողն աշխատում էր տամ առաջ նաև ապարհել իր ուշուրեքին, նույնիսկ եթե պետք էր դրա համար վճարել տատամի վարձ (ողիշ քիրեսիս), կամ որպես նվեն տալ փող, արժեքավոր իրեր, զարդեր և այլն: Ուշադրության արժանի է, որինակ, հետևյալ փաստը: Մակեղոնիայի սանչակներից մնկում մյութեսերինքը ժանդարմենների հետ Հավաքելիս է եղել նաև ապարհային տուրք: Սակայն սա նրան չի

<sup>1</sup> Պաֆլան Ֆ., նշգ. աշխ., էջ 27.

բավարարել և նա որոշել է գործել այլ կերպ։ Հաջորդ տարիներում հանապարհաշինարար բանվորները, նա այզոնեղ է ուղարկում ավաղակների։ Մրանք մի ամրող ամիս ապրում են տեղացիների հաշվին՝ «ցերեկը հանգստանում էին, իսկ դիշերը կողոպտում զյուղացիներին»։ Թալանած իրերը նրանք կիսում էին ժանեղարմների հնաւ։ Օվ բանի որ վերջիններս ամիսներով աշխատավարձ չէին ստանում, իսկ դրամի կարիքը մեծ էր, նրանք սիրով ընդունում էին «իրենց բաժինը»։ Գյուղացիներն այդ կողոպտողներից աղատվելու համար ստիպված եղան կաշառների մյութեաներին և միայն դրանից հետո ավաղակներն ուժանդարմները հեռացան գյուղից<sup>1</sup>։

Այդպիսի դեպքեր տեղի էին ունենում ամենուրեւ Զագին անցած օրինացանցություններից մեկը՝ դրամ կորպելու նպատակով ահենեղ, բայց հարուստ մարզկանց ձերբակալումն էր Նման պարագաներում պահանջվում էր խոշոր գրկապին, առանց որի ձերբակալվածների հարազաները չէին կարող ապատել իրենց բարեկամին։ Եորթելու այս ձեզ կարող էր մեծահարուստին զարձել աղքատ, իսկ նրան թալանողներին հարստացնել։ Օ. Սույանն իր հուշերում պատմում է կամայականության նման մի զննի՝ Սիրաստիայի գյուղերից մեկի նախկին բազմաթիվ մասին, որը «ու մը ձերբակալվեր ու տարիներով բանտը մնալի ետքը, կրցեր էր ապատիլ՝ իր ամրողը հարստությունը մաս առ մաս կերպնելով պաշտոնյաներուն։ Դյուզը՝ իր տունը վերադառնալով՝ թափուր գտնել էր զայեա<sup>2</sup>, կորցնելով ամրողը հարստությունը և բոլոր հարազատներին, նա հեռացել էր գյուղից, և. Պոլսում զարձել քենակիր։ Ազելի ուշ, հայ փախտականների համբարներում, որոնք ստեղծվել էին Թուրքիային հարենակներում 1895—1896 թթ., կոտորածներից հետո, նա աերտերի պարտականություններ էր կատարում։ Էմ. Դիլոնի վկայությամբ, Բիթլիսի բանտապետ Արդուլկադիրը, նման մի շարք գործողություններից հետո, նոր տուն էր կառուցել, որի վրա ծախսել էր շ500 ֆունտ, և շատ տարածված լուրերի, երկու զամ երեք թուրք վաճառականներ առևտուր են անում նրա դրամագլուխ, մինչդեռ նա ամսական ստանում է ցնդամենը հիսուն շիլլինգ աշխատավարձ<sup>3</sup>։

<sup>1</sup> ՀՀ ««Вестник Европы», 1903, кн. 4, стр. 686.

<sup>2</sup> Յուրակ Երվանդ, Երկերի ժողովածու, համ. 4, էջ 254.

<sup>3</sup> Ջալլոն Յն., Положение дел в Турецкой Аризии, сборник «Положение армян...», стр. 358.

Օսմանյան բանուր սարսափելի էր թրեական և մահազանց քաղաքական հանցավորների համար. Բայց այն ստուգալի էր հատկապես այն անմեծ մարդկանց համար, որոնց թարանքը, նպատակով, ճնշմարկում էին անասելի տանշանքների, ժաղոր ու ժանակի, մինչև գահինները չէին ստանում իրենց սպասելիքը. Կամ մինչև տանշահար զոհը մահանում էր: Զարդարանքները, ձեմք հանուխ կազմակերպվում էին թրեական հանցավորների ոգնությամբ, որի հետևանքով բանտարկալիքների համար անունը վիճակ էր ստեղծվում: Այդ նույն նպատակով օգաստորդվում էին նաև շարշարանքի զործիքները, որոնց մեջ տիտուր հրոշակ էր վայելում հանրահայտ ֆալախիան: Ըստ ականատեսների պատմածի, պատմվածի մերկ ոտքերը որվաւմ էին երկու՝ հատուկ սարբած փայտների արանքում, սեղմանում էին, բարձրացվում վերև և սկսում էին թաց ճիպուններով, կամ նույնիսկ մահակներով, հարգածներ հասցնել զոհի ոտքերի կրունկներին ու թաթերին, մինչև ուշագնաց լինելը. Ապա արյունաթաթախ ոտքերն իշեցվում էին աղացրի մեջ և տանշանքը շարունակվում էր... Ենրք շատ ուշ, վերցին ժամանակներս, — գրել է Բաբ-ֆին, — կարգացի ինկվիզիցիալի Ընարած զործիքների նկարագրությունը և նրանց տեսակները, զարմացած, թե ինչպես է պատահել, որ կաթոլիկ եկեղեցու հանճարը, որ այնքան զորավոր էր տանշանքի մեքենաներ ստեղծելու: Մեջ, բոլորովին ի նկատի տուի ֆալախիան...»:

Վերոնում բերված համառա նկարագրություններից հետո զարմանալի լի թվա, եթե ասծնը, որ գրականության մեջ լին արձանադրված դեպքեր, երբ կայսրության որևէ հարուստ քրիստոնյա հպատակ գուրու գար բանտից, պահպանելով իր բարի անունը և հարստությունը: Դա նկարավոր էր միայն երկու դեպքում՝ եթե նա ընդուներ մաշմեղականություն, կամ դառնար իշխանությունների գործակալը, մատուցեր նրանց հատուկ ծառայություններ:

Այդպիսով, շափազանց բազմերանդ ու բազմաթիվ էին կողապտերու և դռփերու ձևերն ու մեթոդները: Դրանք ուղղակիորեն ազդում էին երկրի տեսական զարգացման և նրա տեմպերի վրա:

Մյուս կողմից Հողի պետական սնիփականությունը և Հողագ-

1 Բանիք, Երկր, Համ. 4, Եր., 1955, էլ 254.

սապորժման հղանակները չէին նպաստում Հողագործության զարգացմանը, Զինվորականների ձեռքում գտնված Հողի անմիշտիկան արդյունքը թիւ էր հետաքրքրում տերերին, բայց որ նրանք միանգամայն բավարարվում էին իրենց Հողամասերից ստացած հարկերով։ Բանակում իր ամրող կյանք անցկացնող թուրք գլուղացին զինվորական ծառայության համար ստանում էր վարձ, ցանելու սերմ, ձի, զենք և համաձայն օրենքի ազատված էր որոշ հարկերից, և նդրի բացասական կողմն այն էր, որ նույն էր կարող իրեն նվիրել Հողագործությանը։ Ուրիմն, Հաճախ բացակայում էր Հիմնական աշխատավորը, իսկ կանայք, երեխաներն ու ծերերը ի վիճակի չէին որակով կատարելու պահանջմող աշխատանքները։ Հետևաբար, մաշնեղական գլուղացուն պատկանող հողը թիւ արդյունք էր տալիս Այս պատճեռով էլ նաև նախընտրում էր զբաղվել անառնապահությամբ, որը համեմատարար նվազ աշխատատար էր ու ազիլի թեթև նրենց դերն չին խաղում այստեղ նաև թուրքերի քողվոր լինելու զարգորականութիւն ու ձգումները, որ պահաս կարող գործոն չէր նրանց կյանքում։ Այս ամենը հանգեցնում էր գլուղատեսեանության հետամնացությանը և քայլայանը։ Տիրող վերնախավը ստիպված դիմում էր ռայացին, որը մեծ դեր էր կատարում նաև անտեսության կարևոր մասը հանդիսացող գլուղատեսեանության զարգացման ասպարեզում։

Տ. Էնգելսի նշած տերրոդ գերատեսչությանը, հասարակական աշխատանքների գերատեսչության, գործունեության վերլուծությունը ցույց է տալիս, որ օսմանյան պետությունը շատ թիւ էր մտածում այդ բնադրավառն աշխուժացնելու մասին։

Վերարտադրության խնդիրը չէր հուզում երկիրը կառավարողներին, Բարենորոգումները վերաբերում էին վարչական մարմինների ֆունկցիաներին, իսկ սոցիալ-տեսնական կարգերի վրա նրանք որնէ լուրջ աղդեցություն շռնեցան։ Մինչդեռ երկրի զարգացման Հիմնական նախապայմանը վերնաշնչի ակտոիվ ու դրական քաղաքականության անհրաժեշտությունն էր Թիմալ Աթաթյուրքը կայսրության կործանումից հետո անդրադառնալով նշված պրոլետին, առել է. ունի կովում է որով, ի վերջո Հաղթվում է նրանց կողմից, ովքեր կովում են արորով, և զիրում է իր տեղը նրանց։ Այդպիս պատահեց Օսմանյան կայսրության հետ։ Թուղարները, սերբերը, Հունգարները, ուսմինացիները կապվեցին արորին, նրանք ապահովեցին իրենց կեն-

շաղը, ամրապնդեցին իրենց ուժերը, իսկ մեր ազդը քարշ էր գոլիս աշա այլպիսի ֆաթիհ-նվաճելողների հետևից, չէր աշխատում իր հայրենիքում և ի վերջո, Հաղթակեց նրանց կողմից<sup>1</sup>.

Այս իրավացի եղբակացությունը բխում էր կայսրությանում անիրող անտեսական փոխարարությունների նիշու վերլուծումից: Օսմանյան պետությունը, Արևելքի շատ երկրների նման, մեր ներկայացրած ժամանակաշրջանում ուներ լավագանց Հետամնաց անտեսություն: Նրա թնորոշ կողմը՝ անտեսաձեռների քաղմազանությունն էր, որն ինցիներ արդիւրկում էր կապիտալիստական Հարարերությունների դարպացումը: Այսպիսո, կույրաթյան հսկայական տարածքի վրա միաժամանակ գոյություն ունենին Համայնական-ցեղային Հարարերություններ՝ արարների մոտ և Թրոյանակում, ամենուր տիրապետող էին ֆեոդալական կախվածության փոխարարներությունները, Հարկերը և ոնենան վճարում էին բնատուրով, կոռի կամ աշխատանքային այլ ձեզով, գրամավ և այլն: Մյուս կողմից, կարին արդեւ մասնավոր հոգատիրություն, անայնապործություն, որի արտադրությունը ու միայն ներքին դորձածությունն Համար էր, այլ նաև շուկային Կարտուստրականների շոշափելի խավ և կապիտալիստական արտադրությունն ըավական զարգացած մակարդակ:

Տնտեսադիմ Ա. Լևոնվակու ուսումնասիրությունները նրան Հանգեցրել են այն եղբակացության, որ բազմակացութածն անտեսության գոյությունը մի փորձացիայից մյուսին անցնելու շրջանի գլխավոր սոցիալ-տնտեսական ցուցանիշն է<sup>2</sup>:

Բազմաթիվ փաստերի առկայությունը Օսմանյան կայսրությունում ևս հաստատում է բերքած հետևողական նշանակությունը, Թուրքիայի Համար XIX դարը իրապես Հանդիսացավ անցման շրջան՝ մի հասարակարգից գեպի մյուսը: Սակայն հիշյալ պրոցեսն այնքան էր դանդաղ ու տանշալից, ֆեոդալական փոխարարներությունները՝ այնքան տիրապետող, որ նոր կարգերի երեան գալը և նրանց զարգացումը Համայն չէր նկատվում կամ հաշվի չէր առնվում: Առանձին վայրերում՝ Հողի բանագրավումները, զյուղացիներին ուժով հողին ամրացնելը այնպիսի տպա-

<sup>1</sup> Ататюрк К., Избранные произведения и речи М., 1968, стр. 269.

<sup>2</sup> Левковский А. Н., Малкая буржуазия: облик и судьбы класса, М., 1978, стр. 105.

վորություն էին թողնում, որ երկրում տեղի է ունենում ֆեոդալացման նոր պրացես:

Չեաք էր հաշվի առնել նաև արտաքին գործունեքրի՝ կապիտալիստական Արնամուտքի ազգեցության ուժեղացումը և Թուրքիայի կիսադաշնորհ դառնալու ընթացքը:

Այս վերջին պրոցեսը ուղղակի անդրադարձավ տեղական արտագրության վրա, զգալիորեն բայցայից նրան, տեղական շուկան հնդկացի կապիտալիստական երկրների էժան, գեղեցիկ ու որակով ապրանքներով: Հետզհետեւ ավելացավ գյուղատնտեսական հումքի և մթերքների արտահանումը երկրից, ուժեղացավ գյուղացիության շահճաղործումը: Միաժամանակ, նշված տեղաշարժերի հետևանքով, աճեցին ու ընդլայնվեցին առնարական կապերը խոշոր տերությունների հետ, խոտացան միջնորդ կամ կոմպրադորական բարժուազիայի շարքերը:

Սակածից մի իրավիճակ, երբ կայսրության տիրող խավերի և արևմտյան խոչոր անուրունների շամերը նամքնիկան և երկու կողմերի նախառակի դարձավ պահպանի Օսմանյան կայսրության ամրազությունն ու նշանում տիրող փոխաշարերությունները: Ամենախիստ քենագատության ենթարկելով եկլիսիական երկրների քաղաքականությունը Թուրքիայում, Կ. Մարքսը գրում էր, որ նրանք մինչև իրենց դիրքերը ամրապնդելը չէին մտածում օգնության մասին: «Միայն այժմ, երբ Օսմանյան կայսրությանը հասցըրին վերջին աստիճանի խարիսուլ զինակի, գտնում են, որ կարելի է պահպանել փլանու պատրաստ այդ պետությունը՝ եկլիսիական հավասարակշռությունը պահպանելու պատրվակով...»<sup>1</sup>: Անցյալ դարի 50-ական թթ. կեսերին գրած բազմաթիվ հոգվածներում Կ. Մարքսն ու Ֆ. Էնգելսն անդրադարձել են գյուղական ունեցող իրավիճակը պահպանելու իրենդրին և ցույց տվել նրա երկու կողմը: Որպեսզի կասեցնեն ցարեկան Ռուսաստանի առաջիադացումը, եկլիսիական մեծ տերությունները տեսականորեն հայտարարում էին իրենց վճռականությունը՝ ամեն զնով պաշտպանելու իրենց արտաքին քաղաքականության հիշյալ սկզբունքը: Հարցի մյուս կողմը այն է, որ status quo-ի պահպանումը քրիստոնյա հապատակների համար ենշանակում է պարզապես հավերժականացնել Թուրքիայի կող-

1. Маркс К. и Энгельс Ф., Соч., т. 10, стр. 83.

մից նրանց կեղեքումը<sup>1</sup>, Պարզ է, որ այդ ժողովուրդները պետք է փնտրեին իրենց ազատազրման ուղիները, իրենց զաշեակիցներին ու պարագարեին մինչև վերջնական ազատազրումը:

Անրեգ՛ստ պատերազմների ժամանակաշրջանը վերջանալու կապակցությամբ, անեց քրիստոնյա ժողովուրդների աշխատանքային գործունեության նշանակությունը երկրի տեսեսության բոլոր բնագավառներում։ Դրանք XIX դարի երկրորդ կեսին զգալի վերելք ապրեցին կապիտալիստական հարաբերությունների հիմքի վրա։ Զուգահեռարար ընթանում էր քրիստոնյա ժողովուրդների բուրժուական խավերի ձևավորումը, որը չէր կարող չազդնէ երկրի ընդհանուր առաջընթացի վրա։ Այդ բոլոր ճրեվույթներն իրենց արտահայտությունը գտան քաղաքական կյանքում, այսպիս կոչված ունիորմատորական շարժման մեջ։ Հանրահայտ է, որ բարեփոխություններ մացնող պետական որոշումներն ու ակտերը հանդիսանում են երկրի ներքին, հասունացած պահանջների և ժողովրդի սոցիալ-տեսեական կյանքում կատարվող տեղաշարժների հետևանք։ Սակայն նշված որինաշափությունը մասամբ միայն կարելի է ընդունելի համարել Թուրքիայի համար։ Ա. Միլլերը նշում է, որ բարենորոգումների առաջին շրջանը Թուրքիայում չէր կապված երկրի առաջընթացի հետ։ Նրա կարծիքով, ունիորմների հիմնական, եթե ոչ միակ պատճառը՝ տիրող դասակարգի փոքրիկ, բայց լուսավորյաց խըմքի ձգտումն էր՝ ունիորմների միջոցով վրկել կայսրությունը վրա հասնող կործանումից<sup>2</sup>։

Անշուշտ, նման նպատակ էին հետապնդում թանգիմարի շըրշանի բարեփոխումները։ Բայց, Դյուլհաննի հաթիշը շերիֆում և Հաթիշը Հումայունում անպայման հաշվի են առնելի ներքին որոշակի ու կոնկրետ տեղաշարժները և ժամանակակի արտաքին պայմանները։ Տիրող սոցիալ-տեսեական փոխհարաբերություններում շփոխելով որևէ բան, դրանք, այնուամենայնիվ, արտացոլում էին վերեախավի որոշ շնորհը ձգտումը՝ ինչ-որ լափով բարելավել կայսրության վարչական մարմինների գործունեությունը և գոնե արտաքին տվյալներով ետ շմեալ նպառ-պական երկրներից։

1830-ական թթ. վերջերին հիմնվեցին Ֆինանսների, ներքին

<sup>1</sup> Маркс К. и Энгельс Ф. Соч., т. 9, стр. 31.

<sup>2</sup> Микаль А. Ф., Мустафа-паша Вайрактар, стр. 73.

և արտաքին գործերի մինիստրություններ, 1847-ին՝ լուսավորության մինիստրություն, 1868-ին՝ Հասարակական աշխատանքների և այլն։ Բայց մինչև XIX դարի վերջը վարշական ազարատը հիմնականում մասց նույն մակարդակի վրա, սրբավետն անսնոռամ օրների ուժ ունեցող հին սովորություններն ու կարգը հարավոր չէր վերակառուցել առանց լուրջ և արմատական փոփոխությունների։

Իսկ անտեսության հիմնական ճյուղը՝ գյուղատնտեսությունը, վարշական դեկավարությունը ստացավ միայն դարավերջին, նրա 1894 թ. կազմակերպվեց նրկրագործական մինիստրությունը։ Նրան հանձնարարված ընդգամատների և ուղղությունների թիվն այնքան մեծ ու լայն էր, որ կասկածելի էր, թե նորաստեղծ գերատեսակությունը կարող էր ընդլայնել այդ ամենը։ Մեր միտքը հաստատելու համար թվարկենք մինիստրության վարչությունները։ Արկրագործական, անտառների, հանքերի, արհեստների, անասնաբուժական, գյուղատնտեսական բաների, առնուական, վիճակագրական և մի շաբթ ուսումնական հաստատությունների։

Խնդիրն առենում էնց, կենտրոնական իշխանության մարմինները դարավերջին դնում լուսներն համապատասխան մասնագիտական ուղղություն։

Ռեֆորմատորական շարժման ամենակարևոր իրադարձությունը պետք է համարել Թուրքիայի սահմանադրության Հռակումը<sup>1</sup> 1876 թ. դեկտեմբերի 11 (23)-ին։ Այն մշակվել էր Միդաս փառաջայի և նրա մերժավորությունների քանթեցով (նրանց թվին էր պատկանում նաև Հայ հասարակական գործի Գրիգոր Օսոյանը), Սահմանադրության որոշ հիմնական դրույթները կրկնում էին Անգլիայի, Եվրոպարիայի և Ամերիկայի այլ երկրների սահմանադրությունների առանձին հոդվածները։ Սակայն թուրքական իրականությունն իր ծանր կնիքը դրեց սահմանադրության հոդվածների մեծ մասի վրա։ Ըստ կայսրության այդ հիմնական օրենքի, նրա տարածքում բնակվող բոլոր ժողովուրդները հայտարարվում էին ուսմանցիներ (Հոդվ. 8)։

Միանգամայն իրավացի կերպով և Ֆադենան նշում է, որ կայսրության բոլոր ժողովուրդներին հայտարարելով ուսմանցիները և կայսրությունը՝ ամրացնական միասնություն, որը եր-

<sup>1</sup> Հետմայն Հ. Կազմակերպի տարեցուցը, 1814, Կ. Գոլիս, էջ 125.

բեր շպետք է բաժանվի մասերի, սահմանադրությունը «Հավերժացնում էր թուրքերի տիրապետությունը Հպատակ ժողովուրդների վրա»<sup>1</sup>. Հողակվում էին նաև բուրժուազիկության որոշ ազատություններ՝ անձի (Հոդվ. 10), խօնի և սեփականության (Հ. 21) և այլն. Արգելվում էին գույքի բռնագրավումը, անօրինական տուպանքները, Հարկադիր աշխատանքը (Հ. 24), ինչպես նաև՝ որինքով լնախառնուված տուրքերով Հարկադրելը (Հ. 96), 115-րդ Հոգվածի Համաձայն արգելվում էր սահմանադրության որևէ հոգվածի գործադրության գաղաքացնումը. Սակայն 113-րդ Հոգվածը սուլթանին իրավունք էր վերապահում Հայուարարելու պաշարողական դրություն և այդ պայմաններում դադարեցնելու սահմանադրության գործողությունը, մասնավոնդ, եթե չկայուրության տարածքի որևէ մասում նկատվել են ապրուտամբուն նշանները<sup>2</sup>. Հիմնական օրենքն ընդունելու կապահումը պարագանելու հանդիսավոր նիստում սուլթան Արդուլ-Համիդը Հանդիս եկագ Հաստոկ նատով, նա Հավաստիացրեց բոլորին, որ իրեն տրված իշխանության ամրող ուժով կապահումը սահմանադրական կարգերը, Միաժամանակ նա Հայուարարեց, որ սահմանադրության հիմնական ակդրունքները ուշամասաւայտած անշահանում են շարիաթի դրույթներին, և լուս են մեր ակնկալություններից. Հակումներից և մեր մեծ ցանկությունից՝ ապահովել բոլորին բարօրություն և երջանկություննից<sup>3</sup>.

Հանրահայտ է սահմանադրության և պառլամենտի կողմանակիցների ծանր պայքարի պատմությունը ներքին ռահակցիոն ուժերի դեմ, երա հոգակումից Հնտո, Պայքարն ազարովեց առաջինների պարտությամբ: 1878 թ. փետրվարի 2(14)-ին մեծ վեցից Աւմեղ Վեճիկի փաշան պառլամենտի նիստում ընթերցեց սուլթանի ֆերմանը՝ պառլամենտն անսահմանափակ ժամկետով արձակելու մասին, կապված, իրոք, երկրում տիրող քաղաքական բարդ իրավայնակի Հնտո, Այդ ժամկետը շարունակվեց ամենի ժամ 30 տարի: Եռուտացված ազատությունները մեացին թղթի

<sup>1</sup> Фадеева И. Е. Миджит-паша, жизнь и деятельность, №. 1977, стр. 88.

<sup>2</sup> «Փարձ», 1877, № 3, էջ 60—76: Անբաժան ձեր զոհում ենք, որ սահմանադրության ուժում տարյի թորգումություններից մեկը Հայերներ բարձաւությունն էր, որը և ցիտվում է այսուհետ:

<sup>3</sup> Հույն տէց, էջ 57—58.

<sup>4</sup> Հայուարար, 1877, № 9, էջ 55—53.

վրա և երկիրը ընկավ ծանր, մղմավանչալին վիճակի մեջ, Սկզբունքը Արգուշ-Համիդի բռնատիրության ժամանակաշրջանը, որը պատմության մեջ հայտնի է ողուզում՝ որակմամբ, Մինչդեռ ժողովուրդները և շատ գործիչներ ու քաղաքագետներ հավատացել էին սուլթանի կեղծ հայտարարություններին, որ նա իր համոզված է, թե կայսրության սմիակ փրկությունը սահմանադրությունը գործադրելու մեջ է:<sup>1</sup> Սակայն անկախ Արգուշ-Համիդի և նրա նախորդների քաղաքականությունից, XIX դ. 60—70-ական թթ. այդ շարժումն ընդորդեց քաղաքական, տևուսական և կուլտուրական կյանքի բազմաթիվ բնակավառներ, ինչոր լափով հաշվի առնվեցին նաև ոչ թուրք ժողովուրդների ազգային շահերը: Կառավարությունն ընդունեց հույն պատրիարքի նոր, ազելի ճշտված իրավունքները (1864), նույնը կատարվեց բուլղարական էկզարիի և օրեական համայնքի խախամբաշչիի իրավունքների հետ (1870), 1861—1864 թթ. ընթացքում կիրանակին արգեց ինքնավարություն:

Թուրքահայերի աղքային սահմանադրությունը մշակելու համար դեռևս 1854 թ. կազմվել էր սահմանադրական հանձնաժողով: Նրա մշակած նախագիծը երկար ու սուր վեճերի մթնոլորտում քննարկվել էր ազգային ժողովում: 1860 թ. մայիսի 24-ին այն վերջապես ընդունվեց: Կառավարության կողմից վավերացվեց 1863 թ. մարտին, Ընդ որում հոգածների թիվն իշխանություն 99-ի, մասնավորապես, զավառների բնակչության իրավունքների վերաբերյալ հոդվածների հաշվին: Սակայն արգած սահմանափակ հարավորությունները դիտվեցին լափազանց և 1870-ին առաջարկվեց դրանք վերանայել:

Կառավարությունը թուրքահայերի սահմանադրությունը կըրկին հաստատեց 1874 թ. մայիսին, իսկ համբուլան շրջանում այն փաստորեն չէր գործադրվում:<sup>2</sup> Հայերի հասարակական կյանքում կարևոր այդ փաստաթղթի նախապատրաստման և իրականացման շրջանում տեղի ունեցան զգալի տեղաշարժեր: Աշխատավորությունը շահագործող վերեախավից՝ ամիրաներից, վաշխառուներից, հողատերերից, առևտրականներից ու հոգևորականներից պահանջում էր հաշվի առնել իր պահանջները: Սահ-

<sup>1</sup> Said քաջանի հարթություն, 1910, լ. 1, ս. 14.

<sup>2</sup> Տե՛ս Սարգսյան Ա., Օսմանյան հայերի աղքային սահմանադրությունը, «Արքա», 1910, Խ Ա 1, է. 2, 5:

մանադրության ընդունումը և ժամանակավոր գործադրումը, անշուշտ, այդ պայքարի դրական արդյունքներից մեկն էր:

Այս բոլոր կիսատուպուտ բարեկորպումները կամ զրանք իրականացնելու փորձերը կարելի է համարել ֆեռարախան պետքանի զիջումներ՝ ժամանակի պահանջներին, ձևավորվող բուրժուական խավերին, մասնագործապես, ըրիստոնյա ժողովուրդների բուրժուազիային: Նույն կարգի երևույթներից են միշեկարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների՝ լիցենցների ու կունքների հիմնադրումը, որտեղ ընդունվել կարող էին ձևականութեն բոլոր ժողովուրդների ներկայացուցիչները: Պետական խորհրդի աշխատանքներին մասնակցելու իրավունք ստացան բուլղարները, Հույները, Հայերը, Ծրիաները և ուրիշ ժողովուրդների ներկայացուցիչները: Սակայն նրանք կարող էին կազմել խորհրդի անդամների մեկ երրորդ մասց միայն և, Հայութար, չէին կարող զեռուական ազդեցություն ունենալ խորհրդակցական այդ ժարմենի աշխատանքների վրա: Նշանակալից երրույթ էր նաև այսպիսի թուրքահպատակ գործիչներին ու մատվորականներին պատասխանառու պետական պաշտոններ Հանձնարարելու:

1868 թ. Հայ անտեսագիտ Գրիգոր Ազգաթոնը մտնում է կառավարության կազմի մեջ որպես Հասարակական աշխատանքների մինիստր: Իր պաշտոնական գործունեության մեջ զդալի հարողությունների հասավ մեկ ուրիշ երևելի Հայ՝ Արքին փաշա Դագյանը: 1868 թ. նա ընտրվեց պետական խորհրդի անդամ, 1870-ին՝ ֆինանսների մինիստրության խորհրդական, 1872-ին՝ Հայքաց և անտառաց խորհրդի կոռագարիլ, 1875-ին՝ արտաքին գործերի մինիստրության խորհրդական և մինիստրի տեղակալ: 1860—1870-ական թթ. խոշոր դիմանագիտական դեմք էր նաև Գրիգոր Օսլանը<sup>1</sup>: Հայ և այլազգի ղեկավար գործիչների ցուցակը կարելի է շարունակել: Մեր ուսումնասիրության համար, սակայն, կարեւոր հիշյալ փաստերն արձանագրելն է, որպես զերծախավների ստիպված նահանք՝ նոր կարդերի գժմարին, բայց համար հարձակման պայմաններում: Համիզուան ռեժիմը դանդաղեցրեց, բայց ի վիճակի լճակվ կասեցնել այդ պրոցեսը: Հետապնդումները և Հնջման քաղաքականությունն ավելի ևս խո-

<sup>1</sup> «Արքոր», № 6—7, էջ 102—104:

բացրին և երրին Հակասությունները և մատնցրին ու արագացրին կայուրության անկումը:

Հակասությունների խորացման լավագանց ցայտում օրինակ է աղջային հարցի ծայրաշեղ սրումը և աղջային շարժումների անց երկրում։ Թաղաքական այս ծրանույթը մեծապես բարդանում էր սոցիալ-տնտեսական կյանքի զարգացման ֆոնի վրա։ Օւմանյան կայսության իրականության հիշյալ յուրահատկությունը, ինչպես նշել է Ֆ. Էնգելսը, բացատրվում է երանով, որ տքաղաքակրթության առաջընթացից կրողը հանդիսանում են ոչ թե թուրքերը, այլ մրու աղջերի ներկայացուցիչները։ «Հենց սլավոնական և հունական բուրժուազիան է հանգիսանում բոլոր քաղաքներում և առևտրական կետերում հենարաններին ամեն մի տեսակի քաղաքակրթության, որն իսկապես թափանցում է երկրից ներս։»<sup>1</sup>

Դյանավորապես քրիստոնյա ժողովուրդներին էին տոն տալիս տեսական ու մշակութային կյանքի զարգացմանը, որը թուրք վերիախավը դիտում էր որպես այդ ժողովուրդների դիրքերի ամբապնդում ի հաշիվ Սոմանյան կայսության թուզացման։ Ինչպես նշում է Ֆ. Էնգելսը, թուրքերը, օգտագործելով քաղաքացիության և թե տեսեսության բնագավառներում։ Դեռ ազիլին, թուրք վերիախավն անում էր ամեն ինչ, որպեսզի ձուլի, թուրք և մահմեդական գարձնի իր հպատակ ալլազավան ժողովուրդներին։ Դժբախտաբար այս հարցում նա հասավ որոշ հաշողությունների։ Այդ բանը վկայող փաստները լավագանց շատ են և հաճախ դրանք ունեցել են ողբերգական երանեց։ Բերենք միայն մի կարելուր փաստաթուղթ, որը բազմակողմանիորներին ընութապրում է տիրապետող շրջանների աղջային քաղաքականությունը։ Այն պատկանում է թուրք Հայտնի ռաֆորմատորներից մեկի, երրեմենի մեծ վեղիր և արտաքին դորձների մինիստր Ֆաւադի գրչին։ 1859 թ. նա գրում է իր քաղաքական կտակը, որը հասցեագրված էր առվիթան Արդուլ Աղիզին՝ Արդուլ-Համիդի հորը։ Այդ կտակում, արձանագրելով իր հարկաններից Սոմանյան

<sup>1</sup> Մարք Կ. և Էնգելս Փ., Ըստ., տ. 9, стр. 25.

<sup>2</sup> Խոյն ակց.՝

կայուրության ետ մեալու Հանգամանքը և նրա անկման սիալ վատանզը, Ֆուադ փաշան գտնում էր, որ «զարհութեալի» աղետը հնացենելու համար առվիթանը պետք է «անցյալից անշատզից բավ մեզ դիմի մի նոր կյանք առաջնորդիչ»:

Այդ նոր կյանքի ուղին նա տեսնում էր Սվրոպալիին մերձեալու, մեծ պետությունների օգնության վրա հենվելու, Ռուսաստանին լիզորքացնելու, մեր ներքին քաղաքականության բնագավառում նա խորհուրդ էր տայիս փոխել բոլոր «քաղաքական և քաղաքացիական հաստատությունները»:

Այսուհետեւ նա ովերածության մեծ գործը իր ազարտին հասցնելու և «իսլամությունը փրկելու» համար առաջարկում էր ամրապնդել կայուրությունը՝ բարենորոգումների միջոցով: Վարչական և տեսահսկական կարգի ոնֆորմներից բացի, նա շափականց կարենոր էր Համարում Շատելալը. Շներքին գործերի մասին մեր բոլոր ջանքերը պետք է ձգտեն մի նպատակ միայն, այն է՝ մեր ցեղերի համաձաւությունը: Առանց այս համաձաւությանը մեր կայուրության միությունը ինձ անկարելի է թվում»:

Այսուհետեւ, Ֆուադ փաշան մեծապետական օսմանիզմի դիրքերից երեխելով, վեահատում է առանձին Հպատակ ժողովուրդների պատմական դերը և լուրովի տալիս է նրանց ազգային պայքարի նշանակությունը, «Պետք լէ,— գրում է նա,— որ մռանեանք Հումաստանը՝ ինքերին անկարենոր մի երկիր, բայց ձանձրացնուցիլ գործիք մի (սրբէ) թշնամի պետության ձեռքում... Մեր քաղաքականության նպատակը պետք է լինի, Շատրավոր լափով անքատել Հռույները մեր մյուս քրիստոնյաներից: Ամեն բանից ավելի՝ մենք պարտական ենք բուզզարներին հեռացնել Հռույն եկեղեցու աիրապետությունից՝ առանց նրանց կցելու ոռւս կամ Հռույնական կղերականությանը: Նույն ոպավ նա շարունակում է թվարկել բոլոր այն ցավոտ խնդիրները, որոնք կապված են փոքր ժողովուրդների պատմական բախուի ու պայքարի հետ: «Մի Մունիթենեգրո (Զենանգորիա— Հ. Ի.), մի սերբիական իշխանություն, մի Հայկական թագավորություն, յամենալով ամենափոքր օպտու ոչ իրենց և ոչ մարդկության, կարող են առաջնել կամ նվազ ցեղորդական պետություն լինել...»: Նրա կարծիքով, շափազանց վտանգավոր են ինքնուրույն դառնալու ձգտումները, որ ցուցարելում են փոքրաքանակ ժողովուրդները:

«Մասնավորապես Հայերը,— կարդում ենք ՇԿտակումը,—

Հակումն են ցույց տալիս գնայի ռանձնություն, և խելացիությունն է նրանց հռանդը շափավորել, ասպարեզ տալով միայն նրանց, որոնք պարկեցուորեն ընդունում են մեր կայսրության միավոր սկզբունքը<sup>1</sup>: Այս փաստաթուղթը պետք է դիտել ոչ միայն որպես գործունեության ծրագիր, այլև պրակտիկ քաղաքականության, կոնկրետ իրավիճակի ամփոփում: Անշուշտ, իրականությունը շատ ավելի ժոայլ ու անողոք է եղել, քան որնէ արձանագրություն կամ հիշատակություն: Հետևաբար, աղջային իդեալը ներկայացնեող և բարենորոգումները բնութագրող այս և նման բազմաթիվ փաստաթղթեր թեն բացարձակ կերպով արտահայտում էին ֆեոդալական վերնախառնի ձգումները, սակայն երկրի գրության իրական պատկերը չէին տալիս նույնիսկ մտտավոր շափով: Պարզ է միայն, որ բոլոր թուրք ու թուրքատորները, տասնյակ տարիներ ձգտել են մի հիմնական նպատակի՝ ամեն զետվ պահպանելու ռազմաֆեոդալական կայսրությունը, եթե ոչ զննքի ուժով, ապա բարենորոգումների ճանապարհով: Նրանց պատկերացումների մեջ տեղ չի տրվել ոչ մի ժողովրդի աղջային ձգումների և բոլոր ոչ թուրք ժողովուրդների պայտարին իրենց ազատազրման համար դիտվել է որպես աիրապետող թուրք ժողովրդի հանդեպ թշնամական ռանձնություն:

Իերված միտքը ցայտում կերպով ապացուցվում է Բալկանների նկատմամբ վարդող կենտրոնացման քաղաքականությամբ: 1864 թ. վերջերին բալկանյան համարև բոլոր երկրները միավորվեցին այսպես կոչված «Դանուրի վիլայեթի» մեջ: Այդ բայց ուղղված էր բալկանյան ժողովուրդների բարձրացող աղջային-պատապրական շարժումների դեմ: Սակայն թուրք կառավարողների շանթերը ոչ միայն Բալկաններում, այլև նվաճված բոլոր երկրներում, ապարդյուն էին, քանի որ իրար արմատապես հակասող՝ տիրապետող և կեղեցվող ժողովուրդների շահերը չէին կարող համընկենալ: Խոսքը, անշուշտ, վերաբերում է ոչ միայն քրիստոնյա, այլև մահմեդական ժողովուրդներին՝ արարեներին, ալբանացիներին, լազերին և ուրիշների, որոնք անցյալ դարի երկրորդ կեսերին սկսել էին ապրել իրենց աղջ-

<sup>1</sup> Հույս գալայի քաղաքական կանչը. «Արօք», 1910, № 6—7, էջ 178—222.

յին դարբները։ Հենց այդ ժամանեակ են ասվել Կ. Մարքսի հանձնարկ, ապագան կանխատեսող, Շատնկալ խոսքերը։ Եթենի գետ կենառւնակ մողավուրդը կաշկանդված է ստարերկորա զավթաղի կողմից, նու անհրաժեշտարար իր բոլոր ձգումները, իր ամբողջ եռակն ուղղում է արտաքին թշնամու դիմ, և քանի նրա ներքին կյանքը կմնա այդ մեռվ շատգած, նու ի վյանակի չէ սպարարելու հանուն սոցիալական ազատազրման։ Այդպիսով, աղքային ազատության ու անկախությունը սոցիալական ողբարյունները լուծենու նախապայման են հանդիսանում։ Մինչդեռ հանրահայտ է, որ աղքային Հարցի առանցքը Սամանյան կայսրության վերնախամի քաղաքականության մեջ եղել են մեծապետական շավինիզմի զաղափարախոսությունն ու հոգերանությունը, որոնցից շարուզացան հերթազատվել անգամ թուրք առաջադիմ գործիչներն ու սեփորմատորները, ինչպես նաև՝ սեփորմատորական շարժումն ամբողջապես։

Կանգ լառնելով աղքային քաղաքականության այլ խնդիրների վրա, անհրաժեշտ է նշել, որ նրա բոլոր սկզբանքային հարցերը գործեն միատեսակ էին հասկացվում ու մեկնարանգում թե՛ մեակցիոն և թե առաջազնմ թուրք գործիչների կողմից։ Հասարակական նման երևույթի բացատրությունը հավանարար պետք է փետրել թուրք ժողովրդի դարավոր աիրապետությունից հկող հոգերանության մեջ, որին համար պարարտ հող էին հանդիսանում ու միայն հաղթական արշավանդների և նվաճումների արդյունքը ու պատմությունը, այլև մահմեդական կրոնն ու շարիաթը։ Այդ գործուների աղքացության նոր արտահայտությունների առկայությունը մեր օրերում և մեծապետական նկրումների երևան գալը որոշ շրջաններում ցույց են տալիս դարերից եկած զաղափարների ու սովորութների կենսական ուժը, որի համար կարելի հաշվի շնատել։

Վ. Ի. Լենինը խոսելով Բալկաններում Սամանյան կայսրության արբապետության ու աղդեցության մասին, հատկապես նշել է, որ աղքային մեջումը միշտ էլ հանդիսացել է մեկը ոմիշնեղարի հզոր այն մեացորդներից, որոնք խիստ կասեցնում են հասարակական զարգացումը և պրոլետարիատի անըն։

Զարգացման ցածր աստիճանին գտնվող ու ետ մեացող եր-

<sup>1</sup> Մարք Կ. և Ֆեղալ Փ., Ըստ, տ. 18, ստ. 555.

<sup>2</sup> Անգլ Վ. Դ., օկտ. Համ. 23, էլ 188.

կըրենք և ժողովուրդները կապիտալիզմի և ապա իմպերիալիզմի շրջանում, որպես կանոն, գառնում էին առաջավոր ու բարձր զարգացած տերությունների գաղութը, կիսապազութը, կամ նրանց աղղիցության ոլորտը, Պատմության որամարտնեկան այս ընթացքը հասկանալի է նզել իրենց ինքուրույնության համար պարագաներով ժողովուրդների առաջավոր մասին և հաշվի լի տոնվել թուրք վերնախամյի կողմից։ Որպես օրինակ թիրենք հայ մատվորական Հոգ։ Հակոբյանի սՅամար միջամտությունը խորագրով քննադատական հոգվածը Կ. Պոլսի առաջադիմ թիրթիրից մեկի՝ «Հայրենիքի» էջերում։

Վերլուծելով թուրք կառավարողների ներքին քաղաքականության հետացիմական էությունը և դրա հետևանքները, հեղինակն ընդդում է, որ այդ բոլորից տուժել են ոչ միայն հպատակ ժողովուրդները, այլև իրենք՝ թուրքները, Կառավարության կողմից գործադրվող բռնություններն ու կամայականություններն արտաքին միջամտության առիջ տվեցին։ Հարստահարությունները, ասպատակություններն ու քարտերը ֆիզիկակեն ունշացրին քրիստոնյա ժողովուրդների մի մասին։ Սրա արդյունքը հղազ տնտեսության մեջ զիյավոր ակտիվ տարրի թուլացումը և օտար կապիտալի աղղեցության ուժեղացումը երկրի ներսում, ու...Հույները տարր մն էին այս երկրին մեզ, — շարունակում է հեղինակը, — աշխատասեր ու քաղաքակիրթ, կողովութեցան, շարդկեցան, մինչև որ Թուրքիո մեկ մասը իրենց բաժին հանվեցավ, Թուրքիան կորսնցուց Հրեաները նույն պատճառներով աշխարհին ամեն կողմ սփռվեցան, Թուրքիային գացին և ուր որ հաստատվեցան՝ անհունապես նպաստեցին իրենց նոր հայրենիքին քաղաքակրթությանը...։

Հոդվածագիրն այսուհետև նշում է Թուլզարիայի աղասագրման կարևորությունը նրա ժողովրդի համար Անկախ գոյության ոչ առաջարգած մեջ Դանուրի եղերքները այլևս արյուն ու թաշան տեղի չունեցան... Թուրքիա կորսնցուց Ու կորսնցուց Թեսարարիան, Մոլգավիան, Վալաքիան, Սերբիան, Մոլթենեցրուն և Թունիա-Հերցոգութինան։ Հեղինակը հատկապես ժանրանությունների ու շարդերի բացառական հնտեսներները, «Հայերը աշխատասեր ու արտագրող ժողովուրդ մ էին, իրենց բախսին հետ հաշված ու սամանյան հայրենիքը յուրացուցած, Կառավարությունը տարձե տարի ընդարձակ շահ մ ուներ հայկական

տուրքե, առևտրե և ձեռնարկելերե, Տարբ մը զերշապէս երկրին  
 մեջ ու երկրին մասը, որ կարող էր առտիճառեական առաջխա-  
 զացմամբ պատվար մը զառնալ առար տնտեսական արշա-  
 վանքին ու մրցումին գիմք: Այս կարևոր հետևությունը և իրա-  
 կան զնաշատականը երբնք Հաշվի շառան կայսրության կոտո-  
 վարիները, Նրանք շարունակեցին և ավելի Համայն գիմքըն  
 բռնի միջոցների իրենց հպատակների հանդիպ: ոչայիքը կո-  
 տորվեցան Անոնց Հարստությունը, որ երկրին արտադրող  
 դրամագլուխին մեկ մասը կեազմեր, կողոպովկեցավ ոչնչացվելու  
 համար: Ու Հետեւնեքը: Հետեւնը պարզ է: Ստարը առանց  
 դրամագլուխի, կամ աննշան դրամագլուխ Թուրքիա յատագ, ու  
 ստար անտեսական աիրապետության շրջանին Թուրքիա աարգե-  
 տարի Հայկական արյունին տուգանքը վճարեց: Ու իր իսկ ժո-  
 ղովուրոցին խեղճությունն ու խաղթամթյունը մեաց ու կմնաա:

Այսպիսի համարձակությամբ ու Հետաես մեկնարանու-  
 թյամբ ո՛հուրիեթիւ-սաղատության, որերին, թուրքական իրա-  
 կանության պատկերն էր գծապրում՝ Վահան Թիերյանի, Սրվանդ  
 Օտյանի, Լուս Բաշլյանի, Արփիար Արփիարյանի և ուրիշների  
 խմբագրությամբ լույս տեսնող ո՛Հայրենիքը լրագիրը: Համարյա-  
 նույն ժամանակաշրջանում դրա սԹուրքիայի իրադարձությունների շուրջը Հոգվածում, Բ. Անոնելանցը ողջունելով երիտթուր-  
 քերի Հաղթանակը, դրա պատճառներից մեկը Համարյան էր  
 ուսկթանական Թուրքիայի կառավարողների ազգային սխալ քա-  
 ղաքականությունը: ոչին ուժիմը, — գրում էր նա, — բորբո-  
 քելով ստրկացված ազգերի ատելությունը, թուլացնում էր պե-  
 տությունը, որի պահպանմամբ առանձնապես շահագրգութած էին  
 թուրքերը: Պետության թուլացությունը առաջ էր բերել աերությունների միջամտությունը կայսրության ներքին գործերինչ:

Բազմազգ, Հսկայածավալ կայսրության մեջ ազգային Հարցը  
 դարձել էր ամենադժգարին ու Հիվանդոտ խնդիրներից մեկը:  
 Միջնադարյան ձեռքով ուժի ու կամայականությունների գործա-  
 զրությունը ավելի էր սրում այն, քանի որ Հետզհետե կազմակերպ-  
 ված էին զանում ազատագրական պայքարի ուժերը և ավելի  
 սիստեմատիկ ու նպատակասրաց՝ դրանց երկվթները:

Թուրքիայի քաղաքական կրանքին քաղածանոթ Պ. Տամի-

1 ՀՀայրենիք, 4/17, պատուի, 1909, Կ. Գոյե:

2 Անոնշանց թագուհի. Ընտիր ձեռնոր, Երևան, 1878, էջ 543:

жните земи на гръцката кралска фамилия и т. н. архонтите на селата и градовете в Македония и Егейска Мала Азия. Във всички случаи това е било резултат на политически съюзи между турски и гръцки земевладелици, които са съществували от дълги години. Тези съюзи са имали различни характери и са се състоявали между представители на различни социални и политически слоеве. Най-често те са били между представители на земевладелици и земеделци, които са съществували от дълги години. Тези съюзи са имали различни характери и са състоявали между представители на земевладелици и земеделци, които са съществували от дълги години.

Съюзът между гръцките земевладелици и земеделци е бил основен фактор за укрепването на гръцката нация и за поддържането на гръцката цивилизация.

Съюзът между гръцките земевладелици и земеделци е бил основен фактор за укрепването на гръцката нация и за поддържането на гръцката цивилизация. Съюзът между гръцките земевладелици и земеделци е бил основен фактор за укрепването на гръцката нация и за поддържането на гръцката цивилизация.

<sup>1</sup> Томилов П. А., Отчет о поездке по Азиатской Турции в 1904 г. СПб. 1907, стр. 4.

<sup>2</sup> З. Шахтахтинский М., Краткое мусульманской жизненной способности. Турский сборник, СПб. 1909. Шуейби Ахмед, Административное право. Мир ислама, т. I, 1912, и др.

<sup>3</sup> Снегаров И. С., Турското владичество — пречка къмъ культурното раз развитие на българския народ и другите балкански народи. София, 1958, стр. 201.

<sup>4</sup> Амин Санд, Восстание арабов в 20 веке, пер. с араб. М., 1964, стр. 15.

Օհքորմների փորձերը ույնչ շտվին, նվազայն այն ժամանակ, շարունակում է հեղինակը, երբ արարական երկրները որաժամկեցին Թուրքիայից, կարճ ժամկետում հասան ավելի, բարձր աստիճանի, քան նրանց գունվում էին թուրքական տիրապետության շրջանում, իսկ նրանցից մի քանիսը, բոլոր բնագավառներում, հատկապես լուսավորության և արտադրության բնագավառում, հասան ու անցան թուրքինեւ<sup>1</sup>.

Կապիտալիստական հարաբերությունների հաղթանակի կողմանակիցները հատկապես լավ էին պատկերացնում ազգային հարցի լուծման անհրաժեշտությունը, թեկուղ բուրժուական դիմոկրատիայի շրջանակներում, «Մուրեն» ամսագիրը 1906 թ. իր համարներից մեկում, կանգ առնելով Թուրքիայում տեղի ունեցող զիազերի, ազգամիջյան բախումների և բազարական վիճակի վրա, օրինակ բնրելով ոռւսական առաջին հեղափոխության փորձը, զրում էր ռուսաստանի մեծ հեղափոխությունը ցույց նվազեց նոր ուղի: Նա ապացուցեց, որ խառն աղքարենակությունը ունեցող պետություններում առանձին ազգերի կուտեքի բարեկազմումը կախված է ամրագցի ռեֆորմներից և բարեկազմումից, եթե նրա առանձին մասերը հնարավորություն լուսնեն բաժանվել և պահպանել իրենց անկախ վիճակը<sup>2</sup>, Կյանքը ցույց տվեց, որ ամրագց կայսրությունում կառարվող բարեփոխումների փորձերը լատերացին ցանկալի առաջընթաց, կամ նորմալ զարդարման պայմաններու Ամրոցը, իր հերթին, խանգարեց մասերի, կամ Հպատակ ժողովուրդների ու երկրների զարգացումը: Դեռև 1858 թ. Պ. Զինաւլնը զրել է. «Թուրքական ազգային արդյունաբերության ներկայիս անկումը բացատրվում է ոչ թե ազգարենակշության անընդունակությամբ, այլ ավելի շուտ կառավարության հանցավոր անփութությամբ, կառավարություն, որը չկարողացավ խթանել աշխատանքներ արդյունաբերության բնագավառում կամ թեկուղ հեռացնել այն արգելքները, որոնք խանգարում էին նրա զարգացմանը»<sup>3</sup>: Այս տեսակետը բաժանում էն ոչ միայն Թուրքիայում տիրոզ կարգերին քաջածանոթ օտար հեղինակները, այլն իրենք՝ թուրք գործիչներն ու մատակարականները, որոնք իրենց հայրենիքի ետ մեալը համարում էին իշ-

<sup>1</sup> Անն Սալլ, Երվ. աշխ. էջ 18.

<sup>2</sup> «Մուրեն», 1906, Խ 7, էջ 119.

<sup>3</sup> Վալաչև Պ. Ա., Վելլուկ և աստուճական հարցում էին իշ-

խանությունների բնատիրական քաղաքականության և ահշորժության հանաւոք:

Անցյալ դարի վերջի և մեր գարասկզբի Հայունի գործիչներից ոՄիզան թերթի տնօրին և խմբադիր Մուրադ թեյր (ոՄիզանի Մուրադ) երիտարքերի հեղաշրջումից հետո երկու վիճակը բնութագրում է այսպես, որպեսկ պիտեհանք, որ բռնակալությունը և դուլումը մեռցուցած էին ազգային կյանքը և շարունակ ետադիմելու վրա էինք»<sup>1</sup>:

Արդուլ-Համիզի ժամանակաշրջանի պատմության վերաբերյալ ժամանակաշրջան հայունական Հայունակ Օ. Նուրին բոլոր դժբախտաթյունների ազդյուրը և հատամնացության պատճառները ևս համարում է ներքին գործոնները: Նրա կարծիքով, Հիմանդրագին երեսությունները թուլացրին կայսրությունը և պայմանները ստեղծեցին ստարների ներթափանցման համար:

«Ազգը հրաժարվում էր, — գրում է Օ. Նուրին, — անիրավությունների, անարդարության, զուլումի և բռնակալության տակ: Բոլոր պետական հիմնարկությունները գործում էին գողության, բռնության և դաժանության սկզբանքներով: Թանակի հոգին հանդիսացող սպանների շրջանում կարգապահության նշույլն անգամ շետ մնացել.... Թե զինվորականության շրջանում և թե այլուր իրավունքը և արդարությունը առանց կաշառքի կամ մեկի բարեր հոգանակորության շետ կարող գոյություն ունենալը»:

Թուրքիայի բանվորական կուսակցության նախագահ տիկին Բեհրին Բորանի կարծիքով, Թուրքիան շկարողացավ առաջավոր երկրների հետ համընթաց քայլել հետեւյալ պատճառներով: առաջինը՝ երրոր Արևմուտքն ընթանում էր կապիտալիստական Հարաբերությունների հաստատման ուղիով, ուսմանյան հասարակությունը քանչքը էր գործադրում կենտրոնացված ֆեոդալիզմ կառուցելու համար, և երկրորդ, աշխարհապահական հայտնագործումների ու առնտրական հիմնական ճանապարհների տեղափոխման հետանքը Թուրքիան և Միջերկրականի այլ երկրներ կողցքեցին «անցյալ առնտրական նշանակությունը» և պնդատվածիայի խորշոր առնտրական և արհեստագործական կենտ-

<sup>1</sup> «Ազգային շարժում բնակչին հայրական ժամանք Բ. Կ. Պոլիս, Գրադ տառըն, Կ. Պոլիս, 1909, էջ 51.

բոնները հանգեցին և մնացին ետք<sup>1</sup>: Ներքին և արտաքին զոր-  
 ժնների միացյալ աղղեցության վերաբերյալ իր կարծիքի մեջ  
 Բ. Բորանը մենակ է:<sup>2</sup> Նրա տեսակետները բաժանում են ուրիշ  
 թուրք հեղինակներ, որոնց մեծ մասը հակված է երկրութ բուն  
 գրած շարիքների համար մեզավոր հանալի պլանուրապես ար-  
 տաքին աղղեցությամբ, Այդ համոզմունքն ունի նաև Թուրքա-  
 կան հանրապետության ռառաջին մարդու<sup>3</sup> Փ. Աթաթյուրքը  
 ու Հայրէջը ու այլասերման ուղիով կայսրության անկումային  
 երթը նա բացատրում է այն հանգամանքով, որ պետության ղե-  
 կազմարները կառավարում էին, չսեղով իրր դրսի խորհուրդները  
 և երրեմն իրենց քաղաքականությունը կապում էին արտաքին  
 թշնամիների շահերի հետ: Հետևանքը եղի է այն, որ «Թուր-  
 քին ամեն զար, ամեն որ և ժամ զնում էր վայրընթաց ուղիով  
 և այլասերվում»: Այսուհետեւ Փ. Աթաթյուրքը ամփոփում է-  
 տերի այդ հասազիմությունը տեղի ունենար միայն նյութական  
 արժեքների բնագավառում, ապա այն չէր ունենար որևէ նշանա-  
 կություն: Դժբախտաբար, անկումը գիտվում էր նաև բարոյա-  
 կան ոլորտում: Անկասկած, այն մեր մեծ երկիրը և մեծ ժողո-  
 վրդին կորսած հասցեող հիմնական գործուն էր<sup>4</sup>: Թուրքական  
 հանրապետության տառաշին պրեզիդենտին կարելի է հասկա-  
 նալ այսպիս, որ երկրի անկումը կապված է եղի վերնախօսիքի  
 բարոյական վարքագիք, կամ նրա քաղաքականության հետ:  
 Ուրիշ ենթագրություն անելը դժվար է, քանի որ զուր բարոյա-  
 կան գործուները առանց հասարակական վերնաշնչեցի ակտիվ  
 միջամտության, կամ պետական քաղաքականության, չին կա-  
 րող այլպիսի լուրջ ճնշեամի առաջ կանգնեցնել մի հսկայա-  
 կան կայսրություն և նրանում ապրող ժողովուրդներին: Հետե-  
 ղաբար Փ. Աթաթյուրքը ևս հանգում է այն եղրակացության, որ  
 վճռական է, այսուամենայինվ, ներքին գործուների աղղեցու-  
 թյունը: Ժամանակակից Թուրքիայի անտեսության պրոբլեմե-  
 րի մասնագիտ, սովորական անտեսագիտ Բ. Ալիքը կովը, վեր-  
 լուծնակ կայսրության զարգացման անմպերը և ընթացքը, նույն-  
 պես գանում է, որ «Հանց միայն ներքին գործուները ինքըին  
 այնքան բազմաթիվ և նշանակալից էին, որ բավական էին ուժեղ

<sup>1</sup> Воран Вехиче, Türkiye ve Sosializm Sorunları, Ist., 1968, с. 9.

<sup>2</sup> Кемаль Мустафа, Путь новой Турции, т. IV, М.—Л., 1934, стр. 56.

կերպով արգելակներու թուրքական արդյունաբերության (մերք կավիացներներ նաև ամրող անտեսության — Հ. Ի.) զարգացումը, եթե նույնիսկ բացակալեին արտաքին աղղեցության գործուները<sup>1</sup>:

Արդպիսավ, միանգամայն տարրեր ժամանակների, տարրեր զարգարգերի ու տեսակետների ներկայացուցիչներ շարիթի արմատն իրավացիորեն վենտրել են տիրապետող կարգերի և Օսմանյան կայսրությունում դարսերով ամրապնդված հասարակական փոխհարաբերությունների մեջ։ Մարդիկ, որոնք կոչված էին կենսագործելու ընկույզած օրենքները, կատարելու նշված բարեփոխումները, հենց իրենք չէ խախոտում էին, կամ իրենց կամայական գործողություններով պետական այդ փաստաթշըզների արժեքը հավասարեցնում էին դրանց վրա ծախսած թղթի արժեքին։

Թուրքական բռնապետության կողմնակիցներն ու պաշտպանները շափազանց լավ գիտեին իրենց ուժը և լայն հնարավորությունները՝ գործելու ցանկացած ձևով և առանց վարակելու խախոտում ու անտեսում էին կառավարական օրենքները։ Դա միանգամայն համապատասխանում էր երկրի տիրապետող խավի շահներին և հաճախ ելնում էր սուլթանի անձից, երա մերձավորներից, ցեղապետերից, Հողատեր-ֆեռդալներից ու իշխանավորներից։ Խախոտումները թելագրում էին, առաջին հերթին, Բարձր զուան պաշտոնյանները։ Անթիվ ու անհամար նե նման փաստերը ու նրանց նկարագրությունները՝ պատմական և գեղարվեստական գրականության, պալատականների ու պալատիայցների հուշագրությունների և պարբերականների էջերուաւ-

թերենք միայն մեկ պատմական փաստաթուղթ։ Դա Արդուլ-Համիդի խոստովանությունն է մերձավորներից մեկին, որն արձանագրվել է ցարական Ռուսաստանի ռազմական գործակաչ գնդապետ Պեշկովի զեկուցադրում։ Շնա զիտեմ, — ասել է սուլթանը, — որ իմ շուրջը բալորը թալանում են և նույնիսկ Հակայական Հարստություն են դիզում՝ շորումներով ու կառաջրավությաց Բուրգիայում շկան մարդիկ, որոնք, եթե հանգամանքները նրանց թույլ տան, շեն թալանի. ևս նախընտրում եմ իշխանության գեկին թողնել Հին թալանշիների։ Նրանք արգել հարուստ

<sup>1</sup> Алибеков И. В., О причинах промышленной отсталости полуказако-турецкой Турции, «Etudes Balkaniques», 1975, № 3, p. 86.

ձն, դիզել են իրենց հարստությունը և եթե շարումակում են թագանել, ապա այնպիսի շափերով, որոնք ինձ հայտնի են: Փոքր կաշառք նրանք չեն վերցնի: Խել նոր ահճեավորությունները քաղցած են, լրավաբարզած ախորժակով և, իշարկե, թալանելու: Են ավելի շատ, մինչև որ չկրաքանակ: Ըստի տեղափախումը ահա արս պատճառով կվատթարացնի ստեղծված իրավիճակը, և միաժամանակ ինձ համար կլինի անեպաստ, որովհետև Ըստին ես իմ ձեռքում եմ պատճում հենց նրանով, որ դրանց անցյալը ինձ հայտնի է և որնէ բան պատահելու դիպրում նրանք շափականց շատ բան կկորցնեն:

Իրենց կամքից անկախ նրանք ինձ հավասարիմ են: Մինչդեռ նոր մարդկանց հավատարմությանը, եթե նրանք կորցնելու բան լունեն, ես վստահել չեմ կարող...<sup>1</sup>:

Բացարձակ իրականությունն արտահայտող և դրանով էլ ոչ սովորական այս հայտարարությունն ունի իր ներքին տրամադրանություն: Կայսրության առաջին դեմքը, առանց ծածկելու, քնութագրում է իր զնկավարած պետական վարչական սիստեմը և իր վերաբերմուճքը դեպի նմանօրինակ բարքերը:

Օգոստինվագութանից հովանավորությունից, բարձրաստիճան պաշտոնյաները բացարձակ լարաշահում էին իրենց դիրքը՝ գովենելու, շորթելու և հարստանալու նպատակով:

1905—1908 թթ. աղմկալից գործարքներով հայտնի զարձան սուլթանական կառավարության երեք մինիստրները Դրանցից մեկը Զիւնի փաշան էր, որը զբաղեցնում էր ֆինանսների և հասարակական աշխատանքների մինիստրների պաշտոնները ու եղիլ էր նաև անգապնու մի շարք վայրերում: Նա ուժուած կաշոք իսկապես չէր վերցնում ու տկաշառքի նվազագույն շափ էր սահմանել 500 հազար ֆրանկը: Խելպես նշեցին թերթերը, Զիւնի փաշան միայն ժմաղդաղի ճանապարհի համար ստացել էր մոտ մեկ միլիոն ֆրանկ<sup>2</sup>: Խել ժումային մինիստր Զելալ փաշան նավատորմում և գերատեսչության սիստեմում այնպիսի բարքեր էր մացրել, որ ժառանգները բացարձակ կերպով գողանում ու վատենում էին պետական միջոցները և այդ ասպարեզում մըցում իրար հետ: Վաճառքի էր հանվում ամեն բան, ակսած և կուլումներից, պաշտոններից, Հումքից և վերջացրած

<sup>1</sup> АВИР, գ. 178, թ. 29.

<sup>2</sup> «Երեխ» հայեց, 1908, թ. 10, էջ 8:

շոգենավերի ծիսնելուլզներովք։ Գնումներ կատարելու և պատվերներ տալու համար մինիստրությանը հատկացված միջոցների ինը տառներորդ մասը լուրացվում էր պատվիրատուների և պատվերներն ընդունողների կողմից, և իշարկե, մինիստրը իր սեփական շահի համար ոչ մի հարմար առիթ բաց չէր թողնում։ Թագմական արհեստանոցների՝ թոփհաների պետ Մարշալ Զեքի վաշան պատվերներ էր տալիս և զեքի ու զինամթերքի գնումներ էր կատարում այն երկրներում կամ ընկերություններից, որունցից առավել կաշառք՝ որախշից ստանալու հնարավորություններ կային<sup>1</sup>, իսկ սուլթանը, հետ Զեքի վաշանի ասելով, շատ լավ տեղյակ էր այդ ամենին և երրեք չէր պատժում իր հավատարիմ անձանց մինչև այն պահը, քանի դեռ համոզված էր այդ հավատարմության առկայության մեջ։ Ընդհակառակը, նա ինքն էր իր մերձավորներին նշանակում ավելի բարձր պաշտանների, նվիրում նոր ազարակներ, մեծ գումարներ, պարզաւորում շքանշաններով, կոչումներով և այլն։

Դու արրանցակներին եկամտաբեր պաշտոններով ապահովելու համար սուլթանն ընդլայնեց պետական խորհրդի և ոստիկանության խորհրդի կազմը, առաջինի անդամների թիվը հասնելով 30-ից 300-ի, իսկ երկրորդինց՝ 20-ից 150-ի։

Հսկայական գումարներ էին ֆախավում սուլթանի պալատի ու պալատականների վրա։ Թագավորական ընտանիքի անդամների հետ միտահին վերջիններին թիվը հասնում էր մոտ 12 հազարի, և դրանց ապրուստի համար ամսական ֆախավում էր կես միլիոն սուլթի։

Բուրք առաջադիմ գրականության հայտնի դեմքերից Բեֆիկ Ֆիբրեթի հետևորդ և ոզուլումիւ վերջին տարիների ականատես գրող եալիդ Զիա Ռոշալը պատճեն արդ շրջանը բնութագրել է Հետեւյալ խոսքերով։ Ամբողջ երկիրը՝ վիլայեթներից մինչև կաղաները, ներսից ու դրսից ուսումն էին որդերը, նրկրի բոլոր հարստությունները կառավարությունն ուղղում էր պալատի անկույս երախը։ Սահաներն ընտրվում էին դավանաներից, մինիստրները՝ գողերից, ստոր մարգկանց ու սրիկաներին շնորհ-

<sup>1</sup> Տե՛ս « սօրերի հայեց», 1905, № 5, էջ 5.

<sup>2</sup> Տե՛ս հոյն տեղը, № 8, էջ 8։

<sup>3</sup> Տե՛ս հոյն տեղը, № 5, էջ 8։

վում էին բարձր պաշտոններ, շքանշաններ էին կախվում համազգառաներից, որուց ներսում կեղակից բացի ոչինչ չկար...<sup>2</sup>

Համաձայն Պ. Չիխալինի հաշվումների, անցյալ դարի կեսերին առվլթանի և նրա ընտանիքի ժախանքը կազմում էին կայսության եկամուտների մեկ յօթերրորդ մասը, մինչդեռ բոլոր մեծ պետությունների նման ծախսերը շատ ավելի նվազ էին: Օրինակ, Ռուսաստանում գրանց կազմում էի պետության եկամուտը 1/20, Ավստրիայում՝ 1/30, Ֆրանսիայում՝ 1/50, իսկ Անգլիայում՝ 1/200 մասը<sup>3</sup>: Վարչական առարատի չափաղանց կարևոր մասն էր կազմում լրտեսների բանակը, իրականական բանակը Արքուկ-Համբիդի օրոք անցել էր քառասում հազարից: Գերմանացի լրագրող Բ. Շտերնը ուշիվանդ մարդը հոգածաշարում, նկարագրելով Բուրբիայի իրականության մութ ժալթերը, հատուկ տեղ է հատկացնում ոստիկանության և լրտեսների գործունեությանը, ուղղող Թիոսկի զաղունի ժախանքի վերջին ցուցակում,— զրում է նա, — «առվլթանի ապահովության վրա հսկող 43.000 լրտեսների համար նշանակված է մի քանի միլիոնի հանող պատկառելի գումար: Այդքան լրտեսներից 3000-ը միայն պարագաների հեղող-Թիոսկի համար են գործում, իսկ մենցած 40.000-ը ցրված են ամբողջ տերության մեջ՝: Հեղինակը նշում է, որ Բուրբիրից բացի լրտեսություն են անում Հրեաները, Հույները, Հայերը, և վրապացիները և բոլոր նրանք, ովքեր ունակ են նման ստոր և մութ գործների: Այլդ ժարդկանց պարտականությունն է Հոկել մինիստրների, պինվորականների, շնչիսների, սովորաների, Ժանապարհությունների մարդկանց և օտարապղիների վրա, մեքենայություններ հետուի, դավադրություններ սարքել: Մեկը մյուսի դեմ պինել, գեսպանատաներից լուրեր բերել կամ նրանց տեղեկություններ հաղորդել...»

Սառան մատնում է իր տիրոքը, որդին՝ Հարը, տերը ժախում է իր ժառաներին, իսկ Հայրը՝ որդիներինչ<sup>4</sup>:

Նման բարքերը ծաղկում էին հատկապես ոզուլումիշ տարիներին, թեև լրտեսի աշխատանքը ժանր էր, բայց ստորացուցիչ էր, այդ պատճենով էլ այն զնանատվում էր բավական բարեր:

<sup>1</sup> Фиш Р. Г. Турское дневники. М., 1977, стр. 46.

<sup>2</sup> Տիկ Կիհաչյան Ա. Ա. Великие державы и восточный вопрос, стр. 191.

<sup>3</sup> «Մուրեն», 1805, № 3, էջ 22.

<sup>4</sup> Խոյն տէցը:

Ծբե թուրքիայում կար մի պաշտոն, որի համար տերությունը պնացրում էր կանոնավոր ու ժամանակին, դա լրտեսությունն էր ծ. Օսյանը ազել է լրտեսի արգահռտելին կերպարը, որից շամեն մարդ կվախնար ու կրցածին չափ խույս կուտար, որովհետեւ պիտին, թե վայելած կայսերական ամեն մեկ շնորհները անլուր մտածության մը կամ ստորին լրտեսության մը վարձըն էին։

Այդ տիպի մարդը սպառենալով իր ազգած սարսափը, ինք-պինը կը պարտապրեր ամեն լիտանիքներու, որոնց տունը կմըսա-նար էնցիքը անպատկառ աներեսությամբ մը և ամենքը ստիպ-ված էին կեղծ մնջարանքով պատվել զինքը։<sup>1</sup>

Աշա աշոպիսին էր թուրքական վարչական ապարատի կարե-վոր պաշտոնեալիթյուններից մեկի պատկերը, որի գործելակերպը ընտրու էր ամբողջ Հինգարիխայի համար։ Լրտեսների կողքին և նրանցից բացի, գոյտություն ուներ մոռովրդական մասսաների մեջման ու անիրավությունների մի ուրիշ օգակ՝ որինքի պահա-պանների ու գործադրողների, ժանդարմների (զապթիե) ու ու-տիկանների բազմությունը։ Թիլ լէին անօրինական գործառ-նությունները, որոնց տեղական իշխանությունները հանձնարա-րում էին կատարելու հենց ոստիկանին, զիշերվա պահապանին, կամ թաղայինին, Սրանց կանոնավոր կերպով ռոճիկ լէին ստա-նում և որպես կանոն կապված էին գողերի, ավաղակների ու տարրեր տիպի հանցագործների հետ, որոնց օգնելու համար, հաճախ ունեին ավարի ու թալանի իրենց բաժինը։ Ստեղծվել էր շաղական սերու ու մնայում ընկերակցություն՝ քրեական հան-ցագործների, ոստիկանության և այլպես առած ոսպասարկող-ների միջև։ Վերջինները՝ գիշերապահ-բնելինները, հրդի՛չաշեր-թուլումրացինները, նավակների տերերը կամ քայլքինները, հրո-շակավոր համբալները, բոլորը սպագործում էին լուրաբանույու-առիթ, որպեսզի ապահովեն իրենց նյութական շահը։

Բ. Շտերնը հենց նման գործողությունների համար էլ դրանց բոլորին անվանել է «կես ոստիկանություն»։ Նրա տեղեկու-թյունների համաձայն ոսպասարկողներին ամեն մի խումբ կ-Պոլսում բաղկացած էր մի քանի հազար մարդկանցից։ Անըսա-ժեշտության դեպքում դրանք գործում էին փոխադարձ համա-ձայնությամբ, և որովհետև սպասարկման վարձատրությունը

<sup>1</sup> Օսյան Երևան, Օրէնքի ժողովածու, Հառու Հինգերորդ, Երևան, 1862, էլ 42—43.

շատ շնչին էր, նրանք աշխատում էին գողանալ, հրդեհն և տպա  
թալանել, որպեսզի ձեռնունայն տուն լվերադառնան: Թնակլու-  
թան արդ ցածր խավի կատարած դերը Թուրքիայի քաղաքների  
տառյա կյանքում, նրա աղջեցությունն այնքան նշանակալից է  
եղել, որ անցյալ գարդի կեսերին դրան անդրադարձն են Խույսինեկ  
է: Մարդոք և Ֆ. Էլեկտրոս, Շնարքուայի թուրք աղջարնակլության  
պլիավոր պատվարը..., — զբել են նրանք, — հանդիսանում է  
է: Պոլոսի և մի քանի խոշոր այլ քաղաքների խաժամուժը: Մեծ  
մասամբ թուրքական ժագում ունեցող այդ խաժամուժը, չնա-  
յած այն Հանգամանքին, որ իրեն աշխատանք տվազները զլյա-  
վորութիւն քիսուունյա կապիտալիստներն են, նու խանգուտ կեր-  
պով պաշտպանում է իր երեակայուկան գերադանցությունը և  
անպատճ կերպով վայրադություններ կատարելու իր ուսու-  
իրավունքը<sup>1</sup>: Կ. Մարդոսի կարծիքով, կայսրության մայրաքա-  
ղաքում և մյուս կարևոր կենտրոններում արևելյան բարրար-  
առության և ժամանակակից քաղաքակրթության համակեցության  
համաներով է, որ «Թիեզիրատական կայսրության այդ կենտրոնը  
եվրոպական որոպեսոի համար գործազ լուրջ արգելը»:

Կենտրոնի օրինակով էին գործում տեղական իշխանություն-  
ները: Նրանք ևս կողոպատում էին պետական դրամարկեզմ, թա-  
լանում ժողովրդին, բացարձակ կերպով զրագվում կաշառակի-  
րությամբ, կատարում անօրինականություններ, բայց երբեք  
չէին պատմվում: Միայն պետք էր կատարել իրենց պետերի և  
բարձրաստիճան իշխանավորների կամքը, աշխատել նրանց գո-  
ւացում տալ և հավատարիմ լինելու տպավորություն թողնել:

Օքն նման գործնակերպը բավարարում էր ավելի բարձր իշ-  
խանավորներին, նրանք մեռում էին, նակ իքն լավին անցած կա-  
մայականությունների համար ժողովրդի դժգությունը այնպի-  
սին էր, որ պետք էր պաշտոնյացին տեղափոխել, ապա, որպես  
կանոն, նրան առաջ էին քաշում և տալիս ավելի բարձր պաշ-  
տոն:

Այսպիսի ուղի էր անցել, օրինակ, բաղմաթիվ վայրերում  
և ահանգապետի կամ վայիի պաշտոններ վարած Թյամիլ փա-  
շան: Իր դիրքը լարաշահելու, կաշառք վերցնելու, ցոփ ու շվար-  
կանք վարելու համար 1879 թ. նա հանվեց հերթական պաշտո-

<sup>1</sup> Մարտ Կ., Ցուցան Փ., Ըստ տ. 9, ստ. 6—7.

<sup>2</sup> Խոյն ուզը, էջ 229:

նից։ Արդուկ-Համիզն այդ պատիճը համարեց շափականց և մի քանի ամիս հետո նրան կարգեց պաշտոնականը նշանակող հանձնաժողովի նախագահ և ապա վակուֆային տիրութեների մինիստր։ Այդ բոլորից հետո նա չորս անգամ նշանակվեց մեծ վեցիր։ Թյամիլ փաշան եղել է Հայահաղած քաջարականության հեղինակներից ու գործադրողներից մեկը և, Հավանաբար, արդ պատճեռով էլ Համարյա մինչև իր կյանքի վերջը (1915 թ.) շուշի ու Խորախուսվել էր թե սովորաների և թե երիտրուքների կողմեց։

Մամուլը նշում էր, որ տավաղակությունը կարծեց թե աիրապետող ժողովրդի պաշտոնապես ճանաչված արտոնությունն է, որը չի Համարձակվում ոչնչացնել կառավարությունը, վախճեացով, որ կզիտվի ու ժողովրդական։<sup>1</sup>

Մակեդոնիայում 1895 թ. գործում էին 150 ավագակախմբեր, որոնք կատարել էին մոտ 4 հազար զինված զորքություններ, որոնց ժամանակ թալանվել էին մեծ Հարստություններ, եղել էին զոհեր։ 1903 թ. մակեդոնական ապատամբությունը Ենչելուց հետո, իշխանությունները սկսեցին ազելի ևս խորախուսել այդ երեսությունը, և ամսում դրանք թալանել ու հրկիվել էին 76 գյուղ։ Այսօնության Հարստություն համարյա բոլոր գավառներում ևս գործում էին նման ավտակախմբեր։ Փոխվում էր նրանց կազմը կամ ավագակապետը, Բայց նրանք մշտապես կային, որպես աշխատավորության ֆիզիկական գործությանը սպառնացող և նրա հյութը ծծող տպառւեներ։ Դիարքերի վիլայեթի Պալու գտվածի 17 գյուղերում միայն 1877 թ. Հարստահարություններից, ավագակություններից, գույքի բռնագրավումից, հրդեններից, անաստաններին քշելուց և այլ հետապնդումներից առաջնայի քան և հազար մարդ, զիսավորապես հայեր։ Ցոււածների թվում կային ուրիշ քրիստոնյա ժողովուրդների ներկայացուցիչներ, ինչպես նաև աշխատավոր քրդեր ու թուրքեր։<sup>2</sup>

Փաստերը վկայում են, որ սեֆորմների հոլակումը և նոր օրենքների ընդունումը լամբապնդեցին օրինականությունը և լրարնևավեցին իշխանության մարմինների գործունեությունը։ Ծրկրում տիրող սովորութեները ազելի անմիջական ու խոր ազ-

<sup>1</sup> «Вестник Европы», 1903, кн. 4, стр. 694.

<sup>2</sup> Տե՛ս եռվե տեղը, զից 5, էջ 182.

<sup>3</sup> Տե՛ս «Երկան Հայոց պատմոթյան», զից մ7, էջ 233—237.

գեցություն ունեին տնտեսության բնագավառը հսկելու և ղեկավարելու կարևոր գործում։ Ժամանակակից բազմաթիվ թուրք Հեղինակները քննադատում են իրենց հայրենիքում տիրող նման գրությունը։ Այսպիսի Թուրքիայում կապիտալիստական հարաբերությունների դարձացումը վերլուծող մի աշխատության մեջ նշված է։ «Թուրքիայի սովորութենքների համաձայն ապրելու և մասամբ էլ պետության կառուցվածքի պատճեռով, որում ատրական և առևտրական ասպարեզը օտար էր մեռմ թուրքիրի համար»<sup>1</sup>։

Նման երնույթի ծագումը հիմնավորելու, թերեւ և արդարացնելու նպատակով Հեղինակը գրում է։ «Թուրքիան իրենց տաղանդը զինվորական ասպարհում էին ցուցաբերում, Այս մարզում ուղղակի մրցում էին իրար հետ... Իսկ արդյունարերության և գիտության մարզերում նորությունն բերող մարդիկ համարյա թե չունեինք»<sup>2</sup>։

Տիրող խավերի ներկայացուցիչների գավակները նախընտրում էին զառնալ զինվորական, պաշտոնյա, կառավարիչ, բայց չէին ցանկանում աշխատել, աթնել ու շարչարմել դժգարին ու մշշապես բարձր դիրք լերաշխավորող տնտեսական ու կույտարական կյանքի ուսուառում։ Մյուս կողմից, ժողովրդի ստորին շերտերի կրոնական ֆանատիզմը, երկրի խոշոր կենարուներում կշիռ ունեցող խաժամուճի սանձարձակ ու անպատճ գործողությունները մշտապես բարենպատ պայմաններ էին ստեղծում պահպանողական ու հետադիմական տարրերի համար։ Այս բալորի հետևանքով, ինչպես նշում է Յ. Էնգելսը, «բաղադրակրթության ուղու վրա կանգնելու թուրքական կառավարության բոլոր փորձները հանդում էին անփառմակ կործանման...»<sup>3</sup>։

Թուրքական իրականությանը և երկրին բաշաժանող Պ. Զիխալնը, որը երկրում իր գործունեությունը սկսել էր 1838 թ. ուսական գետպահատան կցորդի պաշտոնում և ավարտել այն 1858 թ., որպես զիտնական ու ճանապարհորդ, Թուրքիայում տեղի ունեցած բարեկիոյությունների փորձերը զեահատում է հետեւյալ կերպ։ ութիւ 20 տարվա ընթացքում, — գրում է նա, — չնայած ամենավճռական դեպքերի թելադրանքին, չնայած ամե-

<sup>1</sup> Türkiye'de sermaye piyasasının kurulması, Ist., 1964, s. 54.

<sup>2</sup> Խոյք ունք, էլ 55.

<sup>3</sup> Маркс К. и Энгельс Ф., Соч., т. 9, стр. 6.

նահանգիսավոր խոստումներին, թուրքական կառավարությունը չկատարեց ու մի քայլ՝ քաղաքակրթության խոշոր հարցերի ջուծման և սոցիալական կարգավորման հանապարհին, այդ տեղի ունեցավ ոչ այնքան այն բանի հետևանքով, որ ոչ էր ցանկանում, այլ նրա համար, որ ոչ էր կարողանում և երբեք չի կարողանա...<sup>21</sup>:

Թանգիմաթի հետևանքով երկրի ղեկավարման մեջ բուժմաւական տարրերի թափանցումը որոշ դրական ազդեցություն ունեցավ պետական գործերի վրա: Թանգիմաթի Հիմնական օրենքներից հետո սկսվեց մի ժամանակաշրջան, երբ իրար նաեւից լույս աշխարհ եկան պաշտոնական փաստաթղթեր, որոնք ամենից առաջ ընդլայնեցին մասնավոր սեփականության սահմանները և օրինական տեսք տվեցին նրա ապահովության գործին: Այսպիս, 1858 թ. ընդունվեց հոգային կոդեքսը, որը լափազանց կարևոր էր գլուղատնտեսական մեծ երկրի համար:

Կողեւքաց որոշակի դարձրեց մասնավոր սեփականատերերի իրավունքները, զգալիորեն ավելացնելով դրանց թիվը: Մեկ տարի անց օրենքը ընդունվեց հոդի և անշարժ գույքի վերաբերյալ ժառանգական իրավունքի մասին: 1871 թ. օրենքը սահմանեց անշարժ գույքի գաճառքի կանոնները: Այս օրենքները և միշտաքարք որոշումներ ու կարգադրություններ հետպհետեւ ամրապնդեցին բուրժուական փոխհարարերությունները ոչ միայն քրիստոնյա, այլև մահմեդական (թուրքերի, արաբների և այլն) ժողովուրդների մոտ: Թանգիմաթից հետո, հատկապես երկրի խոշոր կենտրոններում, բավական հզորացած այլազգի բուրժուազիայի կողքին սկսում է ձևավորվել թուրք ազգային բուրժուազիան և տարրեր խավերից սերված թուրք մտավորականությունը:

Այդ տեղաշարժերի քաղաքական հետևանքներից մեկն էր սերիստասարդ օսմաններից<sup>22</sup> ընդհատակյա կազմակերպության երևան գալը: Այդ կազմակերպությունն ընդդրկեց թուրք մտավորականության առաջավոր ներկայացուցիչներին: Նրա ղեկավարենքն էին թուրք առաջին ուշումավորիչները նրանք Երեւանին, Նամակ Քեմալը, Զիա բեյը, Այլ Սուլամի էֆենդին և ուրիշ-

<sup>21</sup> Վիհանը Պ. Ա., Խաչ. աշխ., էջ 12:

<sup>22</sup> Այժմ քեզունքած է նրանց կոչել «երիտասարք թուրքեր» զարժման հետ սկսրից, ամ' ո՛ Պետրօսյ Յ. Ա., Մլադուրեցյան ձևակենություն, Մ., 1971.

Ներ: Եարժման Հոգնոր Հայրը Հանդիսացավ ժամանեակի խոշոր պիտական գործիչ Աշմեղ Միոհեաս փաշան:

Տու. Պետրոսյանը գտնում է, որ Օսմանյան կայսրությունում XIX դ. տերերորդ հեռից սկզբում է բացարձակ քաղաքական պայքար՝ ֆեոդալամբապետական ռեժիմի գեմ: Պայքարի նպատակն էր՝ ստեղծել քաղաքական այնպիսի անշրաժեց պայմաններ, որոնք կապահովեին երկրի անտեսական ու կուլտուրական առաջընթացը և նրա դարպացմանը կապիտալիստական ուղղով:

Այսուհետեւ, նման գարզացման հետրավորությունները, ինչպիս վերըում նշվեց, լավագանց սահմանափակ էին, հենց մահմեդական ռազմագիտութական թիւկրատական պիտության առկայության և նրա Հետազիմական բնույթի հետեւնքով: Այդ պիտության քաղաքացիական պատմությունը ոչիմնված էր երուական որդմանների վրայ, որոնք արգելում էին այլադավան ժողովուրդների գերեւ ժմահմեդականների հետ նույն պայմանների մեջ: Այս պահանջից հետաքայլ նշանակում էր ուխլամի նախամմերի խորհրդանիշի հիմնական սկզբունքի խախոռման: Այսպիսի ուրակում մահմեդական օրինականությունից զուրս գալու անգամ մոտայնությունը թուրքական իրականության քայլածանոթ անգլիացի Հոգնորակոն Մ. Մաքրուլ, Մասնագետների կարծիքով, նույնիսկ սուլլանը՝ մահմեդականների Հոգնոր և քաղաքական միահնձան պիտու, պիտության ու եկեղեցու զնկավարը, իրավասու շէր խախոռնու խոլամի հիմնական սկզբունքը: Սավորույթ և միահնձաննեակ օրենք Հանգիստացող այս կարգը և մահմեդականների ու քրիստոնյանների բախուց Հավասարապես տնօրինող սուլլանի կառավարության քաղաքականությունը՝ տեսեական, քաղաքական և կուլտուրական ասպարեզներում, մշտական բախումներ էին ստեղծում տարրեր կրոնների պատեհանող ժողովուրդների շահների միջն, մշտապես գանգազեցնելով ամրոցք երկրի զարգացման ընթացքը: Բոլոր զնութերում խոլամը Հանդիս էր զալիս որպես իր Հետեւրդների ու շահների տուրքիան ապահովող զենքը, որը, և. Մաքրուի աշոտականությունը, տահճավատներին հայտարարում է օրենքով որու և ստեղծում է մահմեդականների ու անհաջատների միջն անշնուրական թշնամության վիճակը:

<sup>1</sup> «Հայոցայն Յան. Ա., Երք. աշխ., էջ 309.

<sup>2</sup> Խառով Մ., Ըստա և դրազա, СПб., 1897, стр. 156.

<sup>3</sup> Մարտ Կ. և Էնգելս Փ., Ծոշ., տ. 10, стр. 167.

Դրերի նման դրությունը ֆրանսիացի արևելագիտ-պատմաբան Պ. Ժանախզոնը համարում է «մահմեղական իրավունքի խոչըր թերություն», որը բրոլոր առցիալական խավերին պետության մեջ միավորելու փոխարեն, անց է կացնում սահմանավակումներ՝ հավատացյալների ու անհավատների միջև։ Այսուհետեւ նա հայտնում է այն համոզմունքը, որ վերջինները ուրբեր չեն կարող դառնալ քաղաքացիներ, բառիս բուն իմաստով, նրանք կմնան սարուկներ (*filotes*)<sup>1</sup>, իրականում օսմանյան Թուրքիայի հպատակ ժողովուրդների վիճակի մեջ համարյա ու ոչինչ շփոխվեց մինչև կայսրության անկումը։ Դորձին շգթեցին ո՛չ աշխարհի առաջադիմ հաստրակայլության ներկայացուցիչների բազմաթիվ բողոքները, ոչ էլ պետությունների միշտառությունը։ Այդ միշտառությունները, ըսդհակառակու, հետքնեւու վատացրին ու թուրք ժողովուրդների դրությունը, Կրոնական Հռոբի վրա տեղի ունեցող հնատապնդումներից բացի, նրանք ենթարկվեցին քաղաքական նեշումների, որոնց հաջորդեցին հայտնաբերեցին նաև տնտեսական, մշակութային ու կենցաղային բնագավառներում, իսկ դրանց արամարանական ավարտը հանդիսացան կոտորածները։

Իրականությունը հաստատնց Կ. Մարքսի այն դրույթը, որ մահմեղականների, քրիստոնյանների ու այլ կրոնների ներկայացուցիչների իրավունքների հավասարեցման փորձները ֆեոդալական ուժերի տիրապետության պայմաններում չեն կարող դրական վախճան ունենալ։ Նա գտնում էր, որ դա կարելի էլիենի միայն այն դեպքում, եթե մահմեղական պետությունը հնարավոր լինի անշատել եկեղեցուց, իսկ կրոնը՝ քաղաքականությունից, ուրուրքական պետությունը։ — գրել է Կ. Մարքսը, — ինչպես բոլոր արևելյան պետությունները, իր հիմքում ունի պետության ու եկեղեցու, քաղաքականության ու կրոնի լավագանց աերու միահյուսում, համարյա թե նույնացում։ Թուրքական կայսրության և նրա կառավարողների համար Ղուրանը միաժամանակ հանդիսանում է թե՛ հավատի և թե՛ օրենքի աղբյուր։

Նման պայմաններում օրենքի առն բոլոր ժողովուրդների հավասարության պահանջն տանպայման նեշանակեր իրականության մեջ՝ Ղուրանը փոխարինել նոր քաղաքացիական օրենս-

<sup>1</sup> Gentizon Paul, Mustapha Kemal ou l'Orient en marche, Paris, 1929, p. 203.

գրքով, այլ խոսքով կեշանակեր՝ քանդիլ թուրք Հասարակության կառուցվածքը և նրա փլատակների վրա ստեղծել նոր իրավիճակը<sup>1</sup>: Իսկ զա բոլորպին ընդունելի չէր սամանյան կառավարողների համար: Նրանց անհամաժայռությունը հաստատող բազմաթիվ փաստերից նշենք մեկը միայն, Վերջինիս արժեքը պարզանավորված է նրանով, որ այն դուրս է հեկել ռուբորմատուր սուլթան Արդակ Մեծիդի գրի տակից: Տանկանալով Հանգրտացնել ռեակցիոն շրջաններին, որոնք վախեցած էին Գյուլհանեյի Հաթթը շերիֆի՝ 1839 թ. Հրովարտակի հոլակյան փաստով, սուլթանը հասուկ ֆերմանում գրում էր. «Մենք լսեցինք, որ մարդիկ, որոնք չեն հասկացել մեր ցանկությունների իմաստը, երանկայում և ենթադրում են, որ մեր պետության ներքին կարգը և քաղաքական վիճակը պետք է փոփոխվեն: Նման սխալ Հազմատիացումները նպաստում են Հասարակական կարժիքը մթագիելունը<sup>2</sup>: Ազելի պարզ լին ասի: Միապետը, որը զեկագրում էր երկիրը թանգիմաթի ժամանակաշրջանում, հոգատացած էր, որ բարեփոխումները կայսրության կայերում առանձին փոփոխություններ չեն մացնելու:

Այդ տեսակեաց բաժանում էին բոլոր փոքր ու մեծ կառավարինները, կայսերական բոլոր պաշտոնյանները և հատկապիս իսլամ Հոգևորականությունը: Կ. Պոլսի ուսուական դեսպանութան երկար տարիների թարգման Ա. Սորդոմաննը զբել է, որ իմամները, մոլլանները, մյութեզելլիլինները, խոշանները, ղերզիշները, մնացեանների ուսանող-սոֆթանները բացարձակ կերպով զբարձր էին դուրս գալիս թանգիմաթին, և նրանց համար հատկապես անհամատեղելի էր մահմեդականների և տպագուրների իրավահավատության դրույթը<sup>3</sup>:

Միզուցի հետ այդ պատճառով էլ բազմաթիվ, մասնավորապես մայրաքաղաքից Հռոպ գոնվող վայրերում թանգիմաթի սփորմանների վերաբերյալ ուշեն չէր հազորդվում ծովովրդին՝ զիլավորապես մահմեդական Հասարակությանը: Թանգիմաթի հակառակորդների շարքերում էին զոնվում նաև քրիստոնյան ժողովուրդների վերնախավը և Հոգևորական ղեկավարները: Այսպիսով, բոլոր նրանք, որոնց շահերին համապատասխանում էր

<sup>1</sup> Маркс К. и Энгельс Ф., Соч., т. 10, стр. 130.

<sup>2</sup> Engelhardt Ed., La Turquie et le Tanzimat..., Paris, 1854, гл. I, р. 5

<sup>3</sup> Б'я Новиков А. Д., История Турции, Л-ж., 1978, т. IV, часть третья, стр. 91.

կայսրությունում տիրող իրավիճակը, դեմ դուրս եկան թանգի-  
մաթիւն:

Ընթարժմանը կենսագործման հանապարհին լուրջ արգելք  
պետք էր համարել երկրի զեկավարների (Մուստաֆա Ռաշիդ-  
Ալի և Ֆաւադ փաշաներ և ուրիշներ) այն կարծիքը, որ ու մի-  
րարեկիտություն լավեաք է թուլացնի Օսմանյան կայսրության  
հիմքը Հանդիսացող թուրքերի զեկավար դերը և իսլամի ու շա-  
րիաթի ազգեցությունը: Նույնիսկ ընդդիմագիր տարրերը և նրանց  
ամենաձախ թուրք գտնվող գործիչները չեն կարողանում ձեր-  
բազառութել ազգայնական ու կրոնական գաղափարախոսության  
սահմանափակ մոտեցումից: Խոսելով սերիսասարդ օսմաննե-  
րին Հուսանքի լիդերի՝ Ալի Սուլավիի և նրա տԵռէրիք թերթի յա-  
սին, սովորական թուրքագիտ Ա. Ժելտյակովը գրում է. «Լուսա-  
զորության և կուլտուրայի վերափոխման օգտին նլույթ ունեցող  
ուլույրիքը միաժամանակ կռչ էր անում խստուն հետների (ընդ-  
գծումը մերն է — Հ. Ի.) իսլամի դոգմաներին, իսկ հասարակա-  
կան կյանքում և կենցազում՝ հին սովորություններին»<sup>1</sup>:

Նույն հեղինակը մեկ այլ աշխատության մեջ նշում է, որ  
Ալի Սուլավիի քաղաքական տեսակետների թերորը կողմը այն էր,  
որ նշված բարենորոգումները մտցնելու և դրանք հիմնավորե-  
լու անընդեմական գարողությունը քարոզելիս նա պահանջում էր «ելակետ  
ունենալ իսլամի պատմությունը, հենվել Ղուրանի ու շարիաթի  
դոգմաների վրա»<sup>2</sup>:

Մինչդեռ, բազմաթիվ աշխատությունների մեջ խոսվում է  
Օսմանյան կայսրության անտեսության ու կուլտուրայի զարգաց-  
ման գძվարությունների մասին և շրջանցվում կամ անրավարար  
ուշագրություն է գարձում զաղափարական-կրոնական գործո-  
նի ազգեցության վրա: Մեր նկարագրած ժամանակաշրբանից  
նույնիսկ մեկ դար հետո էլ Արևելքի մի շարք երկրներում մենք  
ականատես ենք այդ գործոնի համար վճռական նշանակությա-  
նը՝ հատկապես սոցիալական ու քաղաքական խնդիրների լուծ-  
ման ընազավառներում: Այդպիսով, վերնաշնորի ազգեցության  
վերաբերյալ մարգարենինյան տեսությունը նորից ու նորից հաս-  
տատվում է հասարակական կյանքի պատմության անցյալի ու  
մեր օրերի փաստերով:

<sup>1</sup> Желтиков А. Д. Печать в общественно-политической и культурной  
жизни Турции. М., 1972, стр. 109.

<sup>2</sup> «Народы Азии и Африки», 1972, № 3, стр. 136.

Այդ երևույթի ցարտուն օրինակ է հենց Օսմանյան կայսրությունը, որի վերուաշխեթի բացասական ազդեցության մտոին խոսվեց բավական հանգամանալից: Նորից հիշենք, որ Կ.Մարքոս քեսաթագրելով կայսրությունում տիրոպ փոխհարաբերությունները և առանձին ժողովուրդների դերը քաղաքակրթության առաջընթացի գործում, նշում է, որ թուրքերի քաղաքացիական ու ռազմական մենաշնորհը երկրի կառավարման մեջ ոկտանա առաջարկում անհնար ու թուրքերի ուժը կվերանի թուլության, պահպանվելով միայն որպես արգելը՝ առաջնորդացի ճանապարհին:

Վ. Ի. Լենինն իր հերթին Թուրքիայի անցած պատմական ուղին պիտի է որպես ռազմական առնչալից անկում և քայլայում, տանշալից մանավանդ ժողովրդի բոլոր աշխատավոր և ջանապարհող մասսաների համարչ<sup>1</sup>, Օսմանյան ռազմաֆեոդալական կայսրության պատմական դերի ու աղդեցության վերաբերյալ կա նաև ՍՍՀՄ զիտությունների ակադեմիայի ու Համաշխարհային պատմությունների հարցեմ հարցակության մեջ տեղ գտած շատ կարելիքոր ու խոտացված հասնելու գուահատականը. ս... Թուրքական զիի տակ ընկած բալկանյան, կովկասյան, արարական և այլ ժողովուրդների համար այն հանդիսացավ պատմական աղետ (ընդդեմը մերն է — Հ. Ի.), երկար ժամանակ կասեցնելով նրանց անտեսական ու կուլտուրական զարգացման պրոցեսը: Թուրք ֆեոդալների նվաճողական քաղաքականությունը, միաժամանակ, ուներ ժայրահեղ բացասական հետեւեցներ հենց իր՝ թուրք ժողովրդի համար: Աջակցելով միայն ֆեոդալական ընտրանիի հարստացմանը, այդ քաղաքականությունն ուժիղացրեց վերջենիս տեսանական ու քաղաքական իշխանությունն իր սեփական ժողովրդի վրա: Թուրք ֆեոդալները և նրանց պետությունը, հունական ու քայլայինը երկրի արտադրողական ուժերը, թուրք ժողովրդին գատապարտեցին հետամենացության՝ անտեսական և կուլտուրական դարդացման ասպարեզներում:

Ամփոփենք, Օսմանյան ռազմաֆեոդալական կայսրության վերնախուզն իր ձերթամ կենտրոնացնելով ամրազ իշխանու-

<sup>1</sup> Մարք. Կ. և Ֆիգելս. Փ., Ըօլ. թ. 9, ստ. 25.

<sup>2</sup> Ամբէ Վ. Ի., Ալթ, գ. 10, էջ 373.

<sup>3</sup> «Վсемирная история», Խ., 1958, թ. IV, ստ. 544.

թշունը, հենմելով իսլամի գաղափարախոսության ու շարիաթի սրբնաների, հին սովորույթների վրա, հետևողականորեն պարարում էր ֆեոդալական հարաբերությունները պահպանելու համար, ամեն կերպ արգելակելով կապիտալիստական կարգերի զարգացումը: Մինչդեռ օսմանյան ֆեոդալիզմը, սկսած XVII դարից, ապրում էր հետղօնտն խորացող ճգնաժամ և մոտենամ էր իր անկմանը: Հիշյալ երնտյաններն արտահայտվում էին թե սոցիալ-տնտեսական, և թե հասարակական-քաղաքական կյանքի բնագավառներում: Նախ, կայսրության հարաբերության հիմքը կազմող Հոգը և նրա ընդերքը միայն իրավական իմաստով ու ձևականորեն էր համարվում պետական սեփականություն: Փառատքներ հոգը գտնվում էր ժամանակին իրենց ծառայության համար այն ստացած զինվորականների, պաշտոնյանների, ռազմարյուրերատական ապարատի այլ ներկայացուցիչների, կապալառուների, տանտրականների, վաշինուունների և այլց ձևորում:

Թայքարվում էր կայսրության Հղորության հիմքը հանդիսացող մեծաթիվ և նիշերական բանակը: Ազատեցված ու կարգապահությունից զուրկ նրա զորագնդերը անցյալ դարի սկզբներին ֆիզիկապես ոշնչացվեցին: Սակայն ռազմական ուժի վրա հենվելու դարավոր սովորույթը, և հակայածավալ կայսրությունը պահպանելու խնդիրը, ստիպեցին ստեղծելու նոր բանակ: Վերջինս շարունակեց մեալ որպես կայսրության Հղորության հիմնական ազգյուրը: Զինվորականները իրենց ձեռքում պահեցին երկրի վարչական շրջանների, պետական մի շարք մարմինների ու կազմակերպությունների զննավարությունը.

Այնուհետև, իրենց ազդեցիկ զիրքը պահպանեցին վարչական, մանավանդ ֆինանսական մարմինները և դարձրով ստեղծված հարկային քայլայիլ սիստեմը:

Ամեն բան արվում էր կայսրության Շնացած վարչական օղակները անհամատ պահելու և բոլոր գոփոխությունները, ըստ էության, կրում էին ձևական բնույթի: Մինչդեռ կյանքը և արտադրական նոր հարաբերությունները պահանջում էին զարգացման ընթացքին համարատասխանող պարմաներ: Կապիտալիստական հարաբերությունները դեռևս շափականց թույլ էին ու շմապորված և ի վիճակի շեհին պատռելու տիրող փոխհարաբերությունների կեղնը: Սակայն առաջինների թնական դաշնակիցներն էին հետղօնտն անող և սիստեմատիկ բնույթ կրող զրուղացիական և աղքային-աղատագրական շարժումները, որոնք

լիրենց հերթին Հանդիսանում էին ավատական կարգերի ճյեա-  
մամի արտահայտությունը:

Այսպիսով, ՀՀ դարը Օսմանյան կայսրության ժողովուրդների  
Համար մի հասարակարգից զեպի մշտաց անցնելու ժամանեկա-  
ցրանքն էր, որի ընթացքում բուրժուական հարաբերությունները  
չափազանց թույլ տեմպերով, բայց նկատելիորեն ամրապնդում  
էին իրենց դիրքերը:

Այնուամենայնիվ, օսմանյան ֆեոդալիզմն ու թուրքական  
կարգերը, որոնք հենվում էին ռազմարյուրոկրատական բնու-  
սպեսաթյան և իսլամի վրա, զեռնմ չափազանց զորեղ էին ու  
երկրում պահպանում էին իրենց ազգեցությունը:

## ԿԱՊԻՏԱԼԻԶՄԸ ՀԱՐՄԱՐՎՈՒՄ Է

Օսմանյան կայսրությունը նվաճել և իր սահմանների մեջ էր առել աշխարհագրական շափաղանց բարենպաստ դիրք, ընական խոշոր հարստություններ ու մարդկային մեծ սկսուրաներ ունեցող բազմաթիվ երկրներ։ Դրանց թվին էին պատկանում չին բաղաբակրթության կարևոր կենտրոնները՝ Առաջավոր Ասիան, բայկանյան իշխանությունները, Հունաստանը իր կղզիներով, Հյուսիսային Աֆրիկայի մեծ մասը և ժամանակավորապես գրավված մի շարք այլ երկրներ։ Կայսրության տարածքը հինգ անգամ ավելի էր այսօրվա Թուրքիայի տարածքից։ Կայսրության համար ներքին լճեր էին զարգել Սև ու Մարմարա ծովերը, իսկ Միջնադրականի կեսից ավելին զանգում էր նրա Հսկողության տակ։ Թվում էր, թե ստեղծված էին բնական բոլոր պայմանները՝ մնեածավաշ կայսրության անտեսության ու կուլտուրայի արագ զարգացման համար։

Նշված դրական հանգամանքները ի նկատի ունենալով, Թուրքական պատվիրակության ներկայացուցիչ Օ. Կոյմենը, 1970 թ. Անին զրադաւում կայացած անտեսության պատմության միջադաշտին 5-րդ կոնգրեսում հայտարարեց. «Ձուտ անտեսական հայեցակետից ելնելով, Օսմանյան կայսրության անտեսության զարգացման հեռանկարները ոչ վատ էին, ոչ էլ լավ, համեմատած այն երկրների պայմանների հետ, որոնք մինչև 1830 և 1870 թթ. հնատ կարողացան գրանք հաջողությամբ իրացնել»<sup>1</sup>.

Ինչո՞ւ Թուրքիան շկարողացավ իրացնել այդ բարեհաջող պայմանները, Կապիտալիզմն իր զարգացման ընթացքում, ըստ մարքունինյան ուսմունքի, պետք է անցնի երկու շրջան.

<sup>1</sup> Коймен О., Империализм свободной торговли. Оттоманская империя, изд. «Наука», М., 1970, стр. 10.

«1. Անմիշական արտադրողների բնաւնտեսության փոխարկումը ապրանքային տնտեսության և 2) ապրանքային տնտեսության փոխարկումը կապիտալիստական տնտեսության»<sup>1</sup>.

Ընդհանուր ձևով այս սպիտ անցել է թէ՛ զարգացած և թէ՛ բազմաթիվ նախակին գաղութներ ու կախյալ երկրներ, բնականաբար նաև Սամանյան կայսրությունը, Նշված վերափոխումները տեղի են ունեցել թէ՛ գյուղատնտեսության, և թէ արշաւների ու արցյունաբերության բնագավառներում:

### ա. Ֆեոդալական հարարեռությունների բայցայումը

Կայսրության տնտեսության հիմնական ճյուղը հանդիւացող գյուղատնտեսությունը հարուստ փոստական նշութ է մատակարարում անցման երկու փուլերի պատկերը լիարժեք ներկայացնելու համար:

Հանրահայտ է, որ Արևելքի մի շարք երկրների, ի թիվուրուց նաև Թուրքիայի, զարգացման վրա վճռական ազդեցություն է ունեցել Հողի պետական սեփականությունը:

Մասնագետների կարծիքով, այդ հանգամանքը զարգացման որոշ փուլում ուկառմ է արքելակել նոր տնտեսական ձևուարկատիրության տարրերի անընդունակությունը:

Հողի պետական սեփականության պայմաններում, ամէնից առաջ, ստեղծվել էր արքիստի մինակ (միկուց և Հոգներանություն), երբ նրա խելացի ու նպաստակահարմար օգտագործման մեջ հանարի շահագրգության շէքն ոչ նրա անվանական տերերը, ոչ էլ նրա մշակողները: Այդ բանը ցույց կտրվի կենկրետ որինակներով: Այսուեղ ուզում ենք միայն նշել, որ կայսրությունները Հողի հսկայական տարածություններ մնում էին անօգտագործելի: ԱԱլ երկրին մեջ,— զրում է Ա. Ալպոյացյանը,— վերլուսնով վաև լենենքին նկարագրությունները հողային հարցի վերաբերյալ,— ուր նույն հողին վրա տարրեր ցանք մը կատարելու զրությունը անձանեթ է, ուր հողը տատ է և աշխատող ձեռքե-

<sup>1</sup> Վ. Ի. Անդր, ծէժ, գ. 1, էջ 101.

<sup>2</sup> О генезисе капитализма в странах Востока (XV—XIX вв.), М., 1962, стр. 367.

ըը սակազ, մշակելի հողին մեկ մեծ մասը անհրաժեշտաբար անձակ է մնանալ:

Ըստ 1908 թ. վերջերին ոռուական ռազմական գործակալի ներկայացրած դեկուցազրի, Թուրքիան ի վիճակի էր հացահատիկի միջազգային շուկայում յրցել Ամերիկայի ու Ռուսաստանի հետ:

Մինչդու տարարական հողերի երեք-քառորդը լի մշակվում է նույնիսկ Ստամբուլի մոտակայքում կան ընդարձակ ու աղատ (անձրակ — Հ. Ի.) գաղտներ<sup>1</sup>: Հայտնի անտեսավետ Վ. Թոթումյանցի կարծիքով, մշակվում էր կայսրության հողերի միայն 10 % -ը<sup>2</sup>: Գ. Զիխաչինի հաշվումները հիմք ընդունելով, Յ. Թոփչյանը գտեսում է, որ Փոքր Ասիայի օգտագործվող հողերը կազմում էին ընդհանուր տարածության 40 % -ը<sup>3</sup>: Ռուս լրագրողունի Ա. Տիրկովան բերում է Հողագործության մինիստրության տվյալները, որոնց համաձայն անվրոպական Թուրքիայի բարեբեր հողերի 3 % -ն է մշակվում, իսկ Տրիպոլիսում՝ միայն 0,06 % -ը<sup>4</sup>:

Մեկ ուրիշ ոռու անտեսավետ գրում է, որ արարական երկըրների, մասնավորապես Միջագետքի ռեսուլուները սիրապես ֆանտաստիկ են, ի նկատի առնելով զիսավորապես դրանց պոտենցիալ հողությունը, քանի որ այժմ մշակվում է կուտուրաների համար պետքական հողերի միայն 1/20 մասը<sup>5</sup>: Այս տվյալները հաստատում է նաև Բասրայի ոռուական հյուպատոս Ա. Աղամազյանը<sup>6</sup>:

Բազմաթիվ աղբյուրների ընդհանուր գնահատականն այն է, որ մինչև առաջին համաշխարհային պատերազմը կայսրության պյուղատեսներուն մեջ ոգտագործվում էր պիտանի հողային

<sup>1</sup> Ալպարյուն Արշակ, Պատմություն նվազելի հայոց, Դաքրք, 1902, էջ 1217:

<sup>2</sup> ԱՀԱ Վ. Ալպարյուն Ա. Աղամազյան, Պատմություն նվազելի հայոց, Դաքրք, 1902, էջ 1217:

<sup>3</sup> ԱՀԱ «Современный мир», 1908, № 10, стр. 20.

<sup>4</sup> ԱՀԱ Թոփչյան Յ., Երիտրայի թուրքեր և հոյերը, էջ 38: Նորից հաստատում է Կամբյանը իր «Աշխարհագրության ուսման պետական պրակտիկ» աշխարհագրության մեջ ոգտագործվում էր պիտանի հողային

<sup>5</sup> ԱՀԱ «Вестник Европы», 1912, кн. 5, стр. 315.

<sup>6</sup> Կեչեջян-Շապովալով Մ. Վ., Экономическая Турция, Пг., 1915, стр. 31.

<sup>7</sup> ԱԵՊՐ, Խօմի турецкий стол, д. 7643, 1904, л. 3. Ադամով Լ., О положении земледелия в Ираке Арабском.

տարածությունների 5—7 %-ը։ Այդ եռվյշը հաստատում է ակադեմիկոս Գ. Ժուկովսկին, որը Թուրքիայում իրերի վիճակը ուսումնասիրելոց բացի, Հնագում է 1927 թ., այսինքն՝ հանրապետական Թուրքիայում անցկացված հողերի պաշտուական հաշվառման արդյունքների վրա և նշում է, որ օգտագործվող տարածությունները կազմում էին պիտանի հողերի միայն մոտ 5 %<sup>1</sup>։

Այսպիսով, երկրի հիմնական հարստությունը հանդիսացող հողը չափազանց զատ էր օգտագործվում, իսկ ու անտեսության ցածր մակարդակի արտահայտություններից մեկն էր։

«Օսմանյան ֆեոդալները, — գրում է Խալիֆ Սթաեր, — տշնամական գործունեությամբ՝ հողի շահագործմամբ և առնարով՝ էին գրագրում։

Հողը հանդիսանում էր տուրքերի ազգային Խակ հարստացման զինամուր աղբյուրը՝ պատերազմներն էին և զրանց հակառակած ավարը, հարկերը և ստրկությունը...»<sup>2</sup>։

Հողի հարկը ստանալիս հողատիրոջը երբեք չէր հետաքրքրում, թե հողի որ մասն է մշակվում։ Նա, ամենայն հակառականությամբ, պահանջում էր որոշակի հողատարածության տուրքը, կամ իրեն հասանելիք գումարը։ Հողային սահմանները մեծ մասամբ հաշվի չէին առնվում, որովհետև մինչև 1913 թ. գոյություն չուներ հողերի սահմանագծում կամ հողաշափություն։ Միայն առաջին աշխարհամարտի նախարլակին Թուրքիայի Մեջլիսը հայ դիպուտատների առաջարկով օրենք ընդունեց երկրում հողաշափություն մտցնելու, այդ օրենքի կիրառման, հողերի ցուցակադրման և դրանց գնահատման կարգի մասին<sup>3</sup>։

Սակայն պատերազմը խանգարեց իրագործելու այդ օրենքը։

Հողատիրության և հողագործության ձևերը, ինչպես ամենը, համապատասխանում էին ռազմաֆեոդալական, բյուրոկրատական վերնախայմի շահներին։

Ամենախոշոր հողատերերը սուլթաններն էին, նրանց հար-

<sup>1</sup> Տե՛ս Ժukovskij P. M., Земледельческая Турция, М.—Л., 1933, стр. XXIII.

<sup>2</sup> Օհան Խալիս, Развитие на капитализма в Турции, София, 1961, стр. 18.

<sup>3</sup> Տե՛ս Լեռնակի Ա. Ա., О правовом положении землевладения в Турецкой Армении, Пг., 1916, стр. 13.

գոտեները, բարեկամները և մերձավորները: Ա. Համբարյանի  
տվյալներով, օրինակ, Արդուլ-Համիդի արքունական հողերը (սե-  
նիէ) կազմում էին 37 միլիոն դրամում կամ մոտ 3. 458 դեսյա-  
տին: Սրանք դառնվում էին Բաղդադի, Բասրայի, Մոսուլի, Հա-  
յէնի, Դամասկոսի, Աղջանայի, Բեյրութի և Օրուսաղեմի վիլա-  
յէթների ամենարդարված շրջաններում<sup>1</sup>: Անցյալ դարի երկ-  
րորդ կեսին ընդունված օրենքներն ու կառավարական որոշում-  
ները, այնուամենայնիվ, ակսում են հաշվի առնել նաև մըսւմ հո-  
գատերների իրավունքները: Թաղարացիական ընդհանուր օրենս-  
գրի (մերկը) մեջ մեակերպվում են սեփականության իրա-  
վունքների կարևոր դրույթները (գնման ու վաճառքի կարգը,  
պրավ դենելու, պահպանության հանձնելու, ժառանգականության  
խնդիրների մասին և այլն), սեփականության պաշտպանության  
սկզբունքները: Հրատարակվել էին առանձին օրենսդրական  
ակտեր, սուլթանի հրամաններ ու կարգադրություններ, որոնք  
վերաբերում էին հողային օրենսդրությանը: 1867 թ. ընդունված  
օրենքով, ժառանգության իրավունքը տարածվում էր տղա-  
մարդկանց արյունակից բարեկամների ութ սերունդների վրա:  
Ժառանգները ճանաչվում էին սեփականատերներ և վճարում էին  
պետական հարկեր ու կարող էին վաճառել կամ ուղիղներին  
հանձնել իրենց պատկանող հողերը: Այս ամենը, նաև իրավա-  
կան տեսակետից, արձանագրում էր ֆեոդալական հողատիրու-  
թյան նպաստամբը: Նոր հողատիրությունը ժամանակեց զիյավորա-  
պես ռէրազի միրին (ավելի ճիշտ ռէմիրիին) կոչվող հողերի  
վրա:

Անցյալ դարի վերջներին այդ հողերի մեծ մասը պատկանում  
էր մասնավոր մարդկանց կամ կազմակերպությունների: Հողա-  
յին հարաբերությունների խոշոր մասնագիտ Դ. Բաբրաձեն  
նշում է, որ ռէրազի միրին հողերին տիրապետելը Թուրքիայում  
հողատիրության ամենատարածված ձևն է<sup>2</sup>:

Վիւայէթների հողային վարչություններին իրավունք էր տրը-  
ված որոշել հողակտորի գինը, վաճառքի հնթակա հողակտոր-  
ները մոցնել կազմատորի (հողային մատրանների) մեջ և վաճա-

<sup>1</sup> Համբարյան Ա. Ա., Ազգարային հարաբերությունները Արևմտյան Հա-  
րաբերություններ, էջ 45.

<sup>2</sup> Бакрадзе Дм., Исторический очерк турецкой системы землевладе-  
дения, Тифлис, 1889, стр. 20.

անշիս, նոր տիրոցը տալ փաստաթուղթ՝ սքուանէ։ Տեղական իշխանությունների տված հիշյալ փաստաթուղթը ոպես է ապագայում փոխարինվեր վերջնական փաստաթուղթը՝ բավուավ։ որը արդիում էր Կոստանդնուպոլիսի ուստանական կենտրոնական հիմնարկից «Դեֆտօնիռաննից»<sup>1</sup>, Բաղմաթիվ տնօքերում արձակագրված այս կարգը, որի ըստ ամենայնի ձևակերպված էր թզի վրա, իրականում ազգնությունն կամ իրավական ուժ չուներ, բայց որ տեղական իշխանությունները, Հողատերերը և զանազան «զորուաններ» հաշվի չեին նստում ոչ մի փաստաթուղթի հատ, մասնավանդ, եթե այն պատկանում էր ոչ մահմեդականի, Բավական էր մեկ-երկու կեղծ զիա, որպեսզի նախատիս կաշառված դատավորը վճիռ հաներ հօգուտ որևէ ցեղապետի, շեյխի կամ աղայի և ոչ թե հողակառորդի անպաշտապան տիրոջ։

Դ. Սրվանձնուանցը վկայում է, որ Խարբերդի հողերն մեծագ մասամբ բնկերու սեփականությունն էին և թափուն իրենց մբառ ըրած քիչ բացառությամբ... Խարբերդի բնկեր կամ հողատերեր կատարյալ ազատներ են... իրենց երկրագործներն ալ կատարյալ ստրուկներ, այնքան ստրկացած էին, որ չեին զիտեր, ոգուզում էին արդյոք որևէ իրավունքից<sup>2</sup>, Այսուհետեւ նա զրում է, որ Գարսաննագի 25 ազաներից ամենահարուստը՝ Խսարեկը, ունի 36 զիտող և մազրա (մշակելի արտեր, զաշտեր, զյուղից զուրու զանվոր զոմ, փարախ), ունեկեց վար ունեցողներ կան՝ 12, 10, 6, 4 և այլն կտոր զիգերու Ասոնք բոլորը իրենց վեղերու հողերը իրենց անվան թափու ըրած են առանց թեակիւներին Հարցվելու... և նոկ այնուհետ, որտեղ հողատերերը կամ դյուզացիները թափու ունեն և Հարկ են վճարում, միևնույն է, այդ բույրը ուկը զրմին ի հաշիվ աղաներուն, և անոնց անզան հոշանները կը որվին...<sup>3</sup>։

Դրան Ավշուղյուն նույնպիսի վիճակ է նկարագրում ունիր ֆայի և նրա Հարավարենուան վիլայեթներից մասին խոսելիս Այսուհետի գլուղերը ոդերերեյերի սեփականությունն են թափուով, — զրում է նաւ— Ամենաաղքատ դերերին տեր է 3—4 զուովի, Կան զերերեյեր, որոնք ունեն 30—40 զյուղեր և հազա-

<sup>1</sup> ЦГВИА, ф. 400, оп. 1890, д. 36, л. 47.

ЦГИАЛ, ф. 1405, оп. 77, д. 5876, лл. 21—23.

<sup>2</sup> Արքանայն Գարեգին, Երկեր, Համ. 2, Օր., 1882, էջ 322.

<sup>3</sup> Խոյի տեղը, էջ 222—224.

քում էն արդ գլուղերի Համարլա ամբողք եկամուտց։ Գյուղացին  
աշխատում է մի կտոր չոր Հացի Համար»<sup>1</sup>.

Ա. Ալպոյացլանը ազարակատեր Պողոս աղա Ալպանյանի  
ունեցվածքը գրավելու մասին հետևյալն է պատմում. «Թոգասի  
և Փաղար թէոյի իշխանությունները մեր բարեկամին Հողերուն  
ամեննեն արժեքավոր դաշտերը ընարեցին, հիմնավորելով մաշ-  
մեղական կեղծ վկաներու վկայության վրա, թէ (իրը) երեք  
տարին ի վեր լէին մշակված, սպառազնին և Հաղթանամ խումբ  
մը լերբեղներ դրկեցին, որ այդ դաշտերուն տիրանան։ Այս  
լերբեղները Պողոս աղայի բնակած տուննեն մղոն մը Հեռու  
հասաւագնցաւում<sup>2</sup>, Դրան հետեւմ են գողությունները, կեղե-  
ցաւմներն ու բնությունները, որոնց հետնանը ազարակա-  
տերը ստիպված թողնում է իր Հողերն ու գույքը և հեռանում։

Այդպիսով, սեփականության իրավունքի հաստատման ար-  
շալույսին բուրժուական Հարաբերությունների նոր բարձրացող  
և լափաղանց թույլ ծիլերը անմիջապես ենթակա էին դնուն  
ամուսն ֆեոդալական կարգերի կամայական և անօրինական զե-  
րարերմանցին։ Դրա հետևանքով նրանք ոլնյանում էին, ապա-  
գայում նորից երեալու համար, կամ ապրում էին տունց էտ-  
պես զարգանալու, վետիս ու անզում, հաճախ դառնալով հին  
կարգերի կցորդը։

Հատկապես ժանր էր քրիստոնյա արքոյունաբերողի, արհես-  
տավորի, վաճառականի ու Հոգագործի միջակը։ Իշխանություն-  
ները նրանց համար ստեղծում էին Հատուկ դժվարություններ։  
Օրինակ, աշխատում էին արհեստականորեն սահմանափակել Հո-  
գատիրությունը բուզարների, սերբերի, Հույների, Հայերի, Հրե-  
ների և այլ ոչ մահմեդական ժողովուրդների մոտ, կասեցնել  
նրանց ոնտեհական զարգացումը, կամ կապիտալիստական  
Հարաբերությունների ծավալումը գրադատնեսության մեջ։

Ա. Կոլլուկ-ակինը իր ուսումնասիրություններում նշում է, որ  
Արևմտյան Հայաստանի ու Թրքատանի շրջանների քրիստոնյա  
ընակությունը, Հատկապես 1877—1878 թթ. ուստի Թուրքական  
պատերազմից հետո, Հետզհետե զրկվում էր իր սեփական հո-  
գերից ու կուլքից։ Այդ շրջաններում մահմեդականների տեսե-

<sup>1</sup> Antioğlu Doğan, Türkiye'nin düzeni, onuncu baskı, birinci kitap,  
s. 179.

<sup>2</sup> Ալպոյացլան Ա., Եղմ. աշխ., էջ 1317.

առթյունների Հոգաբաժինները կազմում էին միջին հաշվով 60—80 դյունում, որը 5,5 անգամ ավելի էր, քան ըրբառայացներն ունեին: Վերլուստները Հայ Հոգատերերի և Ծնօվհանրապես զբաղացիների վիճակը, նա պրում էր, որ երանց Հարեւան մաշնեղականներն ունեն 10 անգամ ավել Հերկվող Հոգեր, քան Հայերը: Իսկ եթե ըստ պայմանին պատկանելության միացենք Հոգատերերի խմբերը, ապա նշված Հարաբերությունը մեծ շափով կանչի Հոգու մաշնեղական առարքին:

Հոգաբարկման ու գույքազրկման պրոցեսը անասելի կերպով արագացավ. Հատկապես Արևմտյան Հայաստանում, ուստի զիստերի կազմակերպումից և Սասունի քարդերից հետո: Անցյալ դարի 90-ական թթ. երեան եկան քուրդ ֆեռզանների նոր կալվածքներ և ընդլայնվեցին ու ամրապնդվեցին աղաների, բնեկերի, շեյխների և ցեղապետերի տնտեսությունները:

Բուրբախայի սոցիալ-տնտեսական կյանքին նվիրված իր բազմահատոր աշխատության մեջ Ս. Յերասիմոսը արձանագրում է մշտապես տեղի ունեցող արդ երևույթը՝ ուշավ կազմակերպված և Համեմատաբար ավելի զորավոր քուրդ շնորհականները թալանում էին Հայկական գյուղերը: Այսուհետեւ նա նշում է, որ թուրքական իշխանությունները արդ շրջանների Հարկերի զանգումը դրել էին քուրդ վերնախավի վրա: «Արդյունքն այն եղավ, որ քրդերը պետության Հանձնաժ տուրքի դիմաց, բազմապատիկը Հայերից էին Հափշատակումներ: Իսկ Հայը վճարում էր թե քրդերին և թե թուրք իշխանություններին, որի հետևանքով նրա տնտեսությունը հետզհատ քայլավում էր և կախյալ վիճակը ուժըդանում:

Ըստական վերաբնակեցման վարչության պետի օգնական Ա. Տատիշչյը ստեղծված դրությունը գնահատել է որպես ուշագիմ լրիվ խանաշվարություն, որը ծագել է թուրքական կառավարության սիստեմատիկ ձգտումով զրավել Հայերի Հոգերը՝ հօգուտ քրդերին: Միշտ և ամենուր՝ որաժանիր, որ տիրեան քաղաքականությունը, ի վեաս մողովուրզների մերձեցման ու բարեկամության: Այդ պրակտիկան իրացվում էր նաև Հողոր բաժա-

<sup>1</sup> Колюбакин А. М., Материалы для военно-статистического обозрения Азиятской Турции, т. I, ч. I, стр. 380.

<sup>2</sup> Yerasimos Stephanos, Azgelişmîlik sürunde Türkiye, t. III, n. 1007.

<sup>3</sup> ЦГИАЛ, ф. 31, д. 305, л. 43.

նելիս և վերաբաժանելիս: Խշխանություններն աշխատում չին ցրել քրիստոնյաների Հոգաբաժինները՝ ամեն մնկին մի քանի հոգակոռոր հատկացնելով տարրեր վայրերում և համարյա միշտ մահմեղականների Հոգերի միջն Վերջիններիս համար պայմաններ չին ստեղծվում հեշտությամբ լուրացնելու իրենց հարկաների բաժինը, պատազործելով ամեն պատճեն առիթ:

Թեղպես նշվում է կառավարությանը Կ. Պոլսի պատրիարքի ներկայացրած պաշտօնական դիմումի (թագրիր) մեջ, շարդերից հետո Հայկական Համայնքի ընդհանուր վեսալ, մոտավոր Հաշվամներով, կազմում է 7000 կտոր Հափշտակված Հողեր, արտավայրեր (100 զյունում և ավելի տարածությամբ), տարրեր տիպի շինությաններ ու անշարժ գույք (ավելի քան 100 հազար լիրա արժողությամբ): Այնուհետև թագրիրում նշված է, որ երկու ամսում պատրիարքարքանի կատարած սահմանափակ քննությունները ցույց են ուղել, որ միայն Անատոլիայում պրավված են ոչ վանք (մի քանինց իրենց կարմաքենարով), 27 եկեղեցի, 16 պետքանակառում, և մանապես հայ ժողովրդին պատկանող 18 մեծ և փոքր կալվածներ...»<sup>1</sup>:

Քրիստոնյա ժողովուրդների ղեծ պատերազմելիս կամ նրանց շարժումները նեչելիս, մասնավորապես Հայերին կեղծելիս քուրդ վերնախազի և աշիրեթների օգնության դիմելը՝ եղել է թուրք զեկավարների քաղաքականության բնորոշ կողմերից մեկը: Կ. Պոլոստ ուսական դիսալան Մ. Գիրու, ամփոփելով Թուրքիայի կառավարության ղերթը Արմատյան Հայաստանի խընդիրների վերաբերյալ, իր 16. 11. 1912 թ. ղեկուցազրում նշում է, որ սկսած 1890-ական թթ. «Հողային Հարցն որըստօք սույր կերպարանք է ստանում: Հողերի մեծամասնությունը պրավել ու պրավում են քրդերը, իսկ կառավարությանը ոչ միայն շի արգելում, այլև նույնիսկ Հովանավորում և աջակցում է արդ գրավումներին»<sup>2</sup>: Թուրքերի ղրդմամբ քրդերի դորձելը արձանա-

<sup>1</sup> Անազումի ամսերտն զիշտեմներում Հորային Հարցի մասին հայկական պատրիարքարքանից 1809 թ. սկսածմքերի 7 թվականը ուսումնականության, ներքին, արզարդության և զավանակերերի մինիստրություններին հերկայացված և մասաւցած թաքրիրի պատճեն, հնագիր, էջ 2, 2802 թԱ արձեյափառթյան ինսիտուտի արխիվը.

<sup>2</sup> Հայուստանը միշտազային շիմունավորության և ուղևորական արաւական քաղաքականության փաստաթիրում (1825—1922): Պրաֆ. Հ. Ս. Կիրակոսյանի խմբագրությամբ, Եր., 1972, էջ 182:

պրված է ոչ միայն պատարաթղթերում, կամ պատմական ուսում-նասիրություններում, այլև գեղարվեստական գրականության մեջ: Հայ և ռատրազի գրազների բազմաթիվ երկերի մեջ նշնչը մ. Պիկոլի «Բարյազեմ» վկացը, որուն նկարագրված են 1877—1878 թթ. առև-թուրքական պատերազմի գրամատիկական գիպ-քերից մի քանիսը: Ռուս կազակը դիմենով իր սպային, ասում է. «Ճանապարհը հիմնված ժամանեակներում ժանը է՝ թուրքը մեր դեմ նորից քրդին է կասազցնում»: Իսկ մահմեդական քուրդն իր պարագն էր Համարում կատարելու ամանյան պիտության կարգադրությունները թե պատերազմի պայմաններում և թե խաղաղ ժամանակ, քանի որ դրանց իրազրծումն իրեն ևս լայն հետրավորություններ էր ընձեռում վերցնելու: Հավշտակելու: Թաղանելու: առանալու: «Ի՞ր բաժինը»: Հատկապես ժանը էր աշխատավոր պրուղացիների գրաւթյունը լինեային շրջաններում և այն դաշտավայրերում, որտեղ գտնվում էին քուզոր կամ կիսա-նատակյաց քրդերի ոչըազներն ու յայլաները: Այսակ քուրդ ազա-դանին դործում էր ավելի ազատ: Ցեղապետի, բեկի, ազայի, շնչակի կամքը օրենք էր, Հակառակ գեպքում նրանք հրաժարվում էին ռայացի հանդիպում էին ավելի սարսափելի կամ այսպահնությունների: Այդ «կարպք» կայսրության գոյության վերջին ասա-նամշակներին, ակսած Հատկապես 1870—1880-ական թթ., բո-լորի Համար դարձել էր բնականոն երևույթ և ինչպես կհետրո-նական ու տեղական իշխանությունները, այնպես էլ Հողատե-րերն ու պրուղացիները Համակերպվել էին ստեղծված դրությանը: Որպես Հազվագյուտ օրինակ, Գ. Սրվանձուրանցը նշում է տան-ձին գրուզեր, որտեղ երիտասարդները զինված պաշտպանում էին իրենց ազատությունը, անձը և ինչը, իրենք էին Հավաքում ու հանձնում պետության հարկերն ու տուրքերը:

Բայց քրդական ցեղերը մեծ մասամբ իրար մեջ բաժանել էին գրուզերը և բարյազեմները իր գեղերեն տարեկան տուրք կեր-բա կառնու, նույնիսկ Ակնա վանքը, և բոլոր պրուղացի Ակնա, Արարակերի Չմշկածագի և այլն<sup>2</sup>: Օրբ Գ. Սրվանձուրանցը փորձել է բողոքել Հարկահազարների անսանձ գործողությունների դեմ,

<sup>1</sup> «Дорога по покиншим временам не легкая: турка опять противу нас курда бесит». См. Никуль В. «Балзак», Л., 1951, стр. 17.

<sup>2</sup> Մշկանց Կարենին, ծրբը, գ. 2, է, 227.

նրանցից մեկը, տվել է իրենց յատածնակերպին շատ բնորոշ պատասխան։ «Մենք կը պաշտպանենք և զո՞ւ կուտանք մեր անձը տուրք վճարողներուն, բայց լվեարողներին կողոպտելով, սպանելով աստծո կամքը կը կատարենք»<sup>1</sup>.

Գյուղացիները, այդ ոհովանավորությանը փոխարին, պարտավոր էին տուրքերն ու Հարկերը մուծելուց բացի, մշակել քուրդ պազանու հողերը, խօսմել անասուններին, կատարել տան ծառայի պարտականությունները, Ալդ ամենից զատ, նրանք հարկադրվում էին սննդամթերքներ, վառելիք և այլ անհրաժեշտ նյութեր հանձնելու պարտավորություններով։ Տիպիկ որինակ կարող են ծառայել երկու հայ գյուղերի փոխհարաբերությունները երկու քուրդ աշխրեթերի հետ։ Վանի վիլայեթի Կյավոչ գավառակի եղորթենց գյուղը ուներ 25 ծուխ և սիրո աշխրեթին տալիս էր տարեկան 450 ոլխար, 625 փութ թիվաք հաց, 5 փութ յուղ, 120 զուրգ բրդյա գուլպա»<sup>2</sup>։ Հարեան Մլկանց գյուղի 13 ծխերը տալիս էին մյուս աշխրեթին՝ «26 ոլխար, 126 փութ հաց, 3 փութ յուղ և 80 զուրգ գուլպա։ Իսկ երկու անասություններ, ամառվա ամիսներին, պարտավոր էին հազ և ձու յատակարեն գլխավոր աշխրեթապետին»<sup>3</sup>։ Տարիներով հաստատված վերջիշխալ փոխհարաբերությունները համարվում էին արդեն բնականոն և ստեղծել էին համապատասխան հոգիրանություններ՝ քրդերի և թե հայերի մոտ։

Խ. Գաշտենցը ռենդեկանը վեպում գունեղ ու ճշմարտացի ներկայացնում է նման մի պատկեր։ Քրիստոնյա քնակլության բարեկամ քրդական շնկո ցնոյի մեծավոր Ավեսի Հային եռդեղանին Հովիվ ընդունելիս նրան ասում է. «— Բայց պայման եմ կապում, որ պետք է ընտանիք կազմեն։ Թո կինը և երեխաները շարաթական երկու օր պարտավոր են աշխատել իմ արտերում։ Եինդ պետք է գարեանց և ամռանը քաղհանի իմ արտերը, անձեղներից ու ճնշդուկներից պաշտպանի իմ ցանքը։ Աշնանց նա պետք է գալու քաշի ինձ համար, դդում շերտի, շաղկամ հորի, ձմռանը բուրգ գցի ու թել մանի։

— Համաձայն եմ, աղա։

— Դու կլինես իմ Հովիվը, բայց, երբ կարիք զգացմի, պար-

<sup>1</sup> Արքական Գատեղի, Երևան, Ը. 2, էջ 357.

<sup>2</sup> Կոմման Ա. Ա., Եղջ. աշխ., էջ 122—123.

<sup>3</sup> Լուկ անց, էջ 124.

սավոր ես սարից իշնել պյուղ իմ արտերք ջրելու և իմ Հունաց  
արշերից պաշտպանելու համար։ Իսկ ձմռանը դու պետք է իմ  
տանիքների ծրանը թափես, իմ թավը (տերեւ) սարից թերես  
տում։ Այդ բոլորի գիմաց ես պարտավոր եմ քո կյանքը պաշտ-  
պանել վատանգներից։

— Իսկ վա՞րձ։

— Վարձը էլ կատանաս, Բայց ամենամեծ վարձը չն կլի-  
նի, որ ազատ ման կզամ քո պապերի հողի վյուն։

Եզ Հային իրավունքը է տալիս ենդեզանին Հավաքելու Հինգ  
ընկույզնեւու ժամանի թերը ու անտափ բարիցները։ Աշա այս-  
պիսին էին ձիավորի և ձիու միասնության պայմանները։ Հային  
կամ քրիստոնյային մահմեղական մեծամեծները պետք է թույլ  
տային ապրելու իր Հայուններում։

Սակայն շպետը է կարծել, որ քրիստոնյա զյուղացիների վի-  
ճակից շատ ավելի լազ էր քուրդ ուրաների, թուրք և ընդհանրա-  
սկես մահմեղական զյուղացիների դրությունը։ Խոսելով արևել-  
յան վիշայի թերում քուրդ ավագանու կողմից գործադրված բը-  
նությունների ու սացիալական ճնշման մասին, Դողան Ավշադ-  
յուն ընդգծում է, որ նրա տիրապետության տարածքում որևակ-  
վող զյուղացին Համարվում էր թեյերի հպատակը։ Այդ շրջան-  
ներում հողը և զյուղացու արտադրության միջոցները հանդի-  
սանում են աշխրեթի սեխների, թեյերի, աղաների սեփակա-  
նությունը։ Դյուլպացին շունի ոչ առան, ոչ էլ մի թիզ Հող։ Որպես  
մարարա նա ապաստանում է աղայի, թեյի, աշխրեթապետի հո-  
գում...<sup>2</sup> Կայսրության վերնախազն անխնա կեղեցում էր բազմ-  
ազգ երկրի բոլոր զյուղացիներին։

Հերցիններու, ըստ էության, մինչև XVIII դարը պետական  
զյուղացիների վիճակում էին զանգում, քանի որ նրանց գրու-  
թյունը կարգավորվում էր պետության կողմից։ Այդուհանդերձ,  
Ն. Տեղորավը Հարկ է Համարում ընդգծել «զյուղացիների անձ-  
նական կախվածության բացակարությունը այն ձևով, որը կարող  
էր լրջորեն սահմանափակել զյուղացու հնարավորությունը՝  
ոնորինելու իր անձը»<sup>3</sup>։ Իրավական առումով այս կարծիքը հիմ-  
նավորված է, քանի որ կայսրությունում գոյություն չունեին

 բակի, ծիստսուի, այլ տեխնիկական կուրսուաների, ձիթա-  
 պտղի պլանտացիաների և շերտմարութության համար սպա-  
 զորժվող հողային սարածությունները։ XIX դարի վերջին տասն-  
 ամյակում զյուղատնտեսության կարևորագույն ճյուղերից անա-  
 նապահությունը ևս սերտ կապեր է հաստատում ներքին և ար-  
 տարին առանձին շրջանների շուկաների հետ։ Խակ Օսմանյան  
 կայսրության համար, որտեղ որոշ ժողովուրդներ ու ցեղեր  
 զբաղված էին զիյանարապն անասնապահությամբ, այդ հան-  
 գամաներն ուներ մեծ նշանակություն։ Հենավելով պաշտոնական  
 տվյալների մրա, ոԲյուրակնեա շարաթաթերթը հազորդնել է, ոռ  
 միայն ՇԱՍԻՆԿԱՆ Թուրքիո մեջ 45 միլիոն ռլիսար, 7 միլիոն  
 հասարակ այժ, 2 միլիոն էնկրուրիի (Անգորայի) այժ և 2 մի-  
 լիոն եզ, կում և այլն կատելքնեա<sup>2</sup>, նթե անասունների ընդհանուր

<sup>1</sup> Անհն Վ. Ի., Ալմ, և. 2, էջ 212.

<sup>2</sup> «Բյուրակն», 1907, Խ 5—6, էջ 112.

քանակը բաժանենք երկրի ազգաբնակչության թվի վրա, կտուցվի, որ մեկ մարդուն ընկնում էր երկու գլուխ անառնեւ։ Սա բավական բարձր ավյալ է, որ շունենք բազմաթիվ երկրների Սակայն անառնապահական տնտեսությունը վարվում էր հին, պապինական ձևով, երա հիմնական շրջանները գտնվում էին երկրի հետամնաց լեռնային մասերում և Արարիայի անապատներում։ Մյուս կողմից, Բուրբիայի խոշոր քաղաքների շուրջը նոր էր միայն հիմք զրվում եվրոպական իմաստով ինտենսիվ անառնարությանը։ Այսպես, Կ. Պոլսի մերձակայքում գտնվող Զաթալլա, Խզմիտ և մի քանի այլ գավառակներ մայրաքաղաքին մատակարարում էին կաթ, միս, բանջարեղին, ձու, մեղր, փայտի ածուխ, տեղական արդյունաբերության և արհեստավորների արտադրանք և այլն ապրանքներ։ Խզմիրը, Տրապիզոնը, Բեյրութը, Բաղդադն ու Դամասկոսն ունեն իրենց մատակարարող քաջարամերձ շրջանները։ Երկու դարերի սահմանագծում, կայսրության ամրող ասրածքի վրա կային Վ. Ի. Լենինի արտահայտությամբ «քաղաքամերձ տնտեսություններ», որոնք ևս նշանավորում էին կապիտալիստական Հարաբերությունների մուտքը Բուրբիա, Հիջալ տնտեսությունների տեր և անը Հողագործն առնուուր էր անում իր շամեն ինչով քիշ-քիշ, և՛ անով՝ զարձուտալով այն ամառանոցավորներին ու տնվորներին, և՛ իր բակով, և՛ իր ձիով..., հացամթերքով, անասնակերով, կաթով, մսով, բանջարեղինով, թփապաղով, ձկնով, փայտեղինով և այլն...<sup>1</sup>

Քաղաքային անող բնակչության պահանջների համեմատ անում էին կաթեատու անառների տված մթերքների քանակը, թռչնարութական տնտեսությունների թիվը։ Միաը, կաթը, ձուն, բուրդը, կաշին դառնում էին նաև արտահանության ապրանքները։ 1910 թ. երկրի արտահանության 10 %-ը կազմում էր բուրդը։

Կապիտալիստական արտադրության հետագա զարգացումը իր հետ բերեց ագրոտեխնիկական միջոցների և մեքենաների ավելի լայն օգտագործում, ստեղծվեցին ֆերմերների առանձին տնտեսություններ։ Հետևաբար, նոր խթան ստացան շուկայի համար արտադրվող մթերքների արտադրությունը, տնտեսու-

<sup>1</sup> Տե՛ս Խոհեման, Աշխարհապետթյուն..., էջ 219, 262—263.

<sup>2</sup> Անին Վ. Խ., Ելք, Հառ. 3, էջ 376—377.

թյունների մասնագիտացումը և հետագա զարգացման հեռա-  
նկարները:

Ժամանակի պահանջման ընդառաջելով, նույնիսկ պետական  
իշխանություններն անհրաժեշտ գտան զյուրացնելու երկրի տրե-  
տեսության մերձեայցումը:

1874 թ. նոյեմբերին սուլթանը հրապարակեց Հատուկ իրա-  
դե, որով մաքսային Հարկերից աղատվում էին ներմուծվող մե-  
քանակները և դյուլատեհսական դորժիքները: Օրենքում նշված  
էր, որ արտանությունը տարածվում է բոլոր այն ռմբեկաների  
ու գործիքների վրա, որոնք գործի են զրվում շոգու կամ որևէ  
այլ ուժի միջոցով...<sup>21</sup>:

Մերձեանների ներմուծումը արագորեն անցա: Դրանք ուղարկ-  
վում էին Ռուսաստանից, Ավրոպայից ու Ամերիկայից: Եռուով  
ստեղծվեցին Հատուկ առնարական Հիմնարկներ, որոնք զրագ-  
վում էին միայն զյուլատեհսական գործիքների ու մերձեաննե-  
րի ներմուծմամբ և վաճառքով:

Անցյալ դարի վերջերին այդ ասպարեզում առաջնակարգ  
զիրք զրագիցին Ամերիկայի Միացյալ Նահանգները, Իզմիրի  
ԱՄՆ-ի Հույպատոսը 1900 թ. իր Հաշվետվության մեջ Հայանում  
էր, որ այդ քաղաքի շրջակայրում շատ տեսեսություններ հրա-  
ժարվել են արորից և ռանցի նորագույն ամերիկյան գութաննե-  
րի օգտագործմանը: Վերջիններից Թուրքիայում վաճառվում է  
տարեկան մինչև 2000 հատ: Հեծող մերձեանները թանկ են, այդ  
պատճեռով դրանք ներմուծվում են մոտ 300 հատ:<sup>22</sup> Ամերիկ-  
յան արտահանողները հետզհատ խորանարով երկրի ներքին  
շրջանները, Հայորդ 1901 թ., արդին Խարպատում (Խարբերդ)՝  
Հիմնեցին զյուլացիական գործիքներ ու մերձեաններ վաճառող  
ընկերություն:

Իշարեն, նկարագրվող փոփոխությունները հեշտ ու հանդիսա-  
չեին ընթանում: Տեղական քեակըությունը դժվարությամբ էր  
հրաժարվում հին սովորություններից ու մշակման ձևերից և նրա  
պահպանողականությունը հաղթահարելու համար անհրաժեշտ  
էին զգալի քանաքեր:

Տեղի էին ունենում մերձեաններ գլացնելու, կամ ուղղակի

<sup>21</sup> АВПР, Новый турецкий стол, д. 3701, л. 11.

<sup>22</sup> «Вестник финансов, промышленности и торговли», 1901, № 2,  
стр. 113.

շարդուակշնուր անելու դեպքերը: Ե. Հեփաբուսը սրինակներ է բերում նման գործողությունների մասին: 1909 թ. Ազանայում երիտ-թուրքերի կաղմակերպած շարդերից հետո, գրում է նա, տառ-շին բանը, որը թուրք գյուղացինները ըրին, ուրիշ բան չեր, բայց ևթե խորտակեկի Հարյուրավոր շոգեշարժ կամնակները (կալսիչ մերենա) և արորեները, զորս հայ գյուղացինները նվյուպանն ըն-րել տօմած էին, շահագործելու համար Կիլիկիո դաշտը<sup>1</sup>:

Նման դեպքեր շատ էին պատահում հատկապես արևելյան շրջաններում, որտեղ ամեն մի նորը, առաջավորը կապվում էր հայերի, հույների ու հրեաների հետ, որոնց գեմ հաճախ էին սուր ճռնում երկրի հնտադիմական տարրերը և կառավարության ու վերնախավի ներկայացուցիչները: Մովագինա և արևմտյան ավելի զարգացած մասնում նորամուծությունները դառնում էին սովորական և խոշոր հոգատութերը բազմաթիվ գյուղատնտեսական աշխատանքներ կատարում էին մեծենաներով:

«Ատանայի լայնաժամավալ դաշտորեին մեջ,— գրում էր «Բյու-րակն» շարաթաթերթը 1906 թ.,— 150 քլմ. երկարության և 40 քլմ. լայնության միջին առածության մը վրա 55—60 մեծ կալի մերձնաներ օրը 850—900 թուն ապրանք կ'արտադրեն... կան նաև 5—600 հնձող մերձնաներն<sup>2</sup>: Մի քանի շարաթ հնտա-նույն թերթը Ամասիայի, Մարզվանի և Հարեան գավառներից տպագրում է հազորգում, որտեղ խոսվում է առատ բերքի մա-սին և ապա նշվում, որ Շառատ Հունձք մը կալ ընել վերցնելը ամիսներու կը կարոտի, և շատ անգամ վերջացնելի առաջ ձմեռը վրա համելով, կալին մեկ մասը բացողյա կը մնա անձրնի և ձյունի տակ: Հնձելու և կալի մերձնաներու պակասությունը այս տեսակ առատության տարիներուն մեջ ալ ավելի կը շեշտվի: Թղթակիցը զարմանք է արտահայտում, որ «Պոլսի և Իզմիրի երկրագործական գործիքներ ծախող կարևոր վաճառատևները չեն կարողանում իրենց ապրանքը հասցնել գավառները: Երկ-րի զարգացման ցածր մակարդակը, այդպիսով, պատճառ էր հանդիսանում զգալի կարուանների և տնտեսական անապահով վիճակի, նույնիսկ այս դեպքերում, երբ կալին բնության բարիք-ներից օգտվելու բարենպաստ պարմանենք:

1 Անգլիական նոնանձնա, Հայաստանի շարդերը, Կ. Գոյխ, 1919, էջ 258.

2 «Բյուրակն», 1906, Խ 19, էջ 453:

3 ՏԵՇ հույն ուշց, Խ 24, էջ 575:

Որպես գրական երեսլիք, անհրաժեշտ է նշել զյուղատեսիկության համար կայրերը պատրաստելու առանձին փորձեցը։ 1880-ական թթ. մաս երկու տասնյակ դպրոց-ուսումնարաններում և բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորում էին Հարյուրավոր երիտասարդները Նշված հաստատություններից հիշատակության արժանի էին բարձրագույն երկրագործական (Աղանա, Հայեալ, Կ. Պոլիս), անասնաբուժական և անտառաբանական (Կ. Պոլիս) դպրոցները։ Դորժում էին նաև այսպեղործական, կաթնառնետեսական, շրջա շերամարուժական և գործնական վարժարաններ, նույնական կենտրոններում կային շրջա աղարակ-դպրոցներ (Հեթթիկ մեթեռլիեր) և այլն։ Այս ուսումնական հաստատությունները, որոնց ղեկավարելու մեջ մասամբ աշխազի մտավորականներ էին, հանդիսացան թե կադրերի պատրաստման և թե պիտական նորույթների ու դրական փորձի կուտակման ու տարածման լուրաչառուկ կենտրոններ։

«Գյուղատեսկության գիտության մեջ, — գրում է Հ. Արամյանցը, — մասնավոր տեղ և նշանակություն աւելի շերամարուժությունը, որուն նմինը է Դնորդ էֆ. Թորդոմյանը, Պրուսայի շերամարուժյան բարձրագույն վարժարանի մեծանուն տեսրենը»<sup>1</sup>, Գ. Թորդոմյանը իր Հերթին ցույց տալով վարժարանի դերը հիշյալ թեավավախ զարգացման մեջ, գտնում է, որ պիտական նմանությունների պյուսպատերան օգտագործելով մրցման միջոցը, զգալի դեր է կատարում երկրի շերամարուժյան ասպարեզամ, ուրինամ պարձնելոք խոստովանիլ, — գրում է նա, — թե շերամի մրցությունները, շերամարուժական վարժարանին նպատակին լրացուցիչ մասը կազմեցին։ Ծին այսու սամանյան երկրի շերամ բռնելու հարմար տեղերու մեջ վանդակներու (քերեվիթ) վրա շերամ սեղություն լավագույն կերպը ըստ բավականի ընդհանրացած տեսնվի, ասի մրցմանց անմիջնելի արգյումքն է»<sup>2</sup>։

Ակենայտ է սակայն, որ Համայն, տեղում և հմբողական երկրեներում պատրաստած բարձրորակ կադրերը լինե օգտագործվում իրենց մասնագիտությամբ, կամ անհրաժեշտ պայմաններ շին ստեղծում նրանց նորմալ աշխատանքի համար։ Մեջլիսի դիմումատ Ն. Տաղավարյանը 1909 թ. նիստերից մեկում ուղ-

<sup>1</sup> «Գյուղատեսկության արքայություն», Կ. Պոլիս, 1914, էշ 3.

<sup>2</sup> նույն անց, էշ 7.

դակի Հայութարարեց. «Եվրոպայի մեջ երկրագործություն սռվարելու համար զրկված և աւանողներն ունեն» սամ. Հայրենիքն օգտված չէ ցարդ և այս դրույշամբ չէ կարագ օգուվիլը<sup>1</sup>: Նա բերում է հետեւալ որինակը. մինչև 1896 թ. Եվրոպայում այդ մասնագիտությամբ սովորած 58 Հոգուց 35-ը դարձել է պետական պաշտուաւա, միայն Շ-ը՝ երկրագործ, իսկ մնացած 17-ը՝ աշխատում է այլ բնագավառներում: Ն. Տաղավարյանը փորձում է բացահայտել այդ երևույթի արժանակությունը նա այն կարծիքին էր, որ զյուղատնտեսությամբ զրադվելը ձեռնուու գործ չէր, կտավիտու ներգնել զյուղատնտեսության մեջ՝ շահագետ չէր, Սահմանագ դրամագույնը միայն և 9% շահ կարող էր բերել, ևՄինչդեռ, որևէ այլ եղանակով 100-ին 10 տոկոսը միշտ առաջազդված կրնա համարվիր...<sup>2</sup>: Բնականարար, զյուղատնտեսությունից կապիտալի արուածուք էր կառարվում գեղի առևտուրը, նպատակահարմար էր համարվում զրադվելու վաշխառությունը և արդպես կտավինը զյուղատնտեսության հետ, քան ուղղակի զրադվել զրանուք: Ինչ վերաբերում է զյուղացուն, ապա նա ուժիանգամայն անուարեցի էր իր Հողի նկատմամբ, որտվշեռն նա գիտեր, որ ինչքան բարձր եկամուս էլ Հողի նրան բերեր, զրանից իր սնֆական վիճակը ու մի շափով չէր բարելավվելու<sup>3</sup>:

Զափազանց աննշան էր նաև զյուղատնտեսական դրամարկղերի դերը, որոնք հիմնադրվեցին գեռն 1867 թ., և որոնց նպատակը զյուղատնտեսական արտագրության բարելավումն էր: 1888 թ. նրանք միավորվեցին և ստեղծվեց առաջին ազգային զյուղատնտեսական բանկը Թուրքիայում: Բանկի գոյությունը իրը թե պետք է վերջ որվեր զյուղացու կախվածությանը վաշխառություն և առաջինին հեարամությունը տրվեր օգտվելու պետական օգնությունից՝ սերմացու, գործիքներ և այլն ձեռք բերելու համար: Բայց ու մի նման բան տեղի չունեցավ: Բանկը հենց սկզբից սպասարկում էր Հարուստ ու միշակ Հողատերերին և պետական պաշտոնյաներին: Փոխառվությունը տրվում էր միայն նրան, ով ուներ զույք կամ կարգածքներ՝ ունեցվածքը առենքի 50 տոկոսի շափով միայն: Փոխառվությունը հատկացվում էր մինչև մեկ տարով՝ սերմեր և զյուղատնտեսական գոր-

<sup>1</sup> Տ. Հ. Ա. Տաղավարյան Ն., Եղմ. աշխ.. էջ 17, ընդգետը մերն է:

<sup>2</sup> Առջեւ անգը.

<sup>3</sup> Турсцкий сборник, стр. 140.

ժիքներ ձեռք բերելու համար։ Կար փոխառվության մեկ ուրիշ ձև, որը տրվում էր 1-ից 10, նույնիսկ մինչև 15 տարով՝ պարագի դիմաց գրավ դնելով Հոգը կամ գույքը և տարեկան 6 %-ի (փաստորներում 9 %) հազիրումով։ Պարտքը ժամկետին շմառելու դեպքում գրավ գոված ինչըք վաճառվում էր։

Այսպիսով, զարգացած երկրներում սովորական և նորմալ երկույթ դարձած գյուղատնտեսական բանկը և նրա վարկերը, փոխանակ ինչ-որ լատով բարելավելու գյուղատնտեսության ընդհանուր միջակը և օգնելու գյուղացիներին ու հողատերերին նոր, ավելի բարձր մակարդակի հասցնելու իրենց արտադրությունը, հանգիստացան վերջիններին անտեսական քայլայման նոր միջոց։ Երկրի ասիական մասում այս բոլորի հետեւածով տեղի ունեցած աղքատացման ու քայլայման դեպքերի քանակը հարավոր չէ հաշվի առնելու թայլ ակնհայտ է, որ արդ պրոցեսը կրում էր մասսայական բնույթ։ Իսկ Միքայելմ, Ա. Ռուպովինի հաշվումներով, հիպոթեկային պարտքի զգալի աճի հետևանքով, ոյուղատնտեսական բանկն ամեն տարի իր սեփականությունն էր հայուրարում բազմաթիվ հողակություններ, որոնք վաճառվում էին անորդով և կազմում էին պարտքատերի գրավ գրած գույքի արժեքի 15—30 տոկոսը<sup>1</sup>.

Հաս պաշտոնական տվյալների, բանկի գոյության առաջին տարում՝ 1889 թ., այն գրավ գրած գույքերի դիմաց տրամադրել էր 160 հազար թուրքական լիրա վարկ, 1900 թ.<sup>2</sup> արդեն 2923 հազար, 1910 թ.<sup>3</sup> 5435 հազար, իսկ 1914 թ.<sup>4</sup> 6123 հազար թուրքական լիրա<sup>5</sup>։ Նույն տվյալների համաձայն բանկի մաքուր եկամուտը աճելով՝ 1892 թ. 77885 հազար թուրքական լիրայից 1910 թ. հասել էր 192235 հազարի, իսկ 1913 թ.<sup>6</sup> 211 759 հազար լիրայի։ Պատերազմի տարիներին այն իշել էր մոտ 10 անգամ, իսկ 1917 թ.<sup>7</sup> կազմել ավելի քան 454 մլն. թուրքական լիրա<sup>8</sup>։ Հետևաբար, գյուղատնտեսական բանկը, իր գոյության երեք տասնամյակի ընթացքում, հետզհան իր ձեռքում էր կենտրոնացրել երկրի հիպոթեկային ամբողջ վարկը, երկրորդ պլան մղելով մասր ու մեծ քաղաքային ու գյուղական վաշխառություններին, ոնրկրագործական բանկը, — 1914 թ. գրել է Հ. Արամ-

<sup>1</sup> Տե՛ս Շռապին Ա., Խզ. աշխ., էջ 101։

<sup>2</sup> Ystatistik yiliigi, cild 7, 1934—35, s. 448.

<sup>3</sup> Տե՛ս Խոյն անցք, էջ 451։

շանցը. — Հակառակ իր նպատակին, գարձած է ներկայիս իսկական ու մարմնացած վաշխառուական կեղրոն մը և արդեն պաշտօնական հիմնարկությունները չեն կրնար սպասված օգտակարությունը մատուցանել: Այսօր ան կօգնե անոր, որ հոգ ունի, որ կավաճք ունի... իսկ երեսն իսկ չի նայիր այն գեղջուկին, որ միայն կորովի բաղուկ, արտադրելու ընդունակություն, երկիրը հարստացնելու փափակ ունի...»<sup>1</sup>.

Վ. Ի. Լենինը կապիտալի նման ձևերով կուտակումը բնութագրել է որպես կապիտալիստական հարաբերությունների զարգացում հոգագործության մեջ, որի բնորոշ գիծը հանդիսանում է «նազային զյուրական տնտեսատիրոջ անշատվելու պրացեսը»:<sup>2</sup> Բացատրելով իր միացը, Վ. Ի. Լենինը զբել է, որ «պրոլական տնտեսատիրոջից հողի անշատման պրոցեսն արտահայտվում է երկու ձևով՝ վարձակալական սիստեմով և հիպոթեկային պարտաբռնմանմաբությամբ»:<sup>3</sup> Եզդ իսկապես, թե Ռուսաստանում և թե Բուրբիխայում այդ երկու ձևերն էլ հետզհետեւ հոգատերներին զրկում էին իրենց արտ ու դաշտից և նրանց ստիպում դառնալու կախյալ զյուրացի, բարրակ, կամ հեռանալու ժաղաքներ և այլ երկրներ՝ աշխատանք ճարելու նշված երեկոյին ակներն էր Հատկապես տեխնիկական կուլտուրաներին Հատկացված Հողատարածությունների ընդլայնման և դրանց ազրութիւնիկայի նոր միջոցներով մշակելու ասպարեզում: Հասուն ուշագրության առարկա էր դարձել ծխախոսոց, որն ամենաշահավետ զյուրանտեսական կուլտուրաներից էր և, մեծ մասամբ, արտահանվում էր: Պրամշակման և արտահանման մեջնաշնորհ իրավունքը տրվեց ֆրանսիական տիեզիք ընկերությանը: Վերջինս նյութական շահագրգումածության, համոզելու, ուժ գործադրելու և այլ միջոցներով աշխատում էր բարձրացնել ծխախոտի արտադրությունը: Դա նրան Հաջողվեց, որովհետև հետզհետեւ անում էր ծխախոտի պահանջը թե ներքին և թե արտաքին շուկայում: Այսպիս, ՅՈ տարվա ընթացքում այդ կուլտուրայի տանքատարածություններն ավելացան երեք անգամ, համաշխարհային պատերազմի նախօրյակին հասնելով

1 ԵՊՀ ազգագույն առրջություն, էջ 67.

2 Անձն Վ. Ի., Ալժ, հ. 4, էջ 123.

3 Նույն ուժը, էջ 126.

Առա 600 հազար դրամումից՝ Սրբու անգամ ավելացավ ժխախոսի արտադրությունը և նույնքան անգամ՝ մեկ աշխատողի արտադրողականությունը։ Այդ ամենն, անշուշտ, արդյունք էր ոչ միայն մշակման առաջապոր մեթոդների, այլև դրաշացիների ինտենսիվ շահագործման։

Մի շարք անբարենպաստ տարիներից հետո շափականց բերքատառ եղավ 1899 թվականը։ Այդ տարի հացահատինկերի բերքը կազմեց 200 միլիոն փրից ավելի և Թուրքիան զարձակ միջազգային շուկա հացահատիկ արտահանող երկրներից մեկը։ Զգալիութեն անեց մրգների, յուղատու կուլտուրաների ու համեմունքների արտադրությունը։ Այս ընդհանուր տեղենեցն արտահայտում էր այն իրադրությունը, որ Թուրքիայում հետզհետեւ ձևավորվում ու ընդլայնվում էր ներքին շուկան և զարգանում ու աճում էր արտադրին առևտուրը։ Այդ երևույթին մեծապես նպաստում էին երկաթուղային ցանցի ընդլայնումը և հազորդակցության միջացների բարելավումն ընդհանրապես։ Հոգի շահութարերության բարձրացումն անմիջապես արձագանք գտավ շուկայի հետ կապված կարգածառների մոտ։ Օրինակ, Սոսուլի շրջանում հարուստ բաղարացի հոգատերներն իրենց վարձակալ դրաշացիներից պահանջեցին բերքի 1/10-ը անշրջի և կեսը՝ ըրույն հոգերից<sup>1</sup>։

Պայու բաղադրի մեծահարուստ Խաչմաթյանը, Թէփեցոյ գյուղի գյուղացիներից սրերքի 50 %-ի փոխարին պահանջում էր 50—70 %, գյուղացիներին պարտազրելով տեղափոխել այն Պալու, երրեմն էլ Խարպուտ (Խարերդ), Խայած թե որտեղ էր նա վաճառելու հացը<sup>2</sup>։ Առուժախին առարկա զարձան ոչ միայն հացն ու տեխնիկական կուլտուրաները, այլև գյուղատնտեսական մթերքները։ Վաճառողը հաճախ ինքը հոգատերն էր լինում։ Թիշ լիին դեպքերը, երբ այդ բարիքները վաճառվում էին միշնորդների ձեռքով։ Շուկայական հարարերությունների զարգացման արդյունք հանդիսացավ գյուղատնտեսության մասնագիտացումը երկրի խոշոր շրջաններում կամ վիլայեթներում, երբեմն էլ առանձին գավառներում ու գավառակներում։

<sup>1</sup> Երևանը հավասար է 312—315 քառ. մետր, կամ մոտ 1/10 հեկտարի։

<sup>2</sup> Տե՛ս Տոմիլով Ա. Ա., Օտար օ խոճիք ո Անգլետեր Տուրցիա և 1904 թ., ստ. 286.

<sup>3</sup> ԾԳԲՆԱ, ֆ. 82, օճ. 86, հ. 3053, հ. 135.

Մասնագիտացումը կապված էր թե արտաքին շուկայի և թե  
առևդական պահովնչմունքների անի հետ։ Արևմտյան Հայաստանի  
շրջաններից Հարևան վիլայեթներն էին արտահանվում ցորեն,  
որինք, թարա և լոր մրգեր, բանջարեղին և այլն էաբերեն Հայու-  
նի էր և Վանի վիլայեթից գուրս էր առավում Արտամետ գյուղի  
խնձոր։ Խարբերդից բամբակը անդափախվում էր էրզրում, Թիր-  
լիս, Դիարբերդի և Նույնիսկ Ծաղուպա։ Անցյալ գարի 90-ական թթ.  
մի շաբթ շրջաններում բամբակը դաշտերից դուրս էր վանում  
նույնիսկ ցորենը և Հացահատիկն ընդհանրապես։ Պալուի շրր-  
շանում, որինակ, Մուրագլային գիտափի լավագույն արտերը  
արամագրվում էին բամբակի կուլառուրային, որի զբաղեցրած  
տարածություններն անցել էին մշակող Հոգերի 25 % -ից<sup>1</sup>։ Բամ-  
բակի մեծ մասն արտահանվում էր, բայց մնացածը մշակվում  
էր անդում։ Ականատեսը արձանագրել է, որ մանամագործու-  
թյունն այստեղ կատարվում է միայն արհեստավորների ձեռքե-  
րով, անկայն այն շափականց լավը վիճակում է։ Հաշվումները  
հանգեցրել են այն եղբակացության, որ Պալու քաղաքում և  
նրա գյուղերում մոտ 140 մանարաններ են աշխատում, ապահո-  
վելով 500—700 բանվոր-բանվորությների բավարար վաս-  
տակը<sup>2</sup>։ Գյուղատնտեսության մասնագիտացումը և մթերքների,  
մասնավուն նրանց ապրանքային մասի անը, նկատվել էր դեռևս  
մինչև արևելյան ճգնաժամը և 1877—1878 թթ. ուսու-թուրքա-  
կան պատերազմը<sup>3</sup>։

Ա. Կոլյուբակինը գրել է, որ Մուշ—Թուկանիսի գաշտավայ-  
րում, Շապաղցուրի, Խելուսի, Թղիի, Դերշանի, Էրգրումի, Սրպե-  
կայի, Վանի, Խարբերդի, Դերսիմի շրջաններում հայերը տմիշտ  
ու մեծ շափերով զբաղվում էին Հողագործությամբ բոլոր այն  
վայրերում, որ տեղը հարավարություն էր տալիս։ Նրանք ունեին  
բազմաթիվ հազերամյուր անառուններ, իսկ առանձին վայրերում՝  
ոշխարի մեծ հոտեր, զբաղվում էին գյուղատնտեսության մյուս  
ընտագավառներով՝ բանջարարությամբ, պարտիզանությամբ,  
մեղմարտությամբ, գինեգործությամբ, մշակում էին բամբակ  
և ալիս<sup>4</sup>, իր ուսումնասիրություններում հեղինակը Հողագոր-

<sup>1</sup> ЦГВИА, ф. 82, ов. 86, д. 3053, л. 137.

<sup>2</sup> Տե՛ս նոյն տեղը, թիրը 180.

<sup>3</sup> Колюбакин А. М., Материалы для военно-статистического обозрения..., т. I, ч. 1, стр. 119.

ծության մակարդակը և արդյունավետությանը կապում է ոչ  
միայն հողի բերրիության, երա տեղի ու աշխարհապրական գիր-  
քի, այլև բնակչության սովորույթների հետ։ Այսպես, նա զըս-  
նում է, որ քրդերը, իրենց պատմական ու կենցազային սովո-  
րույթների համաձայն, մեծ մասամբ զրազվում են անասնապա-  
ռությամբ, թուրքերը՝ անասնապառությամբ ու երկրագործու-  
թյամբ։ Սակայն ամենալավ ու որակլաւ հողագործները՝ հույ-  
ներն ու հայերն էին, Բոլորի վրա, անշուշտ, հոկում են օհա-  
րուստները և զանազան կուլակ-միջնորդները։ Պարտիզանու-  
թյամբ և գինեգործությամբ զրազվող ամենամեծ անասնու-  
թյունները տպատկանում են խոշոր սեփականատեր թուրք-  
ազարներին, քաղաքացին հայերին և զգլրաշներին ու գյուղա-  
ցիները վարձակալում են զրանքը։ Արևմտյան Հայաստանում հա-  
մարյա ամենուր, տնտեսության տարրեր օժանդակ բնագավառ-  
ները մեծ սգեստթյուն են բնորում Հողագործությանը։ Այստեղ  
կան ամբողջ գյուղեր, որոնց բնակչությունը համարյա չի զրազ-  
վում՝ հողագործությամբ, ապրելով մեծ մասամբ զանազան ար-  
հետանիքով՝ մանաժագործությամբ, կոչկակարությամբ, դարր-  
եսությամբ և այլն։

Աղքացին ու կրոնական տարրերությունները բացասական գեր-  
էին կատարում, խանգարում էին գյուղացիների դասակարգա-  
ցին միավորմանը, կամ մթագնում դասակարգային գիտակցու-  
թյունը, հաճախ սոցիալական բախումները վանելով հեռին  
պլան, որ օգուտ էր միայն վերևախավին։ Այդ երևույթն իր ան-  
ցանկալի ու երրեմն ճակատագրական հեռքն էր թողնում տըն-  
տեսության վրա։ Բայց արձանագրված են բազմաթիվ դեպքեր,  
հատկապես գյուղացիական ու աղքային-ազատագրական շար-  
ժումների վերելքի շրջաններում, երբ թուրքական բռնապետության  
գեմ կովկի էին դուրս գալիս բոլոր ենթերքած ու հայածված խա-  
զերի մարդիկ անկախ կրոնից ու աղքայիւնից։ Այդ որովհետև  
շարունակվում էին գյուղացիական սեփականության անօրինա-  
կան հափշտակումներն ու բռնությունները, ապա զրանք առաջ  
էին բերում ակտիվ ռեակցիա՝ բոլոր ժողովուրդների աշխատա-  
վորների կողմից։

Համաձայն մի աղքաւրի վկայության, անցյալ դարի երկ-  
րորդ կեսին, պայտարում, որ մզում էր շիսազաղ երկրագործ

<sup>1</sup> Колюбакин А. М., указ. проказ., стр. 220.

կարվածատիրոջ դեմ, մահմեղական խսկական գյուղացիությունը (լիներ դա թուրք, թէ քուրդ) չէր մասնակցում (կալվածատիրով օգնելու նպատակով — Հ. Ի.), այլ ընդհակառակը, շահագրգութած էր այն բանում, որ նայրանակ տաներ նայ գյուղացիությունը, քանի որ այդ հաղթանակը կրերեացներ նաև մահմեղական գյուղացիության դրությունը<sup>1</sup>:

Միանգամայն արդարացի է Ի. Հյուսիսը, որն սամանյան պիտությունը անվանում է «գյուղացիության շահագրգություն»՝ նպաստող ժանդարմական կառավարությունը<sup>2</sup>, Վերնաշենքը հետնողական կերպով ձգտում էր պահպանել ու կոնսերվացնել բազիսում գրյություն ունեցող փոխհարաբերությունները։ Անկողմնակալ մասնադիտների կարծիքն ընդհանուր է այն հիմնական խնդրում, որ հասարակական նոր կարգերի անցման ուղիներում քամինակարենոր արգելեր... Հանդիսանում էր մասնավոր սեփականության անապահովությունը սուլթանական կառավարության ու տեղական փաշաների կամայականություններիցը<sup>3</sup>։ Բայց թուրքական ազգային բուրժուազիան, որը պիտք է գլխավորեր նոր, կապիտալիստական կարգերին կողմնակից ուժերի պայքարը ֆեոդալիզմի ու նրա հարուցած արգելուների դեմ, ի վիճակի չնշագիր իրագործելու իր պատմական առաքելությունը։ Դեռ ավելին, ինչպես եշել են Թուրքիայի կոմունիստական կուսակցության զեկավարները, հետագայում էլ նա լցանկացավ ունալ խոշոր ֆեոդալական հողատիրությունը ինչու չափով սահմանափակելու և հողային ռեֆորմ անցկացնելու ուղիղվ, որը և հանդիսացավ պրոլետարեանության մեջ կապիտալիստական հարաբերությունների դանողադ դարգացման և նրանում ֆեոդալական ու կիսաֆեոդալական հարաբերությունների զրեղ մնացուկների պահպանման պատճառներից մեկը<sup>4</sup>.

Մինչև այժմ էլ ամեն մի նորընտիր Մելլիս ու նոր նշանակված բուրժուական կառավարություն, անկախ կուսակցական պատկանելություններից, իր պարուն է համարում փոշիների տակից դուրս բերել ազգարային հարցը, քննարկել ու վիճարկել

<sup>1</sup> ЦГИАЛ, ф. 408, оп. 77, д. 270, л. 5—6.

<sup>2</sup> Низрев Ү., Türkiye köyü iktisadiyatı, Ankara, 1934, с. 131.

<sup>3</sup> Еремеев Д. Е., Энциклопедия турок, М., 1971, стр. 176, բնագավառը մեր է։

<sup>4</sup> Демир Якуб, Окан Халис, Турция: пути развития. «Проблемы мира и социализма», 1965, № 5, стр. 68.

այս կամ այն նախագիծը, չկառարելով սակայն ոչ մի դորձնական քայլ դեպի վերջնական նպատակը: Ֆեոդալական հարաբերությունների կայուն վիճակը, կազմակատերերի և նրանց շահերը պաշտպանող իշխանությունների Հոգությունը, կապիտալիստական հարաբերությունների անսահմաղ առաջընթացը, զյուղացիների ցածր կենսամկարդակը, հետամնացությունը, անտարբերությունն ու քաղաքական պասսիվությունը հասցեին այնպիսի գրության, որ զյուղացիությունն ակտունորմն էր էլ ձգուում լուծելու հոգային հարցը: Օրինկարիվորեն առեղծված պայմանները, չնայած առանձին շրջանների ու տնտեսությունների զարգացման բարձր մակարդակին, նույնիսկ ամերիկյան տիպի ֆերմաների գոյությանը, կարող էին ապահովել զյուղատնտեսության զարգացումը միայն պետական ուղին: Այդպիս էլ եղավ և այդ հանգամանքն իր կնիքը դրեց նրկի հետագա զարգացման վրա:

Երգած բոլոր երևությունների առկայությունը, անշուշտ, չի նշանակում, որ Թուրքիան, ինչպես փորձում են պեղել առանձին հեղինակներ, զարգացել է ինչ-որ ուրույն ընթացքով:

Թուրքիայի հոգային հարաբերություններն ուստամնասիրող Սուադ Ասսադը գտնում է, որ իր հայրենիքում կառարվել է հոգային սեփականության տրանսֆորմացիա՝ կիսաֆեոդալական ու ֆեոդալական ձևերից դեպի բուրժուականը, դեռևս անցյալ դարի վերջներին: Կան նաև բոլորովին հակառակ կարծիքներ, որոնք ընդունաբեա չեն տեսնում ոչ մի զարգացում գյուղատնտեսության մեջ կամ տեղաշարժեր նկատում են միայն քաղաքներում: Այդպիսին է խոշոր տնտեսագիտ Վ. Բոբովմանցի կարծիքը, Նրիմթուրքի շարժման կապակցությամբ բնութագրելով նրկի տեսքի առաջնական վիճակը, նա գրել է. «Թուրքիան կապիտալիստական է միայն իր զիխավոր քաղաքային կճնարուներում, իսկ Փոքր Ասիայի ներքին մասն ամբողջապես գտնվում է բնատնտեսության վիճակում»<sup>1</sup>. Խօսրկե, Հեղինակավոր մասնավոր սխալվում էր Այնուհետև նո զարգանում էին բուրժուական հարաբերություններն ու ֆերմակում կատիտայիստական կարգերը: Դա անկասկած է, Վեճի առարկա է այն պրորկեցը, թե այդ պրոցեսը ներկին զարգացման հետևեց էր, թե առաջին

<sup>1</sup> ՏԱՐ-] Suad Aksouy, Türkiye'de toprak meselesi, İst., 1969, s. 40—43.

<sup>2</sup> «Современный мир», 1908, № 10, стр. 17.

ազդեցության՝ առևտրի, կուլտուրական ու տնտեսական կապերի և այլ գործոնների։ Արևմտյան Հեղինակների մեծագույշ մտուց երկրորդ կարգի գործոնների կողմեակիցն է։ Նրանց աղղեցության տակ մի շաբթ ժամանակակից թուրքադեսներ արտաքին կապերին և համակապես արտաքին առևտրին վերապրում են վեռական նշանակություն կայսրության տնտեսական կյանքում, որի մասին դեռևս կիսումի ներքենում։ Մինչդեռ հարուստ աղբյուրների, գրականության և մամուլի նյութերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ երկրում տեղի ունեցող սոցիալ-ակտական հական տեղաշարժերը<sup>1</sup> նոր հարաբերությունների ծննդեղը և նրանց դանդաղ զարգացումն արգասիր էին Հիմնականում անզական գործունենքի, որոնք կայսրության ժողովուրգների ամրող պատմական ընթացքի վրա ունեցել են բախտուշ նշանակություն։ Իհարկե, չի կարելի ժիմտել նաև արտաքին ազդեցության կարևորությունը կիսագույթային երկրի համար։ Այս մասին կիսումի իր սեղում, Առաջման հիշենք.<sup>2</sup> Ի. Լենինի գրութենքը ներքին և արտաքին առևտրի աղղեցության մասին՝ կապիտալիստական հարաբերությունների օրինաշափ զարգացման վրա։ Ենթադր է, Մարքսի իրացման առավելացման վերաբերությունն ու շրջանառությունը, այսինքն՝ արդյունքի իրացումը կապիտալիստական հասարակության մեջ։ Շարունակելով իր մեկնարարանությունները, Վ. Ի. Լենինը գրել է, որ արտաքին շուկայի հարցը պատմական հարց է տայակամ այն երկրում։ այս կամ այն ժամանակաշրջանում կապիտալիզմի զարգանալու կոնկրետ պարմանների հարցը։ Ուրեմն, Վ. Ի. Լենինը գտնում էր, որ որևէ երնույթի հովանությունը հասկանալու համար անհրաժեշտ է կոնկրետացնել և պարզեցնել իրավիճակը, վերցնել ինդրի գլխավոր, կարևոր կողմը, որպեսզի հարաբեր լինի հաստատել այս կամ այն դրույթը։ Այս այսիմաստով էլ ներքին և արտաքին շուկաների համատեղ ազդեցության ինդրիը կապիտալիզմի զարգացումը հասկանալու համար նա համարում էր ոչ պարտադիր ռեստորններ տնտեսական

<sup>1</sup> Անձն Վ. Ի., Ծիժ, Հառ. 4, էջ 88—89.

<sup>2</sup> Խույն տեղը, էջ 103։

առումով սնանկ այդ բաժանումը, — զրել է Ն. Անիքնը, — Հատկապես քիչ պետքական է այնպիսի երկրների համար, ինչպիսին է Շումաստանը<sup>1</sup>, Աւզում ենց նորից կրկնել, որ Օսմանյան կայսրությունը բազմաթիվ հասարակական երևույթներով և, մասնավորապես, տնտեսական կյանքի որաշ կողմերով նման էր միտւաստանին և լնենիյան արև սահմանումները կարելի է տարածել նաև Օսմանյան կայսրության վրա:

Վ. Բ. Անիքնի համոզմամբ, այդ հասկացողությունը կարելի է փոխարինել մեկ ուրիշ բաժանումով, այսինքն՝ պատպիտացիզմի զարգացման պրոցեսի մեջ զանազանելով, օրինակ, Հետեւակ կողմերը. 1) Կապիտալիստական հարաբերությունների կազմադրումն ու զարգացումը (լինովին քեակեցված և զբաղեցած տվյալ տերիտորիայի սահմաններում). 2) Կապիտալիզմի ընդունումն այլ տերիտորիաների վրա (մասամբ բալորովին շղթազեցրած և հին երկրից ելածներով քեակեցվող, մասամբ զրադեցրած Համաշխարհային շուկայից և Համաշխարհային կապիտալիզմից հետո կանգնած ցեղերով): Պրացեսի առաջին փողմբ կարելի էր անվանել կապիտալիզմի զարգացում գետի խորքը, երկրորդը՝ կապիտալիզմի զարգացում լայն քավ: Ալյափական բաժանումը կը նդդրեիր կապիտալիզմի պատմական զարգացման ամբողջ պրոցեսը...<sup>2</sup>:

Մեր կարծիքով, Օսմանյան կայսրության սոցիալ-տեսեսական զարգացումն ունեցել է նման պատկեր:

### Բ. Կապիտալիզմի դանդաղ առաջընթացը

Սոցիալ-տեսեսական զերծիչյալ տեղաշարժերի պատկերը, որը գրուզում զգալիորեն քողարկված էր, շափազանց ակնառու կերպով հանդիս էր զալիս առևտրի և արդյունարերության քեագառում:

Դարերով աշխատյած առևտրի սովորներով հայտնի Արևմտյան Ասիան թուրքերի գրավումից հետո կորցրեց իր այդ նշանակությունը: Սակայն մի քանի խոշոր քաղաքներ ու նավահանգիստներ՝ Կ. Պոլիսը, Եղանիրը, Տրապիզոնը, Հալիպը, Բեյրութը, Բաղդադը, Բասրան, Ալեքսանդրիան և ուրիշներ, պահեցին անտե-

<sup>1</sup> Անիքն Վ. Բ., Թէժ, Համ. 4, էլ 162.

<sup>2</sup> Նույն ռեզը:

սական ու մշակութային կենտրոնների իրենց դերը նաև թուրքական օկուպացիոյի առաջին շրջանում։ XVIII—XIX դարերի ընթացքում, երբ ռազմական հաղթարշավները դադարեցին կուտակման ազրյուր լինելուց, կապիտալիստական հարաբերությունների զարգացմանը համընթաց, ուժեղացավ կապն այդ կինարքուների և ներքին շրջանների միջն, շնորհիվ առաջին հերթին ըրիաստեյա ժողովուրդների գործունեության։

Թուրք խոշոր քաղաքական գործիչ կոմս Սարահեղինը ժիուրքերը և առաջադիմությունը խորագրով իր հոգվածաշարում անդրագաւում է պատմական անցյալին և փորձում է շրջուց տալ առանձին ժողովուրդների գերը կայսրության տնտեսական կյանքում, հիմնավորվելով նաև նրանց դորժունեության ուղղության պատճառները։ Միշին դարերում թուրքերի մզան ուշարդ պատերազմներու պառզը, — գրել է նա, — սուրի ծայրով դրավված հարատությունները, ավարը, մենքացման պատճառ կյանքային, ազատ կացուցանելով զանոնք գոյության համար անհրաժեշտ բաները հայթայթելու որևէ ճիգն և իրենց ապրուսը ձեռքով հողնեն քաղելու ամեն ժտահովություննեա<sup>1</sup>։ Դրավման սկզբնական շրջանում լինելով խաչնարած ու վաշկառում, թուրքերն ավելի ուշ սովորեցին հողագործություն, բայց միշտ մեացին զինվորական, կառավարիչ ու պաշտոնյա՝ իրենց գրավման հողերի վրա և շարունակեցին պատերազմելու նման գործելակերպը, կամ զինվորական հաղթարշավները, գրաւմ է այնուշեան Սարահեղինը, թուրք տարրի համար ունեցան տոցիացական շատ ժանրակշիռ հնականքներ։ Մինչդեռ նվաճված ազգերը կրնային զրազմիչ իրենց հողագործական, ճարտարապետական և առևտրական աշխատանքներով, թուրք տարրը կլթեր իր սահմանը, թողուր իր հողերը, ցան ու ցրիվ կլլար ամեն կողմ, թե իրեն զինվորական և թե իրեն պաշտոնյա և հասարակականապիս կկորսվեր անսահման կայսրության մեջ<sup>2</sup>, Դրականորեն ներկայացրած այս պատկերին որևէ բան ավելացնելը մեղ թվում է ավելորդ Բայց երբ Շնվաճված ազգերին բանքերի շնորհիվ արտադրողական ուժերը զդալի առաջընթաց ապրեցին և երկրի անտեսությունը դարձավ եկամուտների և պետական ժախսերի

<sup>1</sup> Սարահեղինի Հոդածաշարը ուպացրձի է «La Revue» Հակոբոց, որունց ամ արտասարել է «Երկրի ձայն» շարտթաթերթը, 1807 թ., № 10, էջ 4.

<sup>2</sup> Նույն տեղը։

գլխավոր աղբյուրը, աիրող շրջաններին սկսեցին անմիջական հետաքրքրություն ցուցաբերել անտեսական խնդիրների վերաբերյալ, աշխատելով կարգավորել արտադրության ու առևտրի հետ կապված Հարաբերությունները։ Առաջնակարգ ու կարևոր դարձան անփականության Հարցները։ Դադարեց գործելուց օսմանյան այն դատարանը, որը պատված էր մասնավոր կալվածների և սեփականությանց գրավիելով։

Վաճառականությունը զարգացնելու և առևտրական կապերը կանոնավորելու նպատակով, անցյալ գարի 20-ական թվականներին, գեռան շումնեալով սեփական առևտրական օրինադրություն, թարգմանվեցին ֆրանսիական որենքները։ Այսուհետեւրձ, շարունակեցին գործել առվորույթների հետ կապված Հարաբերությունները ու շարիամի որենքները և դրանց մացված որներները առևտրի զարգացման վրա յունեցան որևէ ողբեցություն։ 1847 թ. առևտրի ու երկրագործության մինիստրությունը և լկարողացավ կատարել իր գերեւ առևտրի կարգավորման ասպարեզում։ Տարիներ անց, երբ հաստատվեց քաղաքացիական օրենսդրությունը կամ ստեղծվեց կայսրության օրենսդիրը (մեշելի), նրա 36-րդ և 44-րդ հարվածներն առևտրի վերաբերյալ առաջարկում էին միայն ընդհանուր գորություններ, Առաջ պատճեռով էլ առևտրական կյանքը մինչև կայսրության վերը լուսնագիր իր կարգ ու կանոննը և երկրում շարունակեցին գործել հինգ սովորույթներն ու պրակտիկայի մուցրած նորմերը, «Բյուրակնեալ առևտրական շարաթաթերթը» դեռ 1908 թ. անհրաժեշտ էր Համարում պրապարանդիլ այդ սովորույթները, «Առվորությունները», — կարդում ենք այստեղ, — երկու մասի կրամանվին։ 1. Ընդհանուր սովորություն (ուրֆը ասմ.), 2. Ճանավոր սովորություն (ուրֆը խաս), այսինքն՝ ընդհանուր վաճառականության կամ մասնավորապես անոր այսինչ կամ այնինչ նյուիին հասուն, ուրիշ տեսակնետով մալ առհասարակ ամեն երկրի, կամ այսինչ երկրին ամբողջության կամ թե միմիայն անոր մենք մասին մեջ գործադրություն կրնան ըլլաբա՞։ Այնուհետև հոդվածում նշշվում է, որ սովորույթներում հակասություններ ծագելու դեպքում միշտ նախընտրելի է տեղական կամ տվյալ բնառուպահին հասուն սովորությը։

1. «Փարձ», 1878, № 1, էջ 221.

2. «Բյուրակն», 1908, № 19, էջ 286.

Փաստերը ցույց էն տալիս, որ առևտրի զարգացմանը զույգ ընթաց անհրաժեշտ պայմաններ՝ օրենքներ, ընդհանուր լավեր, միասնական ֆինանսներ և այլն, որոնք պետք է ապահովեն առևտրի անվտանգությունը և մատուցելու տարրական շարժություններ, չեն ստեղծվել ու շատ երացյալներ զարգացել են իներցիայով, պատահական գնապետություններին ընդառաջնորդ։ Անշուշտ, պետական շրջաններն ամեն կերպ աշխատում էին կարգավորել առևտրի ու արդյունաբերության վիճակը, Այդ շանչքերն ակներեն են թեկուք մի շարք անհրաժեշտ օրենքներ ընդունելու մեջ։ Դրանցից կարևորները հետևյալներն են։ 1860 թ. օրենքներ հրապարակվեցին առևտրական և խաղաղ գատարաններ հիմնելու մասին, Տեղական առևտրական գատարանները կազմվում էին նախապահուց և շրմ տեղամենքից, որոնցից երկուոր պետք է լինեն մահմեդականներ, իսկ երկուոր՝ քրիստոնյաներ։ 1863 թ. օրենք ընդունվեց ժողովին առևտրի վերաբերյալ, Բաղմաթիկ օրենքներ ընդունվեցին մաքսային տուրքերի մասին, որոնցից էր 1874 թ. օրենքը՝ մաքսային ներքին հարկադրումները վերացնելու, վերաբերյալ, որը շափականց կարևոր էր առևտրի ազատ ժավաման տեսակետից։ Բայց այդ օրենքը մինչև 1900 թ. մնաց թղթի վրա<sup>1</sup>։

Նշանակալից միջոցառում էր առևտրական գրասենյակների ստեղծումը մայրաքաղաքում (1878) և ապա առևտրական խոշոր կենտրոններում։ Առաջինի կազմում կային առևտրական խոմվերի 24 ներկայացուցիչներ, վիլայեթներում դրանց թիվը համար էր 12-ի, զավաներում 8-ի, իսկ զավառակներում՝ 4-ի։ Դրանց ազգայությունը գործնական կրանքում կախված էր նախագահի կամ անդամների աղեղցիկ լինելուց, իշխանավորների հետ ունեցած հարաբերություններից ու այլ պարագաներից։ Բոլոր դեպքերում գրասենյակների երևան գալը հաստատում էր անցյալ դարի վերջին քառորդին բավական զարգացած առևտրական կապերի գոյությունը։ Խարկեն, զարգացումն այս թեսակավառում եւ ընթացել էր շափականց ժանր, մի քանի տասնամյակ առաջ ունենալով պարզունակ ձևեր։ Օրինակ, Վանը մինչև անցյալ դարի կիսերն ունեցել է միայն ներքին պահանջները բավարարող առևտուր, իսկ արտաքին կապերը սահմանա-

<sup>1</sup> Տե՛ս Պետրոսյան Յ. Ա., «Новые османы» и борьба за конституцию 1876 г. в Турции, М., 1958, էջ 23.

գակված են եղել թիթլիս բաղաքով։ 1870-ական թթ. այն ընդ-  
լայնվել է ընդդրկելով Կարինը, Ալեքսանդր, Դիարբեքիրը, Խար-  
բերդը, Քոքատը, Սղբերդը և այլ բաղաքներ։ 1875 թ. դեկտեմ-  
բերին Վանում բռնկված հրդեհի հետևանքով այրվել էր մոտ  
հազար խանութ, որոնց աերձրի մի զգալի մասը սնանկացել էր։  
Մյուս մասը իր գործը շարժմակել էր վարկի օգնությամբ և քիչ  
մասը միայն, ունենալով կուռակումներ, նորից էր բացել առև-  
տրական իր կետերը Վանում և այլուր Փոքր-ինչ կենդանացած  
առևտրին նոր հարգած են Հասցենում 1894—1896 թթ. դնդքերը։  
Տեսեսական կյանքը այս անգամ էլ ապրում է նոր վերելք, բայց  
առևտրականների և արհեստավորների խավը կորցրել էր հա-  
զատը իշխանությունների նկատմամբ։ Աշա թե ինչու ոչ անի հա-  
հանդը ներկայումս հոգմածաշարի հեղինակ Ա. Դարրինյանը,  
որից քաղված են վերելում թերզած փաստերը, արձանա-  
գրում է։ «Այժմ թե վաճառականները և թե Հասարակ խա-  
նութպանները ավելի վարկով են գործում, բայց թե զրամագըլ-  
իսվ. պետք է ասել, որ Վանի առևտրականները խիստ դպու-  
շությամբ են վերաբերվում գետի իրենց վարկը, որովհետև եթե  
վարկի վստահությունը մեջտեղից վերացվի, կարելի է ասել՝  
առևտրով զրաղվողների 90 %-ը անգործ կմնա և առվաճու-  
թյան կմատնվի։» Նման անելանելի վիճակը երկրի կառավա-  
րողների ներքին քաղաքականության ուղղակի արդյունքն էր ու  
հետևանքը։

Առևտրի զարգացման պատկերն ավելի ամրողական ներ-  
կայացնելու համար թերենք մեկ օրինակ ևս։ Անցյալ դարի կե-  
սերին Մուշի մեջ կար ընդամենք 10—15 խանութ, որոնք ի վի-  
ճակի էին բավարարելու ոմանցիցի ու դաշտեցի համայնքի պա-  
հանքարկը։ Նկարագրվող ժամանակահայութում շխանութպա-  
նին անծանոթ էր Սև ծովի եղերը, Տրապիզոնի և Կարսո վա-  
ճառապաշտությունը։ Իր առևտրի հրապարակը քույր Բաղեշ (Բիթ-  
լիս) քաղաքն էր...։ Առևտուրը ավելի շատ նման էր ապրան-  
քափոխանակության։ Ժամանակակից առևտրի պայմաններ,  
շափեր ու ձևեր գոյություն լունեին։ «Փոխանցումը քիսով (քի-  
սեն—500 դրշ.) էր, պայմանները շատ տարրեր էին այժմեն,  
տուրքակի գործառնությունը փոխազարձ վստահության վրա

<sup>1</sup> «Մուրք», 1994, № 8, էջ 20—21.

Հիմնաժամկետ էին. միամիտ և անկեղծ հազարարմությամբ մը և առանց վկայի, մուրճակի ու նրաշխավորիք<sup>1</sup>:

Այդպիսի պարզ ձևերը հասուն էին գավառական կենտրոններին: Նույն պայմաններում չէր դժուվում, անշուշտ, առևտուրը վիլայեթների գլխավոր քաղաքներում: Վերևում արդեն նշվեց, որ կարինում ու Տրապիզոնում և նման այլ վայրերում առևտուրը մեծ շահ էր բերում: Իսկ մայրաքաղաքը, Խաչմիրը, Բեյրութը, Դամասկոսն ու Բաղդադը հղել ու մեռում էին ներքին, արտաքին ու առանցիկ կամ տրանզիտային առևտորի կարևորագույն կենարուններ: Հենց նույն խոշոր, տրանզիտային առևտորի կենտրոններ հանդիսացող քաղաքները գարձան այսպիս կոչված կոմպրադրային բորժուազիայի ժննդուվայրերը: Այդ բորժուազիան հարստացավ միջնորդ առևտորի օգնությամբ և ապա իր ձեռքում կննտրուացրեց ֆինանսական տարրեր տեսակի զարգանությունները, դառնալով ամիրա, սպանի, դրամափոխ: Մեծարանակ առևտուրն ամբողջապես նրանց մենաշնորհ իրավունք էր: Պոլսի մի քանի տասնյակ խոշոր առևտորական մասնագիտացված տներ ապրանքներով ապահովում էին հարցուրավոր ու հազարավոր միջին վաճառականների, որոնք իրենց հերթին դրանք փոխանցում էին ազելի մանր խանութպաններին ու կրպակատիրերին, իսկ վերջիններս՝ շարլիններին: Անցյալ դարի կեսերին հաստատված այս սիստեմը հնտագա հիմնամյակում կրնեց որոշակի փոխախություններ: Առևտորական բորժուազիայի ներկայացուցիչ և մտավորական Յ. Մըրմրյանը այսպիս է նկարագրում Հիշյալ պրոցեսը: Խոշոր վաճառատունների շուրբի տակ երկար տառնամյակներ գոյություն ուներ տերկրորդական վաճառողներու խումբ մը՝ օաանի ըսված, որոնց ձեռն էր հատորով (թոփով) վաճառելը տեղացի ու գավառացի վաճառող էսնիֆներուն, մինչ հակով վաճառումն՝ առանձնաշնորհումն էր վերոհիշյալ մեծ վաճառականներուն: Այս խորանքը տնեց մինչև 1880, երբ մեծ վաճառականք ալ սկսան հատորով բաց վաճառել ու այսպիս ստանիքությունը, որ բանուկ ու զատարհներ մըն էր հրապարակին միջակ դրամագլխին և միջամահ-ման կարողաթիւնն անձեռու մեջ, հետզհան նվազեցավ և անհնատ եղավ՝ մեծ վաճառականներու ազառության և շահադի-

<sup>1</sup> «Երկրի ձայնը», 1907, № 27, էջ 12—13:

տության պատճառով՝ իսկ պատճառը բազականին լուրջ էր, բանի որ մեծածախ առնառուրը զգալիորեն ավելի պահան չան էր բնրում, քան մանրածախը։ Ասածը կարելի է հաստատել մի շարք օրինակներով։ Օգոստի Բակ արտահանող ընկերությանը 1899—1914 թթ. իր փայտատերերին ասրեկան չան էր վեարում 10—14 %<sup>2</sup>, Մինչդեռ երկրի ներքին շրջաններում՝ Բիթլիսում, Խարբերդում, Խևուսում, Թրղթում, և այլուր, չաճի տոկոսը սեպ-րոպական ապրանքների վաճառքից կազմում է 75 և 100%։ Այսուհետեւ նշվում է, որ ծովներում քաղաքներում բարձր նկատում էր բերում ուժարի և բրդի վաճառքը<sup>3</sup>, նույնիսկ զավառական խանությունների չաճը համար էր մինչև 20 %-ի։ Այս նրա-վույններին զուգընթաց տեղի էր ունենում հետզհետեւ անող ձգտում՝ կապերը խզելու ժայռագաղաքի մեծածախ առնառականների հետ, որը և վերջիններին ստիպում էր զբաղվել նաև մանր, առօրյա վաճառքով։ Բանն այս էր, որ երկրի մրցու կենտրոններում՝ Խզմիրում, Տրապիզոնում, Սամսոնում, Բեյրութում և ուրիշ քաղաքներում հետզհետեւ կազմակերպվում էին մեծածախ առնառական տեսքը և ընկերությունները։ Դավաորի խանությանին ավելի ձեռնուտու էր կրնատել իր ճանապարհը ու այցելել մոտակային գտնվող վաճառատունը, քան թե ժամանակ կորցնել մայրագագաթ Համակարգ։ Համար Ամփոփելով 1906 թ. առնարի տմյալները, ՔԲյուրակնը նշում է՝ «Տրապիզոնի, Սամսոնի, Խզ-միրի, Սկանելիկի հրապարակները սկսել են մրցել Պուտ հրա-պարակին հետ... ոչ միայն այս նավահանգիստներու համախորդ-ները Պուտոն չեն հայթայթեր իրենց տեսակները, այլ նաև սկսած են սասատիկ մրցում մը ընկել Գարասուի, Ալարնի, Գոնիայի վա-ճառականները Խզմիրէ կը հայթայթեն իրենց ապրանքը և նր-պընկայի, երզրումի վաճառականները Տրապիզոն կզիմնեն, ուրիշ կրնան ավելի աժան կերպով հայթայթել իրենց պետքերը»<sup>4</sup>.

Ամփոփման մեջ ուշադրություն է հրամիրվում նաև այնպի-սի փաստերի վրա, որ Պուտի խոշոր առնառականներն աշխա-տում են մասնակյուղեր բացել այս նոր կենտրոններում, իսկ

<sup>1</sup> Քարքանց Հյե վաճառականներուն ու վաճառականը 1700—1890. գրք Մ (Երևան) Յ. Գ., 4. Պայմ, 1808, էջ 24.

<sup>2</sup> ՏԵՇ Պուտրիմ, Էջմ. աշխատ, էջ 187.

<sup>3</sup> ՏԵՇ ԱՐԲԱՆ, Փ. 82, օճ. 24, ձ. 3049, էջ 115.

<sup>4</sup> «Քյուրակն», 1866, № 51—52, էջ 1262.

Ծարսայի, երդրումի ու ալլ մեծ քաղաքների քիչ թե շատ ունենոր զանառականները փորձում են ուղղակի կապեր հաստատել նաև եվրոպական առևտրական տների ու առանձին արտասահմանյան ընկերությունների հետ։ Չարաթաթերթը իր հաջորդ տարվա հունվարի տեսության մեջ այս բոլոր երկութերերը դիտում է որպես փոփոխություններ, որոնք հետզհետեւ դառնում են որոշակի, որը նման է տառարական կատարյալ ապակենարունացման<sup>1</sup>։ Մինչդեռ, հենց շարաթաթերթի նյութերը, հարուստ գիտական ավլագինները, առևտրի հետագա զարգացման և առաջավոր և վրապական ձևերի՝ Թուրքիա մուտք գործելու ապացույցն են։ Մեծ զանառականների հաջորդությունները, միշին ու մանր վաճառականների ոնանկացումը և մրցումն ու պայքարի ուժեղացումը միանգամայն ընտականոն են հենց կապիտալիզմի զարգացման պրոցեսի համար։ Այնուամենայինվ, ինչպես երկորի տընտեսության մյուս ընտակալառներում, այստեղ էլ կազմին զարգացումը դանդաղեցնող և խանգարող հանդամանքներ։ Դրանցից մեկը պայություն անեցնող վարկային սիստեմն էր, որն արգելակում էր առևտրական կապիտալի արտգ շրջանառությունը։

8. Մըրմրանի ավլագների համաձայն, վարկի ժամկետը պայմանավորված էր ապրանքը վերցնող վաճառականի ընակավայրում, ոՊայմանաժամերը, — զրում է նա, — շատ անգամ առանց թուզի և ստորագրության, թումելլիի և Անտոռուի համար մինչև 120—140 օր կերկարատեսին, իսկ Կ. Պոլսի և շըրշակայից համար՝ մինչև 61—91 օր<sup>2</sup>։ Նշված ժամկետի ավարտին վարկով ապրանք վերցրած վաճառականը գալիք էր պարուատիրոց մոտ, զնարում էր տարած ապրանքի գինը և վերցնելով նորը, վերադառնում էր իր ընակավայրը։ Այս փոխհարերությունները երկու-երեք տասնամյակների ընթացքում այնքան առվորսական էին դարձել, որ զրականության մեջ և մամուլում արձանագրվել է, որ երկու գարքի սահմանազլիքն առևտրականների փոխադարձ կապերի հիմքը դարձել էր վարկը։ Հաս ոԲյուրակնիւ ընորոշման, ոգավաններու մեջ առևտրականները երեք կարգի կը բաժանվին։ Առաջին զասակարգը մաղաղանի կկոչվի...։ Մրանք անզարդի վաճառականներին ապահովում էին ապշանքը, կատարում զբիսավորապես մեծաքանակ առևտուրը

<sup>1</sup> «Թյուրակն», 1907, № 5—6, էջ 89.

<sup>2</sup> Ա (ըրծելան) Տ. Գ., Եղիկ. աշխ., էջ 59.

ժերկրորդ դասակարգը թաղերու կամ պյուղերու խանությանն մէջ են, որոնք տեղական սպառումի համար փոքրաբանակ կծախնեն։ Երրորդ դասակարգը պոխնանի կկոչվի։ Առոնք շրջուն առևտրականներն են, որոնք մաղաղաճիներն ու խանությաններն կզնեն և գյուղերու մեջ կծախնեն<sup>1</sup>։ Վերնաւմ նշված ժամկետները մեծաբանակ առևտուրը կատարելիք հատկացվում էր մաղաղաճիներին, կամ զավառական կննարուներում առևտրական առուն ունեցողներին։ Խանությանները, վերցիներից իրենց ապրանքները ձեռք բերելուց հետո, պարտավորվում էին գումարը վերադարձնել շարաթվա վերցին, ոկամ 31, 61, 91 որգան մուրշակներ կուտան։ Առոնց վարկի սահմանն է առվորարար 100—150 ուկիչ<sup>2</sup>, Ամենաժամանք վիճակում էին գտնվում պոխնաները, շրջող մանրածախ առևտրական-շարչները, որոնք սպարաբար դրամ բոլորովին շտեռին և առևտուր էին անում միայն վարկով, իրենց ապրանքը, յոտ 500 լիրայի արժեքի, սրանք հայթայթում էին առաջին նրկու կարգի խանութներից և գյուղերում վաճառում ավելի թանկ գնուվ։ Վարկի ժամկետը 160—180 օր էր, որովհետև նրանք ոգարնան միջացին գյուղերու մեջ ապառիկ կծախնեն հողագործներու, աշնան գանձելու պայմանված։ Աշնանք նրանք ովլաւ ժամանակի շուկայական գներով ապրանքի փոխարեն վերցնում էին գյուղատեղական մթերքներ, բուրդ, աշխատիկ և ալին։ Այս բոլորը պոխնաները հանձնում էին վարկատիրուց, որը զգալի շահով դրանք վաճառում կամ ուղարկում էր ավելի խոշոր կննարուների Խսկ պոխնանին։ Նրանց տաճանակիր աշխատանքը տալիս էր տարեկան միջին հաշվով 20—40 լիրա, ու նրանք կարող էին ընտանիք պահել շեմի միննույն առեն արտ մը, այդի մը ունենան...<sup>3</sup>։

Էինում էին դեպքեր, երբ վերցրած վարկը ուշացվում, կամ չէր վերադարձն պարտատիրուց, Պատճառները, որպես կանոն, անբարենպաստ պարմաններն էին, երբեմն՝ սեանկացումը։ Առևտրական գրասենյակների հաշվետվություններում բերված են ոչ միայն փաստերը, այլ նաև սեանկացման պատճառները, որոնց մի մասը մտացածին էր, Կ. Պոլսի ոռուական զլիսավոր Հյուպատոսը 1903 թ. Հուլիսի 31-ի իր զեկուցագրում նշում է,

<sup>1</sup> «Բյուբակե», 1908, № 8, էջ 172։

<sup>2</sup> Նույն ոճը, էջ 172։

<sup>3</sup> Նույն ոճը, էջ 172։

որ մանավանդ թուրք առևտրականների և նաև կացման գեղաքերը բազմաթիվ էին դարձել: Այդ տևանկացումները և անկարող հայտարարելու տեղական առևտրականների մեջ վերջին ժամանակներու օգոստոսի մեջ որպես հեշտ նկամուտի և սպեկուլացիայի միջոց: Ազգացուցվել է, որ թուրք վաճառականներից շատերը մեծ բանակությամբ ապառիկ ապրանքներ են գնում: արտասահմանյան առևտրականներից, հետո արագ կերպով դրանք վերավաճառվում են, ձեռք են բերում անշարժ գույք, որը հաստատում են իրենց բարեկամների կամ ծանոթների անուններ: Դրանից հետո նրանք նորից են վերցնում ապրանքներ, ավելացնում իրենց պարտքը, միաժամանակ պարտավորվելով մյուս անզամ վճարել նիշտ ժամանակին: Բայց խոստումը մնում էր լոկ խոսք: Այդ երևույթն ավելի շատ էր կրկնվում, երբ վարկով ապրանք տվող վաճառականը հայ, հույն կամ հրեա էր լինում: Նրանցից թուրք վաճառականները ոչ մի վախ լունեին: Պարզ է, որ թուրքական իրականությանը հատուկ այս երևույթն ուղղակի իմաստով մեծ հարժած էր հացնում առևտրի զարգացմանը, ինչպես նաև անվատահություն սերժանում առևտրականների միջև՝ մանավանդ մահմեդական վաճառականների նկատմամբ:

Առևտրի ծագալմանը զուգընթաց տեղի էր ունենում նրա հետապն մասնագիտացում: Չափազանց շահավետ գործ էր դարձել առևտրական միջնորդությունը, որն ուներ բազմաթիվ ուղղություններ և այլազան բնույթ: Էգեյան ծովամերձ շրջաններում, որինակ, որպես միջնորդ հանդիս էին գալիս զյուղացիներից հավաքած միրզը, և հատկապես թուրք տեղափոխող ուղարկացանները: Մրգեր հանձնելու վայրը Իզմիրն էր, գնորդները՝ կոմիսիոններ կամ միջնորդ առևտրականների մեջ այլ խոսքը: ԵՄը գնում էր շուկայում վաճառելով ապրանքը և ստանալով զրամը (ուղարկացանները — Հ. Ի.): անմիջապես հաշիվը փակում էին գյուղացիների հնատ, ինքնակամ կերպով որոշելով զինը, որի հնատ գյուղացիները ստիպված էին համակերպվելու: Այնուհետև, Իզմիրի միջնորդ վաճառականը տեսակավորում էր միրզը կամ թուրք և այն վերավաճառում արտահանող առևտրականներն: Այս-

<sup>1</sup> АВПР, Политархия, х. 1638, а. 1.

<sup>2</sup> Teçalan Nurdogân, Ege'de Kurtuluş Savaşı başlarken, „Milliyet“, 11.10.1970.

պես, մրգեղինե անցնելով գյուղացուց ուղտապահին, նրանից միջնորդ վաճառականին և ապա խանութպահին կամ արտաշանող անձնավորությանը, Հետդժետե թանկանում էր, Հավելլյալ ժախսերը բարձրացնում էին նրա գինը: Անհրաժեշտ էր զնարկի և պարկի, նրա ժայրերը կարելու կամ քանդելու համար, տեղափոխող բանվորներին, պահանտապետին և այլեւ: Այս պայմաններում, ընականարար, միջնորդ բոլոր օգակներն օգտվում էին Հանգամանքից և արագործելու հարստանում:

Միջնորդներ ունեին համարյա բոլոր խոշոր առևտրական տները, ընկերությունները, արտադրական միավորումները և այլն: Միջնորդների մի խումբը զրադվում էր միայն ապրանքներ տեղափոխելով, Մյուսը ներկայացնում էր արտահանող կազմակերպությունների շահերը (տեղական մթերքներ ու ապրանքներ էր զնում և ուղարկում Համապատասխան Հասցեներով): Ըրրորդ խումբը կատարում էր ներմուծվող ապրանքների ընդունումը և այլն: Կոնյայում նման Հանձնարարություններ էին կատարում ՅՈ խոշոր առևտրականներից մի քանիսը: Այսպես, ապրանքներ տեղափոխելով էին դրադվում Գ. Աղճյանը, Հ. Մագուտյանը և ուրիշներ: Տեղական ապրանքներ հայթութում և արտահանում էին Բ. Կյուտենյանը, Ս. Մելքոնյանը, Գ. Տիրացույանը, Հ. Պարաֆյանը, Ալայրելյանը Սատրը թելը, Զիյերզամբ Հաշի Ալի և Դերվիշ Էֆենդիները, Փարլադզան Հազը Էֆենդին, Վասիլաքի Խուքիսիսը, Սերաֆիմ Գոգոնիս օղում և ուրիշներ: Ներմուծվող ապրանքների հանձնառու էր Գրիգոր Էֆենդիի Թեսինճյանը և այլն: Անցյալ գարի զերչերին այս պատկերն ուներ կայսրության քաղաքների մեծագույն մասի առևտրական կյանքը, քանի որ Հիշյալ քաղաքներում ազգաբնակչությունը բազմազգ էր և մահմեդականների կողքին բոլոր քիչ թե շատ հոգ բնակավայրերում ապրում էին հույններ, հայեր և հրեաներ, որոնք այդ դորժում զլիավոր դեր էին կատարում: Մյուս կողմից, քանի որ միջնորդ առևտուրը շափազանց շահավետ էր, նրանով զբաղվում էին բոլոր նրանք, ովքեր հետրավորություն և կարողություն ունեին՝ անկախ ազգությունից ու կրոնական պատկանելությունից: Հիշյալ գրադմունքը հանդիսացավ առևտրական և

1. Milliyet, 11. 10. 1970.

2. ՀՀ և «Թյուրքիա», 1905, № 15, էջ 353—355.

կոմպրադորային թուրքուազիայի ձևավորման կարևոր ուղիներից մէնքը Այդ պրոցեսին նպաստեց կամ դրա զարգացման փուլը Հանդիսացած առևտորի մասնագիտացումը, այս կամ այն առաջարարութենքրի կննութուացումը առանձին առևտորական տների ու ընկերությունների ձեռքում։ Օրինակ, Հայկում կային առանձին վաճառառաներ, որոնք դրազմած էին միայն բրդի և բրդչա ապրանքների առևտախով, ուրիշները վաճառում էին միայն գորդիր, Ըսթնդեն, կաշիներ, ներկեր, երկաթեղին, կոչկեղին և այլն։ Թ. Գուրումնյանի և Յ. Թյուրապյանի առևտորական տները կատարում էին բրդի, բամբակի, այժի մորթու և գորդի մեծաքանակ արտագում, Պ. Պապիկյանը և Մ. Սահմանյանը վաճառում էին մանած, լեղակ և օճառ, Վարդերեն Եկամովը կատարում էր Անատոլիայի առևտորականների Հանձնարարությունները, Գ. Զիերչյանը և Կողայրները՝ նույնպես, Հ. Մինասը գրազմած էր մանուֆակտուրայի մեծաքանակ վաճառքով, Վ. Մարգորոլին և ընկի բրդի, Կարլ Կոխ, Զոլինկեն և ընկ. և ուրիշներ՝ Հանձնակատար վաճառուկանությամբ, Ա. և Ն. Հոմախ, Ժ. Անտրեան բանկիրներ էին և այլն։ Առևտորական գործի այս խոշոր ներկայացուցիչներն ունեին իրենց միջնորդները, գործակալները, ներկայացուցիչները երկրի տարրեր վայրերում ու տնտեսության բնագավառներում։

Ռեզված փաստերը ցույց են տալիս, որ անցյալ դարի 80-ական թթ. սկսած առևտուրը զարգանում էր թե խորությամբ և թե լայնությով, մեծանում էր ապրանքագոխանակության ծավալը և Թյուրքիա էին մուտք գործում առևտորի նոր միջոցներ ու ձևեր։ Սակայն երկրում շարունակում էին գոյատնիկ առևտորի Հին ձևերը, Անհավասարաշափ զարգացումը եղիլ և մեռմ էր բնականուն այս ասպարեզում ևս։ Դրա լավագույն ապացուցը զարգացած առևտորին զուգահեռ տրանզիտային կամ տարանցիկ առևտուրն էր, որը գարեր շարունակ և իր նախնական ձևերով կատարվում էր կայսրության տարածքում և նրա համար ուներ կարևոր նշանակություն։ Այդ առևտորի հայտնի ուղիներից մենք՝ Տրապիզոն—Երզրում—Թավրիզ ճանապարհն էր, որը երկու հարեան երկրներ կապում էր իրար հետ։ Բացի այդ, Յ. Էնդիլյուր արտահայտությամբ, Կոստանդնուպոլիսը և Տրապիզոնը իրենց աշխարհապարական գիրքի շնորհիվ հանդիսացել են ուներքին

<sup>1</sup> Տե՛ս Թյուրապյան, Խ 16, էջ 381—382.

Մամուլում լայն արձագանք գտավ 1876 թ. զեկանմբների մեկի գիշերը Վանի շուկայում թուրք զինվորների, ոստիկանների ու քաղաքի խաժամութի կազմակերպած Հրդեհը: Հայ Համայնքի Հոգևորական և Հասարակական ղեկավարների դիմումը արտադր ներկա եղող թուրք իշխանագորներին՝ շունեցավ ոչ մի նշանակություն: «Մշակին էշերում տպադրված Շնամակի Վանից թղթակցության մեջ նշված է, որ նըստական կորուսուների հետ եղել էին բաղմամիկ խելապարության դեպքեր, զիրավորներ ու սպանվածներ»: Հրդեհի ժամանակ այրմել էր մոտ 1000 խանութ և կրպակ, որը տառնյակ տարիներ իր բացառական կնիքը դրեց առևտրի աշխատված կենտրոն Հանդիպաղ

<sup>1</sup> Տե՛ս Ը. Տ. «Освобождение Болгарии от турецкого ига», М., 1964, 2. II, стр. 64.

<sup>2</sup> «Մուրճ», 1805, № 8, էջ 37.

<sup>3</sup> Խոշի տեղը:

<sup>4</sup> Տե՛ս «Մշակ», 24.02.1877.

կանի տեսեական կյանքի վյա՞ն՝ 1850—1890 թթ. տեղի են ունեցել մոտ 30 և ամեն խոշոր հրդեւեր, որոնց հետեւաբավ ունեցվել են մի քանի ոչ մեծ քակավայրեր, կամ մարդաշատ քաղաքների առանձին թաղամասեր։ Այդ նույն ժամանեակ երկրում յօթ անգամ տեղի էին ունեցել երկրաշարժեր<sup>1</sup>, նման աղետներին պնաք է դումարել նաև Հաճախ տեղի ունեցող տարրեր ընույթի պինված քախումները, որոնք քայլայող ազդեցություն էին գործում կայսրության տեսեառներան վրա։ Հաշվի առնելով նշված տարերային աղետները և այլ բացասական պատճառները, Յ. Մըրմրյանը զրում է, որ 150 տարվա ընթացքում Թուրքիայի Հայ վաճառականների ուժեժագույն մասը լէ կրցած ունենալ տեսական Հաջողություն և Հաջողություն որդոց որդի, Ամենան մեծ տունն անգամ 50 տարին անցուցած չէ<sup>2</sup>, Թերեմ Հայ վաճառականության պատմության հնտապոտողը թիւ ավելի խոտացրած գույներով է ներկայացնում իրականությունը։ Ընդհանուր պատկերը, սակայն, ճշմարտացի է։ Այդպիսով, կապիտալիստական Հարաբերությունների ամենաենկուն ճյուղը Հանդիսացող առևտուրը Սամանյան կայսրությունում զարգանում էր լափաղանց դժվարին ու ժանր պայմաններում, որոնք արդյունք էին երկրում տիրող կարգերի։ Այս կարգերի արդյունք էին նաև երկրի տեսեառներան ցածր մակարդակն ու նրա զարգացման զանգաղությունը ընորոշող արդյունարերությունն ու արհեստները։

Սամանյան կայսրության տեսեառական զարգացման նոր շրրշանի ընդհանուր թնութագիրն այն է, որ Արևելքի շատ երկրների նման այստեղ եւ *XVIII* դ. երկրորդ կեսից սկսում են զերելք ապրել արտադրողական ուժերը, որոնք ընթանում են կապիտալիստական ուղիղով։ Այս ընթացքը իսթարվեց անցյալ դարի 30—50-ական թթ., երբ ուժեղացավ օտար կապիտալի ներթափանցումն ու Մրցությունը տեղական, դեռևս լամբապնդված արդյունարերական և առևտրական ձևութեառների հետ։ Հետեւանքը եղավ այն, որ տիլուզումը ծովեղոյա քա-

<sup>1</sup> ՏԵ՛ս «Մարմե», 1804, № 8, էջ 21.

<sup>2</sup> «Բյուրագին», 1807, № 42, էջ 1529—1531։

<sup>3</sup> Մ (բրնձրյան) Յ. Գ., «Կարգաւոյ Հյե վաճառականությունն և վաճառականք...», էջ 139։

գաքներից սկսվեց և տարածվեց դեպի երկրի խորքերը<sup>1</sup>, Նույն Թահիմը նշում է, որ Ստամբուլում և Ուկրա인արևմ անցյալ դարի սկզբին գործում էին կերպասեղին արտադրող 3180 հաստոցներ, որոնք բանեցնում էին 4320 բանվորներ, 30—40 տարի անց դրանց թիվը իրավում է համապատասխանաբար 37-ի և 62-ի<sup>2</sup>, ճիշտ նույն տվյալներն է բերում Դողան Ավագողուն իր աշխատության մեջ:

Թահիմի տվյալներով 1836 թ. կերպասեղինի արտադրությունը Անկարայում նվազել էր Հինգ անգամ, իսկ Բորսայի ավելի քան 25 հազար օքրա մետրոս մշակող 1000 դագդահների թիվը իշխէ էր 75-ի<sup>3</sup>.

Վերուժելով իր ձեռքի տակ եղած հարուստ փաստական նյութերը, Ա. Ալպոյանինը ևս եկել է այն եղանակացության, որ Թուրքիայում XIX դարի կեսերին մի շարք տնտեսական կհնարիններ լուրջ ու երկարատև անկում ապրեցին, «Տնտեսական անկումնեն ի վեր,— գրում է նա,— Եվգոլիս արգելատները Եվրոպայի արգելատական արտադրությանց մոտ գտնելովը Հետրութեան մարիլ սկսանէ»<sup>4</sup>. Այդ վիճակը Թորատում և մի շարք ուրիշ քաղաքներում շարունակվեց մինչև առաջին համաշխարհային պատերազմի սկզբը, որին հաջորդեց երկար տարիների տնտեսական քայլայումն ու ճգնաժամը:

Արդին նշվել է, որ արտասահմանան կապիտալի ճեղմանը պաւածող պահպանվում և արդյունաբերության զարգացման մրա լրջորեն ազդում էր ֆեոդալական պետության անմիջական միջամտությունը: Այդ միջամտության օրինակներից մեկը միշնադարյան ցեխային կաղմակերպությունների պաշտպանություններն էր պետության կողմից: Ցեխները «գոտագործվում էին որպես հարկանավագ մարմիններ, Հաճախ էլ բանակին զանազան ապրանքներ ու մասնագիտ-արհեստավորներ մատակարարութեռնարկություններ: Սկզբունք դարձած այդ կարգի մասին կան բազմաթիվ տվյալներ: Արհեստները ուղղմական նպա-

<sup>1</sup> Dr. Râlim Sabahaddin, İstanbul mensucat sanayilinin bânyesi ve secretler, Ist. 1956, s. 28.

<sup>2</sup> Տե՛ս հոյն տեղը:

<sup>3</sup> Տե՛ս Dr. Râlim S. Արգած աշխ., էջ 22.

<sup>4</sup> Ալպոյանին Ա., Պատմության նշանին հայոց, էջ 1222.

տակներով օգտագործելու հետաքրթիր որինակ է բերում ՀՎ դարի սերբական սկզբնաղբյուր՝ «Ծննիչերի հրշատակարանը» խորապես, Հեղինակը՝ Կոնստանտին Միխայլովիլը Օստրամեցայից, մասնակցել էր Մահմետ 2-րդի կողմից 1453 թ. Կոստանդնուպոլիսի գրավմանը: Դրանից մեկ տարի առաջ սուլթանը, խարիստիամբ անցնում է Բոսֆորը և քաղաքի մոտ կառուցում Ռումենի Հիւար ամրոցը: Դեպքը նկարագրվում է այդպես, ուսումնական Մահմետը հավաքեց զորքը և շարժվեց այսպես, որիր ցունկանում էր Հարձակվել Կարամանի վրա և վերցրեց իր հայ վարպետներ՝ Հյուներ, շինարարներ, դարրիներ, գարուատրաստող վարպետներ և այլ, տարբեր արհեստավորներ իրենց անհրաժեշտ ամրող սարգով...<sup>1</sup>:

Թանի որ կապիւուալիստական Հարաբերությունների կրողները Հաւոյիսանում էին ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները, ապա նրանք, նշան է Ն. Տուդորովը, ստիլիստ էին պայքարել ցեխների դեմ ու միայն որպես տեսեական կազմակերպության, այն ֆեոդալական պետության հիմնարկության դեմ, որոնք, 19-րդ դարում օգտագում էին թուրքական միապետության Հռվանավորությունից<sup>2</sup>: Փաստորեն հաստատելով այդ տեսակետը, պրոբլեմի հատուկ ուսումնասիրողներ Ա. Հաջյանը և Մ. Զուլալյանը հայտնում են այն կարծիքը, որ պահուական մարմինների միջամտությունն արտադրության և առևտորի ասպարեզը հետապնդում էր ոչ միայն Հարկերի գանձման նպատակը, այն ձգտումը ամրող արտադրությունը ենթարկելու ռազմական բարուկրատիալիներ<sup>3</sup>, նման փոխարարքությունները շարունակվեցին մինչև կայսրության անկումը՝ Հանգիստանալով արհեստների զարգացմանը խանգարող ներքին կարևոր հանգամանքներից մեկը: 1913 թ. ամռանը «Բյուլղանդինը» հրապարակեց «Թայմս» թերթի Կ. Պոլսի թղթակցի ծավալուն Հռվանաթը էսեաֆեների մասին: Նշելով, որ գրանք եվրոպական արհեստավորական ցեխների նման շկազմակերպված և զորավոր չէին, թղթակիցն ընդդում էր ուրիշ մի երեսով: Ենթագ է,— զրում էր նա,— թե էսեաֆեների

<sup>1</sup> «Записки литерата», М., 1978, стр. 58—69.

<sup>2</sup> Тодоров Н., Балканский город..., стр. 412.

<sup>3</sup> См. сб. «Страны и народы Ближнего и Среднего Востока», Ер-1979, т. X, стр. 196.

պետերը նույեիսկ Ապառով Համիզի գահակալության սկզբնեարին իրենց էսեաֆին անդամներուն անդամակցության մկայականներ կուտային, որով կարող կլլային համփորդություններ կառարիլու տուանց դժվարության հանդիպելու կառավարության կողմեա<sup>1</sup>, Խշակիս արդն սույց տրվեց, կառավարության կամ նրա պաշտոնյաների Հարուցած դժվարությունները նրբեմն հասցեում էին մեծ վնասների և նույեիսկ սևանիացմունք Ունի-նուով կառավարական մարմինների օգնությունը, առանձին ցեխներ կարողանում էին բոյկոտի ենթարկել քրիստոնյա ար-համավորների նորամուծությունները կամ նրանց որոշ միջացա-ռումները նրբեմն չեւարրեց ցեխներ միավորվում էին՝ պետա-կան և քաղաքական միջրայտումներին մասնակցելու հոմար: Այդպիսի մի դեպք է նկարագրում «Բայմահ» թղթակիցը. Նա-պավարները միանալով բեռնակիրների չնամֆին, Կ. Պոլսում և Սելանիկում 1910-ին խստորեն առաջ տարան Հակոբշելին պայքառը<sup>2</sup>, Տէյերի գործունեությանը տալով քաղաքական երանգ, Թուրքիայի վերնախավը Հաճախ էր նրանց օգտագոր-ծում իր հետադիմական մաազարցումներն իրավորժելու:

Կասկածից վեր է, որ Թուրքիայի պայմաններում պետական հոգանավորությունից օգովելը տնօտեսական կազմակերպու-թյունների ու միայն գոյության, այն Հետպա զարգացման կարենը նախապայմանն էր. Օգովելով գրանից, շատ արհես-տավորական ցեխներ զարգացան և նրանց զեկավարները կարո-ղացան Հետպհան համակերպմբել բուրժուական Հարաբերու-թյունների հետ, առանորի կամ արտագրության ընդդաշնման միջոցով դանդաղորեն ընթանալ կապիտալիզմի: ուղիով: Ան-ցրաժնշատ է եշի, որ արտադրության հին ձևերի կամ կապիտա-լիստական զարգացման ցածր աստիճանի վրա դժնվող կաղ-մակերպությունների գոյատեսումը ձեռնտու էր թե՛ ցեխային վերնախավին և թե երկրի ֆեոդալական տիրող շրջանների Հա-մար: Որպեսզի պատմական պատկերը ներկայացվի իր ամրոցը բարդ հրուվածքով և երկրի կյանքի վրա նրա ունեցած աղ-ջեցությամբ, բերենք XVII դարում գործության և արտագրության ու վաճառքի մոնոպոլ իրավունքներ ունեցող, ինիստ մասնադի-տացված ցեխների ներքին կապերի ու բաժանումների խիս-

<sup>1</sup> պիւռանձնան, № 5067, 24. 8. 1912.

<sup>2</sup> նույն անդը:

ցանցը ներկայացնող մի քանի թվեր, և գեղ, դրանք՝ անելած փոփոխությունների ենթարկվեցին *XVIII* և *XIX* դարերի ընթացքում: Այսպէս, Կ. Պոլսի կաշկառությունների ցեմանքը բաժանված էին 35 յասնագիտությունների, կար անողներինը՝ 19, պինագործերինը՝ 36, մնացագործներինը՝ 36, ոսկերիչ-ակնազործներինը՝ 29, շինարարներինը՝ 44, Հաց-Ծրուցակեղեն արտադրողներինը՝ 29 և այլն<sup>1</sup>. Այստեղ նշված ու չնշված ցեմենքների բոլոր իրավունքները պաշտպանվում էին պետական օրենքներով և ի շարքին դեմքի ուժով: Դարերով ձևավորված արդ սիստեմն ու փոխհարարերությունները հանդիսանում էին ներքին ու լուրջ խոշոշումներին առաջընթացի ուղիներում:

Արշեստներից և արդյունաբերական ձեռնարկություններից ամենատարածվածը տեքստիլ արտադրությունն էր: Սամանյան կայուրության իրականությանը ևս Համապատասխանում էն է. Մարքսի այն խոսքերը, որ բջուրակությունը՝ մանուֆակտորաների մեջ առաջինն էր և մեաց դրանց մեջ զլիսավորը<sup>2</sup>, Մահածագործությունն իր տարրեր ճյուղերով զարգացում էր ապրում և զիմանում օտարերկրյա ապրանքների մրցանը Համարյա մինչև առաջին Համաշխարհային պատերազմը: Սակայն առանձին քառանգներից քայլայից տեղական արտադրությունը Անցյալ դարի երկրորդ կեսին արտասահմանյան թեկնին ու ներկերին արգեն արգում էր նախապատվություն: Այնուամենայնիվ, թիւ չէին բարձրորակ այնպիսի արտադրանքներ, որոնք կարողացան իրենց գոյությունը պահպանել դեռևս երկար ժամանակ: Տրապիզոնի իտալական Հրուպատոս Սոլանելլին, 1851 թ. տպագրած իր պրում, որոշ արշեստների Հարատմության պատճառը համարում է արշեստավորների անկրկնելի վարպետությունը, էրդրումի արշեստավորների արտադրած կանանց գլխի ծածկոցի՝ շարսավիթ մասին նա ասում է, որ տեղացի բոլոր կանայք այն են օգտագործում: Նա նշում է նաև, որ Հայ և Հույն կանայթ նախընտրում են սպիտակ և գորշագույն շարսավերը, իսկ մահմեդականները՝ սագելի կենդանի գույներ, ինչպես կարմիր, դեղին և այլն: Դրանք գործվում էին մետաքսից ու բամբակից

<sup>1</sup> Տե՛ս «Страны и народы Ближнего и Среднего Востока», т. X., էջ 181.

<sup>2</sup> Маркс К. и Энгельс Ф., Соч., т. 3, стр. 55.

նայնքան թանկ էին, որ հրուպատոս դժվարացել է նմուշներ ուղարկել Միլանի միջազգային ցուցահանդիսին։ Չարսամյակարագրությունը նու ավարտում է Հետոյալ դեահատականը։ Առյօն թելը, որով դործված են, այնքան բարակ է, որոն եկրոպիս ուստախակներն դեռ չի կրցան նմանից<sup>1</sup>։ Այսուհետև, յսամեջով արհեստավորների ուրիշ արտադրանիցների մասին, Հետոյակն անհրաժեշտ է դառն նկարագրել դրանցից մեկը։ Ենդրապային եկած թելով բամբակի ներքանիզնենք ևս կհյուսնեն, և զանազան երանգով զծված դիպուկներ, որոնց յանուան կեռլվին...։ Դրանք արտադրվում էին Արարկիրի, Ակենի, Սրգընկայի, Էրզրումի, Տրապիզոնի և այլ շրջաններում։ Շաշակով գույններով ու որակով արտադրված մանուսան տմեծ բանակությամբ կծախովի բոլոր Արևելքի մեջ և նույնիսկ Սվյուտան կողմիվիչ<sup>2</sup>։

Մանուսայի արտադրությամբ Կայսերի սանչակում գրադած էին 3000<sup>3</sup>, Այնթարում՝ 6000 բանվոր-բանվորութիւններ<sup>4</sup>։ Մանուսագործությունը տարածված արհեստ էր նաև ալլուր, Մարզվակներ տնտեսական կյանքը պատկերով մի հոդվածում նշված է, որ այսուղ գործում էին մոտ 3000 գաղգահեր և նրա թնակ-լության 1/6 մասը սատախանկությամբ էր գրազմում։ Կեցրնանք ըստի, — գրում է Հոդվածագիրը, — Բն յուրաքանչյուր տունի մեջ տեղկեան մը կպանվի...։<sup>5</sup> Ծումական ուազմական գործակալ Յա։ Մալայան 1876 թ. նկարագրելով արևելյան ուազմական թատերաբեմի նյութական հարավորություններն ու ռեսուրսները, գտնում էր, որ այսուղ մահուդի արտադրությանը զգալի վնաս էր Հասցեի և վրապական մցցակցությունը։ Չնայած ներմուծվող էժան ապրանքը շատ էր զանազանում, սակայն եթուրքական մահուդը, — նշում էր նա, — Արևելքում բարձր է գեահատվում և ունացնել արդ հիանալի, մանավանդ Արիիայում, արտադրությունը, կլինի չափազանց դժվարք<sup>6</sup>, Ըստ նրա տվյալների, Հիշյալ երկրի արդյունաբերության միայն արդ բնագավառում աշխատում էին 5000 բանվորներ։ Աղած պա-

<sup>1</sup> «Բազմազնություն», Համ. 4 (40), 1882, էջ 237.

<sup>2</sup> Խոյի տեղը, էջ 298.

<sup>3</sup> Տե՛ս «Տարեցայց պիտոքահայության», Թույարեա, 1882, էջ 153։

<sup>4</sup> Տե՛ս «Երյուղանիքն», Հ/17, 11. 1888.

<sup>5</sup> «Թաւրանին», 1868, Խ 8, էջ 235.

<sup>6</sup> ԱՐԵՎԱՐԱԾ, Փ. 2000, ոտ. 1, լ. 3818, էջ 349.

Համբարկը բազմարելու համար Բաղդադում բացվել էր Հա-  
 տուկ մաշուղի ֆարբեկա Իրենց գործվածքնենով հայտնի էին  
 Բիթլիսը, Վանը, Բասրան, Խարբերդը, Տրապիզոնը, Էրզրումը և  
 բազմաթիվ այլ քաղաքներ։ Հետաքրքրական է նշել, որ եվրո-  
 պական ապրանքների ներխուժումն ունեցավ մեկ այլ հետևածք  
 նու նատ բարձրորակ վարպետներ, բազմաթիվ վայրերում, աշ-  
 խառում էին իրենց արտադրանքը ներմուծվող ապրանքներին  
 նմանեցնել թե արտաքինապես և թե որակով, նվազ այդ բանը  
 նրանց հաջողված էր։ Այսպես, որոշ գործվածքների և թելերի  
 տեսակների արտագրությունը ոչ միայն դիմացավ մրցությանց,  
 այլև ընդլայնվեց, Եղիկուլիսի, Սալրնիկի, Տարսուսի և այլ մա-  
 նածագործարաններ ավելացրին իրենց համախառն արտա-  
 դրանքը՝ Համենկով մինչև 12 համար թելեր արտադրելու բարձր  
 մակարդակին։ Դրանց որակն այնքան լավացավ, որ թելերի  
 տառեճին տեսակներ գոտուզեցին մրցակցությունից գուրա, նույ-  
 նիսկ անզգիական մանաժագործների մոտե՛։ Պայքարը հանոն  
 տեղական արտագրունների դիրքերի ամրապնդման ժամանել էր  
 բայց արտագրությանների գծով, բայց, անշուշտ, ոչ հավասար  
 հարցությամբ։ Այսպես, կաշվի արդյունաբերության բնագա-  
 վառում հնարավոր եղավ ստեղծել բարենպաստ պայմաններ։  
 Նախ, հում կաշին մշակվում էր տեղում, և դրա մի մասն ար-  
 տառանուում էր։ Մակայն զգալի քանակությամբ պատրաստի  
 կաշի էր ներմուծվում խոշոր կաշեգործարանների համար,  
 որոնք արտադրում էին կոշիկ, կաշվե բանկոններ ու վերարկու-  
 ներ։ Բայց այս բնագավառում տեղական գործարար շրջանները  
 ևս աշխատում էին սահմանափակել ներմուծումը։ Հետևանքը  
 եղավ այն, որ սկսած 1890 թ., 15 տարվա ընթացքում ներմուծ-  
 վող կաշվի ծավալը մեաց նույնը, Մյուս կողմից, կաշի մշակող  
 և պատրաստի արտադրանք տվող ձեռնարկությունների թիվը  
 աճում էր և նրանք ի վիճակի էին մշակելու ոչ միայն տեղական  
 հումքը, այլև 400 հազար թուրքական լիրայի Հարավային  
 Ամերիկայից, Չինաստանից ու Հնդկաստանից վեցող կաշինե-  
 րը<sup>1</sup>, Ալդ ձեռնարկություններից էին վեց խոշոր գործարաններ  
 և գուլսում, ֆարբեկաններ ու ցեխներ իզմիրում, Ալեքսանդրիա-

<sup>1</sup> «Вестник финансов.», 1897, № 28, стр. 64.

<sup>2</sup> Տե՛ս «Թյուրքիա», 1908, Խ 16, էջ 262.

ցում, Ապարազարում, Դիարքեցիրում, Սպարտալում, Անկարա-  
յում և այլուր:

Մեր դարսակղբում, շնորհիվ տեխնիկական միջացներով՝  
ապահովված որոշ գործարանների, բարձրորակ կոչվելի Համար  
Ֆրանսիայից ստացվող կաշիների փոխարեն «Բյուրակներ» վկա-  
յությամբ սկսեցին օգոստորեն Շուկական (Սաքը, Իզմիր)՝  
խաղախորդարաններու մեջ պատրաստվածները<sup>1</sup>, Դեռ ավել-  
լին, Տեղական Հումքով պատրաստած կոշիկները սկսել էին  
արտահանել և դրանք դարձել էին Փարիզի սմեծ վաճառատուն-  
ներու ցուցափեղկերուն մեջ զետեղվող առարկաները<sup>2</sup>:

Չարաթաթերթը Հուլիս է Հայտնում, թե ոռրքան ավելի առաջ  
երթա այս ճարտարարվեստը մեր երկրին մեջ, ՇետզՇեն այն-  
քան նվազ պիտի ըլլան մորթիի ու կաշիի ստար երկրներն նե-  
րառությունը: Ամփոփելով ավյալ ընազավառում 1907 թ.  
Խվանումները, «Բյուրակներ» արձանագրում է. «Մեր զորժա-  
րաններն իրենց նախանյութին մեծ մասը տեղական արտա-  
դրություններին կհայթայթեն, և կան ինչ-ինչ տեսակներ, որ  
երկրին մեջ մշակելով օտար երկրներ կդրկվինք», Այս Հաջողու-  
թյունները մասամբ կարելի է վերագրել կաշվի արտադրության  
մասնագիտացմանը, որը տեղի էր ունենում ամրող երկրում:  
Այսպիս, խոշոր հղմնավոր անասունների կաշին մշակվում էր  
Թեյրություն և Զիլեռում, ոչխարի և այծի մորթիները՝ Դամաս-  
կոսում, և. Պուսի որոշ ձեռնարկություններում, Հոմանում, Հա-  
մայում: Այնթապում մշակվում էին միայն ալժի մորթիներ:  
Հիշյալ ձեռնարկությունները Հումքը ստանում էին Բիթլիսից,  
Խարբերդից, Սըգմոնց, Դիարքեցիրից և ուրիշ վայրերից<sup>3</sup>:

Փաստերի Համագրումից կարելի է եղբակացնել, որ շնա-  
յած արտասահմանյան էժան ապրանքների անող մրցմանը,  
մի շարք արհեստներ շարունակեցին գոյատնել և նույնիսկ վե-  
րելք ապրեցին: Դրանք այն արհեստներն էին, որոնք բավարա-  
րում էին տեղական սպառողի կենսական, ամենօրյա պահանջ-  
ները լայնածիր կայսրության Հատկապես ներքին շրջաններում:  
Նշվածներից բացի, դրանցից էր անհամբերքների, մասնավո-

1 ՏԵ՛ս «Բյուրակն», 1906, № 18, էջ 252.

2 Նույն տեղը:

3 Նույն տեղը:

4 ՏԵ՛ս Ռյան Ա., Երկ. աշխ., էջ 152.

զուպիս հացի, կաթնեղենի ու մսի արտադրությունը։ Հանրահայտէ, որ, օրինակ, բացի թարմ մսից, տեղական քնակիչները սպառում էին զավուրմա, բաստուրմա, սուրուխ և տաշրեր տեսակի շորացրած կամ ապիտած միա, որն արտադրվում էր նուև շուկայի համար։ Հաշողությամբ զարգանում էին գժվար տեղափոխող և շուտ փշացող մթերքներ (մրգեր, ձիթապտուղ, խաղող, մնացարսի կոկոններ, համեմունքներ և այլն) վերամշակող ձեռնարկությունները։ Վերջապես, զարգանում էին տեղական հատուկ արտադրանք տվող այնպիսի արհեստները, ինչպիսիք էին գորգագործությունը իր բազմաթիվ տեսակներով և արևելյան զարգարանքները, զենքեր, առրքեր նյութերից կենցաղային յուրահատուկ իրեղնեններ և նման այլ առարկաներ պատրաստող արտագրությունը։

Տեղի էր ունենում բազմակողմանի, բարդ ու հակասական մի պրոցես, որը բնորոշ էր կիսագաղութային երկրում ֆեոդական հարաբերությունների քայլայման ու կապիտալիստական հարաբերությունների առաջննացի պայմաններին։ Այդ ոմենի վրա թուրքական իրականությունը գնում էր իր յուրահատուկ կենքը, գանդաղեցնելով նշված բոլոր պրոցեսները։ Այսուամենայիվ, սոցիալ-տնտեսական տեղաշարժերն առկա էին, թեև ինչ-որ չափով հարմարվում էին ներքին պայմաններին։ Հ. Ղազարյանն արդ մասին գրում է. «Արհեստագործության ճշուղերը զարակողքին համախմբվել էին ըստ քաղաքների, առաջացնելով մի պրոցես, որը վնալով ավելի էր խորանում, քանի որ եվրոպական ապրանքների ներմուտի հոսքի ուժեղացման պատճառով հարկադրական պահանջներ էր առաջանում կատարելագործություններ անհի ձեռագործության ասպարեզում, դիմագրավել մեքենայի հրաշքին»<sup>1</sup>, ինչպիս արգել նշեց, դիմագրավել կարողացավ տեղական արդյունարերության մի մասը միայն։ Բայց եղան այնպիսի քաղաքներ և արշականեր, որոնց անկումը շարումակվեց երկար տասնամյակներ։ Դրանց թվին էր պատկանում Թոգատը (Ծվղուկիա), իր բարձր աստիճանի հասած պղնձագործությամբ։ Ս. Սապահոյալյանի գնահատմամբ, «Թոգատի պղնձեղնենի արդյունագործությունը գովական է ամբողջ Բուլղարիա մեջ, արհեստը այստեղ

<sup>1</sup> Ղազարյան Հ. Արհեստագործի սոցիալ-տնտեսական և քաղաքական գաղափրությունը 1800—1870 թթ., Եր., 1967, էջ 202—203.

արդին նրբության է հասել, կաթոայեղենները, իտհանոցի ամանեները, կերակուրի ամեն տեսակ անոթները գեղարզեստական կատարելություն ունեինք<sup>1</sup>, Թուգատում կային մոտ 150 պղնձագործական արհեստանոցներ և խանութեներ, որոնցում աշխատում էր 800—1000 մարդ՝ Սակայն գարի վերջին արդ թվերը կրնատվել էին՝ առնվազն տասն անգամ։ Բան այն էր, որ նվազագից ներմուծվող ցինկից, էմալից և այլ նյութներից պատրաստված ամանեղենը և՛ էժան էր, և՛ գործածելու համար հարմար ԱՀա այս պատճառով էլ պղնձեղենի արտադրությունը երբեք լհասավ իր նախկին ժաղկած վիճակին։ Ա. Ալպոյացյանը մնաց է բերում ևՄասիս թիրթի 1898 թ. համարեներից մեկի Թուգատի հետևյալ նկարագրությունը. «Մեծ ու փոքր բազմաթիվ խաներ, որոնք հիմա թափուր են գրեթե, տեղացի և պանդուխու վաճառականներով լեցուն էին երրիմն... Հիմա կարևոր արվեստներու կարգն են պղնձագործությունը և բազմաճիռությունը, առաջինը իր հողեվարքին հասած է զրեթե, իսկ վերջինը դժո կապրի, և կերևա թե տակավին երկար է կյանքը»<sup>2</sup>. Պղնձագործությունը և մի քանի այլ արհեստաներ նույն վիճակին հասան նաև կեսարիայում, Մարզվանում, Անդաստիարում, Ամասիայում և մի շարք այլ քաղաքներում։

Տեղի էր ունենում առևտրական կապիտալի ներթափանչում արտադրության բնագավառը, որի հետևանքով ևս միացվում էին նույն բնագավառի արհեստանոցներն ու ձեռնարկությունները, Ալպես ստեղծվեց Ազանայի գուլպայի գործարանը, որի երեք փայտաերենը, օպտագործելով ժամանակակից տեխնիկական միջոցները, գուլպայի որական արտադրանքը հասցրել էին 800—1000 զուգի։ Այն արտաֆլում էր «Իզմիր», Բեյրութ, Դեղնաղաշ, Կեսարիա, Տարսոս, Մերսին, Հանն և ներքին այլ գավառներ, որտեղ ընտար ու դիմացկուն գուլպայի հոլակ հանած էին սույն կոկիկ գործարանին գուլպաները<sup>3</sup>, «Բյուրակինը» արձանագրում է կապիտալիստական կարգներին ընորոշ մի երևույթ։ Դոյություն ունեցող ձեռնարկությունները լէին բազարարում տեղական պահանջարկը և դարասկզրին կարիք էր զգացվում ստեղծելու նոր գործարաններ, «Երշակ» և տեղա-

<sup>1</sup> Սապանցյան Ա., Փոքր Հայքի հշատակեներ, Զիրագ, 1917, էջ 222.

<sup>2</sup> Ալպոյացյան Ա., Պատմոթյուն նվազեկան հոլովակ, Հայոց, էջ 1268.

<sup>3</sup> «Բյուրակին», 1907, Խ 8—10, էջ 237.

կան անսպառ ապսպրանց, — զրում է շաբաթաթերթը, — չեն կը նար որք օրին հանձնվիլ, որով երրորդ և չորրորդ մանարանի պետք կտեսնվի: Ըստ այսմ դրամատեր մը Տարսոն եկած է ավելի մեծ մանարան մը Հաստատելու համար, և Միմեռնողուն որդիք ալ Առանայի մեջ հիմնեցին նոր մանարան մըշ՝ Ընդլայնվում էր ոչ միայն գործվածքների ու կտորեղենի, այլև պատրաստի Հագուստեզենի, կոշիկների և սպառման այլ ապրանքների պահանջարկը, որի հետևանքով Կ. Պոլոսկ, Խզմիրում, Սալոնիկում և այլ կենտրոններում ստեղծվում էին կանաց և տղամարդկանց վերաբերուներ, զգեստներ և այլ հանգերձանք արտադրող խոշոր արհեստանոցներ: Աշխուժ առևտրական գործունեություն ծավալեցին հիշյալ տպրանքները վաճառող և տեղում ոհազըրմին կոչվող վաճառատեները, որոնք իրենց ապրանքներն ուղարկում էին Թիրութ, Դամասկոս, Հայոց և բազմաթիվ այլ քաղաքներ:

Արարկիրում տեղական վաճառականները միավորել էին մանուսայի արտադրությունը, որը կատարվում էր 1600 գործող գողգահների վրա: Անսարիայում տարրեր ազգության երկու տասնյակից ավելի վաճառականներ կառուցել էին գորզի մի քանի գործարաններ, որոնց արտադրանքը սպառվում էր ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շուկաներում: Խզմիրում երեք գործարանատեր իրենց ձեռքում էին կենտրոնացրել ժաղկավոր նոթեզնի արտադրությունը և վաճառքը: Բացի Խզմիրից այն սպառվում էր Այղընի, Կոնիայի վիլայեթներում, ինչպես նաև Սպարտալում, Ուշաքում, Աֆրոն Կարահիսարում և էգեյան կղզիներում<sup>1</sup>:

Խոշոր ձեռնարկությունները և տեխնիկական նորույթները նոր մասնագիտությունների պահանջ էին տուաշաղրում: Ընդլայնված արտադրությունը կարիք ուներ մեխանիկների, էլեկտրիկների, քիմիկոսների, գեղագործների, տպագրիչների, նկարիչների և մի շարք այլ սպասարկող բնագավառների աշխատազների: Գրանց երեսն գալը բնականոն էր բուրժուազիայի

<sup>1</sup> «Բյուրաքին», 1907, № 8—10, էջ 237.

<sup>2</sup> ՏԵՇ հոյե տեղը, № 1—3, էջ 10.

<sup>3</sup> ՏԵՇ Արվանձորանց Դ., Օրկար, Համ. 2, էջ 295.

<sup>4</sup> ՏԵՇ «Բյուրաքին», 1907, № 12—14, էջ 333—334.

<sup>5</sup> ՏԵՇ հոյե տեղը, № 18—20, էջ 485.

զարգացման պայմանների համար։ Մասնագետներ պատրաստելու անհրաժեշտությունը հանդեցրեց մասնագիտական ուսումնարանների և արհեստագործական դպրոցների կազմակերպմանը։ Արհեստաներ սկսեցին սովորեցնել որոշ դպրոցների ու որբանոցների երեխաններին։ Ելլակալյան մամուչք լրագիրը, բացի Հին արհեստաններից, պահանջում էր 2—3 տարվա ընթացքում աշակերտաններին սովորեցնել մեխանիկի, գարրնի, ձևադրի, քանդակագործի և այլ մասնագիտություններ։<sup>1</sup>

Կապիտալիստական հարաբերությունների տառընթացը որոշ ազգեցությունների ունեցակ երկրի վերնախավի ներքին քաղաքականության վրա։ 1860-ական թթ. պետությունը ստիպված էր ձեռնարկել որոշ քայլերի երկրի արդյունաբերությունը զարգացնելու նպատակով։ 1862 թ. ստեղծվեց կառավարական հանձնաժողով՝ արդյունաբերության զարգացման միջոցառումները մշակելու համար։

1864 թ. Հիմնադրվեց արդյունաբերության բարեփոխման կոմիտե։ Այն գործեց ընդամենք տասը տարի։ Նրա վերացման պատճենոր եղավ կառավարական շրջանների այն տեսակետը, որ իրը ուկալիտեի իրավասությունները փաստորեն ունենաւություն են արհեստագործական նախարարության գործերին։ Իր գոյաւթյան ընթացքում կոմիտեն կարողացավ կազմակերպել միայն ցուցահանդեսներ և արհեստագործական դպրոցներ։ Այս խնդրին նվիրված իր ուսումնասիրության մեջ դոկտոր Նիզամեղդղին Ալիսավը անհրաժեշտ է գտնում նշանը, որ պետական այդ գպրոցները Հիմնադրվել էին ոչ բուն Թուրքիայում, ո՞պրացներից առաջինը, — գրում է նա, — կառուցվեց Հարավսլավիայի նիշ քաղաքում, երկրորդը՝ Թուրքարիայի Ռուսականութ քաղաքում և երրորդը՝ Սիրիայի Հալեպ քաղաքում։<sup>2</sup> Պատճենը երկրում ուսուցիչների պակասն էր, նույն այդ քաղաքներում կային մասնագիտաներ և հարավուր էր Հեղությամբ Հրավիրել ուսուցիչներ հարևան երկրներից։ Մյուս գժվարությունը, որ ովանդվածային մեծամասնության ովհետությունն էր,<sup>3</sup> Բայց Հանրահայտ

<sup>1</sup> SK' Ելլակալյան մամուչք, 4. Պոյն, 1864, էջ 225.

<sup>2</sup> Karal Enver Ziya, Osmanlı tarımı, Ankara, 1966, cilt 7, s. 257.

<sup>3</sup> Dr. Alisay N Sanayi İktisadi..., s. 152.

<sup>4</sup> SK' Նոյն տեղը:

է, որ բազմաթիվ գյուղատնտեսական, արհեստագործական և  
նույնիսկ արդյունավորքական ուսումնարաններ անցւալ դարի  
80-ական թթ. գործում էին կայսրության ամբողջ տարածքում:  
Նրանց մեծապույշ մասում տնտեսական գործերում ավելի  
հմուտ ազգային փոքրամասնությունների երեխաններն էին սո-  
վորում: Մասմեղականների զավակները, որոնք կանոն, իրենց  
արժանապատվությունից ցածր էին համարում հաճախակ արդ  
ուսումնարանները, Դոկտոր Ն. Ալիսավը, անշուշտ, գրում է վեր-  
շինեներին համար բացված զպրոցների մասին: Արդյունարե-  
սության դանողադ զարգացումը, իհարկե, միայն կադրերի պա-  
կասության հետևանք էր, այլ մի շարք ուրիշ լուրջ գործունե-  
րի, որոնց մասին մասամբ խոսվեց: Սակայն, երբ պիտությանն  
անհրաժեշտ էր լինում ապահովել այս կամ այն արտադրու-  
թյունը կազմերով, հումքով, մեքենաներով, ապա տվյալ ձեռ-  
նարկությունը հաջողությամբ կարողանում էր գործել: Ահա  
այդ բնույթին ուներ պիտական գործարաններից ցանցը, որը XIX  
դարի սկզբին Բուրգիայի մաշտարաններով բավական խոշոր  
գործարաններից ու ֆարբիկաններից էր կազմված: Դրանք մեծ  
մասամբ կառուցվում էին, ենիւլով սոմանյան նորաստեղծ բա-  
նակի պահանջներից և, որպես կանոն, ուղարկամբերը, զին-  
վորական հագուստներ և զինվորականներին անհրաժեշտ այլ  
պարագաներ էին արտադրում: Առաջին պիտական գործարանը,  
որ կառուցվել էր 1810 թ. Բեյքրում, վառողի գործարանն էր,  
որի շինարարությանն ու զեկավարությանը մասնակցել էր Հով-  
հաննեն ամիրա Դադյանը<sup>1</sup>: Այնուհետև մինչև 1860-ական թթ.  
կառուցվեցին ալլուրի, ծխախոտի, գարեջրի, օճառի, թղթի,  
կաշվի, հյուսվածքների, կտորեզնի, հանդերձանքի և այլ ան-  
հրաժեշտ արտադրանք տվող մոտ երեք տասնյակ գործարան-  
ներ երկրի տարրեր վայրիրամ: Բուրգ Հեղինակները իրավա-  
ցիորեն նշում են պիտության կողքին մասնավոր անհատների  
կարևոր դերը արդյունաբերության այս ճյուղի ստեղծման և  
զարգացման գործում: Շուահեծին անձնավերությունների շան-  
քերով.— ընդդում է Ս. Ռաբմը, — Հիմնվեցին որոշ գործարա-  
նային արդյունաբերության կետեր: Նման հիմնարկները, սա-  
կայն, առեղջմանին օտարենքի ձեռքով, շնորհիվ կապիտա-

<sup>1</sup> Տէ՛ս Պաղուման Ա., Տառյան գերզատաներ, Վիճնեա, Միջբարյան  
ապրուն, 1868, էլ 81:

Ապացիաների և առ մենաշնորհումներից<sup>1</sup>, Արդ ռատարների մեջ  
մասը, առկային, կայսրության Հայաստակ ժողովրդի ներկայացու-  
ցիչներն էին: Կառավարության երանք պետք էին ոչ միայն,  
երբեմն ոչ այնքան, որպես փռզատերեր, առև որպես մասնա-  
գետներ, վարպետներ ու արդյունաբերության կազմակերպիչ-  
ներ: Ն. Տողորովը բավական մանրամասնությամբ է ներ-  
կայացնում մի խոշոր ձեռնարկության պատմությունը: Դա բազ-  
պարական արդյունաբերական կենտրոններից մեկում՝ Սիլվե-  
ռում, 1836 թ. կառուցված մահուղի գործարանն է: Նրա տերն  
և կառուցրող՝ վարպետ Դորրի Ժելազկովը, կանչվում է Բարձր  
դրույք, ցույց առալիս իր արտադրանքի որակը և կառավարու-  
թյան հատուկ կարգադրությամբ սկսում է արտադրել բարձր-  
որակ մահուղի: Անհրաժեշտ բանակով ստանալով գործարանի  
արտադրանքը՝ կառավարությունը հրաժարվում է բանակի հա-  
մար մահուղի ներմուծելուց: 1840-ական թթ. գործարանը պե-  
տության Հաշվին երկու անգամ վերանորոգվում և ընդլայն-  
վում է: Այսպիս, 1841 և 1842 թթ. կառարված Հիշյալ ժախսները  
ծածկվում են Տրանսուլի Հարկային վարչության և զավառապե-  
տարանի միջնորդով: Դ. Ժելազկովը գործարանը զեկավարում  
է որպես զիրեկտոր և վարպետ, իսկ կառավարիչները, որոնք  
նշանակվում են թուրք մեծամեծերից, գործարինում են միմ-  
յանց<sup>2</sup>: Սակայն այս ձեռնարկության կողքին Հեղինակը ցույց է  
տալիս մեկ ուրիշը՝ Գյումրիցնրդան եղբայրների տեսատիլի  
ֆարբիկան Պրովինցի մոտ, որը թեև կատարում էր պետու-  
թյան պատվերները, մինչև վերը էլ մնաց մասնավոր կապիտա-  
լիստական ձեռնարկություն: Նա հետզհետե ընդլայնվեց, դար-  
դացավ և պետական պատվերներից ստացած շահի շնորհիվ  
գործառնեց մինչև Բուլղարիայի ազատագրումը<sup>3</sup>:

Դաղյան գերդաստանի մասնագետների ու Հայուսության  
օգտագործումը ևս ցույց է տալիս, որ պետության Համար  
գործող արդյունաբերական ձեռնարկությունների մի մասը իր  
դրյությունը պահպանում էր պետական վարկերի միջոցով,  
Մյուսները՝ թէ՝ վարկերի և թէ տերերի կապիտալի օգնությամբ,

<sup>1</sup> Dr. Râim. İstanbul Memucciâsi..., s. 22. Տէ՛ նու, Türkiye'de sermazyo  
piyasasının kurulması, s. 17.

<sup>2</sup> Տէ՛ Տодоров Н., Балканский город..., стр. 257—269.

<sup>3</sup> Տէ՛ նու, ալդը, էջ 259—274.

իսկ մի մտոն էլ սկզբից մինչև վերջ գործում էր որպես մասնավոր ձեռնարկություն, ունենալով պալատի, կամ սուլթանի մերձավորների հոգակավորությունը։ Այսպիս, Հովհաննես ամիրայի զավակները՝ արքունի վառողապետ Առաքելը և Ներսես-Խոսրովը 1845 թ. հրամիրվում են սուլթան Արդար Մեշհեդի պալատը, որտեղ ժամարդական ուղղվ ընդունելով զանոնք, քառորդի մը լավ (սուլթանը— Հ. Ի.) բարեհանեցավ խոսելու անոնց համ Խզմիտու (մահուդի) գործառանը վրայոք բաներ հայցնելով... վերանշյալ գործարանի հոգարարձությունն աչ որդոց-որդի հաջորդական ժառանգությամբ հաստատեց։<sup>1</sup>

Գետական գործարաններից ու ֆարբիկաներից յոթն արտադրում էին ուղղմամբերը, Դրանցից մի քանիսը միավորվեցին նշանավոր Թօփհանների մեջ, որը Թօփհայրում դարձավ հրանոթներ ու հրացաններ, իսկ 1851 թ. նաև վառող արտադրող միակ ձեռնարկությունը։ Մյուս ձեռնարկությունները նույնպես մեծ մասամբ կատարում էին ուղղմական նշանակություն ունեցող պատվերներ։ Դրանք բոլորն էլ կառավարության հատուկ ուշագրության առարկա էին, հատկապես Ղրիմի և 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմների տարիներին և դրանց հաջորդող ժամանակաշրջանում։ Մակավանդ, երբ Հիշյալ պատերազմները սույց ավեցին թուրքական բանակի թուկությունը մշտաների համեմատությամբ, ակնառու դարձավ ուղղմական արդյունաբերությունն ընդլայնելու անհրաժեշտությունը։

1888 թ. կառուցվեց պողպատամուման մի մեծ ձեռնարկություն, որտեղ պատրաստում էին նավերի մետաղյա սարքավորումներ, թեղանոթներ և զենքի այլ մտուր նույտներ ու ուղմական գործակալը նշված ձեռնարկությունները այցելելուց հետո գրում էր, որ դրանցից ուշագրության արժանի էին Կոռուպի հաստացներով սարքավորված զինագործարանը, շուկումի և բրոնզի ձևարանը, զրահի թերթեր պատրաստող լորս շոգեմուրճներով երկաթեղների գործարանը, մուտքներ հավաքաղ մերձնաշինական խոշոր արհեստանոցը, կաթայի գործարանը և 1884—1889 թթ. Հիմնված էլեկտրատանհինիկական և ականեների արհեստանոցները, ինչպես նաև նավաշինարաններն ու

<sup>1</sup> Պահպան նիր., Տառյան գերդաստանը, թ. Հայոց, Թիրութ, 1870,

նսովերի զերանորոգման կայանները, Հիշյալ գործակալի կործիքով, ուղղմական զերատեալությունն ուներ ժամանակի պահանջներին համապատասխանող արդյունաբերական բազա, որն ապահովված էր անհրաժեշտ քանակությամբ մասնավեճռերով, վարպետներով և որակյալ բանվորներով, որոնց թիվը 2000-ից ավելի էր<sup>1</sup>, իսկ ամբողջությամբ զերցրած արդյունաբերության այս բնագավառում աշխատում էր մոտ 10 հազար բանվոր<sup>2</sup>, Խելպես տեսնում ենք, ցանկության կամ կարիքի դեպքում, պետությունն ընդունակ էր արգյունաբերության համապատասխան նյուղերն ինչ-որ չափով ապահովել հումքով, սարքավորումներով և աշխատումով:

ՀՀՀ դարի երկրորդ կեսին զերելք էին ապրում արդյունաբերության մի շարք այլ բնագավառներ ևս, որտեղ ստար կապիտալի կողքին, կամ նրան համատեղ ակտիվություն գործում էր տեղական կապիտալը:

Դրանցից առաջնակարգը գորգագործությունն էր, որի արտադրանքը սպառվում էր թե ներքին և թե արտաքին շուկաներում:

Ծին անցյալ դարի 30-ական թթ. երկրում կային գորգագործության միայն երեք կենտրոններ (Ուշագ, Կուզեն, Եղբայր), ապա 70—75 տարի հետո զբանց թիվն անցել էր 25-ից, Սկզբանական շրջանում, նշված երեք կենտրոններում արտադրվել էր 50—70 հազար քառ. մետր գորգ<sup>3</sup>, իսկ 1890-ական թթ. միայն շորս խոշոր կենտրոններ (Ուշագ, Գյորգեզ, Շեմիրյի և Կուզեն) տալիս էին մոտ 370 հազար քառ. մետր գորգ<sup>4</sup>, կամ յոթ մետր ավելի, Այդ կենտրոններից միայն Ուշագը արտադրում էր 250 հազար քառ. մետրից ավելի գորգ: Դեռևս 1882 թ. այսուհետ արտադրվել էին մոտ 180 հազ. քառ. մետր տարրեր տեսակի գորգեր, որոնցից 100 հազ. քառ. մետր արտահանվել էր, իսկ 40 հազարը՝ վաճառվել թուրքիայում ու Եգիպտոսում<sup>5</sup>:

Մամուկի տվյալների համաձայն, 1907 թ. Թուրքիայի գորգագործության բնագավառում աշխատում էին մոտ 20 հազար

<sup>1</sup> ЦГВИА, ф. 401, оп. 1890, л. 3, лл. 53—56.

<sup>2</sup> ЗГ «Ученые записки ЛГУ», вып. 14, 1962, стр. 3.

<sup>3</sup> ЗГ «Новинка А. Д., Отчеты экономики Турции...» стр. 270.

<sup>4</sup> Cunet Vital, La Turquie d'Asie, Paris, t. III, p. 408.

<sup>5</sup> Dulsorier Ed., En Turquie d'Asie, Paris, 1883, p. 224.

Հաստոցներ, որոնց սպառարկում էին 40 հազար երկուոր բանվորներ։ Արտադրության կենտրոնացման և տարրեր շրջաններում խոշոր արգյունաբերական ձեռնարկությունների ճյուղեր ստեղծելու պրոցեսը շատ հատակ երկում է Սըվասի (Սեբաստիա) ձեռնարկատերերի որինակից՝ բերված Զ. Թաշլյանի հետաքրքրական հոգմածում։ Նա գրում է քաղաքում 1907 թ. գործող ուժ միավորումների մասին, որոնք զգալի շահ էին բերում աղբարնակչությանը։ «Սա երկու տարվան մեջ, — գրում է նա, — գործազրուաց թիվը եռապատկվեցավ և օքսատորի ավելինալու վրա է, և շուալի է, որ երկու տարին վերցը ներկա թիվն ալ կրկնապատկվի։ Այժմ 3000 շափ գործազրուներ, 1000—1500 բուրգ մասնող կիներ և 200 շափ պաշտոնյաներ կաշխատին արդ գործարաններու մեջ...»<sup>1</sup>. Խոշոր արտադրություններ կազմակերպողների թվում հիշատակվում է որդմիրցի վաճառական տիար Թ. Սպարթալիի գորգի մասնաճյուղի ընդհանուր տնօրենն Մորգար Էֆենդի էքիպիերը, որ եկած է Սվալի մեջ ալ գորգի գործարան հաստատելու։ Այս գործարանը հիմա կհռչակվի Ալպես Ալիոթի անվան տակը<sup>2</sup>.

Հոգվածում ցույց են տրված հայ խոշոր ֆինանսիստ և արդյունաբերող Թ. Սպարթալիի կապերը մի կողմից տուար կապիտալի, իսկ մյուս կողմից՝ տեղական արդյունաբերական կենտրոնների համար։ Այնուհան նշվում է, որ տուարեզիլուն արդին հիշատակված գործի սիդիկատը ուկրնելյան գորգերու ընկերությունը պիտի կոչվի։ Այդ անունով ընկերությունն իր գոյացությունը պահպանեց երկար տարիներ, թեև շէին հիշատակվում նրա հիմնագիրների և զեկավարների անունները։ Մինչև առաջին Համաշխարհային պատերազմը, ըստ Օրհան Կոնկերի, գորգերի արտադրությունը և վաճառքն իրենց ձեռքում կենտրոնացրել էին շյոթ մեծ ընկերություններ՝ որոնցից շրուց թուրքական (իրականում թուրքահպատակ Հուլիս, հայ, Հրեա ձեռնարկատերեր էին— Հ. Ի.), երկուամ անգլիական և մեկը ամերիկան ընկերություն։

<sup>1</sup> «Բյուրակն», 1907, № 32, էջ 1844.

<sup>2</sup> Խոյն անցը։

<sup>3</sup> Խոյն անցը։

<sup>4</sup> Orhan Conker, Redressement Economique et l'Industrialisation de la Nouvelle Turquie, Paris, 1937, p. 96.

Ենթարժեացման և առևտրական կապիտալը արգյունաբերք-  
րականին միազդորելու հպտումը նկատվում էր նաև երկրի մշտա-  
կարևոր արտադրության բևազավառում։ Դա մետաքսի իր  
զարգացմամբ երկար ուղի անցած արտադրությունն էր։ Անցյալ  
գարի կեսերին այն ուներ բազական բարձր մակարդակ։ Խոշ-  
ովիս մետաքսապրածության մասին իր ուսումնասիրության մեջ  
նշում է ուսւ Հայունի մասնագետ Ն. Եավորվը, 1845 թ. Բաւր-  
սայում արգել կառուցվել էր շոգեմեցնեաներով աշխատող և սն-  
կարժառ ունեցող առաջին մանարանը, որը պատկանում էր Բա-  
ղիյան Հիննդիին, Ֆալկանային ընկերակցությամբ։ Հաջորդ  
տարի այլուղ սկսեցին գործել և երկու մետաքսի ֆարբիկա-  
ներ, 1853 թ. Թուրքիայում կային 4200 կարժառ ունեցող 60  
ֆարբիկաներ և խոշոր արհեստանոցներ, իսկ վեց տարի հա-  
մար թվերը հասան համապատասխանարար 5000-ի և 85-ի։

1870-ական թթ. վերշներից մետաքսի արտադրությանն ապ-  
րեց մի նոր բռուն վերելք, երբ ավանդական շրջաններից  
(Բուրսա, Իզմիտ, Գերչի, Բանզըրմա, Հալեպ, Բեյլութ, Սալո-  
նիկի) բացի, շերամապահությամբ սկսեցին զրադվել Անտո-  
լիայում (Կիսարիա, Ամասիա, Աղարազար) և Արևմտյան Հա-  
յաստանում (Խարբեր, Էրզրում, Վան, Դիարբեքիր) և այլ շր-  
ջաններում, որիուզանդիունից ազյալներով 1898 թ. Բաւրսայում  
կար 41 ձեռնարկություն, 1890 թ. քաղաքում և նրա շրջանում  
դրանց թիվը հասավ 88-ի, իսկ 1905 թ.<sup>1</sup> 121-ի<sup>2</sup>, Ն. Եավորվի  
հաջվումների համաձայն, Բուրսայից մինչև Իզմիտ ընկած շե-  
րամարտության հիմնական շրջանում 1901 թ. գործում էին  
96 ձեռնարկություն 5000 կարժառով, որոնց թիվը 1907 թ. հա-  
սավ համապատասխանարար 165-ի և 9200-ի։ Երկրի ամրազ  
տարածում 1906 թ. կային «310 մետաքսի մանարաններ  
20200 կարժառով, որոնք մշակում էին 985 հազար կիլոգրամ  
կամ 61,5—62 հազար գիութ կոկոններ»<sup>3</sup>.

Մեր գարսակղբին մետաքս արտահանող երկրների մեջ Սա-  
մանյան կայսրությունն աշխարհում առաջիններից էր, մաս-  
նիայից, Զիենատանից, Հեղիաստանից ու նրանց հորին և

<sup>1</sup> Шахров Н. И. Шелководство и шелковая промышленность в Турции, Тифлис, 1907, ч. I, стр. 285.

<sup>2</sup> «Բրուզանգին», 12. 69. 1906.

<sup>3</sup> Шахров Н. И., указ. проказ., стр. 240.

նվրոպական երկրներից Հայո նրա արտադրանքը զգալի տեղ  
ուներ միջազգային շուկայում, նա առաջ էր անցել Ռուսաստա-  
նից և բալկանյան երկրներից: Այսպես, նույն վերջին, երրորդ  
խմբի երկրներում 1905 թ. արտադրվել էր 18371 տոննա թարմ  
խոզակ (կոկոն) և 2624 տոննա կիսաֆարրիկատ, այս ընդհա-  
նուր թվերի մեջ կայսրության մասը Համապատասխանաբար  
կազմում էր 14 371 և 1281 տոննա: Արդյունաբերության այս  
ժեադավառում տեղի էր ունենում լուրջ տեխնիկական առաջ-  
ընթացք: Անշուշտ, Ն. Շավորջն այս ամենը ի նկատի առնելով  
է զգել, որ «Թուրքիայում մետաքսագործական արդյունաբե-  
րությունը պատճառում է ֆարրիկային արդյունաբերության այն  
թիվ թիվ կազմող բնադավառներին, որոնք իրենց մակարդակով  
հասնում են եվրոպականին»<sup>1</sup>.

Այսպիս կոչված թեթև արդյունաբերության բոլոր ճյուղերին  
զուղահեռ զարդառում էր նաև լեռնահանքային արդյունաբերու-  
թյունը: Այս բնադավառը, ի տարրերություն բանակին և պե-  
տությանը ձնթակա արդյունաբերական ձեռնարկությունների,  
սկզբնական շրջանում պատկանելիս է եղել առանձին անհատ-  
ների: Պետական առանձնաշնորհումներով Պախըր Մատենից  
նապան Մատենին և մի շարք այլ վայրերի ընդհարքում զանվոր  
հարստությունների արդյունահանումն ու մշակումը հանձնա-  
քարժում էին տեղական մեծահարուստներին: Օրինակ՝ վերե-  
լում նշված Հանքավայրերի պղնձի ու արծաթի հանումը կա-  
տարգում էր Ակնի և Արարկիրի Հայ ամիրաների կապիտալով:

1830—1850 թթ. Կապան Մատենը նշանավոր քաղաք էր,  
որարգավաճ, արժաթի հանքերուն շնորհիվ, ուրկի մեծ քանա-  
կությամբ արծաթ կատարելի էր Ակնա Արքիարյան Հայ ամիրանե-  
րու տեսչությամբ և զեկավարությամբ<sup>2</sup>:

Պախըր Մատենի պղնձահանքերի հանքանյութը տեղափո-  
խում էին տեղական ձուլաբանները, որոնց կատարվում էր նախ-  
նական մշակումը, և ապա 12—14 օրվա հանքարհ անցնելով  
այն հասցվում էր Թուրքա՝ նորից զտվելու պետական ձուլաբա-  
նում: Սկզբնական շրջանում մաքուր պղնձի փոքր մասը վա-  
ճառվում էր տեղի պղնձագործներին, իսկ մեծ մասը արտա-

<sup>1</sup> «Թյուրքիա», 1908, № 29, էջ 518.

<sup>2</sup> Խարօս Ի. Ա., սկզբ. քոյս., стр. 239.

<sup>3</sup> Գանձ Հոյի, եարքերոց և անոր սովորությունը, էջ 653.

Հանգում: Մինչև ժամանակակից հանապարհները բացվելուց՝  
 ողջինակ տեղափոխում էին եղած միջոցներով, մասնավորապես  
 ուղղութեավ, որոնք շամիսներու դանդաղ քայլերով կհաջուեն  
 եղեր եւ. Պայխ և անկի նվրոպահ<sup>1</sup>: Մշակումը կատարվում էր  
 ամենապարզունակ ձևով. Առվարաններում սպառագործվում էր  
 մերձակու անտառների փայտը, որի հանակերպ հանքերին շրր-  
 շապատող լեռների անտառները 20—25 տարուց հասու խոպա-  
 ռչելացվեցին. 1870-ական թթ. հանքերը դարձան ահօգաազոր-  
 ժելի<sup>2</sup> վասելիքի պակասության, աշխատուժի հասունության,  
 ճանապարհների բացակարության և այլ պատճառներով. Սա-  
 կայն դարձակերին, իշխանությունների շանքերի շնորհիվ նրանք  
 նորից սկսեցին զործել՝ տալով տարեկան 8—10 հազար տոննա  
 պղինձ, Բայց մշակման ձևերը մեացին պարզունակ, որի պատ-  
 ճառով թուրքիայի մետաղագործությունը կորցնում էր «ար-  
 ձաթի» 32 % -ը, պղնձի՝ 12 % -ը և անազի՝ 40 % -ը: Եվ բանից  
 որ Փոքր Ասիայում արտադրվում էին մոտ 2 միլիոն կիլոգրամ  
 զանազան տեսակի մետաղներ, ապա տարեկան ընդհանուր կո-  
 րումուշ հավասար է 400 հազ. կգ. Ճետադի...<sup>3</sup>, նման վիճակից  
 դրուս գալում չէր սպառում նաև պետական մարմիններին ակտիվ  
 միջամտությունը: Հանախ այն նույնիսկ ունենում էր բացասա-  
 կան ազդեցությունն: Ակադեմիկոս Վ. Գորդոնակին գանձամ է, որ  
 այդ միջամտությունը տեղական աշխատողներին զրկում էր  
 ամեն տեսակ նախաձեռնություննից: Ուսումնասիրելով 1921 թ.  
 Ստամբուլում հրատարակված «Թուրքիայի հանքերը սամանյան  
 գարաշրջանում» փաստաթղթերի ժողովածուն, ևա եկել էր այն  
 եզրակացության, որ պետական պաշտոնյաներին շափազանց  
 լայն իրավունքներ էր տրվում միջամտելու տեղական, երրամն  
 առողջա, գործերին: Օրինակ, ողեքտերդարձ<sup>4</sup> ֆինանսական զե-  
 րատեսչության ղեկավարը, իրավունք ուներ ուրոշելու, — զրում  
 է Վ. Գորդոնակին, — իմաստ ունի<sup>5</sup> արդյոք մշակել հանքը և,  
 որպեսզի թուրքատրի, պահանջում էր հանքի նմուշներ, որոնք  
 ուղարկում էր Ստամբուլի Թոփհանեն՝ ուսումնասիրելու հա-  
 մարժ<sup>6</sup>: Գործի բալոր խնդիրները նրան վերաբերում էին և նա  
 ամեն առիթ սպառագործում էր իր սպաին որնէ բան կորզելու:

<sup>1</sup> Վան Հոյի, Խորքերց և անոր ուկեցնեցուց, էլ 859.

<sup>2</sup> ԱՀԱՅՄՓ. Փ. 898, օմ. 1, լ. 6, թ. 47—48.

<sup>3</sup> Гордеевский В. А., Издр. соч., т. III, стр. 232.

Համար, ունենալով խորամուխ էր լինում և մանրութների մեջ, որինակ, ինչպիսին են հանցի տեղափոխման պայմանները և արժեքը, իր տեղից մինչև մոտակա նազառանդիստը<sup>1</sup>, — գրում է Ն. Գորգշևսկին: Բանց հասնում էր երրեմն այնուեղ, որ նույնիսկ ոգուստական ճանապարհին մի ինչոր կամրջի շինարարությունը պարտադիր էր ներկայացնել կենտրոնական իշխանության որոշմանը<sup>2</sup>: Կապիտալիզմի զարգացման ժամանակաշրջանում նման խնամակալության պատճեռով երկրի արշակությանը հասցրած վեստները շափազանց մեծ էին: Դրանք վկայող փաստերը բազմաթիվ են ու բազմապիսի:

Օսմանյան կայսրությունը հանցերով հարուստ երկիր էր: Երկաթից, պղնձից, կապարից, ոսկուց ու արծաթից զատ երկրի ընդերքը պարունակում էր քրոմ, մագնեզիում, բորաք, սնդիկ, ժետմբ, քարածուխ, նամի, մարմար և այլն: Այս բոլորն արդեն հայտնի էին առաջին Համաշխարհային պատերազմի և այս ըլլալը<sup>3</sup>, Անգոլա, պետությունը որոշ փորձեր կատարեց կարդավորելու ընական հարստությունների հետախուզումը և շահագործվում մեծ մասամբ և... կընալին մեծապույն հասություններին մին ըլլալը<sup>4</sup>: Անշուշտ, պետությունը որոշ փորձեր կատարեց կարդավորելու ընական հարստությունների հետախուզումը և շահագործումը: Սկսած 1860-ական թթ. մի շալոք օրենքները ընդունվեցին Հոդի, նրա ընդերքում զանգող հարստությունների, անտառների և այլ բարիքների սպազմութման կարգի վերաբերյալ: Այդ օրենքները ձևականորեն պաշտպանում էին կայսրության պատակների իրավունքները և արտաքնապես ուղղված էին Հոգու կապիտալիստական տարրերի զարգացման: Ըստ արդ օրենքների Հոդի և ընդերքի մշակումը հանձնվում էր միայն թուրքականութիւններին: Այդ բանը պետք է արտահայտվեր զանազան ընկերությունների և միավորումների կանոնադրության և այլ փաստաթղթերի մեջ: Օրինակ, «Եկեղեց-ու Հայրին» նազագնացության բաժնետիրական ընկերության կանոնադրության երկրորդ կետում շատ որոշակիորեն առաջած է, որ բաժնետիրության պետք է լինեն անվանական և պատկանեն միայն թուրքականութիւնների... բացի օտարահպա-

1 Гердаевский В. А., Избр. соч., т. III, стр. 232.

2 «Вестник Европы», 1909, кн. 4, стр. 835.

3 Խանջյան, Ազնարճապրայն առմենյան պետություն, էջ 181:

տակ այն ալյուներից, որոնք մինչև ամռանանալը թուրքահպատակ էին: Կանոնագրության խստագույն պահանջներից մենքն այն էր, որ ուշիբենթ-ուլ Հայրինից ոչ մի բաժնետոմս, շափառ է անցնի ասարահպատակների ձեռքը<sup>1</sup>: Ստկայն իրականում այդ օրենքները շրջանցվում էին, Հենց իշխանության ներկայացուցիչների գիտությամբ, որոնք սեփական շահն ապահովելուց հետո այլ էին փակում ամեն ինչի վրա: Պաշտոնյաների զանցառումները շատ հաճախ կատարվում էին մեկ այլ օրենքի սղատագրմամբ: Այսպես, որինակ, մասնավոր հողատերն իրավականորեն համարվում էր նաև իր հողամասի ընդերքում եղած հարատությունների տերը: Այսուհետեւ, հողային որինքի կրնատ համակարգի 107 կետի համաձայն վակֆ և հասարակական սղատագրման ենթակա հողերի ընդերքի շահագործման իրավունքը տրվում էր այն անձնավորությունը, որը հայտնարենը էր Հանքը: Այդ անձնավորությունը միայն պարտավոր էր Հանքանութիւնի կամ նրա արքերի մեկ հինգերորդը Հանձնել պատությանը<sup>2</sup>: Միաժամանակ մացվել էր այսպիսի կարգ ըստ որի սեփականատերը կարող էր Հանքը շահագործման կում մշակման ձեռնարկություններ կառուցել միայն պետական գանձարկոյի հատուկ թույլտվությամբ, որը հետրավոր էր Համապատասխան վճար մուտքելուց հետո:

Սկսած Հատկապես 1880-ական թթ. հիշյալ օրենքների տրամադրած սղանցքերն օղատագործելով, Հողի սեփականատիրություն դարձնելով ընկերության կամ միավորաման ղեկավար, օտար կապիտալը ներթափանցում էր երկրի արդյունարերության մեջ: Գետությունը փորձում էր իր ֆինանսական գործերը կարգավորելու նպատակով օգտվել կապիտալի ներհռութից, բայց արդյունքի լէր հասնում: Մասնավորապես, կունցսիայի իրավունք ձեռք բերելու համար սահմանվել էր 50—200 լիրա վճար: Բացի դրանից, ամեն մի կոնցեսիոներ պարաւոր էր վճարել տարեկան 5-ական փարա<sup>3</sup> ամեն մի դյունում շահագործվող Հանքավայրերի հողատարածություններից և ընդհանուր հկամուտի 5 %-ը մուտել գանձարկոյ, որպես Հարկ<sup>4</sup>:

<sup>1</sup> ЦГВИА, ф. 401, оп. 1890, д. 3, л. 24—25.

<sup>2</sup> ЦГИАЛ, ф. 1405, оп. 77, д. 5876, л. 302.

<sup>3</sup> Արտյի մեկ հարյուրերորդ:

<sup>4</sup> АВПР, Новый турецкий стол, д. 3701, л. 19.

Իսկ եթէ Հանքանյութը տեղադրված էր զանգվածներով, այսինքն՝ հեշտ էր երա շահագործումը, այդ տոկոսը բարձրանում էր մինչև 16—20%-ի։ Ալդրան ցածր հարկադրումը չէր կարող արգելը հանդիսանալ ստար կապիտալի ներկայացուցիչներին ընդունելու իրենց գործունեության ոլորտը։ Սկզբնական շրջանում երանք ընկերություններին մասնակցում էին որպես հասարակ փայտահերեր, խորհրդականներ կամ համագործակիցներ։ XIX դարի վերջերին արգել երանք հանդիս էին զալիս որպես կոնցենտրացիոն գնկավարներ, ձեռնարկության տերեր և ազներներ, ձեռքում կննարունացնելով հիմնական փայտահերերի բոլոր իրավունքները։

Սակայն ստար կապիտալի մրցումը չկարողացավ կասեցնել արշեստների և արդյունաբերության զարգացումը։ Էնվեր Ջիա կարայի հաշվումներով մեր զարաւկվրին Թուրքիայում կային ավելի քան 1500 արդյունաբերական մեծ ու փոքր ձեռնարկություններ։ Դրանցից միայն 60-ը ունեին մամանակակից տեխնիկական սարքավորում։ Իսկ 1913 և 1915 թթ. արդյունաբերական հաշվառման ոչ լրիվ տվյալներով, որոնք ընդունվելում էին Կ. Պոլիսը և արևմտյան մի շարք արդյունաբերական կենտրոններ, թիւ թե շատ խոշոր ձեռնարկությունների թիվը կազմում էր ընդամենը 259<sup>1</sup>.

Այդպիսով, մեր ուսումնասիրության ժամանակահատվածում Օսմանյան կայսրություն առնոտուրը, արհեստները և արդյունաբերությունն ընդհանուր առմամբ զարգանում էին կապիտալիստական ուղինով։ Այդ զարգացման նշանարիս բնութագիրն իր ժթուրքական հանրապետության տնտեսական պատմությունը դրսում ավել է Հայաստի թուրքագետ-ռետեսագետ Յուլ Ռուզալինը, Շարդացած կապիտալիստական երկրներից Թուրքիայի անող կախվածությունը։ — դրև է նա, — Երա կիսապաղութային վիճակը, ֆեոդալիզմի կայունությունը, որը պահպանվում էր ստար կապիտալի և քայլարյուղ սուլթանական կառավարության կողմից, հանդիսացան երկրի գանդաղ զարգացման, Երա հետամնացության զլիավոր պատճանները։ Զնայած ապրան-

<sup>1</sup> Տե՛ս «Вестник финансов», 1906, № 23, стр. 405.

<sup>2</sup> Karai E. Z., Osmanlı tarihi, c. VIII, s. 455.

<sup>3</sup> Տե՛ս Новачев А. Д., Экономика Турции в период мировой войны, т. 51.

ժապրամական Հարաբերությունների աճին, սոցիալ-անտեսական առումով, Թուրքիայի էվոլյուցիան կարծեք թե կանդ առաջ-ատեղեցած պարմանեներում երկար ժամանակ երկրում տիրապետության կազմակերպմի ցածր ձևերը չեին կարողանում վերահել արտադրության ազելի զարգացած ձևերի<sup>1</sup>, Վերոհիշյալ ձևակերպումների հետ Համաձայնվելով Հանդերձ անհրաժեշտ է նշել, որ պատմականորեն ազելի ճիշտ կլիներ շնչառ դնել ենթակա գործուների վրա, պատշաճը մատուցելով նաև ոչ պակաս կարենրություն ունեցող արտաքին աղղեցությանը:

---

<sup>1</sup> Розанов Ю. Н., Экономическая история турецкой республики, М., 1959, стр. 10.

## ԶԱՐԳԱԾՄԱՆ ՀԵՏԱԿԱ ՈՒՂԻՆ

Օսմանյան կայսրությունում կապիտալիստական հարաբերությունների դարգացմանը զուգահեռ ձևավորվեցին նոր հասարակարգի երկու հիմնական գառակարգները՝ պրոլետարիատը և բուրժուազիան:

Դրանց սկզբնավորումը, ընդհանուր գծերով, նման էր դարգացած երկրների նույն դասակարգների գոյացման պրոցեսին: Այսուհեղ ևս հողագուրք և ընշաղուրք գյուղացիները, տնտեսապես քայլարգած արհեստավորներն ու մանր վաճառականները, մի խորով, զլիավագորապես մասրբուրժուական տարրերն էին բանվոր դասակարգի սեռը ազգյուրները: Բնականաբար, կայսրության բուրժուազիան ևս սերում էր տեղի հողատերերից ոչ կուլակներից, տակտրական բուրժուազիայից, ուազմաֆեռդալական պնտական ապարատի պաշտոնյաներից:

### ա. Խոր հասարակարգի դասակարգերի ձևակարման յուրահատկությունները

Նշված ընդհանրություններից ավելի բնորոշ էին այդ պրոցեսի առանձնահատկությունները և Թուրքիայի պայմաններից բխող լուգահատկությունները: Նախ, ինչպես նշում է Վ. Ի. Լենինը, «միջնադարի հզոր մեացորդները... խիստ կասեցնում են հասարակական դարգացումը և պրոլետարիատի անը»<sup>1</sup>: Այդ մեացորդների ազգեցության հետևանքով լափազանց դանդաղ էր ընթանում նշված երկու դասակարգերի ձևավորման պրոցեսը: Սրբեմն թվում էր, թե հասարակական առաջընթացը Թուրքիայում ընդհանրապես կանգ է տռիլ: Սակայն իրականությունն այն էր, որ երկրի խոշոր կենտրոններում և ծովագինյա-

<sup>1</sup> Անդա Վ. Տ., ծթ, 4, 22, էջ 188.

շրջաններում զարգացումն ընթանում էր արտգ. իսկ երկրի ներքին մասերում այն համարյատ անեղմարելի էր։ Հետևաբար, այստեղ ևս զարգացման լավագանց գանգադ տեհպերն ու զգացմի անհամաշափությունն սրբնական երևութիւններ էին և կազմում էին կայսրության ներքին կյանքի առաջնորդացի առանձնահատկություններից մեկը։

Երկրորդ, կարևոր առանձնահատկությունը՝ այդ երկու դասակարգերի բազմազդ լինելն էր։ Տվյալ դեպքում, ազգային պատկանելությամբ պարմանավորված էր նաև հասարակական ակտիվությունը կամ արտադրության մեջ կատարած նրանց դերը։ Հանրահարս է, որ թուրք, և ընդհանրապես, մաշնեղական տարրերը, սկզբնական շրջանում, համարյատ չէին մասնակցում բուրժուական կարգերի հաղթանակի համար մզզող պայքարին։ Այսպես, թուրք և մաշնեղական բանվորները, գտնվելով զարգացման լավագանց ցածր մակարդակի վրա, որպես կանոն, օդագործվում էին սև ու ծանր աշխատանքներում, իսկ նրանց այլազդի բործընկերները կատարում էին բարձրորակ աշխատանքներ։ Հետևաբար, արտապրոցական ուժների և հասարակական զարգացման մեջ վերջիններս հանդիս էին գալիս որպես առաջատարներ։

Բաղմազդ էր նաև Սոմանյան կայսրության բուրժուազիան։ Նրա շարքերում մենք ահենում ենք թուրքերի, արարեների, մաշնեղականություն ընդունած ուսավոնների, ավելի ուշ նաև աշխատացիների, քրքերի և մաշնեղական այլ ժողովուրդների ներկայացուցիչների։ Թուրժուազիայի մեծագույն մասը, սակայն, մինչև անցյալ դարի վերջը քրիստոնյա ժողովուրդների՝ Հույների, ուսավոնների, Հայերի, տեղաբնակ հայուսացուցիների (Հայուսիներիներ), ինչպես նաև Հրեաների ներկայացուցիչներն էին։ Էթնիկական և կրոնական տարրերությունները զգալի, երբեմն էլ վճռական, ազգեցություն ունեն կայսրության բուրժուազիայի աղդային խմբերի անտեսական ու քաղաքական դրության վրա։

Այսուհետո էլ բիում է երկրի հասարակական առաջընթացի երրորդ կարևոր առանձնահատկությունը։ մաշնեղական ժողովուրդների թե բուրժուազիան և թե բանվոր դասակարգը իրենց քաղաքական, սոցիալ-անտեսական և կուլտուրական զարգացման մակարդակով են էին մնացել կայսրության հպատակ այդավան ժողովուրդներից։

Նշված առանձնահատկություններին զերևս կանգրագառնար: Այժմ նշենք, որ դրանց առկայությունը բացարձում է կայսրության տարածքում բնակչող ժողովուրդների տնտեսական կացութաձևերի տարրերությամբ, հասարակական արտադրության մեջ ունեցած մասնակցությամբ և թուրք զավթիչների դարձր շարունակվող քաղաքականությամբ: Եինելով ֆեոդալ-խաչարածների ու քաջուր ցեղերի շահերի ներկայացուցիչ, թուրք վիեթնախավը շարունակեց զրադշել զլիսավորապես անասնապահությամբ և մասամբ՝ հողագործությամբ, արհեստներով ու առնարում:

Հասարակական արտադրության Ծիմնական ժանրությունը, որով պայմանավորված էր երկրի արտադրութական ուժերի զարգացումը, թուրք կառավարիչները թողեցին հպատակ ժողովուրդներին: Աշխատանքի նման բաժանումը գոյատևեց դարեր և տիրապետող ժողովրդի առաջադիմ ներկայացուցիչները տընտիւական բնագավառի զեկավարության անհրաժեշտությունը ինչ-որ շափով զգացին միայն թանգիմաթին հաջորդող շրջանում:

Օսմանյան կայսրության բուրժուազիայի պատմությանը նվիրված մենադրության<sup>1</sup> մեջ մենք եկել ենք այն եղրակացության, որ վերսում նկարագրած ժամանակաշրջանը կարելի է համարել բազմազդ օսմանյան բուրժուազիայի զարգացման առաջին փուլը:

Այդ փուլում կապիտալիստական հարաբերությունների զարգումն ընթացել է առանց թուրքերի մասնակցության: Ֆ. Էնդելսը 1853 թ. լույս տեսած «Թուրքական հարցը» խորագրով իր հոդվածում նշում է, որ թուրքերն իրենց նախնական քոլվորական վիճակում առնարին մասնակցում էին «քարուվանները թալանելով»: Այժմ, նոր նրանք դարձան քիչ ավելի քաղաքակիրթ, մասնակցությունը արտահայտվում է՝ հեարավոր կամացական ու հարկերի բռնի գանձման մեջ։ Այսուհետև, Ֆ. Էնդելսն ընդգծում է այն կարևոր պատմական իրողությունը, որ «Հույները, հայերը, սլավոնները և արևմտահվրոպացիները, որոնք հաստատվել են ծովային խոշոր նավահանգիստներում, իրենց ձեռքում են պահում ամբողջ առևտուրը...»<sup>2</sup>:

<sup>1</sup> Неджинян О. Г., Буржуазия Османской империи, Ереван, 1977.

<sup>2</sup> Маркс К. и Энгельс Ф., Соч., т. 9, стр. 25.

Յ ՀՀ' և Խոյք անցը:

Թակողիմաթից մինչև 1877—1878 թթ. ուսու-թուրքական պատերազմն ընկած ժամանակաշրջանում շարումակվում էր ռուս կապիտալի ներխուժումը երկիր, որի հետևանքով տեղական արդյունաբերությունը լուրջ զնաներ էր կրում։ Սակայն տեղական անկում տեղի ըստեցագ ու արտադրության և ոչ էր առևտորի բնագավառներում։ Առևտուրը զգալիորեն ընդլայնեց իր ազգեցության ոլորտը երկրի ներսում, և նոր թափ տացաւ միջնորդ առևտուրը։ Այն հետզհետեւ ընդգրկեց նաև մահմեդական ժողովուրդների ներկայացուցիչներին և, մասնավորապես, թուրքերին։

3. Մշըմթյանը ցույց է տալիս, որ անցյալ դարի 60-ական թթ. զգալիորեն աճեց արտասահմանի հետ կոտիր հաստատած վաճառականների թիվը։ Դրանցից ամեն մեկի հետ գործակցում էին, միշին հաշվով, երկուական տեղական վաճառականներ։ Դրանց բալորի գործունեությունը կենտրոնացած էր նավահանգիստներում և այլ մեծ բնակավայրերում՝ «մարդախիտ» և շահընծառ, կիսով լավ կանխավճարք և վատահելի համեմակատարք՝ թուրք, հայ, Հույն, Հրեա, բուլղար, կյուրենի, չեռքեզ, առևտուր։ Սա մահմեդական և թուրք տարրերի, թիւ թե շատ մասսայական առևտուրական գործունեության սկիզբը էր։ Իսկ երբ 1876 թ. ավարտվեց Բուլղարիայի ազատագրումը և առմանյան պետության տնտեսական կյանքում զգալիորեն պակասեց սլավոնական բուրժուազիայի ազգեցությունը, սկսնց հետզհետեւ անել նշված տարրերի մասնակցությունն առևտորի ու արդյունաբերության մեջ։ Դրան նպաստեց նաև կայսրության քաղաքների և գլուխատետնասական մի շարք շրջանների ներդրավումը զարգացող ապրանքադրամային փոխարարերությունների մեջ։ Հիշյալ շրջանը կարելի է համարել կայսրության բուրժուազիայի զարգացման երկրորդ փուլը, երբ ամրապնդվում են երա ոչ մահմեդական ու մահմեդական խմբերի դիրքերը և երանք ձգտում են ձեռք բերել նաև բաղաքական իրավունքներ։ Այդ փուլի արդյունք են Միհեմատ փաշայի սահմանադրության հռչակումը, առաջին պառզամենաի գործունեությունը և կառավարության կողմից աղդային սահմանադրությունների հաստատումը։

<sup>1</sup> Մ (քրեյլան) Յ. Գ., Թուրքահայոց հին զամանակաշրջաններում և զամանակական թուրքերը, էջ 45.

XXIX դարի 80-ական թթ. մինչև երիտրուրքի Հեղաշրջումը կայսրության բուրժուազիան ապրում է իր զարգացման երաշուղի վուլության մեջ ֆեոդալական կարգերը շարունակեցին մեալ տիրապետող, բուրժուազիան, այնուամենալիսիվ, կայսերացրեց իր վիճակը։ Ընդունվում են մասնավոր սեփականության իրավունքներն ընդլայնող մի շարք օրենքներ, ավարտվում է երկաթուղիների, կապի ու հաղորդակցության այլ միջոցների շինարարության առաջին շրջանը, շատ թե թիշ բարելավմամբ և երկրի ներքին գավառների տնտեսական կապերը, արագածում է երկրի ներքին շուկայի ստեղծման պրոցեսը։ Մեծանում է նոր ձևավորվող թուրք և ընդհանուրապես մահմեդական բուրժուազիյի տեսակարար կշիռը կայսրության տնտեսական կյանքում։ Հուլիս, հուլիս, հրեա բուրժուազիան որոշ բնագավառներում զիջում է իր դիրքերը։

Բազմազգ բուրժուազիայի զարգացման շուրջուղի վուլն ընդուրելու երիտրուրքի Հեղաշրջումից մինչև կայսրության անկումը տնտեղ ժամանակահատվածը։ Զնայած քանակական զգացի աճին, թուրք ազգային բուրժուազիան ի վիճակի լինդավ տրետեսության բանգավառում տիրապետող դիրք գրավել։ Սակայն զգալիորեն ուժեղացած նրա ազդեցությունը կառավարության և երկրի քաղաքականության վրա։ Օգոստոբենլով այդ հօրոր լժակն ու վերահաս պատերազմի պայմանները, նա սկսեց նեղել ալ-ազզի իր մրցակիցներին ու նախապատրաստեց, ապա և գործադրեց ֆիզիկական ոչնչացման միջոցներ և հատկապես ցեղասպանությունը, որն առաջինը նոր ՀՀ դարի համար Ստեղյան մինչև այդ, տնտեսության մեջ ձեռնարկված միջոցառումներն ու կենսագործվող տեղաշարժները շշփոխեցին ընդհանուր պատեհերը, և կայսրության տնտեսության մեջ առաջատար դերը, ինչպես նախկինում, պատկանում էր քրիստոնյան և հրեա բուրժուազիային։<sup>4</sup>

Որոշակի տեղաշարժ էր կատարվում նաև բանվոր գասակարգի շարքերում։ Բազմաթիվ Հետազոտողներ, տառնյակ տարիների նյութերն ուսումնասիրելով, արձանագրել են, որ ուրակալ բանվորների մեծագույն մասը կազմում էր այլազ-

<sup>4</sup> Խոջիկի Օ. Դ., Եվրոպակա Օսմանյան կայության, стр. 144—145.

զի բանվորությունը<sup>1</sup>: Արոշ Հեղինակներ իրերի ևման վիճակը փորձում են վերապրել առաջնական հանգամանքների, որ իր ձեռնորդկատերերը և տար կապիտալի ներկայացուցիչները լինելով բրիտանյաց, բարյացակամ վերաբերժումը էին ցուցաբերում գեղի բրիտանյաց բանվորները: Բայց իրականությունն այն է, որ թուրք ժողովրդի զարգացման ցածր մակարդակը նախապայման էր թուրք բանվորների անկազմակերպվածության և սահմարդական լինելուն: Թերենք մի քանի օրինակ: Ա. Ալոպյանի անը, տարբեր ազգութեաներից քաղելով, նկարագրում է Թուրքական պղնձածուլարանի աշխատանքը, որտեղ ձևված սալիկները շրուրին մեջ գցելով կուպողեցնէին և անոնց վրայի ավազը կմաքրէին, լուղով, աղով և նաշաղիրով: Այս աշխատանքը կկատարէին թուրքերը, իսկ անկե վերջ հայերն էին, որ պղնձածը կպորձածեին զանազան առարկաներու շինության համարը<sup>2</sup>:

Ամասիայի վերաբերյալ իր հուշագրության մեջ Գ. Սիմոնյանը թվարկելով բազմաթիվ արհեստներ սույց է առաջին, որ թուրքերը գլխավորապես զրազվում էին պայտառությամբ և ոտոզման համար տակառներով ջուր էին կրում<sup>3</sup>, որուալանդինս սրամիքին անցյալ դարի վերջի իր համարներից մեկում նշում էր, որ Բուրսայի մետաքսի զորքարաններում հիմնական օգործողները գլխավորապես հուզն կանայք ենք<sup>4</sup>: Սակայն ավելի քան առաք տարի անց, նույն թերթի արձանագրում էր, որ Բուրսայի ջուրհակուցիների և կեսոց հիմա իսլամ են, 70 %-ը եկած գյուղներից: Հայերը և հույները թողնում են այդ ծանր աշխատանքը և իրենց գիտելիքները օգտագործում են այլ տեղք<sup>5</sup>: Այսպիսի տեղաշարժերը ընորոշ են արդյունաբերության բոլոր քառականներում:

Կայսրության բանվոր դասակարգը սկսել էր ձևավորվել անցյալ դարի երկրորդ կեսին: Այդ բանի խթան հանդիսացավ հատկապես երկաթուղիների շինարարության համար բանվորական ուժի անընածեցածությունը: 1860—70-ական թթ. հիմ-

<sup>1</sup> Սպառազնություն Պ. 1962, առլ. 14, стр. 7.

<sup>2</sup> Ազգայան Ա., Պատմություն Եղիսաբետ Հայոց, էլ 1278,

<sup>3</sup> Էլա Սիմոնյան Գ. Յ., Հայածառայն Պահապահ Ամասի, էլ 626, 628,

<sup>4</sup> «Թյուրքանդին», 18/30. 04. 1888,

<sup>5</sup> Խոյն անդք, 13. 09. 1893:

նըսկիցին նաև մի շարք արդյունաբերական ձեռնարկություններ։  
Բայց մինչև այդ շահագործելով ուղղոր Հանքերում, առաջմական  
ձեռնարկություններում և պետական գործարաններում աշխա-  
տանքները կատարվում էին բանի ուժով հավաքագրված բանվոր-  
ների միջոցով։ Բանվոր զասակարգի սկզբնավորման շրջանի  
պայմաններն իրենց ժանր կնիքն էին որն է հավաքագրվածների  
վրա։ Խնամքու նշում է Վ. Գորդոնսկին, ամենուր որնակիներն  
առում էին հանքերը։ ... Ով կարող էր փողով աղատադրվում էր  
և վախճանում այդ սարսափելի գործարկցու։

Էրեգիին և Զոնգուլգաղի Հանքերի շահագործման սկզբնա-  
կան շրջանում ածխահատներ հավաքագրում էին նույնպես  
բանությամբ՝ շրջակա գյուղերից։ Հանքերի շահագործումը կար-  
գավորելու նպատակով 1863 թ. մշակվում է Հատուկ կանո-  
նագործություն, որի երրորդ գլուխը նվիրված էր բանվորների հա-  
վաքելու և աշխատեցնելու ձևերին ու միջոցներին։ Համաձայն  
այդ կանոնագրության, «Կաստամոնիի վիլայեթի 14 կազաների  
գյուղացիներին ստիպում էին աշխատել 15 օր արագում և 15 օր  
հանքում»<sup>1</sup>։ Նշվում էր նաև, որ բանվորներին չէին որամա-  
ցրում ապրելու նվազագույն պայմաններ։ Ստեղծված գրու-  
թյան հանեանքով, գրում է աշխատեան Հ. Ազնին, բանվորները  
տեղափոխվում էին մի անդից մյուսը և հնարավորություն չէին  
ունենում մեալու շեույն գործի մեջ և դառնալու մասնագետ  
բանվորները։ Անձնար ու պարտագիր աշխատանքների մասին  
նև գրել անգլիացի հանապարհորդները Համիլտոնները, որոնք  
1835—1836 թթ. այցնելել են Թուքատ, Արզնա Մատենի և Շապան  
Մատենի պղնձահանքերը։ Օգտագործելով իրենց իրավունքնե-  
րը, տեղական իշխանությունները, որպես անվարիա՝ սարա-  
պարհակ աշխատանք, գյուղացիներին ստիպում էին «պղինձը  
գյուղեցուղ փոխադրել, առանց որնէ վարձը ստանալու»<sup>2</sup>։ Բա-  
ցի այդ, նշում նև հեղինակները, «այն գյուղերը, ուր ածուխը  
չձուլարանի մեջ վառելու համար— Հ. Ի.» և աշխատանքը ձրի  
կհայթայթնեն, ընդհանրապես՝ զերծ նև պիտական տուրքերն,  
բայց այս պարհակությունը զիրենք զերծ չի կացուցաներ ար-

<sup>1</sup> Гордеевский В. А., Издр. соч., т. III, стр. 258.

<sup>2</sup> Ауні Խաչեյն. Bir yarım yüzemeleke oluz tarzı, ս. 47.

<sup>3</sup> Խոյն անգլ. էլ 80.

<sup>4</sup> Ազգույան Ա., Պատմություն նվազիոն Հայոց, էլ 1272.

տակարգ տուրքերին կամ փաշայի մը քմահան կեղեցումներին։ Բանվորների վիճակը ծանր էր նաև մասնավոր սեփականատերերի ձեռնարկություններում, արշեատանօցներում և մանր ու մասնավոր աշխատանքների կատարողների մաս ։ Չնայած նկարագրված պայմաններին, անցյալ դարի կեսերին գեռնաշկար դասակարգային միասնությունն է կազմակերպվածություն, կային միային միայն առանձին բանվորական խմբեր։ Կուրտհան Հիշենկը խոսում է, իրը դրանից առաջ գործություն ունեցած կազմակերպված բանվորական շարժման մասին, Հնեկիլով 1845 թ. հրատարակված ոստիկանական մի հրահանգի վրա։ Այդ հրահանգի մեջ խոսվում է բանվորների կազմակերպություններին ու ընկերությունները փակելու միջանք ապահանձնությունները կանխելու անհրաժեշտության մասին...» և պատճելու ույն որակյալ բանվորներին ու աշխատավորներին, որնք զարտերի կերպով պատրաստվում են թողնել իրենց բանվորական տեղերը։ Հակառակ այս մեջքերումին, Կ. Հիշենկը իր գրքում ցույց է տալիս, որ բանվորական ելույթներն սկսվել են միայն անցյալ դարի 60-ական թթ. հետո։ Նրա տվյալներով 1872—1906 թթ. երկրում տեղի են ունեցել քանիշինք գործողություններ։ Իսկ 1909—1914 թթ., այսինքն՝ հինգ տարում, նրանց թիվը հասել է 22-ի։ Անշուշտ, ապագրված ցուցակները չեն կարող լրիվ համարվել, բանի որ դրանք արտահայտում են մայրաքաղաքում և մի քանի խոշոր կենտրոններում տեղի ունեցած դեպքերը։ Մինչդեռ նման երկույթներ կային նաև պավառական կենտրոններում։ 1879 թ. ամռանը Արտարկիր այցելած Պ. Սրվանձտյանը գրում էր, որ այսուղ կար մանուսա գործող 1600 հոր (հաստոց), ոիմ Հռն եղած օրնիքը, — շարունակում է նա, — բանթողս (գործազուլ) ցրած էին, իրենց օրականը թղթադրամով վճարելու առթիվ։ Պորժատերերը՝ որ վաճառականներն են, մեծ հուզմունքի մեջ էին, գործողներ երդմամբ կապված էին իրարու մինչև իրենց գինը տրվեր...»<sup>1</sup>։ Արժեկորկած թղթադրամներով (կախմե) աշխատավարձ վճարել նշանակում էր ուղղակիորեն աշխատավարձ իշեցնելու Դրա հատ, ինչու

<sup>1</sup> Ազգային Ա., Պատմոթյուն նվազեկիր Հայոց, էջ 1272—1273.

<sup>2</sup> Fisek, Kurthan Türkiye'de kapitalizmin gelişmesi ve taşıtı 1911 Ankara, 1909, s. 43.

<sup>3</sup> Տե՛ս Խոյի աշխը, էջ 42 և 53.

<sup>4</sup> Արշակունյաց Պ., Երկիր, Հատ. 2, էջ 295.

տեսնում ենք, Համաձայն չէին Արարկիրի շուշակները։ Այդ նույն ժամանակ գործադրություններ արձանադրված էին Սերզիֆոնում, Թռպատում, Բուրսայում և այլուր։

Կայսրության բանվորների մեծագույն մասը աշխատում էր գիրքը ձեռնարկություններում։ Նրանք պայքարի էին դուրս գաղին Հանախի իրարից անջատ, առաջադրելով պլանավորակես առևտնական պահանջներ։ Միանությանը խանգարում էին քանիվորական առունենի խմբերի (որակյալ և ցածրորակ) աշխատավարձերի տարրերությունը, որը, ինչպես նշվեց, համընկանում էր նրանց գավանաների և աղքային պատկանելության հետ։ Ուրիշ խոսքով, թուրք և մահմեդական բանվորները ամենի քիչ էին ստանում, քան եվրոպացին, հույն, Հայ, Օրիա բանվորները։ Պրոլետարիատի շարքերի շաղգային անշատվածությունը, — գրում է Ռ. Կոռեկիններուն, — ցեխային սովորութեների և իուսումի դոգմաների ուժեղ ազդեցությունը բանվոր դասակարգի վրա բացասական անդրադարձան պրոլետարիատի Համախմբման, նրա գասակարգային գիտակցության ձևավորման և բանվորական շարժման զարգացման ընույթի վրա։<sup>1</sup>

Դրան անհրաժեշտ է ավելացնել, որ երկրում, փաստորեն մինչև կայսրության անկումը, չկար բանվորական օրենսդրություն։ Աշխատաժամերի և աշխատավարձի լավը կախված էր միայն ձեռնարկատերերի կամքից։ Արտադրության մեջ կանոնը և երիտաների մասեակցությունը շափազանց մեծ էր, հետեւապես, շահագործումը անողոք ու դաժան, որը ընորոշ է Հատկապես կապիտալիզմի զարգացման ցածր աստիճանի ժամանակաշրջանի Համար։ ԵՄշակի թղթակիցը, դեռևս XX դարի սկզբին գրում էր. «Վանում ամեն մի վարպետ իր կարողության համեմատ ունի 1—8 աշակերտ, բայց միայն առաջնակարգ մատի վրա համրգող վարպետներ կարող են պահել 8—9 աշակերտ։ Միշտ դառու վարպետները 4—5 հատ որ պահեն գեր շատ է»<sup>2</sup>. Ուշադրության արժանի է այն Հանգամանքը, որ այստեղ խոսքը ոչ թե բանվորների, այլ միայն աշակերտների մասին է, որոնց թերթի ամբողջությունը 10—20 տարեկան էին, իսկ գորգի, մետարսի, տեքստիլ և մի շարք այլ արտագրություննե-

<sup>1</sup> Кориненко Р. П., Рабочее движение в Турции 1918—1963 гг., М.—1965, стр. 10.

<sup>2</sup> «Մշակ», 03, II, 1907,

ըի մեջ հիմնական աշխատություն կանայք ու երեխաներն էին, որոնց մեջ նախապատվությունը արվում էր 8—7 տարեկան աղջիկներնեւ:

Նույն վիճակում էին գտնվում նաև Թուրքիայի հմբոպական մասի բանվոր-բանվորունիները:

Դիմիդրիադիի մետաքառթիլի մանարանի 160 բանվորների մեծ մասը 7—12 տարեկան երեխաներ էին, Աշխատանքային օրը տևում էր մինչև 16 ժամ և երանք օրական ստանում էին մեկական գուրուշ՝<sup>1</sup>

Մերաստիայից ստացված Հոգվածում ՔԲյուրակնը ևս հաստատում է կանանց ու երեխաների զայն շահագործման փաստը։ Քորդ արտադրող և կանոնավոր գործարանները, — զրում է հազինակը, — ամեն թաղերուն մեջ հատուկ աշխատանոցներ ունեն։ Դորժավորունիները 8—20 տարեկան աղջիկներ են... Մեկ տեղիյանի վրա մեկ վարպետ և 2—7 աշակերտունի կաշխատիչ<sup>2</sup>, Արշեստանոցներում չեն պահպանվում աշխատանքի ասդառնության կամ կենսական անհրաժեշտություն ունեցող սանիստարական անգամ ամենապարզ պայմանները։ Հետևանքը լինում էր այն, որ ոմեկ-երկու տարվան աշխատանոցներն ետքը, գործավորունին իր սեփական դուռատ, դեղնած, թուլացած գեմքով շուտ կճանացվի գործատանքներուն մերժ<sup>3</sup>, Անենորմալ աշխատանքային պայմանները չեն միայն, որ արդպիսի վիճակի էին հասցնում բանվորներին, հատկապես կանանց ու երեխաներին, Թուրքայի շերամագործների հաճախ կրկնվող գործադրություններին և իշխանություններին ներկայացվող պահանջները։ Այդ պահանջների մեջ նաև նշվում էին՝ ծննդի, կոպտությունների և գիշերային աշխատանքի իսպառ վերացման անհրաժեշտությունը։ Թերթում զետեղված փաստաթուղթն ավարտվում էր հետևյալ պահանջով, ԵԲարձրացում մեր օրավարձին օրենքով։ Այս կիսնդրենք մենք Պուրայի 5 հազարին ազիլի թուրք, հայ, հույն և ըրբանվորունիներս<sup>4</sup>, Փաստերը ցույց են տալին, որ դասակար-

<sup>1</sup> Veltikov Stefan, Sur le mouvement ouvrier et socialiste en Turquie après la révolution Jeune-turque de 1908. Etudes Balkaniques 1934, № 1, p. 40.

<sup>2</sup> «Բյուրակն», 1907, № 32, էջ 1848.

<sup>3</sup> «Բյուրականացն», 12. 09. 1909.

<sup>4</sup> Խովի տեղը, 5. 03. 1910.

դաշին միություններ, միասնական ելույթներ կազմակերպելու գործեր եղել են Համայս Սահման քանակը որակի լի վերաբերյալ, քանի որ դրան խանգարում էին Համարակական կարգը, երկրի օրենքները, իսլամն ու շարիաթը, դավանանքի ու ազգի տարրերությունները։ Իսկ զավարությամբ ստեղծված կազմակերպություններն ի հայտ գալուց հետո ստիկանության և գործի օգնությամբ ցրվում էին։ Օրինակ, «Սամանյան քանզորների ընկերությունը» կազմակերպվեց 1895 թ. և երկրի այդ տարին բանվորական կազմակերպությունը շախշախավեց արդին հաջորդ տարին։ Բանվոր գասակարգի քաղաքական ու իրավական ժամանակությունը միանգամայն համապատասխանում էր նրա նյութական ու տնտեսական վիճակը, Աշխատավարձը շահագանց ցածր էր, իսկ սննդամթերքի և կենսական անհրաժեշտության՝ հագուստեղենի, տեսական իրերի և այլ ապրանքների գները անընդհատ բարձրանում էին։ Այսպիս, համեմատած 1850—1860-ական թթ. հետ, գարասկղբին 75 կգ. մեկ պարկ ալյուրի զինը բարձրացել էր 65-ից 102 դուրսչի, ցորենինը՝ 10—12 դուրսչով, լորեզենինը՝ ավելի քան երկու անգամ, համարյա նույնքան ամեն էին մրգերի գները։ Աշխատավարդության կենսամակարդակի վրա լրջորեն ազգում էին խոշոր կենտրոնների, որտեղ զանգվածարար ապրում էին բանվորները։ և ներքին շրջանների միջն եղած սննդամթերքների գների տարրերությունները։ Նշված հանգամանքի լրջությունը կդառնա ավելի քան ակնառու, եթե նկատի առնենք, որ «Կոստանդնուպոլիսում կենտրոնացված էր գործարանների 53,7 % -ը, Զմյուռնիայում՝ 22,3 % -ը, իսկ Մեծաք 24 % -ը սփռված էր ողջ Թուրքիայով մեկն՝ Մամուլի տվյալների համաձայն կարգի օխան (1,2 կգ.) նրգնակարում արժեց 6 դուրսչ, իսկ Պուտում՝ 1 կգ-ը վաճառվում էր 20—25 դուրսչով նույն քաղաքներում գների տարրերությունները կազմում էին՝ լուղինը՝ 5—6 և 10—12 դուրսչ, պանրինը՝ 3—4 և 7—8 դուրսչ, ձվինը՝ հաց 3—4 և 10—12 փարա և այլն։

Դարասկղբին, համաձայն Ն. Տաղավարյանի տվյալների,

<sup>1</sup> Տե՛ս «Հարօն Ազն և Աֆրիկ», 1964, № 1, սր. 100.

<sup>2</sup> Կապարյան Հայկ, Արևմտահայքի ուղիղ-մետափոսիան և քաղաքականացումներ, Երևան, 218.

<sup>3</sup> Տե՛ս «Բարուղակին», 3.12.1895.

Սերաստիայում և գավառական մյուս կենարոններում տարրեցությունները շարունակում էին աճել, օրինակ, տավարի մաս օխան գավառներում արժեր մոտ 1,5 դուրսէ, Պոլսում՝ 5—8 դուրսէ, ոչիարինը՝ Համապատասխանաբար 2—2,5 և 6—12 դուրսէ<sup>1</sup>, 1890-ական թթ. կենարին սննդամթերքների միջին գները ըստ Դ. Պուտյատայի ունեին Հետևյալ պատկերը. Հացն արժեր օխան 2—3 դուրսէ, ալյուրը՝ 2,5, կարտոֆիլը՝ 2—3, բրինձը՝ մոտ 4, շաքարը՝ 6—7, հավը՝ 3—4,5, կաթի 3 լիտրը՝ 3,5—4,5, ծիսախոտի օխան՝ 35—40 դուրսէ և այլն.

Համեմատենով նշված թվերը և աշխատավարձի ցուցանիշները, հեշտությամբ կարելի է համոզիլ վերըսում բերված Էղցրակացության մեջ. Ամենաբարձր աշխատավարձ ստանում էին Հանքափոր և ձուլող բանվորները՝ օրական 18—20 դուրսէ, Կարպետ գորգագործները, բուկակները, Հակիչները և կառավարիչները ստանում էին ըստ շրջանների 5—12 դուրսէ: Կանանց մեջ բարձր վարձ էր տրվում նոր մասնավիճակություններ յուրացրած վարպետներին: Այսպիս, Բուրսայում, միկրոսկոպի օգնությամբ բոժոժի կունուների սրակը սահմանող աշխատավայրություններին վճարում էին 10—18 դուրսէ<sup>2</sup>, մինչդեռ, գորգագործ կանայք և բուկակությունները ստանում էին 3—8 դուրսէ: Գոյություն ունեցող որոշ տարբերություններ կապված էին առանձին շրջանների, ինչպես նաև տվյալ աշխատանքի արդյունքների պահանջմանը, արհեստների կարևորության և աշխատումի առաջարկի հետ: Նույն Դ. Պուտյատայի տվյալներով նարբերդում Հյուսնը օրական ստանում էր 8—20 դուրսէ, մետարաթելի արհեստանոցների բանվորները՝ 12—25, բարտաշը՝ 10—20, գյուղատնտեսության մեջ վարձու բանվորը՝ 3—5 դուրսէ<sup>3</sup>: Իսկ Ազգանայում, 1880-ական թթ. Հացիումը օրական վաստակում էր 3,5—6 դուրսէ, փականավորձը՝ 2—5, աղյուսագորձը՝ 10—12, գյուղատնտեսական բանվորը՝ 4—6, խանութի վաճառողը՝ 1—2,5 դուրսէ և այլն: Հետաքրքրական այն է, որ միջին աշխատավարձի ցածր մակարդակը երկրում

<sup>1</sup> Տորտ. Ֆազավայրամ Ա., Երկրագործության, մետալու և հանքագործության, էջ 8.

<sup>2</sup> Պուտյա Դ. Վ., Զանուկ ո Մալոյ Ազնի..., ստ. 137—138.

<sup>3</sup> ՏԱՌ «Եղին Փանոս», 1901, № 35, ստ. 373.

<sup>4</sup> ՏԱՌ Պուտյա Դ. Վ., Զանուկ ո Մալոյ Ազնի..., էջ 106.

<sup>5</sup> ՏԱՌ Խոյե ո եղը:

ազգում էր գրասենյակային աշխատազների (օրական 5—18 դուրսչ) և նույնիսկ նոր մասնագիտությունների ներկայացուցիչների (մեխանիկը՝ 7—10 դուրսչ) վարձատրության վրա։ Իսկ աշխատանքների մասսայական, տարածված ձևերի ոլորտում զրադպած բանվորների օրական միջին աշխատավարձը հավասար էր 2—4 և ամենացածքը՝ 1,5—2 դուրսչի։

Բանվոր դասակարգի տեստեսական ու քաղաքական վիճակը Թուրքիայի ռազմաֆինանսական ռեժիմի և իսլամի հզոր աղղեցության պայմաններում նրան դարձրել էր համեմատարար ազիլի պասսիվ, քան այլ երկրներում։ Նույնիսկ երիտթուրքերի շարժումը և նրանց հաղթանակը բանվորներին ակտիվացնելու դորժին քիչ նպաստեցին։

Վ. Խ. Լենինը բնութագրելով մեր դարասկզբի պորտուգալական և թուրքական հեղափոխությունները, գտնում էր, որ նրանցից ոչ մեղք ժողովրդական համարել չի կարելի, քանի որ ժողովրդի «Հակայական մեծամասնությունը, ինքնուրույն, իրենց սեփական տեստեսական ու քաղաքական պահանջներով» հանդիս չի գալիք։ Վ. Խ. Լենինի պինակիցներից Բ. Կեռույանցը արդ դեպքերին նվիրված հատուկ հոգվածում ևս ընդգծում էր ժողովրդական զանգվածների ակտիվության բացակայությունը երիտթուրքերի հեղափոխության տարիներին։ Պատճառն այն է, զբում էր Բ. Կեռույանը, որ Թուրքիայում «կապիտալիզմը զիս նոր է բացում իր առաջին արահետները...։ Պետականեկարգը տիպիկ ասիսական բոնապետություն է...»։ Այս ամենի համանագով ժողովրդական լայն մասսաները ոչ մի լուրջ պահանջ չեն առաջադրում։ Բ. Կեռույանցը գտնում էր, որ կատարված տեղաշարժները կխորացնեն դասակարգային հակասությունները, ազիլի որոշակի կդարձնեն պայքարի նպատակը։ Նվազ այն ժամանակ տազգի ոմիկանությունը՝ կփոխարինվի զասակարգային պայքարությունը, կկրկնվի նվրոպարին և մեզ՝ ուստասանցիներիս, լավ ժանոթ պատկերը։ Ընդհանուր առմամբ օրինալավի ու կյանքին մոտ այս կանխատեսումը, զգացրախտարար, իրականացագ շատ քիչ լափերով՝ հենց Թուր-

1 ՏԵՇ «Մուրա», 1889, Խ 9, էջ 27։

2 Անդր. Վ. Խ., ծիժ, և. 22, էջ 39։

3 Կեռույանց Բողոք, Շատր. երկեր, էջ 542։

4 Խոյս տեղը, էջ 543։

թիայի պարմանենքրի, արդին նշված տոանձնահատկությունների Հետևանքով: Այսուամենայինը, երկրի բաղաքական կյանքի վրա երկութուրքերի Հեղափոխության ազդեցությունը որոշակիորեն գրական էր: Ֆուադ Թյոթինի տվյալներով, մինչև Համաշխարհային պատերազմը Թուրքիայում կազմակերպվեցին մոտ երկու տասնյակ ինքնուրույն կուսակցություններ ու կազմակերպություններ իրենց բաժանմունքներով և երիտրուրքերին Հատողականեր: Բայց դրանք բոլորն էլ վերին խավերի շահերը ներկայացնող և այդ խավերի պայքարի արդյունքը հանդիսացող միավորումներ էին: Համաձայն Թյոթինի գնահատականի, դրանք որպես կանոն ձգում էին վերականգնել Սամանյան կայությունը<sup>1</sup>:

Սահմանադրական միապետության կողմնակիցներ էին ոչ միայն թուրքական ազգային կուսակցություններն ու կազմակերպությունները, այլն այլազդի մի շարք միություններ:

Սակայն անհրաժեշտ է արձանագրել, որ բանվորական, թեկուղն թուրք, շարժումները հոգ պատրաստեցին դասակարգային, առաջին հերթին, արհմիութենական կազմակերպությունների ձևավորման համար:

Նորաստեղծ բանվորական որոշ արհմիություններ հաջողությամբ զեկավարում էին անող դարձադուլային շտրժումը: Դրանցից էին ծիսախոտագործների միությունը, որն ուներ շահանմունք՝ երկուառ Սալոնիկում, մեկական Գեղգելիում և Կուկսասում: Այդ արհմիության շարքերում կային մոտ 3200 անդամներ, որոնցից 2000-ը՝ Հռեա, ամենի բան 500-ը՝ Հույն, մոտ 400-ը՝ Թուրք և ավելի բան 200-ը՝ բռլղար էին<sup>2</sup>:

Բանվորական շարժման հիմնական կենտրոնը մինչև կայսրության անկումը Թուրքիայի հվաքական մասն էր: Այն զեկավարում էին գլխավորապես Պ. Բլագունի հիմնած բուլղարական ձախ սոցիալ-դեմոկրատական կուսակցության անդամներն: Ռուսներ, Վ. Գլավինովը և ուրիշներ:

«Այն ժամանակ, — զբում է Ս. Վելիկովը, — երբ Սալոնիկում, Սկոպյեում, Վելեսում, Ալբանապլատամ և Մակեդո-

1 ՏՃ՝ Tökin F. H., Türkiye'de siyasi partiler ve siyasi düşüncelerin gelişmesi, 1893—1965, Ist. 1965, ss. 31—52.

2 Խելք տեղը, էլ 42:

3 ՏՃ՝ Վելիկով Ս., Եզլ. աշխ., էլ 31,

Նիայի ու Թրակիայի մշտա քաղաքներում առաջնակարգ դեր էին խաղում բուլղար ձախ սոցիալիստները, Կ. Պոլսի, Զմուռնիայի և Թուրքիայի այլ քաղաքների բանվորական շարժումը զիլավորում էր թուրքերի, հույների, Հայերի և բուլղարների միացյալ կազմակերպությունը։ Հեղինակի տվյալներով՝ այդ կազմակերպության դիկավարության 11 անդամից չորսը հույն էր, երկուսը՝ թուրք, մյուս երկուսը՝ Հայ, երկուսը՝ բուլղար և մեկը հրեա<sup>1</sup>. Բանվորական ու դեմոկրատական շարժման ինտերնացիոնալ ընույթի պերճախոս Փատերն են կազմակերպությունների սահմանային զուգահեռ թերթերի և այլ պարբերականների հրատարակումը։ Բուրժուական կուսակցությունների ու միությունների օրգանների և նրանց տպաքանակի ավելացմանը Համբարձաց վերականգնվեց շատ Հայկական, Հունական, արարական պարբերականների հրատարակությունը։ միզմիրում, — զրում է Վ. Շպիլկովան, — թուրքերն լեզվով և կանց հրատարակվել առաջին սոցիալիստական ուրբագը («Ենրատ») թերթը..., Սալոնիկում՝ ուրբագը սահմանադրության ձախ սոցիալ-դեմոկրատների օրգանը և «Միություն» թերթը միավորվեցին և սկսեց հրատարակվել «Նարուդա» վոլյա լրագիրը... Իզմիրում լույս տեսավ «Թյուրու» («Գյուղացի») թերթը, որը պատշաճան բնակիչներին բաժնանում էին ձրիչ<sup>2</sup>:

Կարևոր է նշել Հայ սոցիալիստների դերը Սամանյան կայսրության բանվորական շարժման մեջ։ Այն զգալի է նշել, մասնավորապես, երիտթուրքերի հեղաշրջումից հետո, ուրդենք 70-ական, թվականներից, — զրում է Վ. Ավետիսյանը, — Հայկական պարբերական մամուլում («Մշակ», «Մեղու» Հայաստանից, «Փորձ», «Արձագանք», «Արևելյան» մամուլու և այլն) երեզան են գալիս եվրոպական սոցիալիստական շարժումները լուսարանող առանձին հոգմածները։ Պարբերականներում, որուց զգալի մասը լույս էր տեսնում կայսրության տարածքում, մեկնարանվել են Առաջին ինտերնացիոնալի և Փարիզյան կոմունայի գործունեությունը, բանվորական Հարցը և այն Հեղինակը նշել է արևմտահայ թերթերի և Հատկապես սերեկլյան մամուլից ու նրա խմբագիր Մ. Մամուրյանի կատարած աշ-

<sup>1</sup> Անդրեաս Ս., Եղի., աշխ., էջ 39.

<sup>2</sup> Шпилькова В. Н., Младотурецкая революция 1908—1909 гг., М., 1977, стр. 170.

իստանքը հանուն սոցիալիստական դաշտարձների պրոպագնագմբեն<sup>1</sup>.

Մատերիալիստ-աթեիստ Դալուստ Կոստանդյանի՝ 1878 թ. Ձմյունիայում լույս տեսած «Մեթոդի վրա նշանավոր աշխատության էջերում ԵԽԼ դարի պարծանքներից շարքում Հիշատակված են կ. Մարքսը և նրա «Կապիտալը», նման կարգի կարևորագույն փաստերից մեկն է «Կոմունիստական կուսակցության մակեֆեստիք թարգմանությունը Հայերն» 1887 թ. Այդ թարգմանության տպագրության փորձերին Ֆ. Էնգելսը անդրադարձել է «Մակեֆեստիք 1888 թ. անգլերն և 1890 թ. գերմաներն Հրատարակությունների առաջարաններում»։ Վերջինիս մեջ նա գրել էր. «Որպես կուրյուն, Հիշատակեմ նաև, որ 1887 թ. Կոստանդնուպոլսի մի Հրատարակչի առաջարկված էր «Մակեֆեստիք Հայերն թարգմանության ձեռագիրը, սակայն այդ բարի մարդը քաջություն լի ունեցել տպագրելու Մարքսի անունը կրող գործը, և ավելի հարմար էր Համարել, որ թարգմանիչն իրեն անվանի այդ գործի հեղինակը, որին սակայն թարգմանիցը լի համաձայնվելու»<sup>2</sup>.

Մարքսիստական գաղափարների տարածման գործում, այլ կուսակցությունների կողքին, անցյալ դարի վերջին զայի աշխատանք են կատարել Հնչակյանները։ Միայն 1893 թ. նրանք Աթենքում Հրատարակել են կ. Մարքսի «Վարձու աշխատանք և կապիտալ» երկի մի մասը, Պ. Լաֆարդի և Ֆ. Լասաւի գործերը, «1894 թ. Հունիսից, — գրում է այսուհետև Վ. Ավետիսյանը, — նրանք Աթենքում սկսեցին Հրատարակել «Գաղափար» հեռամայա Հանդեսը, որը անվանեցին «Հանդես գիտական սոցիալիզմին»։ Այդ Հանդեսի էջերում էլ առաջին անգամ Հայերն իրենց տեղական կազմակերպությունները Հիմնեցին Արևմտյան Հայաստանի մի շարք գավառներում», «1910 թ. կ. Պոլսում, — գրում է Մ. Արգումանյանը, — Հնչակյանները ստեղծեցին իրենց տաղիալ-դեմոկրատական ուսանողների միություն»<sup>3</sup>.

<sup>1</sup> Տե՛ս Ավետիսյան Վ. Ա., Հոյ Հոսորակական ժորի դարպացմոն Ժարշութեալիքն գույք սկզբանքորությունը, ծր., 1876, էջ 222.

<sup>2</sup> Մարքս Կ. և Էնգելս Ֆ., Կոմունիստական կուսակցության մակեֆեստիք, ծր., 1882, էջ 22.

<sup>3</sup> Ավետիսյան Վ. Ա., Եղվ. աշխատ., էջ 223.

նըս, որն իր ուժերի չափով և իր ձևով ծավալում էր սոցիալիզմի գաղափարների արտապատճեններն ։ Այդ միության հրատարակած «Կայսերական Շաբաթուր» (1911—14 թթ.) շոշափում էր սոցիալիստական մտքի ու շարժման մի շարք կարևորագույն հարցերը Ընդ որում, միությունը այս կամ այն չափով կրում էր Անգրկովկասի սոցիալ-դեմոկրատիայի ազգեցությունը<sup>1</sup>:

Ազգայինով, Օսմանյան կայսրության տարածքում և նոր Հարանուն երկրներում (մասնավորապես Բալկաններում և Կովկասում) գիտական կոմունիզմի գաղափարները պրոպագանիզմում էին գլուխովորապես բռնկար, հուշն, հրեա և Հայ սոցիալիստների, ինչպես նաև Հայ առաջադիմ գործիչների կողմից:

Հայ հեղափոխականներն զգայի ակտիվաթյունը էին ցուցաբերում սոցիալիստների պրակտիկ գործունեության տարրեր ու ուժուներում։ Երբ ուսուական 1905—1907 թթ. հեղափոխության ազգեցության հետևանքով ընդլայնվեցին գործադրությունն շարժումները, Հայ բանվորներն ու հեղափոխական գործիչներն ընթանում էին դրանց առաջին շարքերում։ Նրանք հաճախ կայսրության տարածքում գործող սոցիալիստական, արևմիութենական և այլ գեղութառատական կազմակերպություններին են ներկայացրել միջազգային համագույշությունը և մասնավորապես Նրկորոդ ինտերնացիոնալի կոնգրեսներում։ Որպես օրինակ, բերենց Ետուագործի՝ 7-րդ կոնգրեսին ազգային սեկցիաների մասնակցելու հարցը, Կոնգրեսի աշխատանքներն սկսվելուց առաջ՝ 1907 թ. օգոստոսին, միջազգային սոցիալիստական բյուրոն որոշում է ըստ կուսակցությունների նշանակության և բանվորական շարժման մակարդակի ազգային պատմիքակություններին կամ սեկցիաներին տրամադրել վճռական ձայների որոշակի բանակը։ Որոշված տասը բաժանումների մեջ «Թուրքիայի ներկայացուցիչներին տրվել էր հինգ ձայն»<sup>2</sup>, կամ նրանք ընդորեկվն էին ութերորդ խմբի մեջ, Վ. Ի. Լենինի՝ «Միջազգային սոցիալիստական բյուրոյի նիստը» հատուկ հոգվածում է այն փաստը, որ կոնգրեսի աշխատանքների ընթացքում և նրանից հետո էլ թուրքական սեկցիան դնում չեր ձևավորվելի երեխ այդ պատճառով էր, որ բյուրոյի նիստը (1908 թ. հոկտեմ-

<sup>1</sup> Ազգայնայան Մ. Գ., Բոլցինների գործունեությունը և ռազմացիոն շարժումները Հայուսութան 1907—1917 թթ., Եր., 1959, էջ 228—229.

<sup>2</sup> «История Второго Интернационала», т. II, М., 1966, стр. 201.

բերին), ինչպես զրում է Վ. Ի. Ղեկինը, ընդունեց ևնան թուրքական սեկցիայի Հայկական ենթասեկցիան ավելի շուտ, քան այդ թուրքական սեկցիայի կազմվելը, Թուրքիայի Հայ սոցիալիստները որպես թե հրաժարվում են առաջանձն թուրքերին, — ընդ որում այդ ենթասեկցիային տրվեց և ձայն: Ցանկալի կլինիկ, որ Թուրքիայում Հայկական սոցիալիզմի դրությունն իմացող մեր ընկերները՝ Հայ սոցիալ-դեմոկրատներն, իրենց կարծիքը Հայուններն այդ հարցի առթիվ՝, Արձանագրված իրողությունը պուլց է տալիս, որ մեր դարասակզրին միջազգային կազմակերպություններում Հայ սոցիալիստներն արդեն ունեին որոշ հեղինակություն:

Մրիտթուրքերի հեղաշրջումից հետո Հավաքված ՄԵՀՀիսի կազմում Հայ տասներկու դիպուտատներից հինգը և երեք բալկանյան սոցիալիստներ կազմում էին թուրքական երկրորդ պառլամենտի տուցիալիստական խումբը: Նշելով այդ սոցիալիստների անունները, Ա. Նովիչինը զրում է. «Թուրք պատմարան Թումայան հնթադրում է, որ սոցիալիստ դիպուտատների մեջ կային նաև թուրքեր և այլ մասմեղականներ, բայց անունները չի նշումնեն: Այդուհանդեմ, սոցիալիստների այդ փոքր խումբը ակտիվություն մասնակցել է ՄԵՀՀիսում քննարկվող բռնորդության հային նաև թուրքերին: Պ. Վլախովը խիստ քննադատել է բանվորական շարժման գիմ և ուղղված օրինագիրը՝ գործադրությունների, ընկերությունների, տթափառաշրջիկների և կասկածնելի անձնացն մասին: Հ. Պոյաճյանը խոսելով բանվորական շարժումների հանդեպ պետության ձեռք առած բոլի միջոցների մասին, ընդգծել է, որ նա Սալոնիկում ականատես է եղել, թե ինչպես թուրք, Հայ, Հույն, պուլկար և նույնիսկ քուրդ գործազորներ իրարու հետ եղբայրաբար ձեռք ձեռքի տված գործազարական միություն մը կազմած են: Սակայն կառավարությունը լուժից զայն և արգելեց անոր կազմությունը Թավալայի մեջ ալ արգելվեցալ գործամարական միությունը...»: Այնուհետև նա Հակառակությունը է տեսնում երկիրը կառավարողների բանվորական և ազգային քաղաքականության միջն և Մեկ կողմեն, — ասում է նա, — սամանյան զանազան տարրերու միությունը կուզնեց (ակնարկ սամանիզմի քաղաքականության վերաբերյալ — Հ. Ի.).

<sup>1</sup> Անդ Վ. Ի., Ելք, և. 17, էջ 225, ընդգծումը մեր է:

<sup>2</sup> «Վաշինգտոն ԱԴՄ», 1962, առ. 14, սր. 16.

և սակայն, մյուս կողմէն կարգիլենք այդ միության համար ահենց ունեցած ձեռնարկները<sup>1</sup>:

Դեպուտատ սոցիալիստները Մեջլիսում քննարկման դրեցին տաշխատանքի պահպանության և ապահովության վերաբերյալ որևէ ընթացակարգը, Սոցիալիստները պահանջում էին սահմանել որոշակի աշխատանքային օր, արգելել մանուկների և ծերերի աշխատանքը, կանանց թուլլ չտալ աշխատանքուն բանց առողջությանը վնասող բնագավառներում, խոշոր ձեռնարկություններում ունենալ առողջապահական կետեր, սահմանել աշխատավարձի մինիմում և ընդունել աշխատանքային օրենսդրություն<sup>2</sup>:

Առանձնահատուկ կրթուությամբ էին քննարկվում Հողային և աղբային հարցերը, Թուրքական կարգերը, ինչպես տեսանք, Հաւակտու սրնը էին փոխհարաբերությունները զուղացիության և հողատերերին, ինչպես նաև Հպատակ ժողովուրդների ու աղքարի միջև Սրբութուրքերը սկզբունքորդներին դեմ էին լուսելու աղբային հարցը և փոխելու ֆեոդալական հոգատիրության կարգը: Դա հասկանալի էր և միանգամայն սպասելի: Սրբութուրքերը պառկաննետական ընտրությունները տարան այնպիս, որ ապահովեցին ռազմաֆեոդալական վերնախավին ներկայացուցիչների մնամամանությունը: Ըստ Մեջլիսի գնուպուտատվակ, Փափազյանի տվյալների՝ ոպատպամավորների 35 % -ը կրոնավորներ էին..., 30 % -ը՝ կալվածատերներ, 20 % -ը՝ համիզյան պաշտոնյաներ, 10 % -ը՝ ազատ արքեստի և 5 % -ը՝ անորոշ մասնագիտության անձինքը<sup>3</sup>:

Ստեղծված մթնուրուում լափազանց սուր վեճեր էին ծագում կենսական անհրաժեշտություն ներկայացնող հարցեր քննարկելիությամբ:

Բանվորների և գյուղացիների ելույթներից առավելապես աղբային-ազատապրական հետազոտեական ժամանակությունների առկայությանն էր անհանգուտացնում թուրքական վերնախավին Սրբութուրքերի շովինիստական բաղաքականությունը նրանցից

<sup>1</sup> «Ազատամորտ», 04.05.1911.

<sup>2</sup> ՏՎՇ Աննա Գ. Յ., Турция в период правления младотурок, М., 1972, стр. 176—177.

<sup>3</sup> Համբարյան Ա. Ա., Երիտրուրքերի աղբային ու հողային բազարականությունը, էջ 14.

Հեռացրել էր երեկով զաշնակիցներին՝ մակեդոնացի, արար, հայ և ուրիշ ազգերի բուրժուական և մահրբուրժուական կուսակցություններին։ Այսուամենայնիվ, Հեղաշրջումից հետո ստեղծված իրադրությունը և պալատը ռեժիմից հետո եկած հարաբերական աղատությունը հույս էին ներշնչել տարրեր ողոգովորդերի շահը և երկար ու համար քանիքեր էին թափում լուսներու թուրքիայի կյանքում ժառացած տնտեսական, սոցիալական ու քաղաքական խնդիրները։ Թժրախտաբար, սոցիալիստական ու բանվորական շարժումները լափազանց թույլ էին և դրանք որևէ աղեցություն չունեին հիշյալ խնդիրների լուծման վրա։ Զիար միասնությունը բոլոր այդ շարժումների միջն, ինչպես նաև՝ առանձին միավորումների ու կազմակերպությունների ներսում։

Տեղին է հիշել Ա. Բերելի խորհուրդը 1893 թ. իրեն ներկայացած հայ ուսանողներին. «Հայ ժողովոյի բախուր անքածանելիորեն կապված է համայն թուրքիայի ժողովուրդների բախուրի հետ։ Միապետական ռեժիմի պայմանները միանման առակալի են ողջ թուրքիայի համար...»<sup>1</sup> Ենթելով այս անօդինելի փառքից, Ա. Բերելը ժողովուրդների աղատությունը կապում էր սուլթանական բռնապետության տապալման հետ։ Տեսականորեն նշորիտ այս եղբաշանելումը, դժբախտաբար, շէր կարող իրականանալ Օսմանյան կայսրության պայմաններում։ Հեղափոխական տարրերի միասնության ձգումը որոշակիորեն դրսելուցն ըստորոշ բոլոր բուրժուական և մահրբուրժուական կուսակցությունների ծրագրերում ու գործունեության մնջ Նրանցից շատերը երիտրուրժների հեղաշրջումից հետո հրաժարվեցին թուրքիայից անջատվելու պահանջի՛ց։ Նման հայտարարություններ արվեցին կամ նույնիսկ ծրագրային գրափոխություններ մացվեցին ոչ միայն հայ, այն արար քաղաքական կուսակցությունների գործունեության մնջ, նույնիսկ Ցանկ Սանդանսկու զիյավորության մակեդոնական ժամանակակիցությունների ժողովունեության մնջ, որունի Սամանյան կայսրության ամբողջականությանը, կամ սրբահանուր հայրենիքին գաղափարին։ Միաժամանակ, նրանք

<sup>1</sup> «Երեկի ձայնը», 1907, № 25, էջ 7.

<sup>2</sup> ՖՀԿ Համբարյան Ա. Ա., Երիտրուրժների աղքային ու Հոգային քաղաքականությունը, էջ 105—126.

պահանջում էին ուրիշ դեմոկրատիա ամբողջ կայսրության համար, երկրի կառավարումը իրացնել դեմոկրատական-սահմանադրական հիմունքներով, ազգային ու տեղական բռնոր մարմինների ընտրություններ՝ ընդհանուր, հավասար, ուղղակի և գաղտնի քվեարկության հիման վրա<sup>1</sup>:

Պատմությունը, սակայն, շարդարացրեց միասնական գործողությունների ձգումը մերը, քանի որ տիրապետող ժողովրդի առաջավոր, դնմուկրատական տարրերը լինելով թույլ և անկազմակերպ, ի վիճակի լողան գլխավորելու կայսրության ժողովուրժուների հեղափոխական ուժերի պարբարը հանուն երկրի դեմոկրատական վերափոխման։ Այդ բանն ամենից շատ վերաբերում է թուրքական բանվոր դասակարգին։ Նա ոչ միայն չէր հանդիսանում երկրի պրոլետարիատի առաջավոր ջոկատը, այլև իր պաստիվությամբ առանձին ելույթների ձախողման պատճառ էր դառնում։ Դեռ ազելին՝ Թուրք սոցիալիստները, — զրում է Հ. Ալիսը, — խեղաթյուրում էին մարքսիզմի էությունը, նրանք պնդում էին, որ մարքսիզմի և մահմեդական շարիաթի դոգմանների միջև ոչամարյա լկան հակասություններ ն, հետեւարար, սիսկական մահմեդականը պետք է լինի հետեւողական սոցիալիստը<sup>2</sup>։ Թուրքիայի բանվոր դասակարգի անկազմակերպվածության համեանցը եղավ այն, որ երկրում դեռ տասնյակ տարիներ, մինչև 1960-ական թի., փաստորին զոյտական շունչնին բանվորների շահերը պաշտպանող օրենքների և կատաղի պայքարի միջոցով, — զրում է Ա. Հուսեինովը, — թուրք պրոլետարիատը 60-ական թվականների սկզբին հասավ բանվորական կուսակցությունների (բացի կոմունիստականից) գործունեության պատության, պրոֆմիութենական իրավունքների ընդլայնման, գործադրուների, ձեռնարկատերների հետ կուեկտիվ աշխատանքային ուայմանագրեր կնքելու իրավունքի ճանաչմանը<sup>3</sup>։ Իսկ Հանայի տեղի ունեցող զինվորական հեղաշրջումները և երկրում ուղմական վիճակ հայտարարելը, որը սպօրական էր զինվորական զեկավարության հարուստ ավանդույթներ ունեցող երկրի համար, գմբարությամբ ընդունված

<sup>1</sup> Տէ՛ս Շուլչով Վ. Ի., Մլադուրեցիք քաղաքացիություն, էջ 184.

<sup>2</sup> Ալիս Գ. Յ., Տուրցիա և որոշ պարագաներ մլադուրուք, ստուգական 174.

<sup>3</sup> Գուսեյնով Ա. Ա., Պրոֆսոюզն և Տուրցիա (1960—1970), Մ., 1975, էջ 130.

Հիշյալ օրենքները ու իրավունքները դարձնում են պայմանական Ալտափիսով, թուրք բանվոր դասակարգի ազդեցությունը Սամանյան կայսրության կյանքում եղել է թուլ, և այդ վիճակը շարունակվում է մինչև մեր օրերը:

Սովորական ականավոր արևելագետներ՝ ակադեմիկոս Ա. Գուրերը և պրոֆ. Ա. Միլիերը այդ երեսությունը բացատրում են մասամբ նրանով, որ Թուրքիայի որուրժուազիան շատ ավելի ուժեղ էր պրոլետարիատից, իսկ բանվոր դասակարգը «երևան եկավ ազգային արհեստավորական արտադրության քայլարում» շատ ավելի ուշ, որով և պայմանավորվեց բանվորական կադրերի բացառապես գյուղացիական կազմը և գաղտղացվեց պրոլետարական դասակարգային պիտակցության անըն:

Այս ճշմարիտ նորահանգման մեջ պատշաճ տեղ էի գտնել զերծում արդեն նշված հիշյալ երկու դասակարգերի բազմազդ լինելու հանգամանքը: Միեւնույն կրկնում ենք, Օմանյան կայսրության պայմաններում ազգությունը և կրոնը շափազանց կարևոր, երբեմն վճռական, սոցիալական գործոն էին հանդիսանում այդ դասակարգերի զարգացման ընթացքում:

Նշված առանձնահատկությունը հաստատող բազմաթիվ պատմություններ կարող են արամադրել կայսրության բուրժուազիայի առանձին ազգային խմբերի ձևավորման ընթացքը և գործունեության բնադրավառները: Այսպես, բուրժուազիան ծնող ու անող սոցիալական խավերը եղել են հոգի և անսուների տեր ֆեոդալները, պետական պաշտոնյաները, զինվորականները:

Դ. Ավագոպյան դրանց շարքին է դասում նաև գյուղական ազաներին ու Հարկահավաք-մյուլթեգիմներին: Նա իր գրքի էջերում նկարագրում է մի ժաղայի ծնունդը: Այնթապի մոտ գտնվող Խուահին կազայի 12 Հազարանոց բնակչությունը հեծում էր այդ ազայի ձեռքի տակ: «Հաջի ազան, — գրում է Ավագոպյան, — 20—22 տարի առաջ եղել է մի հայի հովիվ, և երբեմն զրազվել է կողոպուտով»<sup>1</sup>: Տերը օգնում է նրան ժանդարմ դառնալու թիւ Հարաստանակուց հայու նա հանում է առան-

<sup>1</sup> Губер А. А., Миллер А. Ф., Политические и экономические изменения в странах Азии и Африки в 20 веке. «Народы Азии и Африки», 1965, № 6, стр. 8.

<sup>2</sup> Avcıoğlu Dogan, Türkiye'nin düzeni .., s. 182.

պետի (օնրաշի) աստիճանի, Աղանայի վալիի մոտ որոշ ժամանակ ծառայելուց հետո վերադառնում է Բալաջին: Այստեղ նա շարունակում է ծառայել որպես շավառ ու ժանդարմենքի պետ, և Հարստություն է դիզում նվերների կամ կաշառքի միջացով: Նա յի մոռանում իր որարիքարք Աղանայի վալիին, որին շամեն տարի ուղարկում է լուս, մեղք, ոչխար, այլ նվերներ և մի քիչ փողոք: Այս ոչնչից շբաշվելով նա ձեռք է բերում իր հավանած հոգը, անառանը, ոմանակցում է Հասարակական շների ու գլուխների շինարարությանը, որից օգտվելով կառուցում է մի քանի տասնեւետոներ, որտեղ քնակվում էին պետական պաշտոնյաներ: Նա տիրանում է շուկային, ստանձնում է կազարյում աշարի գանձման գործը:

Թելրազարի շրջանում մի բեր լուրացնում է գյուղի 140 հազար գյուղում հոգերը, միաժամանակ գյուղացիներին հարկադրելով վճարել հոգային տուրքը:

Իդմիրի մոտ գտնվող Դյուլուք գյուղին տիրանում է Կոնյալից եկամ մի տասնապես՝ Հաջի Ալի անունով: 400 ժուկ ունեցող այդ գյուղում շկային դպրոց, մզկիթ, խմելու ջուր, ճանապարհներ, բայց Հաջի Ալին գյուղացիներին որպես ստրուկներ շահագործներով հարստանում է և դպենում փաշա: Վերջինիս ժահից հետո նրա ունեցվածքը և 40—50 հազար գյուղում հոգատարածություններն անցնում են թուներին: Դրանցից մեկն Աղնան Մենգերեսն էր, որն իր ժառանգած հոգերի վրա կազմակերպեց խոշոր կապիտալիստական ֆերմերային տնտեսություն:

Էլյուպիսով, բանակալ ժանդարմենները, վալիները, մյութասարիֆները, գարմագամները և այլ բարձրաստիճան պաշտոնյաներ յուրացնելով հոգերը դաւնում էին մեծ կարգաժամաներեցք<sup>1</sup>:

Դ. Ավշարովոն այդ ենթագույնը ավարտում է Հետնալպարերությամբ. «1914—1918 թթ. և ազգային-ազատագրական պայտքարի տարիներին աքսորված և փախած հայերի, հուկների աները, խանութները, գաշտները և անշարժ այլ գույքը թալանի է ենթարկվել ուժեղ մարդկանց կողմից: Կարճ ասած, ուսմանյան հոգային սիստեմի կործանման Հետ, տարրեր ուղիներով ձևավորվել ու անել են բեկրն ու ազաները»<sup>2</sup>:

<sup>1</sup> Αντιοχίου Δ. Ֆրէ. աշխ., էջ 182:

<sup>2</sup> Խոյք անգը, էջ 184:

<sup>3</sup> Խոյք անգը, էջ 185.

Nüfuskuu təkənənər, əriq təqibinərər qılıçlıqçılarlaşku rəhbərliyimiz  
 ət թալանıb əlinəq qızılaqlaş Հողը, qızılgır ət əll Հարստությonunənərən  
 əlli, Թərəfərəni ət ərəvi əqarərərəwəkənənərən էzərəni կարələj է  
 qanənəl բազմաթիq Հար ət նման սրինəkənər, երբ իրերի թər-  
 յամբ, տəkənəkən զəvərəmənənərər այս կամ այն əlinəq Հարստանənə  
 էbən, Կարən դաշտում արտերի հակի Մեղեթ անունով մեկն իր  
 կուտակած 50 լիրայով գնելով գաղղթող, Հալածված Հայերի  
 կարգաժներ, մեկ-երկու տարինե կզառնա արդեն 400—500 լի-  
 րայի տərkisi, նույն əlinəq գործելով, Նրա որդին ևս շարունակում  
 է Հարստանəl, նոր գույքər əbənər թərəbələp, դրազվելով առե-  
 տրով ու վաշխառությամբ և Այսօր նա Կարən ամենեն Հարստա-  
 նərən է, ունի մոռավորապես 500.000 կարողություն կանխիչ  
 և մանավանդ կարգաժներ և ազարակներ... Բակ անունը առաջ  
 Նորուզնի օդլի էր, այժմ եղել է Հայի Մեղեթ աղաս զադես<sup>1</sup>. Բ.  
 Զեմը օրինակներով ցույց է տալիս, որ Բաղդադի երեսլիներից  
 Հայի Մահմեդ Արդուզանը գնել էր 40 հազար լիրա արժո-  
 ղությամբ և երկաթգծի երկարությամբ ձգվող Հողատարածու-  
 թյուները, որոնք մասամբ մշակվում էին, մասամբ էլ վահառ-  
 վում բարձր գներով: Ն. Թաշալանը խոսում է երկրի խորքից  
 դեպի կենտրոնները, կամ նավաշանդիւսները սննդամթերք,  
 մրգներ և այլ ապրանքներ տեղափոխող և տեղափոխման միջոց-  
 ների սեփականատեր գյուղացիների մասին, որոնք այդ əlinəq  
 էbən Հարստանənə: Անցլալ գարի վերշերին, գրում է նա, ոգա-  
 վառների առներականները ապրանքն ուղարկում էին նզմիրի  
 թուրք առներականին, նա էլ վաճառում էր օտար արտահա-  
 նողներին<sup>2</sup>, Թուրք վաճառականը այդ ժամանակաշրջանում ո՛չ  
 ֆինանսական իմաստով, ոչ էլ զրախ պայմանների ու լեզուների  
 իմացությամբ դեռևս ի վիճակի չեր լայն ու անմիջական մաս-  
 նակցություն ունենալու արտաքին առներին: Անշոշտ, կային  
 փոքր թզով և այնպիսի խոշոր առներականներ, որոնք ինցնու-  
 րույն կապեր ունեն Արևմուտքի առներական ընկերություն-  
 ների հետ: Սակայն մեծ մասամբ թուրք վաճառականները մինչև  
 առաջին Համաշխարհային պատերազմի ազարտը և միջնորդ  
 առներականից այն կողմ չեին անցնում<sup>3</sup>: Այդ Հանգամաները,

<sup>1</sup> Երկրի այնըց, 1806, № 2, էջ 24.

<sup>2</sup> Cum İsmail, Türkiye'sin geri kalmışlığıın tarthi, s. 223.

<sup>3</sup> „Milliyet“, 11. 09. 1970

<sup>4</sup> Նոյն ռեզու

ինարկն, լիսանգարեց առևարով զբաղվողների ձեռքում հարըստության կուտակմանը: «Երբ արտադրված բերքը, — զրում է Ա. Նրասիմոսը, — պարուղական շրջաններից հոսեց բաղար, հողերի տերենքի, աղաների ու կառավարիչների մի հակառակ հոսք անդի ունեցավ և համանեց եղավ այն, որ այդ անձնավորությունները թափանցեցին զավասի խորքերը... և հոսի մշակումից ու շահագործումից առյուծի բաժինը խլելով հարստանում էին»<sup>1</sup>:

Բոլոր Հնդիկակաները թուրք բուրժուազիայի շարքերի լրացման ազրյուրն են Համարում զինվորականներին և պետական պաշտոնյաններին, նույն ներասիմոսը հավաստում է, որ միայն այդ տարրերն են ստեղծել աղօպային բուրժուազիա, որը նրա կարծիքով, որազկանում էր օսմանլան բյուրոկրատներից ու զինվորականներից<sup>2</sup>. Բայց, վերցիններն իրենց ճկամուտի զբլիւավոր ազրյուրը Համարում էին պաշտոններից սաացվող հասույթները: Հեղինակը դրանում համոզված զրում է. «Նրանք շատ հազվագել էին փորձում շահույթ ձեռք բերել առևտությանից, որովհետև այս վերջին երկու աղյուրները, Համեմատած պետական հկամուտի հետ, շափազանց քիչ էին»<sup>3</sup>. Պ. Ֆիխտենի ավյալներով մինհստրների, պետական ու ազգական պաշտոնյանների եկամուտները կազմում էին պետական տարեկան եկամուտի մեկ վեցերորդից ավելին<sup>4</sup>, Կայուրության քաղաքական կյանքին քաշածանոթ Ֆ. Բյութինը զըտնում է, որ Ֆիխտենական դժվարություններից մեծ օգուտ էին բաղում վերնախամին ներկայացուցիլները, որոնք իրենց շահ ստենում էին արդուկամիջյան ռեժիմը պահպանելու մեջ<sup>5</sup>, Սյա Սենչերի կարծիքով, պետական պաշտոնյանները թեև բերում էին երկրի տնտեսությանը որոշ մասնակցություն, բայց մնում էին ուստադրության պրոցեսից դուրս, և դանում էին մի խավ, որը արտադրությունից բաժին է ստանում<sup>6</sup>:

Խոսելով բյուրոկրատիայի ներկայացուցիլներին տնտեսա-

<sup>1</sup> Erasmus S., Azgeellîmîşlik Sarânde Türkiye, c. II, s. 805.

<sup>2</sup> Ենոյն անգը. Էլ 835.

<sup>3</sup> Ենոյն անգը. Էլ 807.

<sup>4</sup> ՏՏ-ն Чижанев П. А. Великие державы в восточный вопрос, стр. 115.

<sup>5</sup> Tökin F., Türkiye'de siyasi partiler..., s. 30.

<sup>6</sup> Sencer O., Türk toplumunun tarthsel evrimi., s. 38.

կան գործունեության մեջ ներգրավելու մասին, Համարյա բոլոր հետազոտողները նշում են, որ այդ մասնակցությունը պորտարույթ բնույթ ունի:

Ավելիով փայտատեր, նրանք խստորեն հետևում էին իրենց եկամուռը ստանալուն և երբեք չէին հետաքրքրվում բուժ արտադրության հարցերով:

Թուրք պատմագիտության մեջ փորձ է կատարվում այդ երեւությունը բացատրել նաև այն բանով, որ իսլամը անելուական շահը Համարում է ապօրինի (Հարամ) և այս պատճեռով էլ ոիշխանության զլուխ կանգնած մարդիկ իրենց խնայած փողը որպես գրամագլուխ սպասողործելու փոխարին կամ թանկարժեք իրեր էին զնում ու պահում իրենց տներում կամ էլ կուլպաներ էին ձեռք բերում<sup>1</sup>:

Այսուամենայնիվ, կայսրության գոյաւթյան վերջին տասնամյակներին, նրանք չէին բաշխում դնել Հետզհետե անող լավերով կուտակած գումարի մի մասը առելորի, բանկային գործի, արդյունարերության մեջ: Բայց արտազրության նկատմամբ ունեցած անտարրեր վերաբերմունքը, որպես բնորոշ զիծ, զեռես երկար ժամանակ հատուկ էր հիշյալ խավի ներկայացուցիչներին, և Հանախո ունենում էր ոչ ցանկալի ավարտ: Ոմն Զիս փաշա Համբաւակու գործարան է հիմնում: Զդիմանալով ներմուժվող ամանեղենի մրցմանը, նա շուտով փակում է իր զորքարանը և սկսում է մոմ արտազրուլ Այս արտազրանքը ևս մըրցակցության չի դիմանում և Զիս փաշան արդյունարերական գործունեությունից դուրս է նետվում<sup>2</sup>: Սակայն թիվ չեն փաստեր, երբ զորքարար առանձին անձնավորություններ ամեն միշտ ձեռնարկում էին իրենց զիրքերն ամրապնդելու համար: Մասունք ամուլում արձանագրված է այդ իմաստով շափազանց հետաքրքրի մի երևույթ, նեմինի ողլու անունով տրապիզոնցի մի խոշոր վաճառական ընուրք, մասնեգուական և միաժամանակ Մելլիսի (տեղական Համառողակի—Հ. Ի.) անդամ, բազաքի շրջակարգում հողեր է զնում և թուրքական ձևակերպումներից բացի զնման կայքագիր է ձևակերպում Բաթումի նոտարիուսի մոտ: Ժամանակի ընթացքում և երկրում գոյություն ունեցող անապա-

<sup>1</sup> Türkiye'de sermaye piyasasının kurulması, s. 54.

<sup>2</sup> Avcıoğlu Doğan, Türkiye'nin düzeni..., s. 86.

<sup>3</sup> «Военный сборник», 1891, № 5, стр. 371.

Հավության պատճեռով նման երևութիւնները դառնում են բազմաթիվ ու սովորական թայց տեղի է ունենաւ նաև կապիտալիստական կարգինին հատուկ, կուտակման բնականու ուղիղով ընթացող, Հարստացման պրոցես ևս Այսպես, Հ. Ավելին գրում է, որ Ձևելուզագոն ածխահանության կենտրոնից բացի դառնում է առներական քաղաքի Այսուհետեւ բանի զուրուշ փողով եկած շրջիկ վաճառքարդները, գլուխի նպարավաճառները մտան շըրշանի Հարստաների շարքերը, Բացի թուրք վաճառականներից, նշում է Հեղինակը, արագործն Հարստանում էին նաև բանվորներ Հավաքագրովները, որոնք կորզում էին թե բանվորներից և թե ձեռնարկատերներից, ինչպես և Հանքերում ու նավահանգստում ծառայող լավուշները, քեցաները (կառավարիլ) և այլ պաշտօնյաներ, որոնք դարձան փողի տերը<sup>1</sup>: Տիրապետող թուրք ժողովրդի վերնախավը՝ պետական ու զինվորական պաշտօնյաները, աղաներն ու վաշխառուները հեշտությամբ էին Հարստանում Հատկապես հապատակ քրիստոնյա ժողովությունների հաշվին: Խնչպես նշում է Էրզյումից ուղարկված մի Հոգմածում, Հիջալ սոցիալական խավերը Շահկայական թալանով տիրացած են աշխափին դումարներու, բայց զանոնք գործածելու, շահագործելու Համար պետք եղած փորձառական պատրաստությունը լուծենեած<sup>2</sup>, նշված կուտակումները հանգեցրին մի կողմից, կապիտալիստական Հարաբերությունների զարգացմանը, մըուսից՝ լափազանց աշխուժացրին անտեսական կյանքն ամրոցը երկրում: Եվ, ինչպես նշում է շարաթաթերթը, ուստի Փոքր Ասիայի մեջ չկա մի գյուղ, ուր կարեւը դեր լինաղարելուուն, աղաներուն, էֆենօդիններուն՝ այդ բռնի Հարստացած թուրքերուն դրամազլումը, իսկ բազմաթիվ են այնպիսի գյուղեր, որոնք գրեթե ամրողավիճ մաս կեազմեն Հարստան թուրքի դրամազլինեած<sup>3</sup>. Հանուն այդ դրամազլիսի մեծացման, կամ շնորհիվ նրա ազդեցության աճի, ունաոր քաղաքացիները համախմբվում էին նորաստեղծ շազգային ժողովներից շուրջը, որոնք մինչև երիտթուրքերի տեղական կոմիտեների առաջ գույք փորձում էին կարգավորել տեղի քաղաքական ու անտեսական կյանքը: Այսպես, Էրզյումից կազմակերպված ռեՄիլիք մելլիսից բոլոր անդամները Հարստան, Հազարներու տեր մար-

1. Առև. Ի., Եր յանու տառելեկո օւս տարի, Տ. 50.

2. «Երկրի ձայնը», 1906, Խ. 8, էլ 12.

3. Խայք անցք, էլ 14.

դիկ են, — 1906 թ. գրում էր «Երկրի ձայնը», — ունեին ընդարձակ կալվածներ, արգիսեր, պարտեղներ, կորազին զանառականությամբ, մեկ խոսքով, թուրք բուրժուազիայի ներկայացուցիչներն են... Պետք է նկատել, որ այդ մարդիկը մեծ մասմբ 1895—1896-ի շարգիրնեն հետո է, որ ասպարեզ իշան և աշբի ընկանու Ալեքսանդր շարաթաթերթը բերում է յուրացման ու թալանի ճանապարհով հարսացած լրու տականավոր հարուստների անուններ, որոնք կուտակել էին աասը հաղարից մինչև մեկ միլիոն լիրա կարողություն։ Վերևում նշվեց, որ Սամանյան կայսրության բազմազգ բուրժուազիայի զարգացման երրորդ փուլում, այսինքե՛ սկսած 1880-ական թթ., մասնական ժողովուրդների և հատկապես թուրքական բուրժուազիան արդեն զգալի դեր էր կառարում երկրի առնարի ու արդյունաբերության մեջ. Ա. Կոլլուրակինը կռնկրեա օրինակներով ցուց է տալիս թուրքական կապիտալի մասնակցությունը տնտեսության տարրեր բնագավառներում. Պալու քաղաքի 40 վաճառատներից 6-ը պատկանում էր թուրքերի. որոնք Խարբերդի խոշոր առնարականների միջնորդներն էին, «Թուրք առնարականները զբաղվում են գյուղագորապես արտահանելով, անդարից ուղարկելով ուշարեներ, բուրդ և ցորեն<sup>2</sup>, Խարբերդի կազմում կար Հարուստների մի խավ, որն ուներ տներ, քարվանսարաններ, բազմիքներ, խաղողի այգիներ, մշակելի հողեր և այլն, Թուրքերից մի քանիսը հայերի հետ միասին մասնակցում են առներական գործողություններին, պետական կապալով կատարող գործարքներին, աշարք զանձելում և այլք<sup>3</sup>, Խարբերդ քաղաքի առնարուրը կենտրոնացած էր 200 համեմատաբար խոշոր, մեծածախ առնարով զբաղվող վաճառատների և 400 փոքր խանութների ու կրտպակների տերերի մեռքում. Առաջինների մոտ 10 % -ը պատկանում էր թուրքերին, իսկ երկրորդների մեջ նրանց մասնակցությունը համեստ էր 20 % -ի<sup>4</sup>. Մոտավորապես նույն միջակն էր տիրում նաև երկրի մյուս ներքին գավառներում. Խնձորես գրում էր «Երկրի ձայնը», «մանուֆակտորան, մանրավաճառությունը և նմանարինակ առնարուրներն,

<sup>1</sup> ՀՀ «Երկրի ձայնը», 1905, № 5, էջ 12.

<sup>2</sup> ԱՐԲИԱ, Փ. 82, օճ. 86, և. 3053, էջ 164.

<sup>3</sup> Նոյն ուշը. էջ. 252.

<sup>4</sup> Նոյն ուշը. էջ. 252.

ուր չէին հրենար մահմեղականները, սկսած են այժմ նույնպես  
ահանք գրավել, շնորհիվ իրենց վարելած ավելի նպաստավոր  
պայմաններուն։<sup>1</sup>

Այսպիսին էր պատկերն Արևմտյան Հայաստանում և երկրի  
արևելյան մյուս շրջաններում, իսկ արևմտյան թուրքերով  
բնակեցված Անասովյացի շրջաններում թուրքական բռնընտա-  
պիայի մասնակցությունն ավելի մեծ էր, Սրբաթուղի անցկաց-  
նելուց հետ Կոնիայի վիճայեթի Ակդեհիր քաղաքը դարձավ կո-  
ղուր առնորական կենտրոն, որտեղ առաջնակարգ գեր էին խա-  
զում թուրքերը։ Այստեղից տարեկան արտահանվում էր մոտ  
1000 վագոն հացահատիկ, 600—700 կողով օֆիսում, մեծ քա-  
նակությամբ բուրդ, տղթաբիկ, խոշոր ու մասք եղջերավոր անա-  
սունների կաշի և այլն։ Տրավիզոնի ոռուական հրապատուի  
հաղորդման համաձայն 1893 թ. զյուղատնտեսական հումքի և  
միերթների առնորով զրազմաղ մեծ վաճառատներից լորսը  
պատկանում էր թուրքերի, լորսը՝ հուկաների, մեկը՝ ոռուի և  
մեկը՝ հայեր, և նշանների (Դյունեն—Հ. Բ.) վաճառականները, —  
զրում էր «Թյուրքակներ», — մեծ մասամբ թուրք են, որոնց զըլ-  
խավորապես մանուֆակտուրայի, արմտիքի, համեմունքների,  
ծխախոտի գործառնություններով կզրազմինք<sup>2</sup>, Կաստամոնիի  
վիճայեթի Տուշյա քաղաքի առնորականների զիխավորը տարե-  
ներ շարունակ եղել է Խաչաղաղի Ալի Էֆենդին<sup>3</sup>, Անկարայի  
վիճայեթի Կալսանիի սանցակում 18 արտահանող առնորա-  
կաններից 7-ը թուրքեր էին<sup>4</sup>,

Առևտրի մեջ ներգրավվում էին նաև Հարուստ քրդերը։ Ռու-  
սական զինվորական գործակալի հաղորդման համաձայն շեյխ  
Մեհմեդ Սադեկը «Պարսկաստանի հետ ուներ ծխախոտի լայն  
առնուուրք, նա կռատակել էր «Հակայական գումարներ, որոնց  
պահում էր սնգուկների մեջ և բանակցություններ էր վարում  
տառայերկրութ բանկերի հետ՝ իր կապիտալները պահելու մա-  
սին»<sup>5</sup>.

<sup>1</sup> «Թյուրքիա», 1905, № 2, էջ 23.

<sup>2</sup> «Թյուրքիա», 1905, № 32, էջ 754.

<sup>3</sup> ՀՀԿ «ՎԵՍՏԻԿ ՓԱԼԵԽՈՆ»..., 1894, № 47, էջ 518.

<sup>4</sup> «Թյուրքիա», 1905, № 25, էջ 624.

<sup>5</sup> ՀՀԿ «Խոյք ուղարք», 1907, № 11—12, էջ 1027.

<sup>6</sup> ՀՀԿ «Խոյք ուղարք», 1907, № 11—12, էջ 282.

<sup>7</sup> ԱՀՎԱ, գ. 2000, օր. 1, ձ. 1003, էջ 267.

Նման փաստերը բազմաթիվ են և ցույց են տալիս բուր-  
 ժուական հարաբերությունների մուտքը նաև կայսրության աճե-  
 նախուզ անկյունները։ Անշրաժեցած է նշել, որ թուրքական կա-  
 պիտուզ մինչև առաջին Համաշխարհային պատերազմը զգա-  
 լիորնն ամրապնդեց իր զիրքերը երկրի տնտեսության մեջ։ Ն.  
 Թաշալանի Հաշվումներով նզմերի շրջանում, պատերազմի նա-  
 խօրեին, թուրքերին էին պատկանում 202 գործարաններ և ար-  
 հեստանցներ, իսկ օտարների հսկողության տակ գտնվող 213  
 ձեռնարկություններից՝ 114-ը՝ գտնվում էր Հույների, 88-ը՝  
 օտարահապատակների և 11-ը՝ հայերի ձեռքում։ Մեկ ուրիշ օրի-  
 նակ Դեկտեմբերի 1895 թ. Սպարտա քաղաքում գորգերի ամբողջ  
 արտադրությունն իրենց ձեռքում էին կենտրոնացրել Հույն  
 կազիտայիստները։ Արդեն տասներկու տարի անց 1100 դագ-  
 գաներից 650-ը պատկանում էր թուրքերին։ Որոշ բնագավառ-  
 ներում թուրքերի տնտեսական գիրքերի ամրապնդումը նկատելի  
 էր դեկտեմբերի 1890-ական թթ. կեսերին։ «Բյուրակնե» լրագիրը  
 1900 թ. արձանագրել է, որ «Մալաթիայի սանչակում վաճառ-  
 տականությունը թուրք տարրի ձեռքին է»<sup>1</sup>, «Բյուրակնեին» իր  
 հերթին նշում էր դեկտեմբերի 1896 թ. վերցին մայրաքաղաքի տնե-  
 աշրական հրապարակում տիրող ռամանավոր պատրությունը,  
 որը Հետեւածք է «Փոքր Ասիս շատ մը նորակազմ, նորահաս-  
 տատ առևտրական տուներու ներկայացուցիչների երևալուն»  
 Ասուք մեր իսլամ Հայքինակիցներուն կապատկանին, որովհետև  
 վերցին ժամանակներու անոնց մեջ փութաշենություն մը երե-  
 սագ նորարաց առևտրական տուներ կազմակերպելուն»<sup>2</sup>. Թո-  
 քատի (Ծվլուկիայի) գավառի «Արաթս» հանդեսում առաջըր-  
 ված Համառոտ տեղիկագրության մեջ ցույց է արված բազմ-  
 ազգ բնակչության ու նրա տնտեսական գործունեության պատ-  
 կերը նշված ժամանակութառվածում։ Թաղաքը ուներ 30 հա-  
 զար բնակիչ, որոնցից մոտ 20 հազարը թուրքեր էին, 7 500-ը՝  
 հայեր, մնացյալը՝ Հույներ, Հրեաներ և ազնի։ Այս տիպիկ գա-  
 վառական քաղաքում, հար և նման ասիական թուրքիայի մյուս  
 քաղաքներին, բնակիչների հիմնական գրադաւութը արհեստ-

<sup>1</sup> „Miliyet”, 13. 09. 1970.

<sup>2</sup> «Բյուրակնե», 1907, № 22, էջ 1117.

<sup>3</sup> «Բյուրակնե», թերթ, 15. 02. 1900.

<sup>4</sup> «Բյուրակնե», 22. 11. 1895.

ներն ու առևտուրն էր: Խնչողիս արդեն նշվեց, պղնձագործական այս կենտրոնում կային 150 արհեստանոց-խանութեր, որոնք համարյա բոլորը պատկանում էին Հայերին: Մյուս բնագավառներում պատկերը հետևյալն էր. «Ծրկաթագործ» 50 խանութ, 40-ը թուրք և մնացյալը Հայ, ատաղձագործ՝ 20 խանութ, 15 Հայ և մնացյալը Հույն, թիթեղագործ՝ 10 խանութ, 3-ը Հայ և մրուսներն ըրեա, անազագործ՝ 30 խանութ, կեսն Հայ և կեսն թուրք..., որմնադիր՝ 100 անձ, Հայ, Հույն, թուրք Հավասար թվով, սկզբին՝ 10 անձ, բոլորն ալ Հայ, ժամագործ՝ 20 խանութ, 17 Հայ, 3-ը Հույն..., արմելլան ապրանքների 50 խանութ մնեավ մասամբ թուրք, մուշտակագործ՝ 25 խանութ, բոլորն ալ Հայ, թամրագործ, սանձագործ, պարանագործ և պայտառ, ընդամենը 150 խանութ, գրեթե բոլորն ալ թուրքը և այլն<sup>1</sup>. Այս թիթերն անհրաժեշտ գտանք բերել, որովհետև դրանք շափականց բնորոշ էին ոչ մեծ, բայց կայսրության տնտեսական կյանքի կարևոր կննորուներ համարվող բազմաթիվ քաղաքների: Տ. Սըրմբրանը տանյակ տարիների իր գիտարկուներն ամփոփելիս թուրք վաճառականության մասին գրում էր, որ գեռն 1880-ական թթ. նրա շարքերում տեղի ունեցան ոչ միայն քանակական, այլև որակական գոփոխություններ: Մեր թուրք երկրացիները,— նշում է նա, — մասնավանդ վերջին տարիներու, իրենց դատողական գիտությանց և տեղական պարզունակ արվեստագիտությանց վրա ազելցուցած են վաճառական ժրություն մըն ալ գործնական, զոր սերունդ մը տուաց գրեթե բնավ շունեինք<sup>2</sup>:

«Թերլիիներ Տագերլաթը թերթի Պոլսի թղթակիցը, անդրադառնալով նույն Հարցին, գրում է, որ մայրաքաղաքի լրապերը տեղի ունեցող երևություն անվանում են «իսլամ վաճառականության դարբուժք», Թղթակիցն իրեն Բալկանյան պատերազմամբ պարտության անուղղակի հաւանաց է դիտում տնտեսական արդ զարթոնքը, որը «նպատակ ունի իսլամներու տնտեսական և առևտուրական ազատագրումը», Որպես այդ նպատակի կենսագործման արինակ, թերթը նշում է Ազարազարում առևտուրական բանկի և Ալգիենում ազգային բանկի Հիմնադրումը<sup>3</sup>:

<sup>1</sup> «Արարատ», 1887, գրք Ա, էջ 22—23.

<sup>2</sup> Ե (լրմշան) Տ. Գ., Թարրանոյ Հին վաճառականություններ, էջ 160.

<sup>3</sup> ՀՀ» «Թյառականություն», 28. 04. 1914:

1914 թ. փետրվարին Կ. Պոլսում տեղի ունեցած 150 թուրք պահառականների համաժողովը Սահղագիւմ առևտրական ընկերությունը որոշեց ուսումնակիրել եվրոպական նույն կարգի ընկերակցությանց կանոնադիրերը<sup>1</sup> և ըստ այնմ ծավալել իր գործունեությունը: «Բյուզանդիկոն» նաև հայտնում էր, որ մայրաքաղաքում ստեղծվել է վաճառականների կոմիտե, որի անդամների թիվը հասնում է 340-ի: Մտադրությունն կար այսուղ ևս «Հաստատել առևտրական խոշամ պանքա մը: Թոմիտան առաջին մայրաքաղաքին համար է, ասկայն հետո նշուղեր պիտի հաստատվի գավառացին մեծ բաղաքներուն մեջ»<sup>2</sup>:

Առևտրական շահի հայրը մուտք գործեց նույնիսկ իսլամ կանանց շրջանը: Սուլթանի կանանցից մեկի հոգանավորության տակ կազմակերպվեց ուղղացյան արտադրությանց ու ճարտարգիտի զարգացման իգական ընկերությունը, որը Կ. Պոլսում բացեց իր վաճառությունը, ուր սթուրք արտադրությունները միայն կծախօվինչ, Ընկերության աշխատանոցներում տեղավորված էին երեք հարյուր կին և աղջիկ, ոմիայն թրքութիւնները<sup>3</sup>:

Առանձին թուրք մեծահարուստներ կամ իտշոր վաճառականներ որոշ ազգեցություն էին ձեռք բերել լիուելին և ընդհանրապես արդյունաբերության մեջ: Բայց բայց իր վաճառականներից ոմն ծուսութ Ապր 1882 թ. մայիսին գիմում է կառավարությանը՝ խնդրելով ֆրանսիացիների Հակողության տակ զբանը բրացիսի հանքերը հանձնել իրեն: Հարցը դրականորեն լուծվելու դեպքում նա խոստանում էր պետական հարկը, որը կազմում էր նկամուտի 9 % -ը, հասցնել 15—20 % -ի:

Արյուիվային փաստաթղթերը ցույց են տալիս, որ էրեզլին ածխահանքերում տիրապետող գիրքեր ունենալու համար տեղական ու ֆրանսիական կապիտալիստների միջև գարավերջին սկսած վեճը 1908 թ. դեռ շարունակվում էր: Տեղական կոնցենտրանտների թվում հիշատակվում էր սուլթանի պարագաներներից մեկի՝ Ռաշիր փաշայի, անունը, նա ուներ մի մեծ

1 ՀՀԿ «Եթյուզակցինե», 15. 02. 1914.

2 Խոյն տեսք, 25. 04. 1914.

3 Խոյն տեսք:

11 4 „Milliyet“, 03. 05. 1975.

տեղամաս և էրեզիի ընկերությունից պահանջում էր հինգ միլիոն ֆրանկ, որպեսզի տեղամասը զիշի ընկերությանը<sup>1</sup>:

Մեկ ուժից պալատական, նախկին մեծ վեզիր Ահմեդ Մուհամադ փաշան, կազմակերպել էր Միջագետքի նավթը շահագործող ընկերությունը,

Թուրք վերնախամիլ ներկայացուցիչները սկսել էին ակտով մասնակցություն ցուցարերել երկրի տնտեսական կրանքում, ըստունիւնով իրենց Հիմնական գործունեությունը՝ որպես պայտահան, բարձրաստիճան պաշտօնյա և այլն, նման երկվությունը նրանց հարավորություն էր տալիս շարունակելու հարատությունների կուտակումը՝ կաշառքի, նվերներ ստանալու և իրենց պաշտոնական դիրքը նույն նպատակով շարադաշտություն, Արդարական, Թուրքական ազգային բուրժուազիայի գոյացման Հիմնական աղյուրը հանդիսացող սոցիալական համարյա բոլոր խավերն ամուռ կերպով կազմած էին ֆեռդալական հոգատիրության և տվյալ հասարակարգում տիրապետող հարաբերությունների բազմաթիվ ձևերի հետ։ Այդ պատճառով էլ նրանք իրենց էսուրյամբ, զործելակերպակ ու գաղափարախոսությամբ ավելի ֆեռդալական էին, քան բուժուական։ Արդ իրազությունը երկրում դրանովովամ է երբեմն նաև մեր ժամանակներում։

Թուրքական ազգային բուրժուազիան իր տնտեսական գործունեությունը սկսեց և ժամանեց անասնապահության ու անասնավաճառության, լայն առումով կաշեգործության, մետաղի ու զենքի, սննդամթերքների և որոշ շափով ճոթեղենի առարի բեազագառներում։ Մի խոսքով, ֆեռդալական հարաբերությունների և համապատասխան անշություններով պայմանագործած, առևտուրի ու արդյունարերության գործունեության որոշ մտար միայն անցյալ դարի վերջին բաժին ընկած թուրքական բուրժուազիային։

Այսպզի՝ հունական, հայկական, նինական, բուրժուազիայի գոյացման պրոցեսը, Հիմնական զժերով, համընկենում էր արևմտյան երկրների պատմական սովորով անցած դասական ձեռներին։ Այն սոցիալական տարրերը, որոնք կազմեցին այլազգի թուրժուազիայի կորիզը, կապված էին արհեստների ու արդյու-

<sup>1</sup> Տե՛ս ԱԲՊՐ. Փ. Պոլիտարհա, ու. 452, չ. 1030, լ. 9.

<sup>2</sup> Տե՛ս «Թյուկանդիք», 28. 04. 1974.

Առաքերական արտադրության, ներքին ու արտաքին ընդարձակ առևտուրական գործողությունների հետ Սակայն Օսմանյան կայսրության բազմազդ բուրժուազիայի պարզացման վրա իր կնիքն էր ողբեկ ռազմաֆեոդալական ռեժիմը և արդեն նշված գույքի ու անձի ապահովության բացակայությունը: Մրանուն էլ պայմանավորված էր այն յուրահատկությունը, որը բնուրուց չէր Արևմուտքի բուրժուազիային: Նոր ձևավորվող բուրժուազիան Թուրքիայում շեր ցանկանում զբաղվել միայն արդյունարերությամբ: Նու ձգուում էր, ինչպես ճիշտ նշում է Ն. Տօդորովը: Հետավորություն ունենալ կապիտալին ազատորեն տեղափոխելու մի բնակավայրից մյուսը և անդամ փոքր վտանգի կամ անհրաժեշտության դեպքում այն հանել արտադրությունից և նույնիսկ երկրից դուրս բերելու Անշուշտ, այստեղ խոսքը վերաբերում է զլայավորապես ալլազգի բուրժուազիային, քանի որ «արհեստներով ու առևտորվ, այսինքն՝ էկոնոմիկայի այն ճյուղերով, որտեղ ամենից ավելի շուտ կարող էր հասնանալ կապիտալիստական կացութաձևը, զբաղվում էին առավելապես ու թուրքերը և անզամ ոչ մուտքանաներու»<sup>1</sup>:

Ալլազգի բուրժուազիան կենտրոնացած էր զլայավորապես խոշոր բնակավայրերում, ծովափնյա քաղաքներում, հատկապես մայրաքաղաքում: Նա էր կատարում համարյա ամրող միջնորդ առևտուրը: Նրա շարքերում ձևավորվեց կոմպրագրական բուրժուազիայի մեծ մասը: Նա հետզհետե համալրվեց դրամային գործառնություններով զբաղվող մարդկանցով՝ բանկիրներով, դրամափոխներով, խոշոր վաշխառուներով: Այդուհետեւ, ալլազգի բուրժուազիայի շարքերը խասցվում էին նաև հողատերերի, հարկաճավաքների, կուլակների, տեղական վաշխառուների ու առևտուրականների ներկայացուցիչներով: Անշուշտ, այդ բայց տարրերի մեջ ամենաստվար մասն էին կազմում վաճառականները, որոնց մի մասն անցավ արդյունարերական դրամունության: Մեծ մասամբ այս միջավայրում էլ տեղի ունեցավ առևտուրական ու արդյունարերական կապիտալի միաձուլումը: Արդյունարերական ձևունարկատերերից շատերը նախնինում եղել էին արհեստավորներ, վարպետներ, կառավարիչներ, ինժեներներ ու տեխնիկներ, որոնք հա-

<sup>1</sup> ՏԱՌ Տոդոր Ի., Վալյան գործ..., ստ. 413.

<sup>2</sup> Երևան Գ. Ա., Թուրքերի ժաղամաց, Եր., 1875, 234.

որստանալով՝ դարձել էին սեփականատիրոջ ընկեր, կամ չենց  
անփականատեր, Այսպես, Բուլղարիայի ամենախոշոր արդյուն-  
առքերուղը՝ Աթանաս Գյումարչյանը, ինչպես ըույց է տրված  
Ն. Տղորովի աշխատության մեջ, եղել էր արարի՝ արա արտա-  
գրու վարպետ, որը կը անցին վճրյին տարիներին դարձել էր ձեռ-  
նարկատեր, իսկ նրա ժառանգները ստեղծեցին իսկական կա-  
պիսալիստական արտադրություն։ Կայսրության ասիսական  
մասում ևս անցյալ գարի սկզբից տեղի էր ունենում ձեռնար-  
կատիրոջ ձևով ուրման պրոցեսը։ Դորգագործ վարպետները,  
որոնք մեծ գործ էին ձեռնարկում, ուկամ իրենց տանը սենյակ  
մը ունեին և կամ թաղին մեջ առանձին սենյակ մը կվարձեն իրր  
գործատունն, որի մեջ տեղավորում էին 5—150 գաղղահ, աշ-  
ցանացնելով վարձու բանվորութիւներ գործատանց և իրենց  
սեփական տեսերում։

Ավելի թույլ կապված լինելով ֆեոդալական իսավերի հետ,  
ալլազդի բուրժուազիան անմիջականորեն ու խիստ կերպով  
զգում էր օսմանյան ֆեոդալական կարգի ծանր լուծը։ Այդ է  
պատճառը, որ նա ավելի քիչ էր պահպանողական, ավելի շատ  
էր սեռում ու հարում ընդդիմագիր տարրերին, քան բուրգական  
բուրժուազիան։ Անհրաժեշտ է նաև նշել, որ երկրում տիրող շո-  
ւինիստական քաղաքականությունից ամենաշատ տուժող ոչ  
մահմեդական ժողովուրդների ու նրանց մանրբուրժուական  
իսավերի անող դժգութությունը և ազատագրական պայքարի վե-  
րաբերյալ և տիրենց բուրժուազիային ստիպում էին լրավարարվել  
իշխանությունների հարկադրական դիրքուններով։

Հանրահայր է, որ բուրժուազիայի ինքնուրույն դասակարգ  
զառնալը, նրա ձևավորումը որպես անտեսության ու քաղա-  
քականության ղեկավար ուժի, ընդհանուր առմամբ, համընկենում  
է այս կամ այն ազգի գոյացման պրոցեսի հետ։ Հիշյալ պատ-  
ճական օրինաշափությունը տարրեր երկրներում զրայնորվում է  
ալլազան ձեռնով։ XIX դարի երկրորդ կեսին Օսմանյան կայս-  
րության տարածքում բարկանյան համարյա բոլոր ժողովուրդ-  
ները, Հռւյները, Հայերը ազգային բուրժուազիայի գլխավորու-  
թյամբ ավարտում էին իրենց ազգերի կազմավորման շրջանը։  
Մինչդեռ թուրքերն ու մյուս մահմեդական ժողովուրդներն արդ

շրջանում գեռնս միայն նոր էին թհակոխում բուրժուական հարաբերությունների սաղմնավորման փուլը:

Նույն տարածքի վրա ապրող զարգացման տարրեր աստիճանի վրա գտնվող ժողովուրդների առաջընթացի պրոցեսը, անկատկած, չէր կարող լինել առանց փոխադարձ ազդեցությունների ու կապերի, Առաջին խմբի ժողովուրդների աղդացության շնորհիվ կապիտալիստական հարաբերությունների ներթափանցումն առանձյան ֆեոդալիզմի ծալքերը՝ արագունում էր վերջինիս քայլայումը: Ներքին արդ պրօցեսի, տպանակ բուրժուական Արևմուտքի ազգնեցության հետանքով ձեզավորվում էր բուրժուական զարդարախոսությունը, տարածվում էին բուրժուազիժմոկրտական և ազատազրական զարդարաները:

Սակայն ուղմափեռդալական կարգի, կրոնական ու ազգային մշտական հայածաների պայմաններում փոխառողջության գործոնը չէր կարող վճռական դիր կատարել. Այդ պատճեռով էլ աղջի դեկամետր ուժը հանդիսացող բուրժուազիայի կազմավորումը, որոշ իմաստով, տեսի էր ուննում սահմանափակ ազգային շրջանակներում: Առաջի ինչու ազգային բուրժուազիան կարողանում էր իրեն դրսնորել որպես միայն քրիստոնյա, կամ մահմեդական ազգերի տևտեսական շահերի ներկայացուցիչ: Նման անբնական վիճակը ժամանակ առ ժամանակ ավելին էր սրբում կայսրության վերնախազի մեծապետական ու շուրջինիստական քաղաքականության հետևանքով՝ կապված այս կամ այն պատճական երևույթի հետ, ինչպես՝ ազատազրական պայքարի վերելքը երկրի ներսում, հանախ տեսի ունեցող պատերազմները, կրոնական ֆանտասիզմի բռնկումները և այլն. Այդ քաղաքականությունը և ուստիզմի զաղափարախոսությունը լրբարեն խանգարում էին հպատակ ժողովուրդների ինքնուրույն զարգացմանց: Միաժամանակ, դրանց կասեցնում էին մահմեդական Յոզսվուրդների առանց արդ էլ դանդաղ առաջընթացը. Ֆ. Էնգելսը գտնում էր, որ կապիտալիստական հարաբերությունների զարգացումն ուղղակի կապված է ազգային հարցի չուժման հետ, որ ոչ մի երկրում հարազոր չէ բուրժուազիայի տիրապետությունն առանց ազգային անկախության: Կը բենիք մեկ անգամ ես, որ որոշակի աղջի ու դավանակի պատ-

<sup>1</sup> Մարքս Կ. և Էնգելս Փ., Ըօւ. տ. 22, ստ. 382.

Հանելը Օսմանյան կայսրությունում ուներ սոցիալական քննչիք:  
Թուրք պատմագիտության մեջ այդ երկույթը մնենաբանվում է  
յուրպիր, Ամենատարածված տարրերակը հետեւալն է, «Թուրքերը  
մտաւակցելով հաճախակի տեղի ունեցող պատերազմներին,  
Շարագորություն շունեին ամելու բահակազմու և զարգանալու  
անտեսապես», Խակ Հույնը, հայերը և ընդհանրապես ոչ մահ-  
մեդականները, տափապետել էին կայսրության առաջական ու  
անտեսական կյանքին՝: Խաղախ արգեն նշվեց, այս կարգը  
սահմանել էր կայսրության վերնախավը և խատորն հետևում  
էր, որ Ծիչյալ տարրերը շմիջամտեին երկրի բաղաքական  
կյանքին, նրա կառավարման գործին:

Երբ բուլղար ժողովուրդն անցյալ դարի վերջին բառորդում  
ազատագրվեց օսմանյան լիից ու դարձավ իր երկրի անտեսու-  
թյան ու բաղաքականության մերը, զգալիորնն արագացավ  
նրա զարգացման տեմպը և նա ապրեց բուն վերելք: Դրանից  
հետո Թուրքիայում պատճենական բուրժուազիայի ազգեցությունը  
զգալիորեն նվազեց և առաջնակարգ նշանակություն ձեռք բե-  
րեց Հռւեական կապիտալը:

Հռւեաների զիրքերն ամուր էին Հատկապես մայրաքաղաքի,  
ծովեղոյա բնակավայրերի և Անատոլիայի կարևոր կենտրոն-  
ների անտեսության մեջ: Նրանց տարիներ շարունակ զիյազո-  
րում էին Արևմուտքի Հետ կատարվող միջնորդ առնոտուրը: Հենց  
առևտրի շնորհիվ Բալկաններում առաջինը ձևավորեց  
Հռւյն բուրժուազիան: Դեռևս XVIII դարում նա Միջներկրականի  
շրջանից գուրս մղեց ֆրանսիացիներին և Արևելքի առևտրի կե-  
սից ավելին կենտրոնացրեց իր ձեռքում: Ծվառպայում և Ռու-  
սաստանում Հռւեական բոլոր զաղութերը դարձան կարևոր  
առևտրական կենտրոններ: Հռւեական առնոտրական Հղոր նավա-  
տորմը աիրապետեց ոչ միայն Միջներկրական, այլև Ան ծովում:  
Երնի Հռւյն բուրժուազիայի այդ շրջանի գործիչների մասին է  
նշում Յ. Մըլլերյանը, երբ գովարանում է նրանց «Հարստությու-  
նը, բնարձակ գործունեությունը և բարեգործությունը», անվա-  
նելով նրանց «Միջներկրականի», էպիյան կղզիների և նգիպտոսի  
մեջ Հռւյները<sup>1</sup>, նա գտնում էր, որ XIX դարի բուրժուազիայի

<sup>1</sup> Koças Şadi, Tarih boyunca Ermeniler ve Türk-Ermeni ilişkileri, Ankara, 1967, s. 60.

<sup>2</sup> V (ընդունման) 5. Տ. Պարբեսու, «Բա վահանաւթյուննե... էջ 45.

Ներկայացուցիչներն ավելի համեստ առևտրական գործունեություն էին ծավալնել, քան նախորդները։ Այսուամենայնիվ, Հույն բորբոքապիտակ կարևոր դեր էր կատարում կայսրության գոյաւթյան ամբողջ ժամանակաշրջանում։ Նրա ձեռքում էր կենտրոնացած աննդամներքների, այսուրի, չոր մրգերի և բազմաթիվ այլ ապրանքների առևտուրը։ Հույն ձեռնարկատերները մեծ դեր էին կատարում նաև գորգերի, մետաքսի և ընդհանրապես Շաքեղինի արտադրության մեջ։ Արևմտյան Անատոլիայում նրանց էին պատկանում Համարյա բոլոր ալյանացները, զից փայտամշտկման ֆաբրիկաներից երեքը, բազմաթիվ ձուլարաններ, երկաթամշտկման ձեռնարկություններ և այլն։

Բնականարար, տնտեսական բնագավառը զեկավարող Հիմնարկներում ևս մեծ էր Հույնների թիվը։ Օսմանյան առևտրական պալատի անդամների մեկ երրորդը Հույններ էին։ Առևտրարդյունարերական պալատում։ Մինչև Բալկանյան պատերազմները նրանք ունեին մեծամասնություն։

Ընդարձակ գործունեություն էր ծավալնել նաև Հայ բուրժուազիան։ Երկար տարիներ նաև տիրապետող դիրք ուներ Անատոլիայի և հվառապական երկրների առևտրում։ Ակսած 1840 թ. նա ակտիվորեն մասնակցում էր ծավալին առևտրին։ Մանուքակատուրայի, մանվածքի, երկաթեղենի, վառելյիքի և աննդեղների մի մասի առևտուրը կատարվում էր Հայ վաճառատների միջացով։ Հայ մեծաշարուատները զգալի մասնակցություն ունեին զրամական գործառնությունների մեջ։ Հայ արհեստավորները, նշում է Սադի Քոչարը, ովինելով շնորհօգով արհեստներում, բազմաթիվ բնագավառներում համարյա շոմենին իրենց մրցակիցները Օսմանյան կայսրությունում։ Գրանց թվին էին պատկանում ուներշտություններ, կահույքի, և վրապական հագուստի, կոշիկի, մետաղյա ամանեղենի և մի շարք այլ առարկաների արտօնությունը։ Նկարագրված պատկերը հաճախ խախտվում էր կամացանությունների, կազմակերպված շարժերի ու տարերային աղեաների հետանքով։ Սակայն տնտեսական կյանքի արագի մատնություն էր հունի մեջ, որովհետեւ, ինչպես նշում է

<sup>1</sup> ՏՎՀ Խոնչես Ա. Դ., Օчеркъ экономики Турции..., էջ 108.

<sup>2</sup> Milliyet., 11. 09. 1970.

<sup>3</sup> Բաղաջանական աշխատանք, էջ 68.

Յ. Գրիեց, Հայերը մրագան ու աշխատասեր են, ոսիրում են իրենց Հայրենիքը և կողման են խողալու կարևոր դեր՝ Արևածարան Ասիայի բարոյական և Նյութական վերածննդի գործում։ Զարգացման ընականոն ընթացքը պետք է ցույց տարնման կանոնագուշակման իրավացի լինելը, եթե Ահեներ սուլթանական կառավարության բռնի միջամտությունը։

Թուրքիայի տնօտեսության մեջ զգալի գեր կատարող այլազգի բուրժուազիայի երրորդ խումբը Հրեական բուրժուազիան էր. Դրականության մեջ եղած տարրեր կարժիքների առկայությունը մեղ ստիպում է ավելի մանրամասն ներկայացնելու Հրեական վերնախազի և, մասնավորապես, ազգային բուրժուազիայի դիրքորոշումը Օսմանյան կայսրության ճգնաժամի խորացման ժամանակաշրջանում։

Ազգային կազմակերպությունների ու քաղաքական կուսակցությունների խորհրդավոր Հրեական բուրժուազիան աշխատում էր շմանսակցել երկրի քաղաքական անցուղարձին և ձգուում էր զրազի միայն անտեսական գործունեությամբ։ Ծուլատանի սիռնիստների օրգան «Շասավետ» («Ելշալուլու») շարաթաթերթի 1908 թ. աշնան Համարներից մեկում Հրեաների եղված վարչազժի անհրաժեշտությունը մեկնարանվում էր այսպես. ոմքու բոլոր ազգությունները, բացի Թուրքերից և Հրեաներից, երազում են ոչ թե Թուրքիան բարեփոխելու և վերածնելու, այլ այն տրունկու մասին։ Թուրք վերնախազի և Հրեական բուրժուազիայի շահերի միանության վերաբերյալ ավելի որոշակի կարժիք էր Հայունում սիռնիստական շարժման պարագուխներից մեկը՝ Վ. Ժարուհինսկին։ Նա գտնում էր, որ Հրեաների, կամ ավելի ճիշտ սիռնիստների, ազգային քաղաքականությունը սպիտ է ունենալ պարզ արտահայտված թուրքամեծ բնույթ, Նրա զեկավարող սկզբունքը պետք է լինի կայսրությունում թուրք տարրի քաղաքական գերակշռությունը պահպանելը և վերցնիս ու Հրեաներան միջն բարի փոխհարաբերությունների ամրապնդումը։ Դիմանապիտական մի փաստաթղթում են խոսվում է Հրեական բուրժուազիայի այդ ձգտման մասին՝ Ընտառապրին շահ խուսափն էայսրության այլ ժողովուրդների վե-

<sup>1</sup> Сборник «Положение армян в Турции...», стр. 312.

<sup>2</sup> «Рассвет», СПб., 1908, № 6, стр. 10.

<sup>3</sup> Եղիշ անցք, 1810, էջ 6—7.

Հերին խառնվելուց և շխաղակ որևէ քաղաքական դերու ու Հրեա-Ները, — կարդում ենք այդ փաստաթղթում, — բայց որ հետ ապ-րում են սրպես բարեկամներ և զրադվում են միմիայն առևտորդ ու արհեստներով<sup>1</sup>: Նման հավաստումների Եշմարտությանը հավատալը, անշուշտ, կը իներ պարզանություն:

Սիոնիստ տեսաբաններից Մ. Նորդառն «բարեկամ» լինելու անհրաժեշտառթյունը հիմնավորում է ուղղակիորն նրանով, որ Պաղեստինը գոնզում է Թուրքիայում և այդ պատճառով էլ Հրեաները պետք է աշխատեն ապրել «Պաղեստինում կամ գոնե Թուրքիայում», անելով ամեն ինչ, որպեսզի ապահովին ռու-մաներան ժողովուրդներուն ու կառավարության բարյացակա-մությունը և հեռու մնան աշխատիսի գործերից, որոնք կարող են նրանց մեջ ոթշնամական դգացում մը առաջացնել հրեաներուն հանդեպ<sup>2</sup>:

Ուրիշ ժողովուրդների հաշվին իրենց դասակարգային և ազ-գային շահերի պաշտպանության այս գիծը շափազանց թու-րոշ է սիոնիստական շարժմանը մինչև օրս: Իսկ անցյալ դա-րի վերջին շարժման դեկազմաները օգտագործում էին ամեն միշտը, փորձելով իրականացնել իրենց երկու հիմնական նպա-տակները՝ ձեռք բերել Պաղեստինը և հունական ու հայկական բուրժուազիային ասպարեզից դուրս բերելու դեպքում, կայս-րությունում հրեական կապիտալի համար ապահովին աիրապե-տող դիրքեր:

Պաղեստինում ազգային ոչախ ստեղծելու համար շափազանց լայն դիվանագիտական, քաղաքական ու գործնական ուրայքար էին ժամանել սիոնիզմի պարագուտիները սկսած 1890-ական թթ.: Նրանք օգտագործեցին նույնիսկ հայկական կոտորածները և կատարված բարբարոսությունների հետևանքով թուր-քերի համար նվազայւում ստեղծված անբարենպաստ հաս-րակական կարծիքը՝ Արդուլ Համիդի և նրա կառավարության մը անշում գործադրելու համար: Խնդիրն ցույց է տրված արար պատմաբան Մարզան Բուհեյրիի «Թեոդոր Հերցլը և հայ-կական հարցը» աշխատության մեջ, սիոնիզմի առաջնորդը խոստացել էր ամեն միշտը գործադրել, որպեսզի լուցնի եկ-րոպական մամուլը և համոզի հայկական կոմիտեների դեկա-

<sup>1</sup> АВПР, Новий турецкий стол, д. 7601, 1910, л. 12.

<sup>2</sup> «Ազատամարտ», 1911, № 555.

վարեկրին՝ Համակերպվելու թուրքական ռեժիմի հետ։ Փոխարինը նա ակնկալում էր Հեղատությամբ լուծել Պաղեստինի Հարցը, Տարիներ շարունակ իր մոտ ու Հեռու բարեկամների ողերթամբ նա ձգում էր Հասնել այդ նպատակներին, Ալեռուշան բազմաբական գործիչների ու դիվանագետների միջոցով Թ. Հերցլի աշխատամ էր արժանանալ Արդու Համիդի ընդունելությանը և դժմ դիմաց քննարկել իրենց հատաքրրող խընդիրները։ Այդ նպատակով նա 1896 թ. հունիսին ժամանում է Կ. Պոլիս Մ. Բուհելլիի պատգործած աղյուսակներում ամենայն ժամանակաշրջամբ նկարագրվում է սուլթանի գործակալի Հաւդիպատմը Թ. Հերցլի հետ զնացքի վագոն-նեստորանում։ Հերցլը նրան առաջարկում է Պաղեստինի Համար զնարել «20 միլիոն ֆունտ, որից երկու միլիոնը արվելու էր անմիջապես՝ որպես ավանու..., իսկ 18 միլիոնը՝ թուրքական կառավարությանը պարունակի վարչության վերահսկիլ Հանձնաժողովից ձերքագատելու նպատակով», ավելի ուշ<sup>1</sup>,

Սուլթանը Հերցլին ըրնդումեց և գործարք լկայացավ։ Սակայն սիսնիստների պարագաւումն իր մտքից լիրաժարվեց, Նրիտթուրքերի հեղաշրջումից հետո սուլթանի հետ նորից վերակազմին բանակցությունները։ Նրկրորդ ձախողությից հետո սիսնիզմի դիկավարները փորձեցին ընդհանուր լիզու գտնել երիտթուրքերի հետ։ Վերցիններիս նրանք խոստացան օգնել Հունական և Հայկական բուրժուազիայի դիրքերը խարիսխելու գործում և Հրեական բուրժուազիայի գործունեությունը հնաբարկել ովերաճնված Թուրքիային շահերին<sup>2</sup>, Խերկե, Հրեաները զգայի դեր էին կատարում երկրի տնտեսության մեջ։ Նրանք որոշակի ավանդ գրեցին Պաղեստինում և Հարնան շրջաններում պլանտացիոն տնտեսություններ ստեղծելու, ցիտրումի ու խաղողի արգիներ տնկելու և պրուղատնեսական այլ կուլտուրաներ մշակելու կարևոր գործում<sup>3</sup>, Առաջի երեք քառորդն այս շրջաններում կատարվում էր Հրեաների միջոցով։

Այդպիսով, կայսրության բազմազգ բուրժուազիան իր կազ-

<sup>1</sup> Տե՛ս զիստիթուրմացին բյուլետենի բարձրակայացության մասինաւոր, 1879, № 7 (29).

Հ. 6.

<sup>2</sup> Եսէյ անց, էջ 25.

<sup>3</sup> Տե՛ս «Ազգակարգ», 1869, № 34.

<sup>4</sup> Տե՛ս «Плантационное хозяйство в Палестине», Нр. 1919, стр. 4—5.

Աւգուրման ընթացքում ոչ միայն դասակարգային իմաստով միասնական ուժ չէր ներկայացնում, այլ, ընդհակառակը, արդհագած էր ազգային խմբերի նրանցից ամեն մեկը, ընդհանուր դասակարգային նպատակներին զուգահեռ, ուներ իր ազգային նեղ խնդիրները և համախի նրա պայքարի ուրու ժայրը և ազգակած էր ոչ թե սամանյան ֆինդայիզմի դեմ, այլ հիշյալ խնդիրների իրազործմանը: Միանության բացակայությանը թուլացնում էր պայքարը ֆինդայական կարգերի դեմ, դանդաղեցնում էր կապիտալիստական հարաբերությունների զարգացման պրոցեսը, հարավորություն էր ստեղծում կայսրության վերնախավի Համար՝ Հաջողությամբ շարունակելու պատճենիր, որ ամերիկա բազարականությունը:

Ներկայացրած փոխհարաբերությունների պատկերն արտացոլվում էր նաև երկրի բուրժուազիայի տեսչության գործունեալիքան մեջ, օքն վերցնելու լինենք կույսության տեսչության ներքին կրանքը (արտաքին հարաբերությունների մասին դեռևս խոսք կիլնի), ապա ինչպես ապելը, նրանում զիյավիր զերը պատկանում էր Հռւական կապիտալիզմ: Մեր կատարած ամփոփումները, որոնք հնավում են 1912 թ. պաշտոնական տարեդրքին և զրականություն ու մամուլի տվյալների վրա, մեզ բերել են այն հզրակացության, որ արդյունաբերության, արհեստների և ներքին տունարի մոտ 50 % -ը կննտրոնացված էր Հռւակապատճեններին, վաճառականներին ու դրամատներին, որոնք հսկում էին արտադրության ու տնտերի 26 % -ը: Հրեաները, լիանտինցիները և այլք կատարում էին տնտերի ավելի քան 19 % -ը և արտադրության 10 % -ը: Խակ թուրք բուրժուազիան երկրի տնտեսության մեջ զրացեցնում էր միայն լորրորդ տնտերը: Նրա ձեռքով կատարվում էր տնտերի մոտ 15, արտադրության՝ 12 % -ը միայն: Թուրք տնտերականներն իրականացնում էին անառուների վաճառքի մեծագույն մասը և զորպերի վաճառքի 40 % -ը<sup>2</sup>:

<sup>2</sup> Annuaire Oriental, Commerce, Industrie, Administration, Magistrature de L'Empire Ottoman, fondé en 1880, Constantinople, 1912.

<sup>3</sup> Տե՛ս Խճիկին Օ. Ղ. Եվրոպայի Օսմանական կայության 172-214.

Հաշվումները ևան ցույց են տալիս, որ կայսրությունում  
աշխատող մասնագիտների ազնիվ քան 86 % -ը կազմում էին  
ոչ բուրբերը: Բայց, իրավաբանների համարյա 40 % -ը բաւր-  
բեր ու մահմեդականներ էին: Մեր զարասկզբին վերջիններին  
թիվը նկատելիորեն աճում էր ինժեններների ու տեխնիկների,  
բժիշկների ու գեղագրոծների, ֆինանսիսների ու տնտեսա-  
գուների շարքերում:

Մերզած փառատական տվյալները աներկրայորեն հանգեցնում  
են այն հզրակացության, որ այլազգի բուրժուազիան կայս-  
րության անտեսական կյանքում խազում էր վճռական դեր: Օրյակարիզ ուսումնասիրողների մոտ այս բանը կասկած չի  
հարուցում: Վեճի առարկա է, ասկայն, հիշյալ ոլորտում երկրի  
բուրժուազիայի առանձին խմբերի և ազգեցության խըն-  
դիրք: Կան հեղինակներ, որոնք համարյա թե հավասարության  
նշան են դնուած ընդհանրապես այլազգի (Հույն, Հայ, Հրեա) բուր-  
ժուազիայի և կոմպրադորների գործունեության միջև: Ընդ-  
զմունքներին ազգային պատկանելությունը և նրանց  
կապն օտար կապիտալի հետ: Գինական պարապով բաժանվում  
է նրանց դերը ներքին անտեսական կյանքում և միջնորդ առև-  
տրության կայսրության բուրժուազիան բազմազգ էր ու  
տրոհված, նրա առանձին խմբերը, այնուամենայնիվ, որոշ  
կապեր ունեին գործնական առարկեզում, մեկը մրւակ հետ  
ինչ-որ շափով գործակցում էին և նրանց աշխատանքային  
առորուան ընթանում էր մշտական փոխազդեցությունների ու  
շահերի միասնությունների և հակասությունների բաշխման ու  
համակեցության պարմաներում: Այս միտքը փորձենք պար-  
զաբանել կոնկրետ օրինակներով: Նախ, անհրաժեշտ է ընդ-  
գծել, որ կոմպրադորների շարքերում Հույն, Հայ, Հրեա բուր-  
ժուազիայի ներկայացուցիչների կողքին, որոնք ժամանակին  
բացարձակ մեծամասնություն էին կազմում, շուտով երևացին  
նաև բուրք ու մահմեդական բուրժուազիայի ներկայացուցիչ-  
ներ: Առ թե ինչու քննադատությունը, որն ուղղված է կոմպ-  
րադորական բուրժուազիայի գործունեությանը, լպեաբ է հա-  
ցագրել միայն ոչ թուրքերին:

Ամփոփելով երիտթուրքերի անտեսական գործունեության  
մասին իր տեխնականները, պրոֆ. Ա. Միլլերն ընդգծել է, որ  
նրանք ոգլիավորապես ձգտում էին մասնակցել շահամարեր

կոմպրացորական տևեսրին»<sup>1</sup>. Նրանք աշխատում էին Հարբա-  
տություն դիզել՝ ձեռք բերելով Հողեր, առևթանի պալատական-  
ների և երկրից արտաքաված խոշոր պաշտոնյաների ունեցված-  
քը, կուտակած արժեքները՝ չնոր տերերը.— զրում էր սուլթա-  
նի նախկին գործակալներից Խաչեմլաշեն, — վճարում էին մնած  
մասամբ թաքցրած Հարստությունները<sup>2</sup>, Օգուագործներով իրանց  
թշխանությունը և օրինաքնները, երիտթուրքերը Հարստունալու  
իրենց մարմաշին աշխատում էին հաղորդ տալ: Արիալիկային  
մի փաստաթղթի համաձայն 1909 թ. Սուլթանի փոքր շրջանում  
երիտթուրքական իշխանությունները փորձ արեցին պայքարե-  
լու բարդական շնչյաների ու ազաւարների սանձարձակ զործո-  
գությունների դեմ: Մակայն համապատասխան ուժեր չանե-  
մալով, նրանք զիշեցին, բայց ստիպեցին ավազակներին իրենց  
տալ բթալանեած Հարստությունների մի մասը, որով ձգաւում էին  
զրացնել սեփական գրավանը: Արդ ձեզ նրանք զործազրում էին  
իրենց բոլոր ախորանների հանդիպ, առանց հաջին առնելու ազ-  
գային պատեհանելությունները<sup>3</sup>: Նույն փաստաթղթի տվյալների  
համաձայն, նշված ուղիղով Հարստունում էին մեծ մասամբ Շեոր  
կարգի ներկայացնեցիները, այսինքն՝ երիտթուրքերը: Նոր  
հարստացած այդ մարդիկ, նշված է փաստաթղթում, ուերում են  
բնակչության ցածր խավերից և Հարստություն են զիզում բնուր-  
գական ալլասերմած ու ծախու վարշաթյան Հովանավորության  
շնորհիվ, Որպես օրինակ, Բաղդադի նոր Հարստացած խավից  
Եներկայացվում են երկու անձնավորություն՝ Հաշի Մահմեդ փա-  
զա Սապոնցին, որը եղել էր նահանգապետերի և այլ պաշտո-  
նյանների գործակալն ու կամակատարը և ոմն Սաադուլլա՝  
Շեախկինում մաքսանենք, զող, իսկ հիմա կապալառու՝ զորքի  
մատակարար, պետական ու քաղաքային գույքների վարձակալ,  
Հարստատ տնաստերաւ<sup>4</sup>:

Ստեղծված պայմաններում բացի նշված ուղիներով Հարս-  
տանալուց, վերևախավի համար ամենափորձած ու շահութա-  
րեր ուղին օտար կապիտալի հետ ունեցած կապերն էին: Այդ  
նպատակին համելու համար, նշում է սովետական արևելագետ

<sup>1</sup> «Всемирная история», т. VII, М., 1960, стр. 357.

<sup>2</sup> Խայտելու Մ. Բ., Սեմար ամենափորձած ու շահութա-

րեր ուղին օտար կապիտալի հետ ունեցած կապերն էին: Այդ

<sup>4</sup> Նոյն ուղը, թ. 221:

Իրանիուստը, երիտթուրքերը հիմնել էին Զ մոնոպոլիսական-կազմակերպություններ<sup>1</sup>: Հաս մեր հաշվումների, նման Ց կազմակերպություններ ստեղծվել էին բանկերի և երկաթուղիների ցանցում, և մոտ 20-ը՝ ռատար կոնցենտրացիա սիստեմում նրանցից հինգը գտնվում էր երիտթուրքական դեկավորների անմիջական հակողության տակ, որոնցից երեքը շոգենավայրերներություններ էին, մեկը՝ 1909 թ. Կ. Պոլսում հիմնված գործի արտադրություն, իսկ մյուսը՝ նույն ժամանակ կազմակերպված թուրքական ազգային բանկն էր: Յոթ այլ ընկերություններում երիտթուրքերը ունեին մեծ ազդեցություն: Հիշատակության արժանի է այն փաստը, որ եթե սուլթանական իշխանությունները 60 տարվա ընթացքում թուլլատրել էին կազմակերպություններ, ապա երիտթուրքերը միայն երեք տարում ընարավորություն էին ունեցել ստեղծելու, 25 նման կազմակերպություններ<sup>2</sup>: Եռուսկ նրանց ուսումնական հիշյալ ընկերությունների, ձեռնարկությունների, բանկերի ու այլ հիմնարկների պրեզիդենտ, փոխպետքիդենտ, կառավարիլ, ղիրեսկառ և այլն, ակտիվորեն մասնակցելով կապահպահական գործառություններին կամ հանդես գալով որպես կապիտալիստ-ձեռնարկատեր: Արտպես, 1912 թ. Թուրքիայի ազգային բանկի զնկավարության մեջ Գալուստ Գյուլբենկյանի անվան կողքին մենք տեսնում ենք Զեմար Ալմադի, Հումեին Զահիդի (Յալիին), Ռաշիդ Սադի թելի և ուրիշների ազգանունները: Երեսանդրութերի արտադրության ընկերությունում խոչըն կոմպրագոր-կապիտալիստներ՝ Հույն Ն. Մավրոկորդատոյի և Հայ Յ. Սպարտալիի հետ աշխատում էր երիտթուրքերի պարագաւուններից է: Կարանոն: «Եիրքեթ-ուշ Հայրին» շոգենավայրին ընկերության կառավարիլներից նրեն Զիա Փաշան ու Թալաաթ թելը, քաղաքային տրանսպորտի ընկերություններում Զեմարը, Նուր թելը, Սոման Աղիլ թելը և այլ անձնավորություններ, 1909 թ. Հիմնված արդյունարերության ու առնարի ընկերություններ՝ Զելալէզին Արիֆ թելը, Նավազանդիան առնարի ընկերությունների ու ժողովրդի շինարարությունների ընկերություններում փայտատեր էր Սահիդ փաշան: Ժամանակի ընթաց-

<sup>1</sup> Տե՛ս Իրանց, Դարյաց ուժը հեմալիտսկոյ քաղաքացիություն, Խ.—Լ., 1928, էջ 192.

<sup>2</sup> Տե՛ս Annuaire Oriental..., 1912. p. 167—192.

թում ակցիոներական ընկերությունների 60 %-ի զեկավարության մեջ մտան թուրք բուրժուազիայի ներկայացուցիչները Վիճակագրության և փաստական նյութի պահանջ առաջմմ թուրքի տալիս վերլուծելու առանձին թուրք կոմպրադորների դրժունելությունը։ Սակայն կողմնակի ու բազմաթիվ այլ փաստեր ցույց են տալիս թուրքական բուրժուազիայի անող ակտիվությանը երկրի անտեսական կյանքում և, Հատկապես, արտաքին առևտությամ։ Արդեն 1907 թ. վերջին ստեղծվել էր առևտությարդավարող և գործող առևտրական օրենսդրությունը վերանայող Հանձնաժողովը, որի մեջ մտան ութ բարձրաստիճան անձնավորություններ։ Բազմաթիվ թուրք կապիտալիստներ իրենց դրամը տրամադրում էին գործարաններ կազմակերպելու համար։ Տրամիգունում մի շարք թուրք մեծահարուստներ, ձեռք բերելով մոտ տասը մարդատար մեքենա, հիմնեցին տրանսպորտային ընկերություն, Խղմիրում և շրջանում գունվող հինգ բանկեր և առևտրարդյունաբերական պալատը Բայկանյան պատերազմներից հետո անցան երիտթուրքական զեկավարների հոկոգության տակ<sup>1</sup>, Բացի այդ, Խղմիրի թուրք և մահմեդական վաճառականները հասան այն բանին, որ զավախ առևտրականները միայն նրանց էին ուղարկում իրենց ապրանքը, նրանք էլ այն Հանձում էին ստարերկրյա արտահանողներին։ Այդ տեղաշարժերին արոշ լափով նպաստեցին ներմուծվող, Հատկապես Հունական, ապրանքների բորբոքի մի քանի կամպանիաները և երիտթուրքական շուկանիստական պրոպագանդան։ Թուրք կոմպրադորները հետզհետե լայնացրին իրենց գործունեության շրջանը և առաջին համաշխարհային պատերազմի տարիներին համարյա ամրագովին իրենց մրցակիցներին գուրս մղեցին կայսրության շուկաներից։ Արդպիսով, կոմպրադորական բուրժուազիան, որի հիմնական տարրերը սկզբում Հույն, Հայ, Հրեա առևտրականներն ու դրամատերերն էին, մեր դարասկզբին համալրվում էր թուրք և մահմեդական գործարար մարդկանցով, պաշտոնյաներով ու դրամատերերով։ Վերջիններիս բանակական անը կա-

<sup>1</sup> ՏԵ՛ս «Թրէքի հայնք», 1908, Ա 2, էջ 10։

<sup>2</sup> «Milliyet», 11 սկ 12. 09. 1970.

<sup>3</sup> ՏԵ՛ս Կույն տեք., 18. 09. 1970,

տարվում էր լավագանց արագ տեմպերով և իշխանությունների գործադրած բռնի միջոցների օգնությամբ նրանք կարողացած երկու տասնյակի ընթացքում իրենց ախոյաններին դուրս մղել նշված առաջարկղից:

Կոմպրագրական բուրժուազիայի առանձին խմբերի գործունեության և դերի մասին գրականության մեջ առկա է վիճեցի մի հարց ևս. Եատ հեղինակներ տարբերություն լին գնամ այլազգի բուրժուած և կոմպրագոր հասկացողությունների մեջ նույնի որ վերջինիս շահերը դիտվում են միմիայն ոտար կապիտալի շահերի հետ համակցված, ապա համայն մոնոպոլիսական կապիտալի շահերի պաշտպան էր հայտարարվում Օսմանյան կայության այլազգի ամբողջ բուրժուազիան. Տիրապետող տեսակենոր հետոյան է. կոմպրագրական բուրժուազիայի ռամբողջ գործունեությունն ամուր կերպով կապվում էր ոտար կապիտալի գործունեության հետ<sup>1</sup>, և նրա շահերը ոմիահյուավում էին ոտար կապիտալի շահերին<sup>2</sup>. Տեսականորներ այս գնահատականները ճիշտ են և համապատասխանում են իրականությանը. Բայց դրանք արմատապես բացառում են կոմպրագրական բուրժուազիայի գործունեության մեջ նույն գրական աղյուսությունը երկրի տնտեսության զարգացման վրա, վերջինս վերապերելով միայն ազգային բուրժուազիային և, աշխարհական բուրժուազիայի առանձին խմբերը խստորնեարանքատում են իրարից:

Փաստական և վիճակագրական նյութերի պահասը, երրեմն նաև ընդունված տեսակետների հարցում տիրող գողմատիզմը երկի հնարավորություն լին տալիս ավելի համարձակ մեկնաբանություններ անելու և ընդհանրացումներ կատարելու այս կարևոր գործեական ու տեսական խեղբի վերաբերյալ:

Խոսնելով կապիտալի ձևավորման ռւպիների մասին, Կ. Մարքսը նշում էր, որ նրա հիմքը հանդիսացել է առևտրական և վաշխառտական կապիտալը. Կապիտալի կուտակման ձևերի ու պայմանների մասին խոսելիս Կ. Մարքսը գտնում է, որ արդ պրոցեսին կարող են մասնակցել նույնիսկ արհեստներից.

<sup>1</sup> Вдовиченко Д. Н., Национальная буржуазия Турции, М., 1962, стр. 8.

<sup>2</sup> Алибеков И. В., Государственный капитализм в Турции, М., 1966, стр. 14.

յանը հողատիրությունից և աշխատանքի այլ ձեռքից ստացվող նկամուտները<sup>1</sup>. Հիշյալ ձեռքով տեղի ունեցող հապիտավի կամ զրամի կուտակումները սկզբնական շրջանում իրականանում էին մինչեւ պիտայիստական շահագործման հիման վրա։ Ն. Տոդորովը կուտակման աղբյուրների շարքն է գտաւմ վաշխառուական գործառություններից ստացվող եկամուտները, քաղաքների կարավանսարայներից, խանութներից, տներից, բաղնիքներից որպես վարձ զանգվոր գումարները, առևտրական շահույթը և այլն։ Արտադրողական ուժերի զարգացումը XVII—XVIII դարերում, շարունակում է Ն. Տոդորովը, հանգեցրեցին ուսուցոր կապիտալների կուտակման օսմաններին հպատակ ժողովուրդների՝ հույների, օրիաների, հայերի, բուլղարների, սերբների և ուրիշների նորաստեղծ հարուստ խավերի ձեռքնում<sup>2</sup>.

Հարկային սիստեմը ևս այլ պայմաններում պիտք է հանդիսանար կուտակման աղբյուրներից մնկը, սակայն, ինչպես ասվեց, ստացվող եկամուտները ժամանակում էին պարագիտ գործած վերնախամփի կարիքները բավարարելու համար և չէին կարող օգտագործելն արտադրության մեջ։ Ներկայացված պատմական գործուների և կայսրության զարգացման յուրահատկությունների պայմաններում կարևոր նշանակուրյան ուներ կամպրադրանական կապիտալը որպես կուտակման զգալի աղբյուր։ Նրա ազգեցությունը, մեր կարծիքով, նշանակալից էր հատկապես զարգացման այն շրջանի համար, երբ Թուրքիան դեռև կիսագութային վիճակում շէր գտնվում։ Միշնորդ առևտությունների կապիտալիստական հարարերությունների հաստատման տեսակետից վեռական նշանակություն ունեցավ կայսրության հունական շրջաններում զերև XVIII դարում։ Հյուսիսային Հռոմատանի Ամբելակի փոքրիկ քաղաքը դարձավ տերստիլ արդյունաբերության խոշոր կենտրոն, շնորհիվ առևտրական կապիտալի բարձր զարգացման՝ տարգին XVIII դարի վերջին և XVIII դարի սկզբին, երբ այն սկսեց վնատքի արտադրության մեջ ներդրվելու հետավորությունը<sup>3</sup>.

<sup>1</sup> Տե՛ս Մարք Կ., Ֆորմы, предшествующие капиталистическому производству, М., 1940, էջ 41, 45.

<sup>2</sup> Տե՛ս Տոդорով Ի., Балканский город..., էջ 181.

<sup>3</sup> Խոյն տեսք, էջ 182.

<sup>4</sup> Խոյն տեսք, էջ 222.

նույնը տեսնում ենք Բալկաններում, երբ, օրինակ, առևտրական և արդյունարերող Գյումուշզբերդան հայտնի ընտանիքն անցյալ դարի առաջին կեսին ծավալել էր չափանց լար արդյունարերական և առևտրական գործունեություն։ Միզուցե ուղղակի իմաստով Աթանաս Գյումուշզբերդանը և նրա զավակները կոմպրադորներ չէին, բայց նրանց մոտ տակդի ուներ առևտրական ու արդյունարերական օպերացիաների մշտական զուգորդում։<sup>1</sup>

Որպեսզի ներքին շուկայում լկորցնեն իրենց ազդեցությունը, Գյումուշզբերդանի ժառանգելերը 1850—1860-ական թթ. եվրոպական երկրներից բերեցին մերձեաներ ու սարքավորումներ և նորոգնեցին իրենց հիմնական կապիտալը։ Պատկերն ամրողացնելու համար պետք է ասել նաև, որ այդ ընտանիքը ձեռք էր բերել կազմածներ ու ազարակներ, թալկանյան թերակղու, քաղաքներում և Ստամբուլում ուներ բնակելի շենքեր, խաներ, արհեստանոցներ, խանութներ ու պահեստներ։ Մաքուր եկամուտների մոտ 20 %-ը նա ստանում էր աշխազացներից<sup>2</sup>։

Կայսրության ասիական մասի կոմպրադորական կապիտալը և սպասագործում էր ոչ միայն միջնորդ առևտրում և հանուն միայն կոմպրադորական կապերի։ Անկանած է, որ կապիտալի բնական տեղենեցը շահն է և իր գործունեության սահմանների ընդլայնումը։ Ենելով այդ հիմնական նպատակից, կոմպրադորները, անկախ ազգությունից ու գավանանքից, իրենց շահերին ու կապիտալը ներդիում էին տեսեսության շահավետ բնագավառներում և օրյեկտիվորեն նպաստում երկրի արտադրական ուժերի զարգացմանը։

Հայ մեծաշարում սարաֆ Մկրտիչ ամիրա մեզայիրյանը (մեզայիրյի) 1850 թ. հանձն առավ Բուրսայի վիլայեթի մետաքսի մարզերը, պայմանով, որ 1856 թ. պետական զանարկություն մուժի 45 հազար անգլիական ֆունտ և կառուցի հինգ մետաքսամշակման ֆաբրիկաներ։ Այնուհետև, նրա տնօրինությանը հանձնվեց Իզմիրի մարզերի զանանմը, որի գումարնե-

<sup>1</sup> Тодоров И., Зарождение капиталистических отношений в текстильном производстве Болгарии в первой половине XIX века, «Краткие сообщения института славяноведения АН СССР», 1958, № 23, стр. 86.

<sup>2</sup> Того же автора, Балканский город..., стр. 242—243.

բը, Համեմատած պարագաներն ըուսեին բերի զեկավարության ժամանակաշրջանի հետ, ավելացան երեք անգամ։ Նրան հանձնարարվեց Հակեռու և, Պոլսի և ապա Կրետու կղզում մաքսատները, Սակայն մահմեդական ազագանու դժունության և բանսարկությունների հետևանքով չուտով Մ. Ծեղայիրլանը զրկվում է բոլոր պաշտոններից, Խոստացած ֆարրիկաներից և Հասցեում է կառուցնել միայն լորսը, ի վերջո, Մկրտիչ ամիրային բանտարկում են և նրա ոճեցվածքը գրավում։ Հատ կազմած փառաթղթերի, Հարստության ընդհանուր գումարը հավասար էր մոտ 1,834 հազար լիրայի։ Այդ գումարի 8 % -ը (155, 250 միրա) գրված էր առևտրի և 7 % -ը (147, 500) արդյունաբերության մեջ։ Այդըն քաղաքի հինգ գործարաններից երկուսը՝ մեկը լուսի, մյուսը՝ բամբակի, մեր դարասկզբին պատկանելին են եղել ռազատվավոր վաճառականներնեւ Մ. էֆեզի Մերկեր-յանինք<sup>2</sup>.

Կոմպրագորական բուրժուազիայի խոշորագույն ներկայացուցիչներ Իրրանույան եղբայրներն իրենց մոտ 50 վաճառառներից բացի Ամսոխայում հիմնել էին ուժանարան ու մետարսի Հյուսվածքեղենի գործարան և Հանդիսանում էին ուժանուայի ամենամեծ գործարանատերերնեւ մեկը<sup>3</sup>.

Մըրմբյանը հիշատակում է միշնորդ առևտրի մի քանի տասնյակ խոշոր ներկայացուցիչների, որոնք Իրրանույանների նման զբաղվում էին դրամական-ֆինանսական գործերով, վարկավորում էին ձեռնարկատերերի ու վաճառականների, հիմնադրում էին կապիտալիստական, ֆերմերային տնտեսություններ, կառուցում ֆարրիկաններ, գործարաններ, կազմակերպում և ֆինանսավորում էին զպրոցներ, տպարաններ, ակումբներ ու այլ մշակութային հիմնարկներ։ Հեղինակը բերում է Գյուլբենկյանների, Սսայանների, Պալլանների, Դաղեյանների և այլոց անունները<sup>4</sup>.

Համաձայն նրա ընդհանրացումների, 7 խոշոր առևտրական տներ հիմնել էին բանկեր, 44 առ միշնորդ առևտրականներ

<sup>1</sup> ՊԱԲ, թ. Ազատամիք ֆանց, «Սարաֆ Մկրտիչ ամիրայի զորք» պատմությունը, էջ 5—22։

<sup>2</sup> «Բազմանդեմ», 16.05.1803 թ.

<sup>3</sup> ՏՏ՛ Ամենայն Գ. Յ., Հովհանոսյան Գևորգին Ամոսին, էջ 634, 640։

<sup>4</sup> ՏՏ՛ Ս. (ըստույան) Յ. Գ., Քարքառական Հին վաճառականություններ...

էջ 105, 116, 118։

վարկավորում էին արտադրական մի շարք ձեռնարկությունների, իսկ իրենք ունեին պլուղական ընդարձակ տնտեսություններ'.

Նշանակալից էր բուրժուազիայի այդ խմբի ներդրումը լեռնային արդյունաբերության, հաղորդականության միջացների, և ավանդական գիտական ու առանձին բնակավայրերի շինարարության մեջ:

«Բյուզանդիանը» 1896 թ. վերջին հաղորդում էր էրեւլիի ածխառչակերի շահագործման ընկերության կազմակերպման մասին, որի հիմնադիրը ռենկատովի Մ. Լեոնիտաս Զարիֆի և սամանյան պանքային կողմեց Մ. Կ. Սպուտնաց<sup>1</sup>: Այնուհետև թվարկված են յոթ հոգուց բազկացած վարշության անդամները, որոնցից երեքը Հույն էին, երկուսը՝ ֆրանսիացին, և երկուսը՝ իտալացին: Ընկերությանը հանձնարարվել էր կառուցել նամաճանգիստ, էրեւլի—Զոնգուլդաղ երկաթուղարքի և շահագործներ գրանիք: «Դրամագլուխը», — գրում էր թերթը, — տասը միլիոն ֆրանկ, բայց հազար բաժիններեւ բազկացած՝ յուրաքանչյուրը հինգ հարյուր ֆրանկ: Աղեկից զատ շորս միլիոն պարտաթղթեր ար շրջաբնության պիտի հանգին երկու հազար բաժին հիմնադիրներու համար<sup>2</sup>: Շարադրվածից երկում է, որ ընկերությունը շահագործելու էր ոչ միայն երկրի բնական հարստությունները, այլև սպատագործում էր տեղական, զգալի մասով կոմմունադրական կապիտալը: Ժամանակակից մամուլի էջերում կարելի է զոնել բազմաթիվ այլ փաստեր, երբ միջնորդ առևտորի միջոցով կուտակված դրամն սպատագործվում էր արդյունաբերության մեջ: Ծրկաթեղների խոշոր առևտորական Աստուր աղան, որին է, Պոլսում ո՛վեմիրը բաշին էին կոչում, իր կապիտալի միաց դրել էր լեռնարդյունաբերության մեջ<sup>3</sup>:

«Մանիսայի մեջ, — գրում էր «Բյուզանդիանը», — զրամաւեր Հարնեց էֆ. այդ քաղաքն էլեկտրականությամբ լուսավորելու համար գործարան մը պիտի հաստատեն<sup>4</sup>:

Մի խումբ հայ վաճառականներ, մուծելով 1000-ական լի-

<sup>1</sup> ՏԵ՛ս «Բյուզանդ», 1907, № 38, էջ 1405, № 39, էջ 1444:

<sup>2</sup> «Բյուզանդիան», 19. 12. 1896:

<sup>3</sup> Նույն անգր:

<sup>4</sup> ՏԵ՛ս «Բյուզանդ», 1907, № 25, էջ 1388:

<sup>5</sup> «Բյուզանդիան», 12. 11. 1908:

րա, Հիմնեցին 23.000 լիրա զբամաղուիս ունեցող բնկերություն, որը ձգտում էր ռեպարտի թուրքական առևտորի և արդյունաբերության զարդարմանը<sup>1</sup>, Բայ Կոնյայում Իլյա Չեխա անտևով ոմն վաճառական բանկ էր Հիմնել տեղական առևտորին և արտադրական հիմնարկներին օգնելու համար<sup>2</sup>:

Բերված օրինակները հիմք են տալիս պնդելու, որ կոմպարադրական կապիտալը չէր կարսդ օգտագործվել միայն միշեռոր առևտորի համար։ Նման սահմանափակ գործունեությունը, անկանակած, հակասում էր կոմպարադրական բուրժուազիայի շահերին և կապիտալի համընդհանուր տենդենցին՝ անել և ներգրավել անտեսության նորանոր բնագավառներ։ Առաջին ինքու, որպես կանոն, Օսմանյան կայսրության կոմպարադրությը, կառավարող շրջանների բարյացակամ վերաբերմունքի հետանքով, և ելնելով սեփական շահերից, լայնորեն զբազվում էին ֆինանսական ու արդյունաբերական գործունեությամբ։

Սակայն, չնայած ընօրշանուր նպաստավոր պայմաններին, ոչ մահմեդական կամ արքադավան բուրժուա-կոմպարադրությունը ընդպիս տրվեց, և նթակա էր երկրում անբող բալոր կամաշականություններին և կարող էր սնանկանալ մի քանի ժամկան կամ օրվա ընթացքում։ Օյա Սենչերը Թուրքիայում կապիտալի կուտակման համար անբարեկապտաստ պայմանների թվին է դասում կապիտուլյացիաները, մաքսային ցածր հարկադրությունները, հաճախ տեղի ունեցող գույքի ու հարստությունների բռնագրավումները և անօրինականության մյուս դրսևությունները։ Արդ բոլորը, գրում է նա, ոլլորեն արգելակում էին հարստությունների կուտակումը, որը, առանց այն էլ, տեսեական կառացվածքի շնորհիվ, շափազանց դժվարացած էրս<sup>3</sup>,

Նման պայմաններում չի կարելի զանց առնել կոմպարադրական կապիտալը, որպես կուտակման կարևոր աղբյուղներից մեկը Թուրքիայում։ Խնդրի մյուս կողմը ևս չափազանց կարելուր է երկրի պատմական հակատագրի համար։ Միջնորդ առևտորի ու անտեսական լայն կապերի միշտող իմակերիալիդը խորտակում էր ամեն մի աղքային սահմանափակում։ Նա ստիպում էր սոցիալական բոլոր խմբերին, հատկապես բուրժուա-

<sup>1</sup> Թիյարութեա, 1905, № 7, էջ 107.

<sup>2</sup> ՏԵՇ ամբակ, 07.04. 1910.

<sup>3</sup> Sencer Oya, Türk toplumunun tarihsel evrimi, s. 35.

պիալին ու նրա անրաժմանելի մասը կազմող կոմպրադորներին՝  
սպասարկել նաև միջազգային շուկան, բավարարել նրա պա-  
հանցները:

Ականիվորին մասնակցելով միջազգային առևտրին և անտե-  
սական կապերին, խոշոր գրամատերերը և Հարուստ վերնախա-  
վի ու ոյլ ներկայացուցիչներ, իրենց կուտակած գանձի մի մա-  
սը մտցնում էին շրջանառության մեջ: Հետևաբար, բռուժուա-  
ղիայի հիշյալ մասի կապիտալներն այս կամ այն շտփով  
առևտրի, արգյունարերության և Հողագործության ֆինանսա-  
վորման աղբյուր էին թե երկրի ներսում և թե միջազգային  
առևտուազ: Կասկածից վեր է, որ կոմպրադորների գործունեու-  
թյան պլանավոր նպատակն արտաքին առևտուրն էր, երկրի  
ներին բարիքների արտահանումը միջազգային շուկա:

### Բ. Տարբեր գործոնների ազդեցությունը

Արտաքին ուժեղացող կապերը նպաստեցին կայսրության  
կիսազագութ դառնալու պրոցեսին և մեծ շափով աղեցցին նրա  
անտեսական կյանքի համարյա բոլոր ուղղութերի վրա: Թուր-  
քիան անցյալ դարի ընթացքում դարձավ Հումքի ազգյուր և  
ընդարձակ շուկա՝ արևմտյան մռնուազիաների համար: Օսման-  
յան կայսրության պատմության մեջ կատարված այդ վճռա-  
կան շրջադարձը հանդիսացավ նրա անկան հիմնական պատ-  
ճառներից մեկը:

Մակարն Հակայական կայսրության կիսազագութ դառնա-  
լը նման չէր այլ մայրցամաքների ու խոշոր պետությունների  
գաղութացման պրոցեսին: Համարյա ամենուր այն ընթացել է  
րոնի ուժով, զինք ու զորքով այդ երկրները գրավելու միջոցով:  
Նվյուպական կապիտալը Օսմանյան կայսրության տարածքը  
մուտք գործեց այլ կերպ՝ այսպիս ասած ոխազազ ճանա-  
պարհության ուղին, որով օտար կապիտալը ներհունեց  
երկրի անտեսության մեջ՝ առևտուրն էր: Հանրահայր է, որ  
դեռևս անտիկ շրջանում Փոքր Ասիան աերս առևտրական կա-  
պիտության կապված էր Միջնորդականի ու Ան ժույն կենտրոնների  
հետ: Այդ ռեգիստր լուրահատուկ կամուրջ էր Ծվյուպայի և  
Ասիայի տեսական, մշակութային ու բաղաքական կապերի  
համար: Վերլուծելով հին շրջանի պետությունների ու ժողո-  
վուրդների փոխհարաբերությունները՝ Կ. Մարքսը գրել է. «Փոքր

Ասիայի քաղաքները հին Հռոմին ամեն տարի դրամական տուրք  
 էին վճարում: Այդ դրամով Հռոմը նրանցից ապրանք էր գնում,  
 և զնում էր բարձր զներով<sup>1</sup>: Այդ կապերը պահպանվեցին Հռո-  
 մի ու Բյուզանդիայի անկումից հետո նաև միջին դարերում:  
 Դրանք շարունակվեցին մինչև 1453 թ., երբ Բյուզանդ գրավեցին  
 Կոստանդնուպոլիսը, որից հետո առևտուրը խիստ նվազեց ու  
 հասավ անեղան շափերի: Վենետիկի և Ջենովայի հանրապետու-  
 թյունները կարողացան ինչ-որ շափով այն շարունակել: Բան  
 այն էր, որ ռազմական բոլոր սկզբանները Արևելքում, որոնց  
 թվում նաև Բյուզանդը, առևտուրը համարում էին անտեսության  
 թեականոն վիճակը պահպաննելու միջոց, առանց որի նրանք  
 շին կարող իրադրժել իրենց առջև դրան խնդիրները: Այս այս  
 պատճառով էլ օսմանյան սուլթաններն իրենց զգործության շրր-  
 ջանում ելլրոպական վաճառուականներին տրամադրեցին հատուկ  
 առանձնաշնորհումներ, որոնք նրանց հարավորություն և իրա-  
 վումը էին տալիս անխաթար կերպով առևտուրը կատարելու  
 կայսրության տարածքում: Կ. Մարքսը գտնում էր, որ առևտուրը  
 ու այլ կապերը մահմեդական երկրների հետ արդ շրջանում  
 արիության խնդիր էին, «քանի որ զուրանը ամեն մի ստար-  
 երկրացու հայտարարում էր թշնամի... նվրոպական առաջին  
 առևտրականները, որոնք ուսկի դիմեցին առևտուր անելու  
 արդպիսի ժողովրդի հետ, հենց արդ պատճառով աշխատում էին  
 ապահովել անձամբ իրենց համար արտակարգ պայմաններ ու  
 արտոնություններ, որոնք, սակայն, հատպայտմ տարածվեցին  
 իրենց ամբողջ ազգի վրա: Այսպիսին է կապիտուլյացիաների  
 ժագումը<sup>2</sup>, Այզակի, 1535 թ. ճնշեց առաջին կապիտուլյացիոն  
 պայմանագիրը Ֆրանսիայի հետ ուկապիտուլյացիաները, — շա-  
 րունակում է Կ. Մարքսը, — դրանք կայսերական դիմումներ  
 էին, հրովարտակներ՝ առանձնաշնորհումների մասին, որոնք  
 Բարձր դուռը տալիս էր դանաղան նվրոպական պետությունների, իրավունք վերապահելով այդ պետությունների հպատակ-  
 ներին՝ անարգի մուտք գործելու մահմեդական հողերը, այն-  
 ական զրադաշտու իրենց զորքերով և կատարելու ժիակատարու-  
 թյուններ, համաձայն իրենց գավանաներից<sup>3</sup>, Հրովարտակները

<sup>1</sup> Մարքս Կ. և Էնցելս Փ., Ըստ., թ. 23, որ. 173.

<sup>2</sup> Խոյն տեղը, գ. 10, էջ 168.

<sup>3</sup> Խոյն տեղը:

ներկայացնում էին մենաշնորհներ ոմիակողմանի տրամադրության կառավարության կողմից, որը, հետևաբար, իր հայեցողությամբ կարող էր գրանք լիզյալ հայտարարել, որը նարձր դուռը նրանման իրագործում էր, ոչրամարժելով այսուհետեւ դրանք պահպանելու<sup>1</sup>: Հետզհետև կապիտուլյացիաները ժամանակավոր արտառություններից վերածվեցին ստար պետությունների ու երանց հապատակների համար մշտական առանձնաշնորհումների և դարձան անհաջանար պարմանագրեր, որոնք սուլթանը միակողմանի կերպով այլևս չէր կարող լիզյալ համարել: Անական առումով հին փոխհարաբերությունները մնացին և նույնիսկ արտաքանակն ավելի կանոնավորվեցին:

Այդպիսով, առվարույթ դարձած տնտեսական կապերը խընդրու առարկա շրջանների ու ժողովուրդների միջն մի կողմից, եվրոպական երկրների անտեսական հզորությունը և նոր շուկաներ զայնելու երանց առող պահանջը, մյուսից, կազմեցին շխաղական կերպագման սրբականությունը:

Ստար կապիտալի կողմից տիաղաղ ճանապարհով երկրի մենաշնորհ յարձուելուերը զրագելու գործում շափաղանց մեծ դիր կատարեցին նաև սուրբեկութիվ գործուները: Ամենից առաջ, կայսրության վերնախավը շատ շուտով հասկացավ, որ արտաքին առևտուրը հարստանեալու բավական կայսւ և նշանակալից ազրուրմ է: Այդ պատճառով էլ սուլթանը և մյուս կառավարիչները երբեք արգելուեր չհարուցեցին արտաքին առևտուրի ամբ ճանապարհին և լրջորն շմտածեցին տնօպամ վարելու ամենուր փորձած պրատեկցիոնիդմի բաղաքականություն՝ հօգուտ ներքին առևտուրի ու արդյունարերության շահերի: Ընդհակառակը, որքան ուժեղացագ օտարերկրյա կապիտալի ազգեցությունը, այնքան սուլթանը, մեծ ու փոքր իշխանավորներն ու կայսրության վերնախավն ընդհանրապես, ավելի հեշտ զիշեցին իրենց զիրքերը: Պ. Զիխաչն արձանագրում է, որ արգելել 1858 թ. բույրական կառավարությունը պատրաստակամություն էր հայտնում ռամեն անգամ զիմելու օտարերկրացիների օգնությանը՝ վարչական կամ ֆինանսական միջոցառումներ ձեռնարկելին, որնց իրականացնումից նա հույս ունի բաղելու օգուտները<sup>2</sup>:

1 Маркс К. и Энгельс Ф., Соч., т. 10, стр. 169.

2 Чихачев П. А., Великие державы и восточный вопрос, стр. 116—117.

Թուրք մտավորական ու պետական գործիչ Ահմեդ Միդհատը իր «Հեղափոխության Հիմունքները» աշխատության մեջ զետեղած բազմաթիվ փաստաթղթերում ցույց է տալիս, թե ինչպես սուլթան Արդուլ Ազիզը և փոխառության պայմանագիր կերպով նվիրեներ էր ընդունում..., ինչպես նաև կամազոր կերպով ենթարկվում էր արտաքին ազդեցության և այնա՛, Զիջումների ուղին հասցրել էր մաքսատների տուրքերի գանձումը օտարների հսկողության տակ դնելուն, որի հետևանքով գանձվող գումարները ավելացրել էին 1,5—2 անգամ, Փոխարքներ լայնորներցին էին դնեները օտար կապիտալի ներդուստի համար.

1838—1846 թթ. ընթացքում Անգլիայից ու Ֆրանսիայից հետո Թուրքիայի հետ առևտրական պայմանագրեր կնքեցին Ռուսաստանը և մեկ տասնյակից ավելի ենթապական երկրները: Այդ պայմանագրերը կայսրության անտօնական կախվածությունը տուրքին լուրջ քայլերն էին: Դրանց հետևեցին ներմուծվող (ինքնարժեքի 5—8 %-ը) և արտահանվող (12 %-ը) ապրանքների հարկադրումները, որոնք անասելի ցածր էին և, կայսրության դոյության տարիներին մնացին գրեթե նույն մակարդակին: Սկզբնական շրջանում գնումները կատարում էին տեղացի վաճառականները, որպես արտասահմանյան ընկերությունների գործակալներ կամ ներկայացուցիչներ: Սակայն XIX դարի վերջից օտարներներն էին տեղերում կատարում առուժախը և վճարում համապատասխան արժեքը: Հաճախ բերքը գնում էին դեռևս գարնանը, երբ այն կարելի էր ձեռք բերել ավելի էժան գներով: Երբեմն էլ օգովում էին պահպանություն անհնանելի վիճակից ու կարիքից, թիւ տալիս էին ձմռանը կամ գարնանը և շատ ստանում՝ աշնանը: Օտար ընկերությունները հենվելով իրենց փորձի վրա, նախապես պայմանավորվում էին վաճառքի ձևի ու վճարելիքի, ապրանքի տեղափոխման մասին և աշխատում էին ձեռք բերել մենաշնորհ իրավունքներ՝ ավյալ ապրանքը գնելու և տեղափոխելու գործում: Բանք հասել էր այնտեղ, որ տեղացի արտադրողները և վճառառականները գների մասին ժիրենց խոսքն ասելու իրավունք չունեինք<sup>1</sup>: Կապիտուլյացիանելով ընձեռած իրավունքների համաձայն օտարերկրացիները ենթակա չէին

<sup>1</sup> ԱՀԳՎԱ. ֆ. 401, 1886, լ. 10, լ. 62.

<sup>2</sup> «Մանաւական պահպանություն»:

սեղական օրինքներին ու դատարաններին։ Նրանց հրկուները  
 և հրկարգընող պիվանագնուներն ու Համապատասխան մարմին-  
 ներն էին կառարում արդ պարտականությունները, որպես կա-  
 ռուն, պաշտպանելով իրենց պետությունների Հպատակներին։  
 Դեռ ավելին, վերջիններին գործունեությանն իրենց միջնորդու-  
 թյամբ նպաստում էին տասնյակ դիմանադիտական, տնտեսա-  
 կան, կուլտուրական, գիտական ու քաղաքական կազմակեր-  
 պություններ, որոնք Օսմանյան կայսրությունում հիմնել էին  
 սուսր պետությունները։ Դրանք ունեին նաև իրենց Հառուկ Հա-  
 զորդակցության ու կապի միջոցները։ Սկսած 1870-ական թթ.,  
 արդ կազմակերպությունների չարժը մտան նաև և։ Պալսում  
 կաղմակերպած առևտրական պալատները։ Նրանցից առաջինը  
 1870 թ. հիմնեց Ավստրիան։ Դրանից ուժ տարի անց միայն  
 առեղջվեց օսմանյան առևտրական պալատը։ Հետագա 20 տա-  
 րիների ընթացքում իրար հանից հիմնադրվեցին Ֆրանսիայի,  
 Անգլիայի, Իտալիայի, Գերմանիայի և այլ պետությունների  
 պալատները։ Ազգեցության ոլորտն ընդլայնելու նպատակով  
 արդ պալատներն աշխատում էին իրենց գործունեության մեջ  
 ներդրավել անզացի ձեռնարկառների, պաշտոնյանների և, ընդ-  
 հանրատպեա, Հպատակների։ Անգլիական պալատը, որինակ,  
 կաղմակած էր անգամների ընդհանուր ժողովից և Յ դիրքկառո-  
 ների խորհրդից։ Պալատի անդամ կարող էր դառնալ տամնել մի  
 րուն անզինացի կամ բրիտանական Հպատակ դարձած անձնա-  
 վորություն, որը Թուրքիայում ունի որոշակի զրադմունք, ինչ-  
 պէս նաև անզինական առևտրական ֆիրմայի ներկայացուցիչ  
 Հանդիսացող ամեն օտարերկրացին։ Այդպիսով, ստար կապի-  
 տայի ստեղծած ու զեկավարվող կաղմակերպություններն աշ-  
 խատում էին ունենալ անզական գործակալների լայն ցանց։  
 Նրանց սղնությամբ այդ պալատները կազեր էին Հաստատում  
 ևան կայսրության ներքին շրջանների հետ։ Մայրաքաղաքից  
 բացի, առևտրական պալատներ բացվեցին նաև Խամբիրում։ Այս-  
 տեղ, օսմանյանի կողքին, գործում էին անզինական, ֆրան-  
 սիական, իտալական ու Հունանգական պալատները։ Դրանց  
 իրենց հերթին ունեին պրասենյակներ, գործակալներ ու ներ-  
 կայացուցիչներ բազմաթիվ այլ քաղաքներում։

<sup>1</sup> АВПР. Новый турецкий стол, д. 3701, л. 30.

<sup>2</sup> ЦГВИА. ф. 150, оп. 1, д. 409, л. 78.

Աւցյալ դարում Թուրքիայի արտաքին առևտութին տու չին տալիս Ալղիան, առաջ Ֆրանսիան և այլ երկրներ, 1880-ական թթ. գերմանական իմպերիալիզմն է դառնում այս ասպարեզում տիրապետողը: Թառորդ դարի ընթացքում 1100 % -ով ավելանում է գերմանական ապրանքների ներմուծումը Թուրքիա և 2200 % -ով թուրքական ապրանքների արտահանումը Դերմանիա<sup>1</sup>: Այդ երկրի շարժուակվող մերձեցումը, ինչպես Հայոնի է, Թուրքիային դարձրեց Դերմանիայի վասալը և դաշնակիցը առաջին Համաշխարհային պատերազմում:

Ներքին և արտաքին առևտութիւն ժավայի ընդարձակումը որոշակի կերպով ամրապնդեց Թուրքական առևտութական բուրժուացիայի դիրքերը: Ընդլայնվեցին նրան և Հայոնան երկրների առևտութական կապերը, մեծացավ արտահանվող ապրանքների ժակարը: Մասնավորապես, դարասկղորի տասը տարիների ընթացքում երկու անգամ ավելացավ Իրանի Հնա առևտութիւնը գումարացին արտահանությունը: Դերմանիայի օգևոթյամբ Թուրքիան Մերձավոր արևելքում և Եվրոպայում վարում էր ակտիվ առևտութ, աշակերտով Դերմանիային՝ ասպարեզից դուրս մղելու նրա ախոյաններին: Բնութագրելով իմպերիալիստական պետությունների քաղաքականությունն այս բնագավառում առաջին Համաշխարհային պատերազմի տարիներին, վ. ի. Էնինը զրել է: «Պարսկաստանն այս պատերազմում ձևականորեն լիզոց է: Իրականում թե ուստի այս անզինացիները՝ մի կողմից և Թուրքերն ու գերմանացիները մյուս կողմից, պատերազմում են և կողոպտում պարսկական անդամություն»<sup>2</sup>:

Այդպիսով, կապիտալիստական Հարաբերությունների դարպացումը երկրի ներսում, առևտութական և ընդհանրապես արևտեսական կապերի լայնացումը այլ պետությունների Հնա, կայսրությունը դարձրին միջազգային շուկայի անցուզարձի կարևոր մասնակիցներից մեկը, Կապիտալիզմի զարգացման օրենքները Թուրքիան այնու չէր կարող շրջանցել: Համաձայն այդ օրենքներից մեկի, ոկապիտալիստական արտադրությունը ընդհանրապես գոյություն լուծի առանց արտաքին առևտութիւն<sup>3</sup>:

<sup>1</sup> Fesch P., Constantinople aux derniers jours d'Abdul Hamid p. 511—512.

<sup>2</sup> Անք Վ. Ի., ՏԸԾ, Ը. 28, էջ 884.

<sup>3</sup> Մարք Կ. և Էնգելս Փ., ԸՆԿ, թ. 24, ստ. 534.

Կայսրության արտաքին առևտուրը մինչև իր անկումը շաբումակում էր անելի Սահայն այն ուներ անհավասար բնույթ և մըշտական գեղիցիա, այսինքն՝ շատ ներուժվում էր և թիւ արտահանվում՝ երկրի տնտեսությանը հացնելով զգալի վնաս օրեւ այդ վերջինը 1880 թ. հավասար էր 9 մլն. լիրայի, ապա 1890 թ. հասագ 17 մլն. լիրայի, «Միջին հաշվով, 1880-ից մինչև 1920 թ. ընկած ժամանակաշրջանում գեղիցիայոց տարեկան կազմում էր տասը միլիոն ռուփի լիրա։» Հետմարար, արտաքին արտաքրուրը գարձագ Թուրքիայի տնտեսական կախյալ վիճակի հիմնական գործուներից մեկը։

Կայսրության հարստահարժան մյուս հզոր միջոցն արտաքին փոխառություններն էին և մեծ պետությունների կողմից ֆինանսական վիրահակողության հաստատում։ Արիմի պատերազմից հետո Թուրքիան սիստեմատիկ կերպով դիմում էր մեծ տերություններին՝ խնդրելով նորանոր փոխառություններ։ 1854 թ. առաջին փոխառությունը կատարելուց հետո, 1858—1872 թթ., նա սուացագ ևս տասը փոխառություն, որոնց անվանական գումարը հավասար էր մոտ 210 մլն. ֆունա ստեղծվեցի, իսկ իրականում տրվել էր 105 մլն. ֆունտից քիչ ավելի։ Ծվրոպական երկրները հենց սկզբից պայմանավորվել էին, որ կայսրությունը, ենենով անվանական գումարից, պետք է վճարի տարեկան 5—9 %<sup>1</sup>. Այդպիսի մեծ վնասներով փոխառություն ստանալը նորերը խնդրելուն արգելվ չեղագ։ Թուրքիայի ֆինանսների դրությունը վերըստող ուսւա զինվորական գործակալ է։ Զիշակովն իրավացիորնն նշում էր, որ տառար փոխառություն կերելու հարմար պայմանների երևան գալը ավելացրեց ժախսների հանդեպ եղած թիթեամտությունը<sup>2</sup>, իսկ վերջինս հետևանք էր պալատական ժախսների, բանակին ու պետական մարմիններին անհրաժեշտ դրամի անընդհատ աճի։ Եվրոպայի և կայսրության ֆինանսական ընդլայնվող գործառնությունները կարգավորելու համար 1856 թ. կազմակերպվեց այսպես կոչված Օտոտոմանյան բանկը, որը շուտով (1863) կոչվեց Օտոտոմանյան կայսերական բանկ։ Նրա ղեկավարությունն իրականացնում էին եվրոպական պետությունները։

<sup>1</sup> ԱՀԱ Գրա. ССР, ֆ. 613, ու. 1, լ. 40, լ. 50.

<sup>2</sup> ԱՀԱ Գրա. ֆ. 401, 1886, լ. 10, լ. 20.

<sup>3</sup> Հույն անգ, թ. 18:

վ. Ի. Անդրեյ Բուրբիան Համարում էր «Ֆինանսատիս ոչ ինքնուրույն, բաղաբականապես ինքնուրույն երկիր»<sup>1</sup>. Իրապես, Բուրբիան իր Ներքին քաղաքականության մեջ հղել է ինքնուրույն և միայն ձևացրել է, թե Հաշվի է առնամ իրեն արեական ու ֆինանսական կախման մեջ պահող և յոպական տերությունների տեսակեռներն ու կարծիքը:

Ֆինանսական քաղաքականությունը նա որոշ իմաստով տարգի է այնպես, ինչպես ցանկացել է սուլթանի կառավարությունը: Ինչպես Յուլյո են տալիս ուստական ռազմական գործակալների 1880-ական թթ. Հաշվագությունները, վերցին միշտ էլ անեցի է պետական բյուջե, բայց երրեց լի հրապարակի նրա ցուցանիշները: Նա իր պահանջել է բոլոր հիմնարկներից ավլալներ, կազմել է ընդհանուր Հաշվագությունն, որը ԱՄինիստրների խորհրդի միջոցով ներկայացվում էր սուլթանի Հայեցողության ու Հաստատմանը<sup>2</sup>: Իսկ, քանի որ ընդհանուր բարձանար միշտ բացասական էր, բյուջեն երրեց չէր հրապարակվում, որպեսզի լիմանային ոչ ներքին և ոչ էլ արտաքին վարկատուններն ու կայսրության ժողովուրդները, նման վարչադին անհրաժեշտ էր ոչ միայն եվրոպական ֆինանսիսաների վատառությունը Բուրբիայի Հանդեկ պահպանելու, այլև սուլթանի ու նրա մերձավորների վատեռամները ընակլությունից թաքցնելու համար: Անհրաժեշտ էր բարձր պահել սուլթան-խալիֆի Հայեցակությունը և հավատը դեպի նրա սրբազն անձն ու նրա գործերը:

«Եսու շարիաթի,— զրել է Ասրակեար,— սիելթ-սուլ-մալլը (պետական հկամուսները) խալիֆին լնն պատկանում: Նա պետական գանձարկոյի պաշտպանն է միայն և դրամը պնտը է ծախսի, և լեռնադ երկրի կարիքներից: Երկրորդ, խալիֆ Օմարը, որպես օրական վարձատրություն վերցնում էր միայն չորս դիրճեմ արծաթով: Սովորաները (կրոնական գպրացների՝ մեղրեսների ուսանողները—Հ. Ի.) զույում էին ոինչ իրավունքով Արդուզ Ազիդ խալիֆը որական, բացի պալատական ծախսներից, վերցնում է չորս Հազար դիրճեմ ուկով, որը վճարվում է սիելթ-սուլ-մալիս միջոցներից<sup>3</sup>, Ասրակեարի Հողմաժիշ երևում է, որ

<sup>1</sup> Ամբի Գ. Ի., Տէժ, և. 28, էջ 883.

<sup>2</sup> ՇԳՎԱ, փ. 450, օմ. 1888, դ. 106, էջ 194.

<sup>3</sup> «Русская мысль», 1906, № 8, стр. 182—183.

հաստությամբ պահպաղ գաղտնիքը, այնուամենալինիվ, դառնում էր Հասարակության քննարկման առարկա և սուլթան Արդուլ Ազիյը՝ տիտրահուշակ Արդուլ Համբիդի Հալլը, մեղադրված էր պետական դրամը յուրացնելու մեջ: Օվ նա միակը չէր: Սուլթան Արդուլ Մեշշիդի իր թե այդ երկույթի առաջն առնելու նպատակով մի իրազե է Հրապարակում, որտեղ խորհուրդ է տալիս բարեկամներին՝ խնայողաբար ծախսել իրենց տրամադրված գումարները: Զրավարարվելով աշգտանով, սուլթանը իր իրազեում, առանց բաշվելու դիմում է առևտրական տներին, նրանց Հայութարեկով, որ պայատի պատվեներն առանց իր առորդության ընդունելին խանութպանների կողմից, Հակառակ զեպքում նրանք չեն ստուած տրված տպրանքների արժեքը<sup>1</sup>: Նման պայմաններում զարմանալի էիր, որ Ղրիմի պատերազմի ավարտից հետո զեֆիցիոր գարձավ Թուրքիայի պետական բյուջեի մշտական ուղղեկիցը: Իրար Հայուրդող փոխառությունները ոչ թե թեթևացնում, այլ ծանրացնում էին երկրի վիճակը:

Պ. Զիխաչը նշում էր, որ 1858 թ. Թուրքիայի բյուջեն մեծացնել էր անասիլի կերպով ոչ միայն պատերազմի հետևանքով, այլև իրերի բնական ընթացքով: «Դեռևս 20 տարի առաջ,— գրում էր նա, — Թուրքիան երկի աշխարհում միակ երկիրն էր, որը կարող էր պարծենալ պարտքերի լրիվ բացակայությամբ և շրջանառության մեջ ունեցած հնչուն դրամով: Իսկ այժմ նրա պետական պարտքը հասել է 600 մլն. ֆրանկի, կամ մի հըսկայական գումարի, եթե այն համեմատենք ոչ թե Եվրոպայի մյուս երկրների պետական պարտքի բացարձակ թվերի (ինչպես սովորաբար անում են Թուրքիայի վճարված ու անվճար փառարանների), այլ նրանց եկամուտների ու պարտքերի Հարաբերության հետ»<sup>2</sup>. Միավորման բազմաթիվ փորձերից ու հաշվումներից հետո Թուրքիայի պետական պարտքերը 1878 թ. ունեին հետեւալ նկարագիրը. Կոնսոլիդացված պետական պարտքը Համասար էր 191 մլն. ֆրանտ ստեղնինդի, չվճարված տոկոսները կազմում էին 25 մլն. ֆրանտ ստեղնինդի, շրջանառության մեջ գոնվող թղթադրամների (կահմե) արժեքն անցնում

<sup>1</sup> Թուրքյան Ռ., Թուրքիայի ֆինանսները, «Մարես», 1805, Խ 3—3, էջ 108.

<sup>2</sup> Чикагчев П. А., Великие державы и восточный вопрос, стр. 133.

Եր 16 մէն. Ֆունտ ստեղծինդից և Կ. Պոլսի մի շարք բանկերի պարտքը՝ 12 մէն. Ֆունտ ստեղծինդից՝

Որպեսզի Հեարավոր լիներ վճարել պետական պարտքի տոկոսների մի մասը, շրջանառությունից դուրս բերել 12 տեղամ արժեքազրկված կախմները և ընթացիկ ծախսները ծածկելու համար ունենալ որոշ գումար՝ կառավարությունը հաջորդ՝ 1879 թ. նոր պայմանագիր է կնքում մայրաքաղաքի գյուխավոր բանկերի հետ։ Մատցած 120,000 ֆունտ ստեղծինդի փոխարեն բանկերի այդ խումբը իրավունք էր ձեռք բերել գանձելու հարկերը ոգելից խմիչքներից, մայրաքաղաքի շրջանում ձևակ որոշուներից, որոշ շրջանների մետարսի տասանորդից և պետական դրոշմանիշերից համար ստացվող կումբարներից<sup>2</sup>։ Տեղացի մեծաշարուատներն ու ֆինանսիսները այդ ճանապարհով վերահսկողության իրավունք ձեռք բերեցին ու միայն տրետեսության առանձին բնագավառների, այլև վարչական որոշ մարմինների վրա։

Այսպիսով, Գալաթաձի ու մայրաքաղաքի այլ շրջանների բանկիրները մասնակից գործան նաև պետության արտօնքին ֆինանսական հարաբերություններին։ Իր հարատությամբ ու լայն գործունեությամբ աշքի էր ընկերում խոշոր հոգատեր, մի շարք կունցեսիաների կառավարիչ ու վաճառատների ղեկավար Հեռնիդիս Ջարիֆին։ Գրականության մեջ հիշատակվում են նաև Մավրոկորդատոն, Լուգենիլին, Վլաստորին, Ելիասկոն՝ իր որդիների հետ, Բրրանտուանները, Պյուլբենկուանները և ուրիշ շատերը։ Հույն, Հրեա, Հայ դրամատերերը, ավելի ուշ նաև թուրք մեծաշարուատներն ու բանկիրները ծրելու տնտեսական բոլոր կենտրոններում գոտվում էին իշխանությունների ուղանեավորությունից և ֆինանսավորում էին վերջիններիս առանձին քաղաքական ու տնտեսական միջոցառումները։ Մասնավորապես, պետության ժախսների համար վերցրած փոխառությունների 12 %-ը կազմում էին տեղական ֆինանսիսների արամադրան վարկերը։ Բայց վարկերի մեծագույն մասը, այնուամենայնիվ, արվում էին դրսից։ «Պալատում ամենամեծ ուշադրությամբ էին վերաբերում միայն այն ծրագրերին, — զրում է Ռ. Բերբերյանը, — որտեղ այս կամ այն ձևով առաջարկվում էր նազդ

<sup>1</sup> ԱՐԲИԱ, Փ. 401, Օ. 1886, Ա. 10, Հ. 19.

<sup>2</sup> Տե՛ս Խոյե անդր»

փող կում գոյառություններ՝ Փոխարքենը, ինչպես Հայունի էր տար Ֆինանսիստերին, վարկավորող կազմակերպությունների բանահերթին, ընկերություններին Հայցհան ընդլայնվող ժամանակ, արգում էին լեռնային արդյունաբերության, երկաթուղիների և տարրեր կոնցեսիաների իրավունքը, Հարկեր ու տուրքեր Հայքարեւությունը՝ ծխախոտից, աղից, վառաղից, նավթից, սպիրտից ըմպելիքներից և այլն Խայպես նշում է Թեևան Բուլութուումն, ամեն մի գործողություն կատարելին թուրքական կողմեակալում էր կանխիկ գումարներ կամ վարկեր<sup>1</sup>.

Ի. Գորոբորոդովուն նման գործարքների միջնորդներին թվարկելին բերում է Արդուլ Համբիդի քարտուղար Խզզեթ փաշալի, ֆինանսների մինիստր Մերչամենի, ուազմական և ծովային մինիստր Ռաշմելի և այլոց անունները<sup>2</sup>. Ունենալով նշված և ուրիշ բարձրաստիճան անձնավորությունների աշխակցությունը, ուսար մոնուագույները, առանց քաշվելու հեշտում էին գործարքում կենարուեական ու տեղական հշխանությունների վրա, Հաճախ կերերով բացարձակապես երկրի տեսանությանը վեաս բերող պայմանագրերը. Իսկ իրենք՝ պետական մարմինները, Հաճախ Հանդիս էին գալիս, Ի. Բուլուանի որակմամբ, որպես տնիքական դյուլացիությանը շահագործող քաղաքական ապարատ<sup>3</sup>: Առ 1888 թ. պերմանեացիները Թուրքիային արամադրեցին հերթական փոխառություններ, վերցինա, ընդառաջելով նրանց պահեցին, իր ուազմական պատվերները ձևակերպեց Կրուպիր Մաուզերի և զենք վաճառող այլ ընկերությունների հետ: Իսկ վերմանացիները ոթուրքական կառավարությանը Համարյա թե ուժով էին պարտադրում իրենց արտադրանքը<sup>4</sup>, որը Հաճախ լինում էր հեացած և ու լիարժեք:

Նման գեպքերը Հայութում էին միմյանց, փոխառության միջոցով գոյացած պետական պարտքերը արագործ անում էին, իրենց հետ ազերացնելով Հարկերն ու տուրքերը: 1876 թ. Արդուլ Աղիդի հրովարտակով Թուրքիան առաջին անգամ Հայտարարեց իր անվճարուեակության մասին: Դրան հետեւին

<sup>1</sup> «Մարք», 1905, № 2—3, էջ 108.

<sup>2</sup> Bahitoglu K., Türk vergi sistemi, s 280—281.

<sup>3</sup> С. Голобородько И. И. (Южанин), Старая и новая Турция, М., 1908, էջ 174—175.

<sup>4</sup> Бутаев И. Проблемы Турции, Л., 1925, стр. 85.

<sup>5</sup> ЦГВИА, ф. 450, д. 105, л. 198.

ուրիշ հայտարարություններ։ Զհավատալով, որ Օսմանյան կայսրությունն ի վիճակի կլինի վճարել երկու միլիարդ ֆրանկի հաւեռղ պարտը ու Նրա տոկոսները, փոխություն տվաղ երկրները որոշեցին ֆինանսների, ընդհանրապես անտեսության։ Հակողության գործը կենտրոնացնել իրենց ձեռքում։ 1881 թ. գեկտեմբերի 20-ին հրապարակվեց Մուհարրեմի Հայտնի դեկտրետը, որով պաշտոնապես հայտարարվում էր Թուրքիայում Խանքային պարտերի վարչության կազմակերպումը։ Վարչության կազմի մեջ մտան Անգլիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի և Խոտայիայի ներկայացուցիչները, ինչպես նաև տեղական պարտատերերից մեկ անձնավորություն և թուրքական կառավարության ներկայացուցիչը։ Վերջինս աներ միայն խորհրդուկցական ձայնի իրավունք, Որևէ վեճ ծագելիս կողմերն իրավասու չէին այն լուծելու և գործը հանձնվում էր միջնորդ դաւարանի վրա։ Որպես կարևոր մասրամասնություն նշենք, որ պարտքերի մեջ իրենց մասն ունեին առանձին հվառպական պետական խոշոր գործիչներ և այդ պատճեռով էլ վարչություն ատեղելու հարցը քննարկվել էր դեռևս Բեյլինի կոնգրեսում։ Դրանց թվին էր պատկանում նաև Բիսմարկը, որը Բէյլիսերեաների և ընկրանակային տան միջոցով զենք էր մեծ քանակությամբ թուրքական արժեքները<sup>1</sup>, Ակեներն է, որ մեծ տերությունների ու ներանց ներկայացուցիչների նաև անտեսական շահեւը պահանջում էրն ամեն կերպ պահպանել Օսմանյան կայսրության ֆիզիկական պոյությունը, օգտագործելով միջամտելու բազմացա առիթը՝ առերես հայտարարելով իրենց քրիստոնյա ժողովուրդների պաշտպաններ։ Վարչությունը հենց սկզբից ստեղծեց իր բաժանմունքների ու դրեակալությունների լար ցանց։ Ծին մինչ այդ գոյություն ունեցող Օտտոմանյան կայսերական բանկը ուներ 80 բաժանմունք, ապա վարչությունը երկրի զավառներում կազմակերպեց 728 բաժիններ ու գրասենյակներ։ Իր գործունեության առաջին տասնամյակում արդեն վարչությունն ատեղեց Հսկայական ապարատ ռհամարյա ամբողջապես թուրքակապատակ մահմեգականներից։ 4527 ժառարողից 4172-ը մահմեգականներ էին, 316-ը՝ թուրքակապատակ քրիստոնյաներ և միայն 39-ը հվառպացիներ<sup>2</sup>։

<sup>1</sup> Թուրքական Օ., Թուրքիայի ֆինանսները, «Մուրճ», 1865, Խ 5, էջ 82.

<sup>2</sup> АВПР, Փ. Կառավարիա, Ձ. 25, Ձ. 112.

Անհրաժեշտ է նշել նաև, որ վարչության բաժինների վարինների, բանկերի ու վարչության զնկավար այլ մարմինների անդամների ինը տառեներորդը կազմում էին տեղացիները, ովնազորապնս մահմեդականները, տռանց որոնց հնարավոր էր հարգությամբ ծավալի այն հսկայական գործունեությունը, որ կատարում էին վարչության կենտրոնական ու տեղական մարմինները, իսկ նրանք նայու պետք է ապահովեին պարտքի տոկոսների ամենամյա վճարումները պարտքատերներին։ Այդ նպատակով նրանց հսկողության տակ էին դրվել մի շարք ուղղակի և անուղղակի հարկեր։ Այդ հարկերից էին՝ աղից, ծխախոտից, սովորային խմիչքներից ու մետաքսից ստացածներից բացի, Շուլգարիայից, Մոնտենեգրոյից, Արևմտյան Ռումինից, Կիպրոսից, Սերբաստիայից ստացվելիիք հարկերը<sup>1</sup>։

1912 թ. վարչության մարմիններում աշխատում էր արգել 8931 մարդ, այն զեպքում, երբ կայսրության ֆինանսների մինիստրությունն ուներ 5472 աշխատակից։ «Վարչության ծառայողների համար կատարվող ծախսները կազմում էին 403.947 լիրա։ Բարձրաստիճան ծառայողներին տարեկան արգում էր 80 հազար լիրա»<sup>2</sup>։

Նշենակալից է այն փաստը, որ թուրքական կառավարությունը հաճախ շհավատարով կամ շվատահելով տեղական մարմիններին, իր եկամուռը կազմող տարրեր հարկերի գանձումը ևս հանձնարարում էր հարկերի վարչությանը, իսկ վարչությունը պատրաստակամությամբ կատարում էր կառավարության հանձնարարությունը։ Վերջինս այդ միջոցով 1.5—2 %-ով ավելի էր ստանում, քան իր հարկահավաքների գանձած գումարներն էին և վարչությանն էլ վճարում էր հավաքված հարկերի 5 %-ը<sup>3</sup>։

Կեղեցման ու շահագործման այս սիստեմը պարտքերի վարչությանը հնարավորություն էր տվել առաջին աշխարհամարտի նախօրինին իր ձեռքում կենտրոնացնելու «Թուրքիայի եկամուռների մեջ երրորդից ու պահանջը»<sup>4</sup>։

1912 թ. թուրքական տարեգրքի տվյալների համաձայն

<sup>1</sup> Թուրքեյան Թ., ՖՀՀ. այլ., էջ 91.

<sup>2</sup> Առն Ի., Յի յանը մասմեկը օլոշ տարի, ս. 37.

<sup>3</sup> Տես Եսկ տեղը, էջ 94.

<sup>4</sup> Բազմա Ազգական Տուրան, ստ. 9.

երկրում գործող 16 խոշոր բանկերից միայն երեքում էր զերազանցում թուրքական կապիտալը, 15 այլ բանկերում այդրապետող դիրք ունեին տեղական մեծաւարուստների պահպաները, Կառուցվող և գործող երկարթերի անօրինությունը գտնվում էր 12 օտար ընկերությունների ձեռքում։ Միայն եվրոպական Թուրքիայում վերջիններին Հակողության տակ գործում էին բնական հարատությունները՝ 6, շինարարական՝ 5, շրամատակարաման և կոյուղինների՝ 5, տրամվայների ու բաղադրային տրանսպորտի՝ 5, լուսավորության՝ 3, սննդամթերքների արտադրության՝ 21 և այլն ձեռնարկություններ ու կազմակերպություններ<sup>1</sup>.

Երկաթուղային շինարարության ու երկաթուղիների շահագործման բնագավառում առաջնակարգ տեղը պատկանում էր պերճանական (2565 կլմ.), ապա ֆրանսիական (2077 կլմ.) և ֆրանցիկան (610 կլմ.) ընկերություններին<sup>2</sup>, Բանկային գործառություններում բացարձակ տիրապետում էր Ֆրանսիան, առաջի մեջ, մինչև Համաշխարհային պատերազմը՝ Անգլիան, Առաջանուր շրջանառության մեջ վերջինս Գերմանիային գերազանցում էր Հինգ անգամ, Ֆրանսիային և Ավստրո-Հունգարիային՝ երկու անգամ, Բայց պատերազմի նախօրին Գերմանիան կապիտալի ներգրումների գումարով արդեն գրավում էր երկրորդ տեղը, Ֆրանսիայից հետո<sup>3</sup>:

Դասկածից վեր է, որ անտեսական ազդեցության գործունով էլ մեծ ժամանք պայմանավորված էր այս կամ այն մեծ տերության ազդեցությունը Սամանյան կայսրության քաղաքականության վրա, Այսպես, կայսրության գործության վերջին 70—80 տարիներին տիրապետող է եղել Անգլիայի և Ֆրանսիայի ադրբեցությունը, Անգլիա դարի 80-ական թթ. սկսում է ուժեղանալ գերճանական իմպերիալիզմի ազդեցությունը, որը և ուժեցավ մեծական նշանակություն առաջին Համաշխարհային պատերազմի տարիներին:

Խել վերաբերում է Բուսանտանին, ապա նա առանձինապես

<sup>1</sup> Annuaire Oriental..., p. 167—174.

<sup>2</sup> ЦГИАЛ, ф. 150, оп. 1, л. 76—78.

<sup>3</sup> ՏԵՇ «Международная жизнь», 1927, № 8, էջ 41.

<sup>4</sup> ՏԵՇ «Павлович М., Империализм и мировая политика последних десятилетий», Собр. соч., т. II, Л. 1925, стр. 61.

շէր ձգուում Թուրքիայում կապրտալներ ներդնելը, Պատմառն  
այն էր, որ նա կալմանակից շէր բազմազգ ու Հետամնաց Սա-  
մանյան կալսության ամրողականությունը պահպանելուն,  
յեղակն եվրոպական պետությունները, Անդրկալ իր շահերից,  
ցարական Ռուսաստանն աշակցում էր բուլղարներին և բալ-  
կանյան ժողովուրդներին՝ ազատագրակերտ Թուրքական լժից,  
Ռուսական և եվրոպական սուաշավոր մտավորականությունը,  
ռազմական ու քաղաքական գործիչները կունկրետ և բարոյական  
պատություն էին ցուց տալիս Հայ ժողովորդի ազգային-ազատա-  
գրական պայտարին։ Հետեւաբար Ռուսաստանի արտաքին քա-  
ղաքականությունը ավշալ խնդրում օբյեկտիվորեն ուղղված էր  
և նպաստում էր կայսրության հարատահարված ու հպատակ ժո-  
ղովուրդների ազատագրմանը։ Այս տեսակետից վերջիններին  
համար շափաղունց կարևոր էին նաև տնտեսական կապերը  
Ռուսաստանի հետ։

Իսկ այդ կապերը, հատկապն առևտրական, դորություն  
ունեն տասնամյակներ շարունակ։ Դրանց ընորոշ կողմն այն  
էր, որ Թուրքիայի շատ զրշաններ գլխավորապես ներմուծում  
էին ռուսական ապրանքներ և թիվ քանակությամբ արտահանում  
Ռուսաստան իրենց արտադրանքը։ Ա. Դ. Նովիչկը նշում է, որ  
մասնավորապես, ռուս-ճապոնական պատերազմում ցարիզմի  
պարտությունից Հետո ուժեղացավ ռուսական ապրանքների  
հոսքը Թուրքիա, այն դեպքում, երբ վերջինիս արտահանու-  
թյունը Ռուսաստան համարյա թէ չէր փոփոխվում 50 տարվա  
շեթացքում<sup>1</sup>։

Նման վիճակը, անկասկած, արտահայտում էր նաև Թուր-  
քիայի կառավարության քաղաքականությունը, որը եվրոպա-  
կան պետությունների ազդեցության հետեւեցով հաճախ արգե-  
լակում էր Ռուսաստանի հետ փոխադարձ հարաբերությունների  
զարգացումը։ Կայսրության վերնախավին ընդհանուրապես դուր  
շէին դալիս Արևմտյան Հայաստանի և Անատոլիայի որոշ քա-  
ղաքների բազմապիսի ու անմիջական կապերը Կովկասի ու Հա-  
րավային Ռուսաստանի առանձին շրջանների հետ։ Դրանք դիտ-  
վում էին որպես Հայերի, և ընդհանրապես քրիստոնյաների,  
ռուսամհատ տրամադրությունների հետևանք, որը, իհարկե, ար-  
տացոլում էր իրականությունը։

1 Տե՛ս Խովելը Ա. Դ., Եղի., աշխ., էջ 222—223.

Տեսնական համագործակցությանը միանդամայն Համապատասխանում էր կայսրության, Հատկապես Արևմտյան Հայաստանի Հայ ազգաբնակչության գարափոր ձգտութեարին՝ մըշտապես ու սերտորին կապված լինել Շռուաստանի, մասնաւորապես Կովկասի հայութնակ շրջանների, ինչպես նաև անտեսական այլ կենտրոնների հետ. Սակայն ցարական կառավարությունը, քաղաքական գեղացքի բնորություն (աղատազրական պայքարի աշխաւացում, կոտորածներ, ներքին բայսումներ և այլն), երրեմն ձեռնարկում էր սահմանափակող միջնառումներ. Այս գրանք և զերծում եղած հաւաքամանները լլինենին, անկառակած, փոխազարձ կասպերը կունենալին շարունակվող ու անխախտ հարաբերությունների բնույթ և կնպաստեին այդ շրջանների անտեսական զարգացմանը:

Ռուս առաջադեմ գործիչներն ու մատվորականները գտնում էին, որ երկրի հարավային սահմանների բաց լինելը շահագանց օգտակար է ռուսական առևտության համար. Թուրքահայերի կապերը Կովկասի մեր առևտորական ֆիրմաների հետ վերականգնվում են և օր օրի վրա դանում նշանակալից<sup>1</sup>, Բարձրորակ ռուսական ապրանքները, ճանավանդ սննդամթերթը, այսուամենայինիվ, Հաղթահարում էին արհեստական արգելվեները և նպաստում ռուսական առևտությ ընդլայնմանը. Առաջին աշխարհամարտի նախօրենին այն Հասավ զգալի չափերի, Միայն Վ. Պոլոսկ, 1910 թ., Ռուսաստանից ստացվող ապրանքների վաճառքով զրազվում էին 28 խոշոր առևտորականներ, որոնցից միայն 5-ն էին ռուս. Մնացածներից 7-ը Հույն էին, 6-ը՝ Հայ, 2-ը՝ Ծրիա և 8-ը՝ մահմեդական<sup>2</sup>. Էրզրումի ռուսական գելեավոր Հյուսպատոս Ա. Ազամովի ավլաների համաձայն, վիւայիթի առևտությ Ռուսաստանի հետ 1908 թ. յու 517 հազար ռուբլուց անց ազելի քան երեք տեսամ և 1912 թ. հասավ 1.538 հազար ռուբլու<sup>3</sup>, իսկ Վանի վորհհյուսպատոս Թումանսկին, նշելով Արևմտյան Հայաստանի շրջանների առևտություն զարգացումը, գրում էր, որ ուշ միայն Վանի վիլայեթի, այլև մոտակա վիլայեթների առևտորական ակտիվ ամբողջ գործունեությունը գտնվում է բացառապես Հայերի ձեռքում...»<sup>4</sup>, Նրանց միջնորդ

<sup>1</sup> АВПР. Новый турецкий стол. 1909—1913, д. 3723, л. 19.

<sup>2</sup> ՀՀ և նույն անգը, գործ 3522, բար 2.

<sup>3</sup> «Донесение российских консульских представителей...», 1913, № 29, стр. 108.

<sup>4</sup> АВПР. Новый турецкий стол. д. 2495, л. 37.

Հր Ռուսաստանի հարավից բերվում շաբարը, Ղարսի մարզից՝ աւուխը, փայտը, ալյուրը, ցործեն ու գարին, Թիֆլիսից՝ գյուղատնտեսական և այլ գործիքներ, Բարձից՝ նավթը, Երևանից՝ բրինձը, զինին ու կռնյակը և այլն, Ընդլայնվող առևտրական գործունեությունը հանգեցրեց մի շարք փայտափրական ընկերությունների կազմակերպմանը, Այսպիս, էրզրումում ուստական նոպիթը վաճառում էին ռէսուլս (Հիմն. 1901) և ուլրատուն (Հիմն. 1906) ընկերությունները, Երկրսթեղինի առևտրությառությունը էին Զաքարյանց և Բոյաջյանց եղբայրների ու Էմիր ողլուի վաճառատները, Պյուղատնտեսական գործիքներինը՝ եղբայր Զաքարյանները և Թաֆաֆյանը, Ծնատինն ապրանքների վաճառքը դանվում էր Օննիկ Դավիթովի ձեռքում<sup>5</sup>, Բայրազետում ուստական ապրանքների վաճառքն իրականացնում էին Ծանյան և Միկուսյանց եղբայրները, Բինատ և ընկ. վաճառատունը և այլն։

Կայսրության արևմտյան շրջաններում ուստական առևտրի ազգեցությունը լափազանց թույլ էր Ռուսաստանի նազագեցացության և առևտրի ընկերության ներկայացուցիչը Զմյուռնիալից գրում էր, որ տեղի համապատասխան կազմակերպություններն իրենց ուշադրությունից դրւու ևն թողել այդ կարևոր կենտրոնը, մինչդեռ Սվյուօպայի առևտրականները Զմյուռնիան դարձել են երենց գործունեության կենտրոններից մեկը, Ռուսաստանի կապիտալիստներից, շարունակում է նա, իր ներկայացուցիչն ունի միայն նաև Անդրկովի առևտրական տունը և Գրիգոր Կեչուտի ալյուդացները։

Միայն 1910 թ. 4. Պոլսի և Զմյուռնիայի գլխավոր հյուպատուսարաններին կից առեղթանցին հասուլ առևտրական կոմիտեներ, որոնք դրական դեր կատարեցին Բուրժիայի արևմբային շրջաններում և անձովյան քաղաքներում ուստական առևտրի զարգացման դրժում։ Ռուսաստանի առևտրական շրջանառության մեկ երրորդը կատարվում էր այս վերցիններում, Ռուսիուրական առևտրի ընորոշ կողմը, այդպիսով, այն էր, որ կայսրության բազմաթիվ շրջաններ, շրջանցիւով նրա գլխավոր

<sup>1</sup> Տես «Донесения», 1913, № 21, стр. 15—18.

<sup>2</sup> АВПР, Новый турецкий стол, д. 3723, л. 37.

<sup>3</sup> См. там же, ф. Посольство в К-поле, 1908, д. 3036, л. 78.

անտեսական կհետարունները, կապեր ունեին արտասահմանի հետ:

Նույնպիսի թեույթ ունեին ապրանքափոխանակությունը և առևտուրն Սամանյան կայսրություն արտարական կրկրություն: Եզիզատուր, Հատկապիս Մուշամմեդ Ալիի արբապետության դրշանում և նրանից հետո ինքնուրույն էր անօրինում իր գործերը: Դրան նպաստում էր Անդրյայի հետզհետե ակտիվացող ժաղարականությունը: Իրաքը ևս անցյալ դարի կեսերից արտահանում էր Հացահատիկ, արմավ և այլ ապրանքներ, որոնց համաշխարհային շուկա էին Հասնում անմիջական ճանապարհով: Իրաքի և Իրանի արտաքին առևտուրի զգալի մասը, ըստ Վ. Լուցկու, կատարվում էր Բաղդադի և Բասրայի վրայով: Իսկ վերջինս մշտական կապեր ուներ Պարսից ծոցի և Հեղկաստանի հավահանգիստների հետ<sup>1</sup>:

Համաձայն ուստական Հյուպատոս Ա. Աղամովի Հաղորդումների, արգել մեր դարի սկզբին ոհացահատիկի առևտուրը Հներկաստանի և Կարմիր ծովի նավահանգիստների հետ իրանց ձեռքում են կենտրոնացրել Բաղդադի և Բասրայի անդական ֆիրմաները, իսկ արտահանումը նվազապահ սովորաբար կատարվում է անգլիական վաճառատեների միջոցով, որոնք հիշյալ քաղաքներում ունեն իրենց բաժանմունքները<sup>2</sup>:

Բեյրութը, Դամասկոսը և Հալեպն ուղղակի կապեր ունեին Յրանսիայի և Նվազապահի մյուս երկրների առևտրականների հետ, իսկ Եգիպտոսի վրայով՝ նաև անգլիական կենտրոնների հետ: Արարական երկրների միջոցով կատարվող առևտուրի նշանակության կարևորության մասին են խոսում հետևյալ տվյալները: միայն Սիրիայի, Իրաքի և Պաղեստինի վրայով ստացվում էր Սամանյան կայսրություն ներմուծվող ապրանքների մոտ մեկ քառորդը և արտահանվում մեկ հինգերորդը: Դիվանագիտների Հազորդումների համաձայն, եթե սկզբնական շրջանում տեղական առևտրականները նախքանում էին զորժել արտասահմանյան ֆիրմաների ներկայացուցիչների օգնությամբ, ապա առաջին Համաշխարհային պատերազմի նախօրեին նրանք անմիջական կապերի մեջ էին մտել այդ ֆիր-

<sup>1</sup> ЗНЧ. Лушкий В. Б., Новая история арабских стран, М., 1965, т. 125—126.

<sup>2</sup> АВПР, Новый Тюркский стол, д. 7643, л. 8.

մաների Հետ<sup>1</sup>. Սակայն Թուրքիայի օրինակը ապացուցեց, որ ուժի և քաղաքական միջոցներով զանազան երկրների ու ժողովուրդների մերձակայում ֆեռզալիզմի շրջանում գեռնս ի պիճակի չէ միավարելու դրանց նաև տնտեսապես և ապահովելու հետագա առաջընթացի կայում հիմքեր:

Անավորվող բազմազգ բուրժուազիայի տնտեսական միասնական շահերի բացակայությունը, հետզհետեւ սրվադ Հակառաւությունները, ինչպես արդեն նշվեց, Օսմանյան կայորությանը կանգնեցրին ճգնաժամի առջև: Երկրի դանդաղ առաջընթացը և ճնշածամի տատիճանական խորացումը նրա գոյության վերջին առանձամբ հակներում դարձան կայսրության պատմության երկու ընորդչ գժերը: Իսկ կիսադադութիւն վերածվելին ավելի և բնողության սոցիալ-տնտեսական կարգերի ու քաղաքական ժանրի ու մեջքի մասին անժիմի ոչ բնական և անհանդուրժելի կողմերը, սրուցով և պայմանավորվեցին ու ձևավորվեցին երկրի հետամուցության ուղիներն ու գործոնները: Լինելով քաղաքականապես անհայտ, կայսրության զեկավարները նրա գոյության ամբողջ ընթացքում այդպես էլ լկարողացան կինորունացնել ու զեկավարել իրենց երկրի տնտեսության առաջընթացը: Ընդհանուակը, այս հետզհետեւ, Հաճախ կառավարողների կամքով անցավ ռտարեների ձնորդը: Երբեմնի Հզոր Օսմանյան կայսրությունը, որի Հետ երկար ու ճիշդ դարեց Հաշվի էին նստել Հարեւոն պետությունները, XIX դարի վերջերին ի վիճակի չէր ինքնուրույն տեսրինելու, իր բախուց նրա անկման հիմնական պատճանակներից մեկը պետք է փնտրել այս երևույթի մեջ:

Բուրժ պատմաբանների, տնտեսագիտների, սոցիոլոգների, գրողների, քաղաքական գործիչների և այլ Հեղինակների ուշադրության կինորունում է Հատկապես երկրի առաջընթացի վրա արտաքին ազդեցության խնդիրը: Մինչև երկրորդ Համաշխարհային պատերազմն այդ ազդեցությունն արտահայտվում էր ռեվրոպականացումը կամ շարնմտականացումը տերմիններով: 1960-ական թթ. շրջանառության մեջ մտավ մտողենացում՝ հասկացությունը, որն արտահայտելու էր տեղի ունեցող ապահովությաման, ներքին զարգացման, նվրուազայի կողքին ԱՄՆ-ի ազդեցության ուժեղացման երևույթները և ավելի լեզու տերմին սպազորժելու ցանկությունները: Սակայն չիշտ է այն տե-

<sup>1</sup> «Донесение...», 1912, № 1, стр. 45.

սակետը, որը կայսրության զարգացման ընթացքը գեահատելու համար իրականությանը ավելի մոտ և պատմականորների վեարժեք է դուռում ռեվրոպականացումը Հասկացությունը:

Իրենք՝ թուրք հեղինակները, ներկայումս օգտագործում են բերդած երեք արտահայտություններն էլ, նախապատվությունը տալով ոմողեռնացումը տերմինին:

Բայց այստեղ կարեորք երևութիւն անվանումը չէ, այլ գեահատականը, որ տրվում է Արևմուտքի ազդեցությանը՝ գրական է եղել այն. թէ՞ բացասական և, ի վերջո, ի՞նչ դեր է կատարել արտաքին ազդեցությունը Թուրքիայի տեսառության և կուլտուրայի զարգացման գործում:

Հետագույնների մի մասը, Հատկապես խորամադիտները, գոնում են, որ առևմեղական երկրների զարգացման վրա արտաքին ազդեցության ներգործությունը կարող էր լինել միայն պարմանական: Այսպես, ուսւ մեծ արնելագետ Վ. Բարտոլուցը քրիստոնյա երկրների որինակով կատարվող բարեփախառնությունը խալամի ազդեցության տակ գտնվող ժողովուրդների մոտ, նույնիսկ տեսականորդներն, անհնարին էր գտնում, որպէսն նրանց շաբաթական ու հասարակական կյանքում ամեն մի նորամուտություն հանցագործությունն է Հավատի Հանգեպը<sup>1</sup>: Իրապես, Պուրանի ու շարիաթի մեջ, ինչպես տեսանք, պետական կարգի ու մարդկանց փոխհարաբերությունների սահմանումները, բոլոր մաշմեղական ժողովուրդների համար, ներկայացվում են որպես մշտական ու անփոփոխ իրավիճակ:

Անշուշտ, քննարկվող խնդրի նիշտ պատճենածն ունենալու համար կարնոր նշանակություն ունեն թուրք հեղինակների կարծիքները, որոնք լափաղանց տարրեր են, և Համայն, Հակասական: Թուրք հայունի պատմարան պրոֆ. Թ. Թումայանի իր Շիրամտականացման շարժումը Թուրքիայի քաղաքական կյանքում աշխատության մեջ գտնում է, որ մինչև XVIII դարը Շահյարությունը Արևմուտքի կարիքը լուծեր: Նրանում կային այնպիսի բաներ, որոնք կարող էին որինակ ժառային Արևմուտքի Համար: Համեմատած Արևմուտքի հետ, նա ավելի միաս-

<sup>1</sup> Бартольд, В. В., Турция, ислам и христианство, Соч., т. VI, №. 1966, стр. 143.

հական էր, ազատու ժաղկումն երա կուլտուրական մակարդակը բարձր էր»<sup>1</sup>:

Թուրք այս հնդինակներ ևս բազմաթիվ անգամներ, ավելի ընդարձակ ու ժամանուն, հայունել են թուրքերի մշտու ժողովուրդներից բարձր լինելու ռասայական շնչառելուց, որը մինչև այժմ էլ թուրքական շոգինիզմի պաղափարական անկյունագրին է։ Այդ գաղափարախոտության ստեղծողներից մեկը՝ Զիա Դիլը բարձրալսը, զեմ արտահայտվելով թուրք ժողովրդի վրա արտաքին ազգեցությունների խնդրին, գրել է, որ նման բանը միշտն զարերում հնարավոր էր, քանի որ թուրքն ավելի առաջավոր կուրուրա ուներ, քան նրա հարևանները։ Իր «Թուրքականությունը բարոյական առաջինությունների ցուցահանդես» է։ Թուրքերը հրատակ ժողովուրդներին և նրանց ազգային ու կրոնական կաղմակերպություններին կրոնական և ազգային ավտոնոմիա են շնորհել։ Դա վեր է ամեն ահատ գեահատականից։ Այսուհետեւ ընդգծելով, որ մարդկային բոլոր առաջինությունները սաղմնային վիճակում առկա էին թուրքերի մոտ, նա գտնում է, որ պատմականության ամենաբարձր առաջինությունները է նորի բարյականության ամենաբարձր առաջինությունների կենսագործումը և ապացուցելը, որ հնարավոր են ամենաանհավատային թվացող անհնազուհության և հերոսության երևութեանը։ Թեսելով հրշալ տեսակներ, Ա. Ժելայակովը, միանդամայն իրավացիորեն, անհիմն է համարում Թ. Թունայալի բերած փաստարկները, քանի որ դրանք ոչեն համապատասխանում պատմական ճշմարտությանը<sup>2</sup>։ Նույնը կարելի է ասել նաև Զիա Դիլը բարձրալսի ձևակերպումների մասին։

Սամանան կայսրությունում նվազագի փորձի կիրառումը, եվրոպական ուղղող ընթանալը XIX դարում դառնում էր կենսական խնդրիր։ Անհրաժեշտ էր, բակայն, հաղթահարել եաւ հոգերանական արդելքը; որը կապված էր Արևմուտքի և, ընդհանրապես, քրիստոնեական աշխարհի հանդես գոյություն ունեցող

<sup>1</sup> Tunaya T. Z., Türkiye'nin siyasi hayat. Եթություն հերետիստ., 1960, ս. 18.

<sup>2</sup> Gökalp Ziya, Türkçenin esasları, Ankara, 1961, ս. 102.

<sup>3</sup> Խոյք անգ. էլ 117.

<sup>4</sup> Историография и источниковедение истории стран Азии и Африки, том. II, 1968, Л-д, стр. 127.

արշամարշաների, վատահության բացակայության, ինչպես նաև ոպիդը քրիստոնյաների նկատմամբ թուրքերի ունեցած մեծամության ու ամրարտավան վերաբերմունքի հետ:

Զարդացած երկրների արդյունաբերության արտադրանքի Հոսոբը, հարստանելու և բարեկեցիկ, ևվրոպական կյանքով առարելու վերեախամփի ձգուումն ու առաջընթացի տրամարանությունն ուղի հարթեցին երկրի տարածտականացման համար: Իսկ երիտթուրքերի աիրազետության տարիներին արդին չկայության ևվրոպականացումը կառավարող կուսակցության ժրադրի տեսք ընդունեցաւ:

Պատմական այս տեղաշարժերը, ինչպես նշվեց, իրենց խոր հնատքերը թողեցին երկրի առաջընթացի մրա և շարունակում են ազնի նաև թուրք պատմապիտության մրա: Մի շարք հայութի պատմարանների գրքեր արդին իրենց խորագրերում ցուց են տալիս հեղինակների գրական վերաբերմունքը գնայի քննվող երևույթը, Այսպիս, Թ. Թունայալի աշխատառությունը կողմում է ևԱրևմտականացման շարժումը Թուրքիայի քաղաքական կյանքում, Է. Կարամինը՝ ևՆարժումինը հվրոպականացման ուղիով, Թ. Մյումթազինը՝ ևԱրևմտյան քաղաքակրթության ո՞ր փուլում ենք գտնվում են այլն:

Թունայան հվրոպականացման շարժումն ընկալում է որպես Արևմտութի ազնեցության ուժեղացման պայմաններում կայսրությունը վերահաս կործանումից պահպանելու միակ միջոց: Օյս Սներերի կարծիքով, XIX դարում թողոր պետական գործիշները յատածում էին կայսրության հարաւուսության մասին և տաճնագործնական և արմատական միջոց՝ էին համարում շշրագարձը գնայի Արևմտութ, արևմտյան կազմակերպությունների ընդուրինակումը և այդ ուղղությամբ բարեփոխումներ անցկացնելը<sup>1</sup>, Դոկտ. Թ. Մյումթազը Թուրքիայում իրացվող ռեֆորմները վեաշատում է որպես տարածտյան քաղաքակրթություն մտցնող միջոցառումներ, Դրանով է նա բացարում այն երևույթը, որ փառուրեն տպատճենահանվում էին որպես քա-

<sup>1</sup> Историография и источниковедение истории стран Азии и Африки, вып. II, 1968, Л-д, стр. 130.

<sup>2</sup> Թունայան, Խճ. աշխ., Karal E. Z., Garplilaşma hareketleri Təzsiyyat Kitabı, İst., 1940, Dr. Mumtaz T., Garplilaşmanın neresindeyiz?

<sup>3</sup> Սներեր Ռ., Խճ. աշխ., էլ 42.

զարակրթության օրինակներ՝ որոշ ժողովուրդների սրբները, կազմակերպությունները, սովորությունները և հատկապես, հագուստը, ապրելակերպը<sup>1</sup>:

Հաշվի լառնելով երկրի հնարավորությունները, կայսրության գեկավարները ժողովրդին տարան ծանր պատերազմների ու նոր տարածություններ պատճեռու ուղիով։ Խսկ դա պահանջում էր հավելյալ միջոցներ, Պարտքերն անեցին և թուրք ժողովուրդի մինակի շեզազ պրանք մարել Այս պատճառով նա խրվեց-մեց զարգացման որոշ աստիճանի վրա և ոկտեց ետ մեար արթշներից։

Բ. Մյումթազը այնուհետև գրում է, որ «Թուրք ժողովուրդը դիտական նախաձեռնությունների մեջ չէր ցուցարերում իսկական շահագրգովածությունը»<sup>2</sup>։ Սատամրույի համալսարանի պրոֆեսոր Խալլուկի Զիլլովը երկրի հետամնացությունը բացատրում էր երանով, որ ժողովուրդի մեջ տիրապետում էր պահապանդական մասնագությունը<sup>3</sup>։ Թուրք խոշոր պատմարան էնվեր Կարայի իր բազմահատոր աշխատության մեջ Օսմանյան կայսրությունում արգյունաբերության զարգացման դանդաղ ընթացքը բացատրում է բանվորական ուժի, դրամի և համեսպատահան գիտական մակարդակի բացակայությամբ։ «Օսմանյան պետական գործիչները, — գրում է նա, — յունիին ժամանակակից անտեսադիտական գիտելիքներ... Նրանք առողջ տնտեսական բաղադրականություն լին վարում։ Այդ բաղադրականության սոցիալական արմատները թնանիս նա ընդգծում է, որ վերելայնավի ներկայացուցիչները ոչին ցանկանում, որպեսզի ժողովուրդն ամրապնդին ազատագրվեր բթացնող տգիտությունից... որովհետև, այդ դեպքում, երանք կղրկներին ժողովրդի թիկունքում շուրջ կյանք վարելու հնարավորությունից»<sup>4</sup>։ Է. Կարայի կարծիքով, երկրի նման մինակը հետևանք էր սուլթանի ու նրա պաշտոնյաների այն համոզման, որ ժուլությունն ու անտարբերությունը համակել էին ժողովրդական մասսաներին, արմատավորվել էին հասարակության թուրք խավերում, և այդ երեսով հանդիսացավ ենրկրի դժբախտությունների պատ-

<sup>1</sup> Մյումթազ Բ., Եղբ. աշխ., էջ 18.

<sup>2</sup> Խայի անդր. էջ 18—20.

<sup>3</sup> Джиллов Խ. Յ., Экономика Турции, М., 1971, стр. 30.

<sup>4</sup> Karat E. Z., Osmanlı tarzı, cilt VII, Ankara, 1956, s. 255.

Сюнду: Զարիքներից դուրս գալու գլխավոր ուղին ևս տեսնում է ժողովրդական կրթության բարելազման մեջ։

Մյուս անգանի պատմաբան Օ. Լ. Բարկանը, որը ավելի քան քառասուն տարի զբաղվել է միջնադարյան հոգային հարաբերությունների ուսումնասիրությամբ, հրատարակել է բազմաթիվ աշխատություններ, ի թիվու որոնց եռահատոր «Օսմանյան կայսրության գլուզատնահառթյան իրավակուն և ֆինանսական հիմունքները XV—XVI դարերում», չի ձերքագատվել հիշյալ «արաբերություններն իդալականացնելու փորձերից» «Փորձուները», — զրել է Օ. Բարկանը, — որոնց բայցայեցին Օսմանյան կայսրության սոցիալական ու տնտեսական համակարգը և այլ զանազան այլն, արօյունք էին ոչ այնքան ներքին, նորմալ, սեփական զարգացման հակառակությունների, որքան կայսրության սահմաններից գույք հաստացած հնգափոխական ուժերից։ Բալկանյան պրորկեններին նպիրված և Բուխարեստում 1976 թ. նոյեմբերին կայացած միջազգային կոնֆերանսում ևս Հանգես նկազ «Օսմանյան հոգային օրենսդրությունը XV—XVIII դարերում» թեմայով։ Զեկուցման ամբողջ պաթուր ևս ուզզնց սամանյան տիրապետությունը գովարանելուն։ Ազրարային հարաբերությունների տարդարացիւ լինելը զեկուցողը փորձեց տպացուցել այն փաստով, որ իր Բուրբիւլում երբեք լին եղել պյուզացիական ապստամբություններ։ Օ. Բարկանի թեզերը ներկավացին խիստ քիչնազատության (և ոչ միայն մարքսիստ հետազոտողների կողմից)։ Բուրբիւլը պատմաբաններ և սոցիոլոգներ Ն. Բերբեսը, Ե. Մարգինը, Գ. Կարպատը լինելով արևմտյան ուսումնական հաստատությունների աշխատակիցներ, իրենց հայցքներով և մեթոդուղիայով հարում են արևմտյան պատմագիտության տեսակետներին։ Նրանք առաջին պլանի վրա ևն զնում Օսմանյան կայսրության ներքին զարգացումը, որը ինչու չափով երկիրը մոտեցրեց Արևմտյան պետությունների մակարդակին և հնարավոր գարձրեց եվրոպականացման պրացեսը։

Բուրբիւլը հեղինակների առարագիմ թեմի պատկանող մի խումբ

<sup>1</sup> Idem, cilt VIII, 1962, s. 452.

<sup>2</sup> Sencer M., Osmanlı toplum tarihi, s. 278.

<sup>3</sup> ՏՎ «Балканские исследования», вып. 3, Освободительные движения на Балканах, М., 1978, с. 310.

երիտասարդ-Հնատաղությներ խառորձն քննադատում են արտաքին ազդեցության դերը։ Ավելի հանգամանալից ու խոր կերպով զիրութեները հասարակական կարգերն ու սոցիալական փոխարարերությունները, նրանք ենքն են այն եզրակացության, որ Արևոտքի միջամտությունն իրը խանդաբել է Օսմանյան կայության զարգացման նորմալ ընթացքին։

Մ. Սենչերը, հենվելով ասիսկան արտադրանշանակի մասին եւ Մարքսի Հայտնած տեսակետների և Հողի պետական սեփականության առկայության փաստի վրա, գտնում է, որ Թուրքիայում գորություն լի ունեցել սովորական իմաստով ֆեոդալական հասարակարգ։ Հենց այս պատճառով էլ, նրա կարծիքով, խոսել այսահեղ կապիտալիզմի զարգացման պատմական ուղղու մասին՝ լի կարելի, Ծրբում տիրապետող է եղել տասիսկան արտադրակղանակը, որի պայմաններում զեկավարվութենությունը, լինի գա պետական իշխանությունը, թե բանակի Հրամանատարությունը, «Շնարավորությունն լուվեց սաղմնավորվելու կապիտալիզմին, որը նախապատրաստվել էր ֆեոդալական արտադրակղանակի ներքին հակասությունների շնորհվելու»։ Սենչերի կարծիքով, Թուրքիայի նման երկրներում կապիտալիզմը ոչ թե ներքին զարգացման, այլ արտաքին գործոնների արդյունք է՝ Արևմուտքի ներխուժումը սկսած XVI դարից, որսից ներմուծված կապիտալիստական հարաբերությունները, նրա ասելով, ոչնչացրին տակդական կապիտալիզմի զարգացման պայմանները։ Ընդունեած սոցիալական տեղաշարժերի առկայությունը նա բացատրում է ոչ թե ներքին փոփոխություններով, այլ ուրիշամյան կապիտալիզմի քայլարիցից ազդեցությամբ։ Հնդկանուր ու ամեամբ ճիշտ մեկնարանելով ասիսկան արտադրակղանակի ազդեցությունը, Մ. Սենչերը, այսուհեղերձ, լի թափանցել նրա էության խորըը։ Նա հաշվի լի առել Հողագործության համայնական ընույթը, որը արդելակում էր կապիտալիստական սեփականության և նրա մյա հենվող արտադրության ձևերի հաստիացումը։ Նա անտեսել է, որ Հողի պետական սեփականությունը ևս ֆեոդալական սեփականության ձևերից է և որ սոցիալական այդ կառուցվածքները ներքնազես քայլարիզում էին արտադրակղան նոր ուժերի զարգացման ազդեցության հետ-

<sup>1</sup> Sencer M., Osmanlı toplum yapısı, s. 265.

<sup>2</sup> Խոյն անց, էջ 302.

վանքով։ Օ. Սենչերը Սոմանյան կայսրության ֆեոդալական տեսեսության քայլայումը և կառավագիք է համարում ուշատկապես 1870-ական թվականներից։ Երբ, կարծեք բռնի կերպով, զրոխ մոցված կապիտալիզմից մղված անտեսությունը տեղափոխում էր կապիտալիստական ձեռնարկությունների առեղծման, ցամացային ու երկաթուղիների շինարարության և կապիտալիստական շուկայի զարգացման ճանապարհի վրա։ Այս նազարգացնում է այն միաբը, որ կայսրությունը, եթե ի վիճակի լիներ որպես տիֆակ ամրազջությունը դիմակայի արտաքին աղքացություններին, գնալու էր ուրիշ ճանապարհով։ Իսկ քանի որ նման բան տեղի չտանցավ, երկրի ըներքին զարգացումը խանգարվեց, շեղվեց բնականոն ընթացքից և մտավ մի նոր ուղղության։

Թուրքիայում կապիտալիզմի զարգացման և բանվոր պատկարգի ձևավորման վերաբերյալ իր աշխատության մեջ Կուրտ-Հան Ֆիշեկը ևս մեղադրում է Արևմտաթքին՝ տեղական արտադրությունների քայլայման և տնտեսության հետամնացության համար։ Ֆեոդալիզմից կապիտալիզմին ուղղելու սկիզբը նա հսկարում է Թուրքերի կողմից կ. Պոլոյի գրավումը 1453 թ., Դրան, իրը, հետևեց առնորի աշխատացումը, Ֆեոնվայի վաճառականների սիստեմատիկ այցելությունները, որոնք իրենց բերած ուղու և արժանի փոխարեն մնա բանակությամբ տանում էին Հումբ և տեղական արդյունարկության ապրանքներ։ Ալկասած XVII դարի կեսերից, — շարումակում է կ. Ֆիշեկը, — երբ սկսվեց Հումբի գերերի արտգ բարձրացումը, Անտառիան ձեռք բերեց Եվրոպայի համար Հումբի կարևոր բազայի եշտակությունը։

Հետապայում Թուրքիայի զարգացման ուղղությունը և որոշակի արտադրանքի անհրաժեշտությունը նա կապում է Արևմտաթքի պահանջմանըների հետ։ Նույնիսկ գյուղատնտեսության առաջընթացը կ. Ֆիշեկը համարում է ուշ թե ներքին պահանջմունքի..., այլ արտաքին շուկայի կարիքների հետմասք։

<sup>1</sup> Հայկական Հարցի վեցին փուլը, և. Պուլին, 1913 թ., էլ 70.

<sup>2</sup> Տե՛ս «Народы Азии и Африки», 1979, № 3, стр. 160.

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղը:

Գետական ապարատը և գործիչները միշտ էլ եղել են իրենցին վիճակին անփոփոխ պահելու, կողմնակիցներ և Թուրքիան զրա դասական որինակներից է:

Խոսելով անտեսական կյանքում պետության դերի մասին, Ֆ. էնգելսը դա համարում է շափառանց կարևոր գործոն երկու իմաստով: Որպես հասարակության ղեկավար ուժ, նա կարող էր միանգամայն դրական և նույնքան էլ բացասական ազդեցություն ունենալ զարգացման պրոցեսի վրա: «Տնտեսական շարժումը, — գրել է Ֆ. էնգելսը, — ըստշանուր առմամբ, կհարթի իր ճանապարհը, բայց նա կզարդ քաղաքական շարժման հակազդեցությունը, շարժում, որին ինքն էր ստեղծել և որի ունի հարաբերական ինքնուրույնություն: Տնտեսական շարժման վրա ազդում է, մի կողմից, պետական իշխանության շարժումը, իսկ մյուսից՝ վերջինիս հետ միաժամանակ մնանած ազդեցիցիան»<sup>1</sup>: Պետական իշխանության ազդեցությունը աղետական զարգացման վրա, ինչպես ասվեց, եղել է բացասական, մինչ կայսրության գոյության վերջին փուլը: Երիտթուրքերի հեղափոխությանը նվիրված իր մենազրության մեջ է: Եպիկովան ևս ընդգծում է այդ հանգամանքը: «Պետությունը Սամանյան կայսրությունում, — գրում է նա, — կապիտալիստական հարաբերությունների զարգացման մեջ խաղում էր արգելակող գեր: Նա բոլորովին չէր նպաստում կապիտալիստական հարաբերությունների ձևավորմանը»<sup>2</sup>:

Մ. Մելքոնը այն համոզումքն է հայտնում, որ արտադրության հիմնական հարցերը ևս այդ երկրի սոցիալական կարգի հիմնական գծերից մեկը համարում է տակտության բացարձակ գերակշռությունը հասարակության վրա»<sup>3</sup>:

Մ. Մելքոնը այն համոզումքն է հայտնում, որ արտադրության հիմնական հարցերը լուծվում էին ոգլուղական համայնքին, քեզի, թաղի կամ տունմին՝ կոլեկտիվ ուժերով: Իսկ պետությունը

<sup>1</sup> Маркс К. и Энгельс Ф., Соч., т. 37, стр. 417.

<sup>2</sup> Шпилькова В. И., Младотурецкая революция 1908—1909 гг., стр. 13.

<sup>3</sup> «Народы Азии и Африки», 1978, № 3, стр. 57.

<sup>4</sup> Նոյն անգ. 1879, № 5, էլ 187.

Նը միայն ընդհանուր ձևով էր հսկում և կարգավորում տնտեսական կյանքը: Հենց նման անորոշ վիճակի արդյունք էր անհատի սեփականության իրավունքի պայմանական լինելը: Այդ իրավունքն ապահովված չէր ոչ էլ կճնարոնական և ոչ էլ տեղական իշխանությունների կողմից: Որևէ ժամանակոր սեփականություն, ն. Իվանովի ձևակերպմամբ, որպես արդպիսին անհռապայի, խախուս վիճակում էր գտնվում և ամրողապես կախում ուներ ոիշխանության պիտօնամտությունից և ամեն բոլոր կազմակերպության անցնել պետության ձեռքբան: Հետևաբար, տնտեսական գործունեության ընդլայնումը որևէ անձնավորության համար ևս արոշակի լինել և իրականանալ չէր կարող, եթե բախտը չժպատար մշյառն կապիտալի սկզբնական կուտակման և կուտակումները հասարակական արտադրության համար ժախսելու մասին խոսք անդամ լինել չէր կարող: Ավելի ուշ, երբ դրամի կուտակումն ու Ներքին միջոցների հաշվին հարստանալը դարձան նպատակ, կուտակման դրամը ժախսվում էր առևտրի ու սպեկուլյատիվ միջոցառումների վրա, օգտագործվում էր վաշխառուական գործարքներում և նորից չէր դառնում սկզբնական կուտակման միջոց: Հարկային սիստեմը, կեղծումներն ու կամայականությունները ևս չէին կարող ժառանալ այդ նպատակին, և դրանք ոչկարողացան ապահովել եկամուտի կարեռը ան, որը հանգեցներ կապիտալի կուտակմանը<sup>1</sup>:

Հետաքրքրական է, որ կապիտալի կուտակմանը նվիրված հատուկ աշխատության մեջ այդ պրոցեսի բախտը նույնպես կապվում է երկրի քաղաքական ու պետական կարգերի հետ: Եմքն կասկածից վեր է այն իրողությունը, — նշված է զրոյում, — որ պատմական պատճառների հետևանքով կապիտալի կուտակման գործը թուրքիայում դանդաղեց և դրամագույնը մեծացնելու մեջ լուրջ արգելվներ առաջացան: Այս իսկ պատճառով քաղաքական վատառողջ կազմ ունեցող կայսրության մեջ կապիտալի կուտակման ու նոր արտադրական միջոցների զար-

<sup>1</sup> «Народы Азии и Африки», 1978, № 3, стр. 60.

<sup>2</sup> Bulutoglu K., Türk vergi sistemi, s. 2.

գացման գործը ձախողվեց<sup>1</sup>: Այնուհետև, նշվում է այն, ինչի  
մասին զննում առկից, որ իշխանավորները հավաքված մեջ  
գումարները ռարպես դրամապարփակ սպառորդելու փոխարին  
կամ թանկարժեք իրեք էին գնում և պահում իրենց տներում  
կամ ձեռք էին բերում կարվաճքները<sup>2</sup>: Ինչպես բոլոր մահմեդա-  
կան հեղինակների մոտ, այս աշխատությունում ևս ակնարկ է  
արվում, որ առևտրից ստացած շահը, ըստ շարիաթի և իսլամի  
դոգմաների, ռազմության է համարվում և այս պատճեռով էլ է  
խաթարվում էր կուտակման պրոցեսը: Սակայն հանրահայր էր  
որ գրամը կրոն չի ճանաչում...

Այսուամենաբնիվ, կրոնը որոշակի ուղղեցություն է ունեցնել  
քենարկվող հարցերի լուծման վրա: Այդ աղղեցությունը եղել է  
ոչ միայն քարոյական և կենցաղ մտած սովորությունների միջո-  
ցով: Կայսրության մեջ Հպոր ուժ էր ներկայացնում վակֆային  
Հռոմատիրությունը, որը տարբեր շրջաններում գորավել էր մշակ-  
վող տարածությունների 35—70 տոկոսը: Բնական է, որ տըն-  
օտեսական շատ խնդիրներ առնվազում էին տեղերում վակֆի աղ-  
ղեցության, կամ նրա ներկայացնությունների հետ, իսկ սրբաց  
Հսկողությունը ինքնին արգելակում էր որևէ առաջադիմ միջո-  
ցառում: Այսպիս, կայսրության քաղաքներում չկային մանիքի-  
պալ մարմիններ: Դրանց համախ փոխարինում էին վակֆային  
գարշությունները, որոնք կառուցում էին տեսք, չբառուր ցան-  
ցեր, բաղնիքներ, շուկաներ և քաղաքներին անհրաժեշտ այլ  
օրյեկտներ, որոնցից կորզում էին Հսկայական Հարաբություններ: Նրանք լայնորեն մասնակցում էին տեղական առևտրին,  
վաշխառական գործարքներին: Առա այս ամենը իր ժանր  
կերպն էր դեռև Թուրքիայի տնտեսական կյանքի միա, գահ-  
ուղարկելով երկրի առաջընթացը: Միանգամայն իրավացի է  
Մ. Մելիքը, երբ Հոգևորականության քարոյական, իրավական  
ու տնտեսական զգալի աղղեցությունը համարում է սթաման-

<sup>1</sup> Türkiye'de sermaye piyasasının kurulması..., s. 75.

<sup>2</sup> Խոշի ուսուց, էջ 54.

յան կայսրության ներքին թուլության պատճառներից մեկը, որը նպաստեց նրա անկժանը<sup>1</sup>:

Պատմական իրավիճակը, որի պայմաններում ձևավորվում էին կապիտալիստական հարաբերությունները, նպաստավոր չեղ զնուրդիններին զարգացման համար Տիրապետող թուրք ժողովրդի ազգային բուրժուազիան, ինչպես նշվեց, սերում էր ֆեոդալիզմի պատվարը Հանդիսացող Հոգատերերից, խոշոր անասնատերներից, ցեղապետներից կամ գավառական վերնախավի ներկայացուցիչներից, պետական պաշտոնյաններից, զինվորականներից, Վերջիններս, իրենց Հերթին, սերտ կապեր էին պահպանում ֆեոդալական սեփականատերության հետ։ Պահանջվեցին տասնամյակներ, որպեսզի թուրք բուրժուազիայի շարքերում իրենց տեղը գրավիին արդյունաբերության շահերը ներկայացնուի կապիտալիստները։ Այս հանգամանքը ևս դարձացումը գոնդագեցնող գործոններից էր։

Այդպիսով, կայսրության ներքին պայմանների անբանեկանությունը հանդիսացավ եւերի նետամենացության հիմնական պատճառը։ Առա թե ինչու Համոզիլ չէ արևելադաւան։ Պավլովիլի այն կարծիքը, թե «Թուրքական ռեժիմի սարսափների զվարացու մեջքն բնկում է, ամենից առաջ, կապիտալիստական օվկոպայի վրա»։ Այսուհետև նա իր տեսակետը հիմնավորում է Հետուալ փաստարկներով։ «Թուրքական ռեժիմի ամբողջ դժրախտությունը, բոլոր սպեցիֆիկ մութ կողմերը, եմուստամանակ Շատումանյան կայսրության հետամեացության պիտույքը պատճառը Հանդիսանում էր ոչ այնքան թեոկրատական բնույթի մահմեդական պետության իրավական կառուցվածքը, որը ան, ամենից առաջ, այն անտեսական համակարգը, որ կապիտալիստական նվազան բռնի կերպով պարտադրեց թուրքության նրա հասցըսած Հակայական վետաները։ Այսուղ երկու-

Դմագերիալիզմը պատճերեծելու նպատակով մզվող պարի ընթացքում, իհարկե, պետք է հիմնական ուշադրությունը սկսվի նրա գիշատիչ բնույթի և մեծենալությունների վրա, ոգտագործելի ամեն մի երնույթ բույց տալու համար մարդկությանը նրա հասցըսած Հակայական վետաները։ Այսուղ երկու-

<sup>1</sup> «Вопросы истории», 1979, № 12, стр. 125.

<sup>2</sup> Павлович (Вельтман) М., Революционный Восток, СССР и Восток, М., 1927, ч. I, стр. 182.

Ազարծիք լինել լի կարող: Անկասկած է նաև Օսմանյան կայսրության տևտեսությանը *XIX—XX* դդ. արտաքին գործոնի պատճառած բացասական ազդեցությունը:

Հանրահայտ է, որ նման երևոյթը նակատագրական եղանակով լին է ունեցել Հատկապես Հայութեաց երկրների վրա: Բացարձակ կախման վիճակ ստեղծվեց գաղութների համար: Կոնսերվացվեցին ֆեոդալական հարաբերությունները և զգալիորեն պահպաղեց կիսապաշտոթների տևտեսական զարգացումը: Արևմելքում տեղի ունեցող այս Համբեդկանուր երևոյթը միատեսակ մըրկնություն չեղավ, բանի որ պատմությունը չի պատճենահանում նշզած երևոյթները: Օսմանյան կայսրության կիսապաշտոթ դառնալու ընթացքը ևս ունեցել է իր առանձնահատկությունները:

Առաջին այն էր, որ հզոր պետություններին ինքը ողորմածարար ընդունակից օտար կապիտալի, առևտրականների ու պետությունների ցանկությանը՝ հաստատելու փոխադարձ տևտեսական կապիկը, որը և ձևակերպվեց կապիտալիացիոն Համակայնապերի միջացով:

Երկրորդը, երկրի կառավարիչները որպես Հարստանալու կարևոր առջյուր ընդունեցին եվրոպական երկրների տօգնությունը, որի բուն նպատակը պետք է լիներ առևտրի ու արդյունաբերության զարգացմանը սաստարելը: Արևմտան գործիչների շանքերը և օտար կապիտալի ճնշման փորձերը Համբեկան: 1830-ական թթ. և ազելի ուշ կնքած առևտրական պայմանագրերը պաշտոնապես թույլատրեցին եվրոպական կապիտալի հոսքի առևտրի ասպարեզ:

Նույն ժամանակաշրջանում, մեկ-երկու տասնամյակի ընթացքում, օսմանյան պետության տարրեր շրջաններում պահուական վարկի օգնությամբ ստեղծվեցին յոտ 15 ձեռնարկություններ, որոնք կառուցված էին եվրոպական ոճով և կահավորված ներմուծված մերձնաներով<sup>1</sup>:

Դրբի բազմաթիվ էդերում բերված են որինակներ, որոնք ցույց են տալիս, որ պետական գործիչների անձնական շահուգործությունը հանախ կարևոր դեր էր կատարում արտաքին փոխառությունների ու վարկի ներմուծման ընթացքում:

Երրորդը, Օսմանյան կայսրությունն իր գոյության վերջին

<sup>1</sup> Тедоров Н., Балканский город..., стр. 258.

շրջանում՝ անցյալ գարի շորրորդ քառորդում միայն ընկազմանը անտեսական ու ֆինանսական կախման մեջ Արևմտյան-ակրությունների շահերը ներկայացնող պետական պարտքերի վարչությունը, որը հիմնադրվեց 1881 թ., իրապես գարձագույն երկրի տնտեսությունը և Հատկապես ֆինանսները դեկավարող համարյա միակ կազմակերպությունը։ Ետո Հանախ, թուրքական կառավարության խնդրանքով, նա ապահովում էր նաև պետական Հարկերի ու առուրբերի գանձումը։

Ի. Ալիքրեկովն իրավացիորեն նշում է. «Կորցնելով Հսկողությունը սննդական ֆինանսների վրա, Թուրքիան երկար ժամանակով խաթարեց երկրի արտադրողական ուժերի զարգացումը»։

Փաստերը Հարավորություն են տալիս եղրակացնելու, որ համեմատած մրցու կիսադաշտութերի՝ Ծրանի և Զինաստանին ստար կապիտալի մուտքը Թուրքիա ընթացել է տիսազանանապարհով։ Ուրիմն, նու այդ հանապարհին երթեք արդելքներ յունեցավ, որնե պրոտեկցիոնիզմի քաղաքականության ձեզ։ Ներքին զարգացման օրինաշափություններից մեկը տվյալն ամենակաշրջանի քաղաքական հետադիմական այն վարչակարգն էր, որն իր ժաման կնիքը դրեց ներքին ամրող կյանքի վրա և պատմության մեջ մտավ ողուզում անվան տակ։ Այդ շրջանին նախորդող տարիներին եվրոպական էժան ապրանքների Հարվածներից քայլարկած արտադրության և արհեստների միմար վերելք ապրեց և ունեցավ նույնիսկ իր ծաղկման փուլը։ Մեծացող և նորաստեղծ որոշ քաղաքներում զարգացման նոր թափ ստացան սպասարկման ոլորտը, ոննդամթերքի մշակման արդյունաբերությունը և այլ բնագավառներ։ Ստակայն շատ հին կենտրոններ (Թոքատ, Մերզիֆոն և այլն) չկարողացան վերականգնել իրենց արտադրության մակարդակը, քանի որ տարերայնորեն աճում էր նվազագույն ներմուծվող որոշակի ապրանքների քանակը։

Տնտեսական կյանքում կատարվող նշված պրոցեսները երեսի երկրին այնքան զնան չհասցրին, որքան 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը և նրանից հետո ծագալված մահմեդական մոլեռունդ տարրերի պայքարը քրիստոնյա ժողո-

<sup>1</sup> „Etudes balkaniques“, 1975, No 3, p. 88.

պատրժների նոր թափ առած ազգային-ազատապրական շարժում-  
 ների դիմ: Սկսվեց մի սահմարձակ անտեսական տեղոր ամ-  
 բողջ քրիստոնյան բնակչության դեմ, որի ընթացքում վերջին  
 կորցրեց մշակվող Հողերի խոշոր տարածություններ, մեծ քանա-  
 կում անշարժ ու շարժական գույք և այլ հարստություններ: Ան-  
 որինականության և կամայականությունների այս ալիքը հազիվ  
 էր հանգարտվել, երբ ժայռ առան 1894—1896 թթ. Հայկական  
 քարդերը, որոնք բերին նոր ավեր, թալան ու մի շարք շրջան-  
 ների առաջարական կապերի խախտում, արտադրության նվազում  
 և տեսեական անկում: Այդ դեպքերին հետևեցին Հույն-Թուր-  
 քական պատերազմը, Հովհական առաջների բայիսուր և քա-  
 ղաքական այլ միջոցառումներ: Այսպիսով, Երկու տասնամյակ-  
 ների ընթացքում մի շարք ժանր հարվածներ կրցցին տեսեակա-  
 ն բնագավառի ակտիվ տարրերը: Երկրի կառավարիչների  
 վարած քաղաքականությունն ի վերջո արագացրեց անկման  
 պրոցեսը: Թուրքիայի առաջադիմ պորտիջներն անցուալ դարի  
 վերջներից սկսած կայսրությունը փրկելու միակ միջոցը տեսլում  
 էին Արդուկ Համիդ երկրորդի ռազմաֆեոդալական դիկտուատո-  
 րայի վերացման մեջ: Թուրք Հայքնեատերների մամուլում հրա-  
 պարակված մի Հայոտարարության մեջ ասված էր. «Եթե Թուր-  
 քիան մի բռնավորի փոխարեն ունենաց մի խմանում միապատ,  
 որը հենվեր բոլոր ցեղերի ու կրօնների ներկայացուցիչներից  
 բարեկացած պատգամավորական ժողովի վրա, ապա նա կփրկ-  
 վեր»: Այսքանը միայն Երիտարքութական Հեղաշրջման նա-  
 խօրյակին՝ 1908 թ. Հովհարին, կուսակցության կենտրոնական  
 օրգան «Մեշվերեթ» թերթի տուաշնորդողներից մնկում կարդում  
 ներ հետևյալ ծրագրային Հայոտարարությունը: ռՀեղափոխու-  
 թյունը, որը կազմակերպված ու գործադրված է քայլապահես  
 Հայրինիքի զավակներուն կռազմե, պիստի նպատակակետ ունենա  
 Արդուկ Համիդի բացարձակ բռնակալ իշխանությունը (այսինքն՝  
 նրա առաջարկումը — Հ. Ի.) և ոչ մեր երկրի կրօնական և սո-  
 ցիալական նիմնարկությունները<sup>1</sup>: Վերջին խոստումը նրանց  
 կատարեցին հետևողական կերպով: Հփորձելով որևէ փոփոխու-  
 թյուն մտցնել երկրի սոցիալ-քաղաքական կյանքում կամ լուծել

<sup>1</sup> Սականդրուցան Ա., Օրինասորդ Թուրքիա, Փարիչ, 1908, էջ 12.

<sup>2</sup> Եօրերի ձայնը, 1904, № 2, էջ 6. ընդգետները կատարել է թաշում-  
 նելու: Հարաթաթերթը դանեց թոշի և անփոփոխ:

առցիւակ-անտեսական որևէ պրոբլեմ։ Հենց սկզբից նրանք, ի դար աշխարհի հայտնեցին, որ շարժմակելու են ոկողմնակից մնայ սահմանադրական միապետության և Օսմանի արքայատումի պահպանման։<sup>1</sup>

Երիտրուրքերի այստեղ զետեղած երկու հայտարարությունները միանգամայն համապատասխանում էին նրանց դասակարգացին էությանը և ավելին սպասողները, բնականարար, հումանիստ հզան։ Պարզաբնեւուի գոյացելուն անգամ ի վիճակի չեղազ ստեղծելու բուրժուական զեմոկրատիային համապատասխանող տարրական պաշմաններ։ Բանատիրությունն ու կամայականությունները շարժմակիցնեցին, այն տարրերությամբ միայն, որ պրանք կատարվում էին երիտրուրքերի ղեկավարությամբ ու ցուցումներում, ավելի կատարելագործված մեթոդներով։ Նրանք նույնությունը պահպանին սուլթանական թուրքիայի պետական ապարատը, Երկրի ներսի կարդ ու կանոնը։ Ծրիտթուրքերի իշխանության առաջին ամիսներին նկարագրելով թուրքիայի ներքին դրամականությունը, Կ. Պոլսում ուսաւկան դիսպան Ի. Զինովևն իր զերազարին հաղորդում էր. «Թուրքերը, որոնք իրենց համարում են ընտրյալ սասա, չեն կարողանում հաշտվել հավասարության սկզբունքի հետ, որ հրապարակել է սահմանադրությունը»<sup>2</sup>։ Վեցականգնելուց հետո էլ այն իրականում երրեք ազգեցությունն չունեցավ թուրքիայի հասարակական կյանքի վրա։ Դասակարգացին և ազգամիջյան փախհարաբերությունները ավելի ես սըրմեցին։ Տիրապետող ազգի ներկայացուցիչներն ու գործիչները մտածել անգամ չեն ցանկանում ժողովուրդների իրավահակարության հետազորության մասին։ ՇԱյսպես կոչված է երիտրուրքերի մտավոր շարժումը, — զրել է այդ օրերին Կ. Պոլսում ուսաւկան դիսպանատան հավասարմատար Դ. Նելլիդովը, — շատ հին և բուն թուրքական շարժում է, որի էությունը հանգում է թուրք-պրավողի բողոքին ընդդեմ թուրքիայի վզին դրսից փաթաթվող բարենորոգումների և նորամուծությունների, որոնք նրանց հետպհնած զրկում են ուղարակեցվածք ազգարեակալության վրա ունեցած իշխանությունիցը»<sup>3</sup>.

<sup>1</sup> Երիտրիա ձախը... № 2, էջ 6.

<sup>2</sup> АВПР, ф. ուսութարքն, լ. 1034, չ. 55.

<sup>3</sup> Խորք անց. թերթ 100.

Խելպես ցույց են տալիս բերված արխիվային գիաստաթղթերը, երիտթուրքերը մինչև վերջ մնում էին հինգ պահպանելու կողմանակիցներ և նրանց ղեկավարությամբ առջի ուժեցած հեղաշրջումը պայմանականորեն կարելի է անվանել հեղափոխություն։ Այդուհանդերձ, անտեսական առաջընթացը և կապիտալիստական հարաբերությունների զարգացումը ներգրավեցին ոչ միայն արդյունարերության, արհեստների և առևտուրի բնագավառները, այլև գյուղատնտեսությունը։ Մասնավոր, ֆեոդալական ու կապիտալիստական խոշոր հողատիրության ընդլայնումը, լիբերալ կազմաձատերների և պետական պաշտոնատեսների ու զինվորականների ներկայացուցիչներից ձևավորված բուրժուական խավի առկայությունը, գյուղական բուրժուազիայի ծնունդը, որպես գյուղացիության քայլայման հետեանք, գյուղատնտեսության մասնագիտացումն ու կապիտալիզացիան և մի շարք այլ պրոցեսներ ցույց էին տալիս կապիտալիզմի առաջընթացը նաև գյուղատնտեսության մեջ և վերջինիս զարգացումը պրուսական ուղինով։ Այդ ամենին նպաստեցին առևտուական կապերի ընդլայնումը, Համակապես արտաքին առևտուրի աշխատացումը և ներքին շուկայի գործացման պրոցեսը, Տեղի էին ունենում արդյունարերության և արհեստների կենտրոնացում, առևտուրադրամական և արդյունարերական կապիտալի միավորում։ Տեղական բուրժուազիայի ազգային խմբերը համախմբվում էին, կազմակերպում փայտիրական և այլ ընկերություններ։ Դասակարգային միություններ ստեղծելու ճանապարհով նրանք փորձում էին զիմակային ֆեոդալական պետության և օտար կապիտալի անող նշշմանը։ Սակայն այդ փորձերը մեծ մասամբ թիւ արդյունք էին տալիս։ Թուրքական Շարտելող շովինիզմի գաղափարախոսությունն ու քաղաքականությունը հիշյալ ձգումների իրականացման ճանապարհին հանդիսանում էին չափաղանց լուրջ և Հանախ անհաղթահարելի արգելքներ։

«... Երիտթուրքերը, — գրում է է. Հասանովան, — խոսք իրը կողմնակից էին ազատության, համաստրության, եղբայրության, իրականում հրահրեցին աղքային հակասություններ Օսմանյան կայսրության ժողովուրդների միջև և իրնենք թաղեցին այն ազատությունը, որի համար 1908 թ. պայքարում էին թուրքերը կայսրության մյուս ժողովուրդների հետ միասին։ Երիտթուրքերի շովինիզմը հանդիսացագ նրանց քաղաքականության

կրախի, վերջին Հաշվով, Օսմանյան կայսրության անկման ամենալուրջ պատճառներից մեկը՝<sup>1</sup>

Օսմանիզմին և պանխաղմիզմին հաջորդեցին պանթյուրագմենը ու պանթուրանիզմը և դրանց պրակտիկ արտահայտությունը հանդիսացող ազգային խարականության քաղաքականությունը (թյուրքական վարչության գիմ թուրք ժողովրդի գաշխակիցը հանդիսացող քրիստոնյա ազգարնակլությանը և մահմեդական մյուս ժողովրդներին, Ալյանսը և լուտացվեց գասակարգային միավորում, ընդհակառակը՝ ուժեղացնող ազգային ննջումը սրբց ազգամիջյան պայքարը, իր անկման նախարյակին՝ երիտթուրքերի դաժան դիկտատուրայի տարիներին, Օսմանյան կայսրությունը մի անգամ ևս ցույց տվեց, որ նա իրապես հանդիսացել է ժողովրդների բանս, որի ոչնչացումը շափականց պրոգրեսիվ երևոյթ էր բոլոր հպատակ ժողովրդուների, ինչպես նաև թուրք աշխատավոր ժողովրդի համար. Կայսրության տապահումը, ուղղմական ուժերի կամ պատերազմի պայմանների օգտագործմամբ, դարձել էր պատմական անհրաժեշտություն. Եզ դա ամենից առաջ մոտ ու հասկանալի էր աշխատավոր ժողովրդական մասսաներին ու առաջադեմ մարդկության ներկայացուցիչներին. Բայց այն չէր համապատասխանում երիտթուրքերի պանթյուրքական նվաճողական պլաններին, Կայսրության գորոթյունը նրանք դիտում էին որպես այդ պլանների կենսագործման նախապայման:

Այնուամենայնիվ, կայսրության առմաններում և նրանցից գուրա կային ուժեր, առաջադիմ կազմակերպություններ և գործիչներ, որոնք լրջորեն մտածում էին տառապող ժողովրդներին ազատագրելու մասին, խորհում և առաջարկում էին տարրեր ուղիներ. Դրանցից ամենից համանականն էր թվում գեմակրատական վերափոխումների ճանապարհով, ազատագրական պայքարի միջոցով ֆեդերատիվ պետություն ստեղծելու հնարավորությունը:

Հետաքրքրին այն է, որ Օսմանյան կայսրության տարածքում նման պետական միավորումներ ստեղծելու խնդիրը առանձին մտավորականներին զբաղեցրել է դեռևս անցյալ դարի կեսերին:

<sup>1</sup> Гасанова З. Ю., Общественная мысль в Турции в период буржуазной революции 1908 г., Сб. Современная философия и социология мысли стран Востока, М., 1965, стр. 234.

Պ. Զիլյաշվիլ սմուսաստանը և Արևելյան Հարցը հոդվածում 1860 թ. գրում էր թուրքերի վերիշխանությունը վերացնելու անհրաժեշտության մասին և գտնում, որ ազգային սկզբունքը մրահնեղած կարելի է ստեղծել ինքնուրույն ժիղղերատիվ պետություն՝ Հար և Նման Ամերիկայի Միացյալ Նահանգներին կամ Եվրոպային։

Այսուհետեւ այդ գաղափարը շմոռացվեց և երրեմն արտահայտվում էր մամուլում և զրականության մեջ Հատկապես Թուրքարիայի ազատագրումից հետո։

Այն դարձավ կենսական խնդիր, կազմած երիտթուրքական շարժման վերելքի հետ, երբ կայսրության հպատակ, Հարավահարվող ազգերի ներկայացուցիչները հետևողական կերպով պայքարում էին Հանուն ինքնուրույնության կամ ինքնազարդության կայսրության հնարավոր կործանումից հետո Մարգարիտական օքրազուգանին Հանդեսը 1909 թ. իր մայիսյան հոմարում նշում էր, որ երիտթուրքերը շահագաղանց կասկածամտորեն են նայում կայսրության բազմաթիվ ժողովուրդների ինքնուրույնության ձգումանը և երիտասարդ Թուրքիայի համար միակ հնարավոր ելքի՝ ինքնազար էթնիկական ու կրոնական կազմակերպությունների ֆեղերատիվ միությունը հանաչելու փոխարեն ուժգնորեն աշխատում են իրականացնել կենտրոնացված պետության սկզբունքը՝ ապահովելով տիրապետող աղջի գերիշխանությունը<sup>1</sup>. Հոդվածի հեղինակն իր առաջարկած ուղին համարում էր հուրժ կարևոր նաև երիտթուրքերի գիրքերը քաղաքականապես ամրապնդելու իմաստով՝ ժամանակական ազատությունների և ֆեղերատիվ ապահնարկնացման զաղափարը, — շարունակում է նա, — եթե միայն երիտթուրքերի կուսակցությունը համաձայնվի դրանց կիրառել կյանքում, ունակցիան արմատահան կանեն ազելի հաջող կերպով, քան երկու նակատներում (աչ և ձախ—Հ. Ի.) տարվող կատաղի պայքարը և դիմոկրատների հալածանքը...<sup>2</sup>.

Թուրքիայի տիրող շրջաններում ֆեղերատիվ պետության զաղափարի և ապակենուրունացման ձգումների արտահայտություններն առաջ բերեցին շուկինիզմի մի նոր ալիք։ Այն

<sup>1</sup> Чижевский П. А., Великие державы и Восточный вопрос, стр. 187.

<sup>2</sup> «Образование», 1909, № 5, стр. 187.

<sup>3</sup> Խոյք անցը, էջ 188.

Ներդրավեց նաև բալկանյան երկրների հասարակության վերին շերտին ու սկզբեցին աղքամիջյան բախտամները Բուլղարական ձախ սոցիալիստները՝ տեսնյակները, սերը սոցիալ-դեմոկրատների Հետ աշխատավոր զանգվածներին նացիոնալիզմի վարակից Հեռու պահելու նպատակով, լայնորեն պրոպագանդում էին թալկաններում դիմոկրատական հանրապետությունների ֆեղերացիս ստեղծներու գաղափարը։ Այն ուղղված էր ոչ միայն թուրքական բնակչության, այլև բալկանյան միապետությունների աղդայնական բաղաքականության դեմ։ Մրտւա կողմից, ֆեղերացիայի գաղափարը պատասխան էր իմպերիալիստական պետությունների և ցարական Ռուսաստանի զավթողական գոտումներին։

1910 թ. սկզբներին Բելգրադում կայացած բալկանյան սոցիալ-դեմոկրատների առաջին կռնֆերանուը, Դ. Բլագունի մասնակցությամբ, որտեղ պաշտպանել բալկանյան ժողովուրդներին մի ֆեղերացիայի մեջ միավորելու գաղափարը<sup>1</sup>։ Եռառու այդ և մյուս որոշումները սովորվեցին Սիրազդային սոցիալիստական բյուրոյի բյուլետենում և դարձան Խոսկընացիոնային ու Նրա անդամ կուսակցությունների քննարկման առարկա, այսինքն՝ խնդիրն ընդունեց միջազգային բնօւյթ։ Սոցիալ-դեմոկրատների զեկավարությամբ բալկանյան երկրներում շարունակվեցին բանկուրական ժողովներն ու միտինգները<sup>2</sup>։ Հօգուտ ֆեղերացիայի ստեղծման։ Բալկանյան պատերազմները նոր խթան հանդիսացան քննարկվող գաղափարի ավելի լայն պրոպագանդան համար։

Սիրազդային սոցիալիստական բյուրոն, որի աշխատանքներին մասնակցում էր Վ. Ի. Լենինը, պաշտպանում էր բալկանյան սոցիալ-դեմոկրատների պայքարը Հանուն ֆեղերացիայի։ Ինքը Վ. Ի. Լենինը իր բազմաթիվ աշխատություններում անդրադարձել է այս պրոբլեմին։ «Մլավոն պրոլացու իսկական աղատությամբ Բալկաններում, — գրել է նա 1912 թ. Հոկտեմբերին, — ինչպես և թուրք պրոլացու ազատությունը, կարող է ապահովել միայն լիկատար աղատությամբ յուտաքանչյուր երկրի ներսում և լիովին ու մինչև վերը հասցված դիմոկրատական պետությունների ֆեղերացիայով»<sup>3</sup>.

<sup>1</sup> Տե՛ս «История второго интернационала», т. II, стр. 275.

<sup>2</sup> Տե՛ս Հայք անզը,

<sup>3</sup> Անդը Վ. Ի., օհֆ., հ. 22, էջ 185.

Գերմանական սոցիալիստական թերթերից մեկում զետեղված ո՞թալկանյան պրոբլեմը՝ Հոգվածն ընթերցելիս վ. Ի. Անդրեան ընդգծում է բալկանյան երկրների ու Թուրքիայի ֆեդերացիայի մասին հեղինակի այն տեսակի տօք, որ ֆեդերացիան կկարողանար ու բավարարել աշխարհագրական տեսակետից այդ միասնական մարզի կուլտուրական պահանջները, և վրապական իմպերիալիզմի, ինչպես նաև ուստական համաշխարհային տերության առաջնադաշտում դեմ անհաղթահարելի պատճեց կանգնեցնելու<sup>1</sup>:

Այդ ամենը, այսուհենդեռձ, անիրազորժելի էր, քանի դեռ կանգըն էր Օսմանյան կայսրությունը և քանի նրանում պետության ղեկը գույնվում էր իրենց միապետական հաշտարարությունության մեջ, թուրք շովինիստների ձեռքին:

Այսպիսին են պատմության դասերը, որոնք չեն կարող մոռանալ երրեմնի հպատակ ժողովուրդները և բռնապետության դեմ, հանուն դեմոկրատիայի պայքարող ամրության մարդկությունը:

Օսմանյան կայսրության անցած ուղին համոզիլ կերպով ցույց է տալիս, որ նրա կառավարիչների ղեկավարությամբ տեղի ունեցած պատմական գործողություններին, ինչպես նաև նրանց վարած քաղաքականության հիմքում ընկած էր լափազանց բացասական մի երրույթ՝ արտադրողական պրոցեսից նեռու պահել հիմնական արտադրազներին, ժողովրդական մասսաներին: Մի դեպքում, դա թուրք և մահմեդական ժողովուրդներն էին, որոնց հիմնական ֆունկցիան պատերազմական դործողություններին մասնակցելու էր:

Մյուս դեպքում՝ հպատակ ժողովուրդները, որոնք պարտավոր էին վճարել շատ որոշակի ժամեր հարկեր ու տուրքեր, որոնց պատճառով լափազանց զմիւրացել էր արտադրության ընդլայնումը: Բայց ամենից անտանելիքն տեղական իշխանության եերկայացուցիչների կամացականություններն էին, Վերջիններին, ուստի մի դիմանազետի բնորոշմամբ, հատուկ էին ազգային թյունը, նախանձը, պահությունը, ընչափացությունը, կաշուակրությունը և ունեսը քրիստոնյայի հաշվին անպատճ հարստանալու ցանկությունը<sup>2</sup>:

<sup>1</sup> Անդր. Վ. Ի., Տիգ., և. 22, էջ 8.

<sup>2</sup> ՏՏ « Սկզբան Ա. Ա., Ապրելյան հայոց ազգային պատճենները և առաջնային առաջնային պատճենները 1876 թ. և Բոլգարիա և Ռուսիա, Մ., 1978, ստ. 9.

Կ. Մարքսը, նշել է, որ թուրք վաշկառուն ցեղերը կարևոր էին Համարում միայն անառնենքի հոտի վերաբարությունը: Այդ պահանջը նրանց մղում էր դեպի Արևմտաք, դեպի նոր հոգերի գրավում և սահմանների ընդլայնում: Այսուհետև, երկրում տիրապետող ռազմավարական հողագուազործման սիստեմը ստիլում էր վերնախավին մզել նորանոր պատերազմներ, որ և անզի էին ունենում անընդհատ, մինչև կայսրության հղորության անկումը: Պատերազմները, որոնք քայլայում էին նրկրի տնտեսությունը և արտադրողական ուժերը, մասնակիցների համար ապրումտի և հարստացման գլխավոր միջոց էին:

Կայսրության քաղաքականության հիմնական աղյուրը հակագիսացող իսկամբեն ևս մշտապես իր հետևորդներին մղում էր դեպի նորանոր արշավների ու ավարառություններին: Հարձակման արդ շրջանը տնեց մռայ երկու դար և ստեղծեց Հաղթանակների ու կայսրության՝ իր անպարտելի ուժի մասին մտայնություն, որը վարակեց թե վերնախավին և թե թուրք ժողովրդի մի զգալի մասին:

Մինչդեռ Թուրքիայի հեշտ և արագ տարածքային ընդլայնումը, երկրի ներսում գենես գոյություն շնունցող կայսել տըետեսական կապերի պայմաններում, լրջործն խանգարեց ֆեոդալական անտեսության զարգացմանը ոչ միայն լայնությամբ, այլև ինքությամբ: Առա թե ինչու գյուղատեսությունը Թուրքիայում դարձրով մնաց ֆեոդալիզմի ամենացածր՝ սրարրարսական մակարդակի վրա: Արդեն XVIII դարի վերջերին ռազմավարական հողատիրության քայլայումն ավարտվեց, Հողը կենտրոնացվեց խոշոր սեփականատերերին, տարրեր փաշաների, դերերենյերի և այլոց ձեռքերում, որը, իր հերթին, ամրապնդեց սեպարատիզմը՝ կայսրության առանձին շրջանների և նրանցում բնակվող ժողովուրդների մասնատումը:

ԸստՀանուր պատկերը ամրողացնելու համար նշենք, ինչպես իրավացի կերպով արդ անում է Ա. Ֆ. Միլիերը, որ բարձր ամրող տարածության վրա, բացի Անատոլիայից և Ստամբուլին հարած Ռումելիայի մասից, թուրքերը ըստ էության շարունակում էին մնալ որպես ռազմական օկուպանտները<sup>1</sup>:

Իսկ օկուպանտի համար բնորոշ է տեղական հարստություն-

<sup>1</sup> Մկանը Ա. Փ., Տուրցիա, ակтуաльные проблемы новой и новейшей истории, М., 1983, стр. 21.

ների յուրացումը, հպատակ ազգաքնակշության թալանը և կողպուտը, որինական և անօրինական հարկերի զանձումը: Այս բոլորը, ամենայն հետևողականությամբ, տեղի էր ունենում կայսրության ամրող տարածքի վրա և հատկապես քրիստոնյա ժողովուրդների բնակավայրերում:

Հետևանքը եղավ այն, որ արտադրողական ուժերի հիմնական մասը կազմող այս տարրերը ևս շահազրդաված չէին պարզունելու արտադրությունը ու գույզում և ոչ քաղաքում: Բարիքների կուտակումը, շատ հաճախ, նոր բռնազրամումների ու թալանի առիթ էր հանդիսանում և հենց այս պատճառով պաւոգցին կամ քաղաքի արհեստավորը արտադրում էր միայն իրմինիմալ պահանջները բավարարելու, քիչ դիպքերում էլ շուկայի համար Բացառություն էին կազմում պետական Հսկողությանը ևնթակա արտազրությունները: Բայց դրանք չէին փոխում իրերի վիճակը: Անօրինականությունը և կամացականությունները համընդհանուր երևությ էին և գույքի ու անձինապահովությունը՝ օրինաշափությունը:

Այս միջոցներով տեղի ունեցող վերնախավի հարաւացումը միաձուկում էր նրան պետական ապարատի հետ, Հանգեցնում երա բրուրուկրատացմանը և պարագիտային տարրի վերածվելու: Բնականարար, այն դառնում էր ամեն մի նորամուծության և ընդհանրապես առաջնաթացի բացարձակ թշնամին: Դրանով է բացատրվում, որ կայսրությունում ոճֆորմների բռնր փորձերը ձախողվում էին, և դրանք երբեք չէին հնատապնդում երկրի սոցիալ-տնտեսական ու հասարակական-քաղաքական կարգերը վերափոխելու նպատակը:

Բուրքիայի զարգացման նման ընթացքին նպաստեց նաև XII դարում ձևավորված երկրի ներքին ռեակցիոն ուժերի և իմպերիալիզմի միասնական նակատը, որի աղդեցությունը զգալի է մինչև օրս:

Գրականության մեջ փորձ է արվում նույնացնել օտար կապիտալի և ոչ թուրք, ահազգի բուրժուազիայի դերը երկրի առաջընթացի պրոցեսում: Այդ տեսակետին հարող Ծեղինակները մոռանում են, որ վերջինս եղել է երկրում կապիտալիստական կարգերի հասաւաման ամենահետևողական կողմնակիցը և վ. ի. Անիներ նրա շարժումները գեահատել է որպես բուրժուական տարրերի պայքար ֆեոդալիզմի գեմ:

Դժբախտարար, ֆեոդալիզմի ամուր դիրքերի առկայու-

Ակավորվեց և ամրապնդվեց Սամանյան կայսրության պետական և քաղաքական ռեժիմը, Համարյա վեց դարերի իր պատման ընթացքում նա հանդիսացավ ֆեոդալական կարգերի, ռազմարյուրոկրատական վարչածեփ ամուր պատվարը, Ծեռշիվ կառավարման այդ պահպանողական ձևերի՝ բուժության հարաբերությունների զարգացման պրոցեսը մինչև վեր ընթացավ, և այսօր էլ մասնամբ ընթանում է ֆեոդալական կարգերի ախրապետող աղջկության պայմաններում:

Այսուհետեղիք, հաստրակական առաջընթացի արամարանությունն ու օրինաշափությունը Թուրքիայում ևս սոցիալ-տնտեսական տեղաշարժներ առաջացրին, Ալլազդի բուրժուազիայի երևոն գալը XIX դարի սկզբին, արհեստների ու արդյունաբերության զարգացումը, առևտրական կապերի աշխատավումը և ի վերջո սահմ կապիտալի ձուռքը պայմաններ-ստեղծեցին կապիտալիստական հարաբերությունների և թուրքական աղջային բուրժուազիայի ձևավորման համար նալոթուրական կապիտալը, ինչպես տեսանք, մեծ մասամբ ներգրավում էր տունտրի ոլորտը, Թուրքական բուրժուազիան, մինչև կայսրության անկումը, լրջորին չկապվեց արդյունաբերության հետ ու շատեղեց լուրջ սոցիալական, դասակարգային հիմքեր՝ երկրի տնտեսության մեջ կարևոր էր նաև այն հանգամանքը, որ նա համարյա լունեցավ զարգացման նախապատրաստման շրջան, մասնավորապես քաղաքականության ընադավառում, որը պեսար է հենվեր ձևավորված գաղափարախոսության վրա: Մկրտիչ մինչև վերջ բուրժուազիան բավարարվում էր ֆեոդալական գողափարախոսության տվյալ աննորմ: Անգամ նայելու աղջիկն ու շովինիզմը, որոնք կապիտալիզմի զարգացման ուղղակի արդյունք են, թուրքական աղջային բուրժուազիան վերցրեց ֆեոդալական պատրաստի ձևերից և իրենը հայտարարեց ամանեկզմն ու պանիսլամիզմը, պանթուրանիզմն ու պանթյուրիզմը: Բառին իսկական իմաստով, շունենալով իր քաղաքական կուսակցությունը, քանի որ երիաթուրքերին արդպիսին չի կարմի համարել, թուրքական բուրժուազիան ալլատեղ և հարեց ֆեոդալական-միապետական կազմակերպությունների և քաղաքական աշխատանքի ձևերին: Սոցիալ-տնտեսական զարգացման արամարանությունը ինչ-որ լափով հասկացող կոմո Սարահեղդինը և նրա հետևորդները ավելի բարձր զարգացման առանձնանի հասած հպատակ ժողովուրդների համար ավտո-

նոմիա կիրառելու իրենց առաջարկություններով, գուրս շպըրտ-վեցին երկրի Հասարակական-քաղաքական կյանքից, Կառավարության զեկը ֆնուդալիներից անցավ լիրերալ կալվածատերերի, պետական ու զինվորական բյուրոկրատիայի ներկայացուցիչների ձեռքը:

Տնտեսության մեջ քրիստոնյաների իշխող վիճակը, ինչպես բազմաթիվ այլ երկրներում, Հասարական բանական քաղաքական իրավահամարության, Նրանք մնացին ոգյավուր-ները (իսկ այժմ համարվում են երկրորդ կարգի քաղաքացիներ)՝ այստեղից բխող բոլոր հետևաներներով. Համակերպվել նման զրությանը չեին կարող իրենց զարգացման աստիճանուով թուրքերից ավելի բարձր կանգնած ժողովրդները. Ազգային-ազատագրական շարժումները դարձան երկրում մշտական երե-վույթ հետունետե ավելի կազմակերպված ու մասսայական և ՀԽ դարի պատմությունը Հազեցվեց ազատագրական պայքարի փայլուն էջերով. Դարասկըրին որոշակի Հազողության հասավ անրերի պայքարը. Սակայն առաջինը ազատագրվեց Հունաս-տանը, և կայսրությունը դրվեց կապիտալիստական բռնն զար-գացում ապրող, տնտեսական մեծ կարևորություն ունեցող շրո-ցաներից. Հաշորդ տասնամյակում, 1830-ական թթ., իր ինք-նուրույնությունը և փաստական անկախությունը ամրապնդեց սուլթանի երրեմնի վասալ Մուհամմեդ Ալին Եգիպտոսում.

Անցյալ դարի 70-ական թթ. ազատագրական շարժումները ծայր առան Բարկաններում և 1876 թ. ապրիլյան ապստամբու-թյունը Բուլղարիային բերեց անկախություն. Իսկ բարկանյան բոլոր ժողովրդները վերդասկանապես ազատագրվեցին միայն առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին:

Կրած բոլոր պարտությունները, տնտեսության և կուլտու-րայի ընագավառում ունեցած կորուստները կայսրության վեր-նախամին տրամադրել էին ձեռնարկելու ամեն միշտ և բույլ շտալու, որ նադիրանակով ավարտվեր նաև նայ ժողովրդի ազ-գային-ազատագրական պայքարը. Տեղական իշխանություն-ների, աղաների ու բեկերի, կանոնավոր դորքերի ու Համիդինի գործունեությունը և թալանի ու տնտեսական տեսորի, Հարցու-տահարումների ու հետապնդումների հետքավոր բոլոր ձևերի պործադրումը ուղղված էին այդ պայքարի ձախողմանը:

Բնույինի կռնգրեսի որոշումներից բխող կիսատ-պռատ բա-ցենորդումների պահանջի անտեսումը, Սասումի շարդերը և

Հայերի ցեղասպանությունը ստեղծեցին ռուբեգական վիճակ Հայ ժողովրդի համար, Մարդկային կորուստների համ նա կորցրեց նաև իր պապենական հողերի մեծադրույթ մասը, Մակայն նշված ոճքագործությունների շղթան թանձ նաև նաև կայսրության վրա: Թալանի ու ոչնչացման հնմարզվեցին բազմաթիվ ծագկուն շրջաններ ու երկիրը կրեց նյութական և մարդկային ռեսուրսների մեծագույն միավաներ, որոնց հետևանքները դդայի են մինչև այսօր: Կայսրության անկման վերցին ողբերգական ակտը, նրա մասնակցությունն ու պարտությունն էր առաջին Համաշխարհային պատերազմում: Նյութական հսկայական կորստների շրջանների քայլայումը, երկրի անանկացումը և նրա զերմանական ինպերիալիզմի կցորդ դառնալը:

Այս բոլոր հանցագործությունների համար Ստամբուլի ռազմական առյանց 1919 թ. հունիսի 5-ի իր դատավճռով, երիտրուրերի պարագուիններ Թալիսաթին, Էնվերին, Ջեմալին և գոկու: Նազրմին, հռուսկա կարգով, դատապարտել էր մահվան: Մի շաբթ վիլայեթների դատական հատուկ առյաններ տնտեսական բայցայում պատճառելու, քրիստոնյաների շարգեր կազմակերպելու և հակամարդկային այլ գործողությունների համար դատապարտեցին տեղական բազմաթիվ պաշտոնյաների: Համար դատապարտեցին ներկայացուցիչների:

Օսմանյան կայսրությունն իր երկարատև գոյության ընթացքում, Ըստգհետն վերածվեց (ն' առաջարական, և անտեսական իմաստով) Թուրքիայի ու նրանում ընտեղվող ժողովուրդների առաջընթացը խանդարող ու արգելակող ուժի: Իսկ ոչ բուրք, ավելի պարզացած ժողովուրդների համար նա գարձել էր ոնակցիոն վերապրուկ դեռևս Հարյուրամյակներ առաջ, Կայսրությունը հինգ դար կանցըրել էր նրանց անտեսական, բազարական և կուլտուրական զարգացման ընթացքը:

Խշպես տեսնում ենք, պատմությունը վազուց արդեն կայցրել էր իր դատավճիռը: Այլ ժողովուրդների և ազգերի հարըստահարող ու կեղեցող ասրբների տիրապետությունը, ինչ ձև էլ նա ունենա, լի կարող լինել հարատեւ: Նա պետք է տապալվի: Օսմանյան կայսրության անկումը, որպես պատմականութեն օրինաշափ և պրոգրեսիվ երևույթ, համատում է առաջընթացի ճանապարհին կանգնած նույնիսկ Հզոր արգելքների խորուակաման անխուսափելիությունը:

## РЕЗЮМЕ

В обширной литературе по истории Османской империи нет специального исследования о социально-экономических причинах ее падения. Факторы, определяющие объем и глубину этого закономерного явления освещены мимоходом, лишь при анализе отдельных событий или этапов развития страны.

Среди главных исторических причин — опустошительные нашествия тюрко-монгольских племен, которые в XI—XVI веках четырежды уничтожали достигнутый экономический и культурный уровень Передней Азии. Сами турки, в ходе завоевательных походов, свое общественное устройство дважды начинали «с нуля».

Другой фактор, определяющий крайне медленное социально-экономическое развитие Турции, это — патриархально-родовые отношения, которые кочевники-турки смирили веками, перебазируясь с одного места на другое и навязывая эти отношения покоренным народам.

Третий — это государственная собственность на землю. В период нашествий захваченная земля рассматривалась как общинная, племенная, коллективная собственность, в прошле, пастбища для скота, главного богатства кочевнических объединений. Уходя, они оголяли и опустошали использованные земли, затрудняя их культивирование. Позднее, земля раздавалась за государственную и военную службу (тимары, знаметы и хассы) в виде временных пожалований, что обеспечивало новых владельцев материальными благами и финансами, но не делало их истинными хозяевами, заинтересованными в улучшении качества земли и условий земледелия.

В течение веков настоящим общественным бедствием была откупная система налогов и поборов, при которых сборщики сами определяли сумму налогов и «долгов», цены на продукты и сырье, натуральную или денежную фор-

му законных и произвольных поборов. Органы власти нечили им никаких препятствий, ибо в грабеже имели свою долю.

В период становления капиталистических отношений социально-экономические условия менялись крайне медленно. Военно-бюрократическая верхушка политическими и экономическими мерами пыталась тормозить развитие буржуазных отношений. Формирование турецкой национальной буржуазии не привело к свободе предпринимательской деятельности. Даже наиболее динамичные элементы инонациональной буржуазии не смогли освободиться от феодальных ограничений и религиозно-шариятских запретов. Укрепление позиций турецкой буржуазии в конце прошлого века еще больше обострило отношения между различными национальными группами буржуазии. Христиане всячески вытеснялись из экономической и политической сфер, их разоряли путем насилия, произвола и беззакония.

Превращение Османской империи в конце XIX столетия в полуколонию лишь усугубило указанные внутренние процессы. Создание в 1881 г. «Управления государственного долга» только в конце века узаконило зависимое положение Турции.

Младотурецкий переворот не приостановил процесс разложения и падения империи османов. Младотуры не думали даже о проведении заметных социально-экономических преобразований, об установлении равноправия народов, о равенстве мусульман с христианами. В области экономики они продолжали курс прежних правительств, сохранив силу и мощь феодальных порядков в стране.

Для оценки всей исторической значимости указанных отрицательных факторов следует подчеркнуть их пагубное влияние на покоренные народы. Экономический, политический и культурный прогресс последних был почти простоянен в течение примерно 500 лет. Для отдельных же христианских народов, в особенности для армян, частично греков и других, мрачные столетия турецкого ига завершились физическим уничтожением и депортацией основной массы этих народов.

Вышеотмеченные отрицательные внутренние факторы и авантюристический, пантюркистский курс внешней политики, с благословения империалистического Запада, привели в годы первой мировой войны к ираху Османской империи. Таков закономерный и прогрессивный итог ее исторического развития.

## SUMMARY

The extensive literature on the history of the Ottoman Empire lacks a special research on the social-economic reasons of its downfall. Factors defining the volume and depth of that regular phenomenon are elucidated in a perfunctory manner, only when analysing individual events or stages of the development of the country.

Among the main historical reasons are the devastating invasions of the Turkish-mongolian tribes, who during the XI—XVI centuries A.D. four times destroyed the highly developed economic and cultural level of the Near Eastern peoples. Turks themselves twice during the conquering invasions began their social organization from zero level.

Another factor, defining the extremely slow social-economic development of the Turks, is the patriarchal-ancestral relations, which the nomad Turks kept during the centuries, moving from place to place and imposing by force these relations on the submitted peoples.

The third factor is the state property on the land. During the invasions the seized lands were considered as belonging to community, tribe, as a collective property, i.e. pasture for the cattle, the main wealth of the nomads. When departing they bared and devastated these lands, making difficult their cultivation. Later on the lands were distributed for the state and military services (timars, ziamets and chases) as the temporary gifts providing material wealth and money for the new owners, but it could never make them the real landlords, interested in improvement of the quality of the land and conditions of agriculture.

During the centuries the system of taxes was a real public disaster. The collectors themselves determined the sum of taxes and "debts", costs on products and the raw materials, natural or money forms of the legal and arbitrary taxes. Local authorities never put obstacles on this because they also had their share.

In the making of the capitalistic relations the social-economic conditions were changing very slowly. The milli-

tary-bureaucratic leaders were trying to hamper the growth of the capitalistic relations by means of political and economic measures. The formation of the Turkish national bourgeoisie never brought to free business. Even the most dynamic elements of the non-Turkish bourgeoisie could not make themselves free from feudal restrictions and religious-shariaitic interdictions. The consolidation of the Turkish bourgeoisie at the end of the XIX century strained more the relations among various national groups of the bourgeoisie. In every possible way the Christians were forced out of the economic and political spheres, they were impoverished by means of violence, arbitrariness and lawlessness. The transformation of the Ottoman Empire into a semicolonial at the end of the XIX century aggravated the mentioned internal processes.

The creation of the "State Debt Office" in 1881 only at the end of the XIX century legalized the dependent position of Turkey.

The Young-Turkish upheaval did not stop the process of demonstration and downfall of the Ottoman Empire. The Young-Turks never thought about the marked social-economic transformations, nor about establishing the equality of the peoples, about the equality between the Muslims and the Christians. In the economic sphere they continued the policy of the former governments, trying to keep the strength and power of the feudal orders in the country.

For the estimation of the whole historical significance of the above-mentioned negative factors, their fatal influence on the subjugated nations should be emphasized. The economic, political and cultural progress of the latters was practically suspended in the course of about 500 years. For some Christian nations, especially Armenians, partially Greeks and others, the dark ages of the Turkish yoke were completed by the extermination and the deportation of the main masses of these nations.

The above-mentioned and other negative internal factors and also the venturesome, panturkist course of foreign policy, with the blessing of the imperialistic West, brought the Ottoman Empire into collapse during World War I. This was the legitimate and progressive result of its whole historical development.

ԲՈՆԱՌԵՆԱԿԱՆԻՑԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱԿԱԲՈՒՅՔ		
ՕՐԻՆԱԿԵԼ ՅԱՅՐԱՇԻՐԾ ԿԱՌ ՔՈՂՔԱՎԵԼ ԿԱՐԳԸՐ		21
ԿԱՐԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՐՄԱՆՎԱՐ	27	
ա. Յանդրախիմ Հայուրեալ թայրառակը		35
բ. Կապրատիզիմի գանձոց առաջնորդությունը		145
ՀԱՐՄԱՆՎԱՐ ՀԱՅԱԿԱ ՈՐՈՒՅ		211
ա. Խոր Հայուրեալ գանձուրակի համարժան յուրա- շառավայրակար		212
բ. Տարբեր գործողությունների ազգային յուրա- շառավայրակար		213
ԿԱՅՈՎՈՒԹՅՈՒՆ ԱՆԱԲՈՅՑ		
(Եղիշեականման)		205
Резюме		222
Summary		224

Индженян Ованес Григорьевич  
**ПАДЕНИЕ ОСМАНСКОЙ ИМПЕРИИ**  
(социально-экономический очерк)  
(На армянском языке)  
Издательство «Айастан»  
Ереван — 1984

Հրատ. խմբագիր՝ Ռ. Հ. Մարտիրոսյան, կողմէ խմբագիր՝ Վ. Ռ. Ալյանչյան,  
 Խոմիքի Ֆ. Գ. Ադրբյան, գլուխ խմբագիր՝ Ս. Ս. Մկրտչյան, ահյուն խմբագիր՝  
 Ա. Մ. Բաբուսյան, վերատեղադրությունից՝ Մ. Մ. Ալյանչյան

ԽԲ 3965

Հանձնված է շարվագիր՝ 12.05.1984 թ.

Ստորագրված է ապրիլի 19.04.1984 թ.:

Տարմաք՝ 54×108½/33. Քույր տպ. № 2: Հայուրեալի՝ «Դրբի սովորական»:  
 Տպագրություն՝ բարեր՝ 17,54 պարզ. տպագր. ճամ., քրամ., 17,29 ճամ.  
 Պատճեն՝ 555, վ. 09427: Տպագանեակ՝ 20 000, Գյալ՝ 1 և. 40 գույզ:  
 Շարունակական պատճեն՝ Երևան—9, Տեղայի 91:

Издательство «Айастан», Ереван—9, ул. Теряна, 91.

ՀԽՍՀ Գրամատիկայի մասնակիություն, պայմանագիր և գրքի առաջին պարհերի  
 պատճեն՝ Գոմիքի Խ 5 տպարան, Երևան, Թատերական փող. № 22/1:

Типография № 6 Госкомитета по делам издательств,  
 полиграфии и книжной торговли Арм. ССР,  
 Ереван, ул. Туманяна, 23/1.

9(58)  
h-58